Վ. Ա. ՔՈՍՅԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ ՆԱԽԱՊԱՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ЯЗЫКА ИМ. Р. АЧАРЯНА

В. А. КОСЯН

ВОПРОСЫ ЧЛЕНЕНИЯ ПРЕДЛОЖЕНИЯ СОВРЕМЕННОГО АРМЯНСКОГО ЯЗЫКА

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1976

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Վ. Ա. ՔՈՍՅԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

Ա 57653

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1976

ՀԱՅԿ ՍՍՀ Գ.Ա. ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ Հ. ԴԱՊԱՆ

4 Ар
Ք 84

Աշխատությունը նվիրված է արդի հայերենի շարահյուսական կառուցվածքի վերլուծությանը, մասնավորապես ըստ անմիջական կազմիչների։ Հատուկ ուշադրություն է դարձված նախադասության անդամների արտահայտությանը շարահյուսական ամբողջական կապակցություններով, այն է՝ դերբայական դարձվածով, ածականական, մակբայական կապակցություններով, դոյականական և այլ կարգի կառույցներով։ Աշխատության երկրորդ մասը նվիրված է տրոհված անդամների հանդամանալից քննությանը։

Ք $\frac{70101}{703(02)-76}$ 52—76

© Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1976.

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Աշխարհի լեզվաբանության մեջ, մանավանդ վերջին քառասնամյակում տեղի ունեցած, առաջընթացի պայմաններում, առավել ուշադրություն է դարձվում նախադասության շարահյուսական վերլուծության հարցերին:

Ինչպես կառուցվածքային լեզվաբանության ներկայացուցիչները, այնպես էլ ավանդական բերականության կողմնակիցները XX դարի սկզբին նախադասության վերլուծությունը կատարում են բառից մեծ միավորները բացահայտելու նպատակով:

Նախադասության վերլուծությունը այդպես է կատարվում Յոն Ռիսի բառախմբերի, Սոսյուրի շարույթի (արտաքին շարույթի) և այլ ուսմունքներում: Սովետական լեզվաբանության մեջ ինչպես մինչև կառուցվածքային մեթոդների ընդլայնումը (1960-ական թվականներից սկսած), այնպես էլ դրանից հետո փորձեր են կատարվել նախադասությունը վերլուծելու բառից մեծ միավորների: Այդպես են Ե. Կրոտևիչի, Ն. Ֆեդոտովայի և ուրիշների ուսումնասիրությունները[1]:

Պետք է նշել, որ մեր կողմից այս խնդիրների նկատմամբ հետաքրքրությունը և սույն աշխատությունը գրելու գաղափարը ծագել է շարահյուսության ուսուցման ժամանակ

---

[1] *Е. В. Кротевич*, Словосочетание как строительный материал предложения, Львов, 1956; Члены предложения в современном русском языке, Львов, 1954, *Н. А. Федотова;* О выражении членов предложения неделимыми словосочетаниями (Уч. записки, т. 109, «Труды фил. фак-та Харьковского госунта, т. 8, 1960).

մեր առջև ծառացած բազմաթիվ դժվարությունները հաղթահարելու գործնական աշխատանքից:

Ինչպես հանախ է պատահում, անհրաժեշտ է լինում գործնական աշխատանքից ծագած եզրակացությունները ստուգել գիտության նվաճումների արդյունքներով: Եվ սահ ուրախությամբ ենք արձանագրում այն իրողությունը, որ մեր եզրակացությունները չեն հակասում լեզվաբանական արդի մեթոդներին:

Մեր աշխատության նյութը հաղված է ժամանակակից հայ գրականության, մասամբ և հրապարակախոսության ընտիր նմուշներից:

Ենք կարծում, թե հասել ենք առաջադրվող հարցերի սպառիչ լուծմանը, ուստի և ուրախությամբ կընդունենք բոլոր օգտակար դիտողությունները:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԱՍՏԻՃԱՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ

I. ՀԱՐՑԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Արդի շարահյուսագիտության մեջ, ինչպես և լեզվի ուսումնասիրության այլ բնագավառներում վերջին շրջանում շատ են տարընթացությունները։ Բանն այն է, որ այսպես կոչված ավանդական քերականության ըմբռնումների՝ դեռևս անցյալ դարի վերջերից սկսված քննադատությունն առավել չափով խորացավ կառուցվածքային մեթոդների արմատավորման ընթացքում։ Վերջին տարիներին առավել հեռուն գնացող ուղղությունների շատ ներկայացուցիչներ վճռականապես մերժում են նախադասության անդամների, մասնավորապես երկրորդական անդամների ուսումնքը։

Իսկ ձևաբանության և շարահյուսության, այսինքն նախադասության անդամի և խոսքի մասի տարբերակման մերժումը տիրապետող է կառուցվածքային լեզվաբանության մեջ առհասարակ։ Նախադասության քերականական կառույցների վերլուծության, մասնավորապես նախադասության անդամների ուսումնքի քննադատությունն սկսվել էր դեռևս հոդեբանական դպրոցի ներկայացուցիչների մոտ, ապա երիտքերականների կողմից այն փոխարինվեց բառախմբերի և բառակապակցությունների միակողմանի ուսումնքով, իսկ այժմ էլ ծայրահեղության է հասնում ստրուկտուրալիզմի զանազան հոսանքների կողմից։ Հոդեբանական

դպրոցը նախադասությունն ըմբռնում էր իբրև հոգեբանական դատողության դրսևորում, որը կազմված է հոգեբանական ենթակայից և հոգեբանական ստորոգյալից, և նախադասության մեջ առանձնացնում էր այդ երկու անդամը միայն, ընդ որում, չունենալով ձևական արտահայտություն, դրանք կարող են դրսևորվել խոսքային ամեն մի միավորով (ի հակադրություն քերականական ենթակայի և ստորոգյալի, որոնք ունեն ձևաբանական արտահայտություն)։

Նախադասությունը հոգեբանական դատողության դրսևորում համարելու այս դրույթը հետագայում հիմք դարձավ Մատեզիուսի կողմից առաջ քաշված նախադասության ակտուալ անդամատման ուսմունքի համար (որի մասին հանգամանորեն ստորև)։ Երիտքերականների ներկայացուցիչները (Ֆորտունատով, Ռիս և ուրիշներ) նախադասությանը և նրա ավանդական անդամատմանը հակադրեցին բառախմբերը և բառակապակցությունները և դրանց վերլուծությունը, ընդ որում նախադասությունն էլ դիտելով իբրև բառակապակցության մի տեսակ։ Սոսյուրի ուսմունքից սկիզբ առած շարույթի ուսմունքը նախադասության մեջ, ինչպես լեզվական իրողությունների բոլոր միավորների դեպքում, դիտում էր միայն երկանդամ շարույթներ, քանի որ լեզվական հաղորդակցումը շարույթների դծային շարք է։

Ի միջի այլոց պետք է նշել, որ շարույթ տերմինը Լ. Շչերբայի, Վ. Վինոգրադովի ուսմունքներում ստացել է այլ բովանդակություն։ Շարույթ ասելով նրանք հասկանում են խոսքային շղթայի արտասանական-ռիթմիկ միավորները, որոնք կարող են դրսևորվել և՛ բառակապակցություններով, և՛ առանձին բառերով[2]։

Կառուցվածքային լեզվաբանության ներկայացուցիչները նախադասությունը դիտում են իբրև ստորադասական հարաբերությամբ կապակցված միավորների ամբողջություն։

---

2 Ավելի մանրամասն տե՛ս մեր «Ժամանակակից հայերենի բառակապակցությունները», Երևան, 1975, էջ 13։

Ընդ որում ոմանք այդ ամբողջության մեջ դիտում են միայն մեկ անկախ բաղադրիչ՝ ստորոգյալը, իսկ ոմանք էլ՝ երկու բաղադրիչ (ենթական և ստորոգյալը)։ Նախադասության մեջ նրանք բացահայտում են քերականական կախվածությունները, կազմում են կախվածությունների ծառը և միաժամանակ կատարում անմիջական կազմիչների վերլուծություն, ընդ որում վերջինս ստորադաս դեր ունի կախվածությունների ծառի բացահայտման նկատմամբ։ Այս ուղղության ներկայացուցիչները մերժում են նախադասության վերլուծությունն ըստ գլխավոր և երկրորդական անդամների՝ հաճախ ներկայացնելով այն դեպքերը, երբ նախադասության այս կամ այն բաղադրիչի վերագրումը ավանդական քերականության այս կամ այն անդամին հարուցում է դժվարություններ կամ ոմանց թվում է շինծու։

Անշուշտ, իրավացի են բոլոր այն քերականները, ովքեր մատնանշում են նախադասության ավանդական ուսմունքի ակնհայտ թերությունները։ Սակայն ճիշտ չէ նախադասության գլխավոր և երկրորդական անդամների ուսմունքի մերժումը։

Մի շարք քերականներ գտնում են, որ նախադասության մեջ պետք է առանձնացվեն միայն գլխավոր անդամները (ենթական և ստորոգյալը), իսկ երկրորդական անդամները նրանց հավասար մակարդակի միավոր չեն։ Ռուսերենի նոր ակադեմիական քերականության մեջ նախադասության երկրորդական անդամները տեղ չեն գտել[3]։ Վ. Ա. Կոչերգինան 1974 թ. լույս տեսած գրքում[4] որոշակիորեն այն միտքն է զարգացնում, որ նախադասությունը կազմված է ենթակայից, ստորոգյալից և այսպես կոչված դետերմինանտներից։

Ո՞րն է այս դրույթի տեսական հիմքը։ Բանն այն է, որ վերջերս շատերը գտնում են, որ նախադասության գլխավոր անդամները՝ ենթական և ստորոգյալը, առանձնացվում են

---

3 «Грамматика совр. русского лит. яз.», М., 1970.

4 *В. А. Кочергина.* Синтаксис (Учебное пособие по курсу «Введение в языкознание»).

տրամաբանական հիմունքով, քանի որ դրանք արտահայտում են դատողության սուբյեկտը և պրեդիկատը, իսկ երկրորդական անդամները չեն արտահայտում դատողության տարրերը, այլ ծառայում են սուբյեկտի և պրեդիկատի կոնկրետացմանն ու ծավալմանը[5]: Նախադասության գլխավոր անդամները սահմանվում են մտածողության պրոցեսի հիման վրա, իսկ երկրորդականները՝ իրականության հատվածավորման արտացոլումներով:

Ոմանք էլ առաջարկում են նախադասության մեջ տարբերակել երեք կարգի անդամներ՝ գլխավոր, երկրորդական և ուղեկցող (Ե. Վ. Կրոտևիչ) կամ մեկուսացած (Զ. Պոպով, СЯЮРСК):

Ոմանք, որոշակիորեն առանձնացնելով ենթակայի և ստորոգյալի խմբերը, ենթակայի և ստորոգյալի լրացումները չեն դիտում իբրև նախադասության անդամ, այլ սոսկ համապատասխան բառակապակցության կազմիչ (բաղադրիչ): Ոմանք էլ նախադասության երկրորդական անդամ համարում են միայն պրեդիկատիվ (ստորոգական) հիմքին առնչվող անդամները, իսկ ենթակայի լրացումները դիտում են իբրև նախադասության անդամի անդամ և ոչ նախադասության անդամ:

Միանգամայն իրավացի են այն քերականները, որոնք նախադասության գլխավոր և երկրորդական անդամները, ինչպես և այսպես կոչված ուղեկցող (կամ մեկուսացած) անդամները համարում են ոչ նույն մակարդակի միավորներ: Հենց ավանդական քերականության ներսում գլխավոր և երկրորդական անվանումներով այդ անդամները հակադրված են իրար: Ավելին, լրացման լրացում, կողմնակի անդամ հասկացությունները ցցուն են դարձնում դրանց և նախադասության անդամների հակադրությունը և մատնանշում նախադասության վերլուծության ատոմիստական լինելու երևույթը:

---

[5] СЯЮРСК, тезисы доклада А. Савченко.

Իսկ այն հարցին, թե նախադասության անդամատումը արդյո՞ք կրկնում է բառակապակցության կառուցվածքը, պետք է պատասխանել, որ դրանք նույնական չեն։

Մեր «Ժամանակակից հայերենի բառակապակցությունները» աշխատության մեջ անդրադառնալով դրան՝ թվարկել ենք բառակապակցության և նախադասության հատկանիշները, ինչպես և ավել շարահյուսական այդ տարբեր միավորների անդամատման սկզբունքները։ Այստեղ ևս նշում ենք, որ բառակապակցության ըմբռնումը չի հակասում նախադասությանը, և այդ երկուսի կառուցվածքային որոշ ընդհանրություններ չեն բացառում նրանց անկախ գոյությունը։

II. ԱՆՄԻՋԱԿԱՆ ԿԱԶՄԻՉՆԵՐԻ ՈՒՍՄՈՒՆՔԸ

Թեև արդի լեզվաբանության մեջ ընդունված է ասել, որ անմիջական կազմիչների (ԱԿ) ուսմունքի հիմնադիրը Բլյումֆիլդն է, սակայն լեզվական իրողությունների երկատման սկզբունքը տրված է Սոսյուրի կողմից[6]։ Մասնավորապես Սոսյուրի արտաքին շարույթի տեսությունն է հիմք դարձել Բլյումֆիլդի այդ դրույթի համար։

Անմիջական կազմիչների վերլուծությունն ընդգրկում է լեզվական բոլոր մակարդակները՝ սկսած շարահյուսությունից, որի միավորը դարձվածքն է ((որը ոմանք անվանում են խոսքային ակտ (Բլյումֆիլդ), երկու դադարների միջև ընկած խոսքային հատված (Հարրիս), նախադասություն (Ֆրիզ)), մինչև հնչույթը (ոմանք վերլուծելի են համարում վերջինը ևս)։ Բարդ նախադասությունները ըստ անմիջական կազմիչների վերլուծելիս սկզբից անջատվում են բաղադրիչ նախադասությունները, ընդ որում տարակարծություն կա բարդ ստորադասական նախադասության գլխավոր և երկրորդական բաղադրիչների վերլուծության հարցում։ Ոմանք (Գլիսոն և ուրիշներ) գլխավոր նախադասությունը և նրա լրացումը մի ԱԿ են համարում, իսկ ուրիշները (Պայկ և

6 *Ф. Де Сосюр*, Курс общей лингвистики, М., 1933.

այլը) առաջարկում են երկրորդական նախադասությունը առանձին ԱԿ համարել։ Իսկ բարդ համադասական նախադասության բաղադրիչները դիտվում են իբրև ինքնուրույն ԱԿ։ Պարզ համառոտ երկկազմ նախադասության ենթական և ստորոգյալը դիտվում են իբրև առանձին ԱԿ։ Պարզ ընդարձակ նախադասության մեջ ենթակայի և ստորոգյալի խմբերը դիտվում են որպես առանձին ԱԿ, իսկ դրանց ներսում էլ բացահայտվում են այդ կառույցների ԱԿ-երը և այսպես աստիճանաբար մինչև շարահյուսական վերջին միավորը, որը բառն է (Բլոխ), իսկ ոմանց կարծիքով էլ՝ ձևույթը (Զատմեն)։ ԱԿ վերլուծությունը երևան է հանում կառույցի (իսկ տվյալ դեպքում մեզ հետաքրքրում է շարահյուսական կառույցը) բաղադրիչները, ընդ որում բաղադրիչներից մեկը գլխավորն է, մյուսը՝ կախյալը։ ԱԿ վերլուծությունը տարվում է երկատման սկզբունքով. այդ նշանակում է, որ երևան են հանվում երկու բաղադրիչ (որը սոսյուրյան երկանդամ շարույթին է համապատասխանում), որոնք կապված են ստորադասական հարաբերությամբ։ Այսպես, «Իմ ընկեր Վարդանը կառուցել է մի շենք, որը իր գեղեցկությամբ հիացնում է բոլորին» նախադասությունը սկզբից երկատվում է երկու ԱԿ-ի՝ գլխավոր և երկրորդական նախադասությունների («Իմ ընկեր Վարդանը կառուցել է մի շենք» և «որը իր գեղեցկությամբ հիացնում է բոլորին»), որոնք իրենց հերթին երկատվում են։ Առաջինը կազմված է Իմ ընկեր Վարդանը *(ենթակայի խումբ) և* կառուցել է մի շենք *(ստորոգյալի խումբ) ԱԿ-ից, իսկ երկրորդը կազմված է* որը *(ենթակա) և* իր գեղեցկությամբ հիացնում է բոլորին *(ստորոգյալի խումբ) ԱԿ-ից։ Այս 4 ԱԿ-ն էլ ըստ անհրաժեշտության երկատվում են* (Իմ ընկեր *և* Վարդանը, կառուցել է *և* մի շենք, իր գեղեցկությամբ հիացնում է *և* հիացնում է բոլորին)։ *Սրանցից* իմ ընկեր, մի շենք, իր գեղեցկությամբ հիացնում է, հիացնում է բոլորին *կառույցներն էլ ենթակա են երկատման* (իմ *և* ընկեր, մի *և* շենք, իր գեղեցկությամբ *և* հիացնում է, հիացնում է *և* բոլորին)։ *Ի վերջո,* իր գեղեցկությամբ *կառույցն էլ երկատ-*

վում է իր և գեղեցկությամբ)։ ԱԿ վերլուծությունը, սակայն, չի կարողանում բացահայտել նախադասության մեջ համադասական հարաբերությամբ կապված միավորների տեղը. արդյո՞ք միավորվող բաղադրիչները միասնաբար են ԱԿ դառնում, թե՞ նրանցից յուրաքանչյուրը ինքնուրույն ԱԿ է։ ԱԿ վերլուծության մեջ պարզ չէ սպասարկու բառերի դիրքը (շաղկապներ, նախդիրներ, հոդեր), քանի որ տարբեր ուսումնասիրողներ տարբեր ձևով են դրանք անդամատում։ Մեծ մասը նախդիրը համարում է գլխավոր կազմիչ, իսկ նրա մոտ գրվող բառը՝ նրանից կախյալ։ Այս հարցում կառուցվածքային լեզվաբանությունն օգտվում է ավանդական քերականության դրույթներից (ավանդական քերականությունը նախդիրը խնդրառու էր համարում)։ Ոմանք էլ հոդերը դիտում են իբրև ստորադասական հարաբերությամբ կապակցվող կազմիչ՝ հոդառու բառի մոտ։ Ինչ վերաբերում է շաղկապներին, ապա դրանք համարում են հարաբերիչներ՝ տարբեր ԱԿ-երի միջև։

ԱԿ վերլուծության նպատակը որևէ կառույցի բաղադրիչների բացահայտումն է։ Եվ քանի որ կառուցվածքաբանները (ստրուկտուրալիստները) դժգոհ են ավանդական լեզվաբանության մեջ խոսքի մասի և նախադասության անդամի հակադրությունից, այդ պատճառով էլ նրանք չեն շոշափում նախադասության անդամների հարցը։ ԱԿ վերլուծությունը չի զբաղվում շարահյուսական կառույցների ներսում բաղադրիչների իմաստային փոխհարաբերության բացահայտմամբ։

Մինչդեռ նախադասության ավանդական, մասնավորապես երկրորդական անդամների ուսումնքը նվիրված է նախադասությունը կազմող շարահյուսական միավորների իմաստային հարաբերությունների բացահայտմանը։ Նույնը և առավել չափով վերաբերում է բառակապակցությունների ուսումնքին[7]։

Սակայն, այնուհանդերձ, ԱԿ վերլուծության մեթոդը

---

7 Տե՛ս մեր նշվ. աշխատ.։

լեզվաբանության, մասնավորապես շարահյուսության համար չափազանց օգտակար է։ Պետք է նշել, որ այդ մեթոդը կիրառելի է հավասարապես և՛ նախադասության, և՛ բառակապակցության կառուցվածքի բացահայտման նպատակով։ Իբրև ընդհանրական մեթոդ, ԱԿ վերլուծությունը հնարավորություն է տալիս նկարագրելու բոլոր այն կառույցները, որոնք դուրս են նախադասության սովորական ըմբռնումից։ Այսպես, հայտնի է, որ միակազմ նախադասությունները չունեն ենթակա և ստորոգյալ՝ սովորական նշանակությամբ։ Սակայն այդ նախադասությունները ևս շարահյուսական կառույցներ են, որոնք բաղադրված են ավելի փոքր կառույցներից կամ բառերից։ Եթե միակազմ նախադասության կառուցվածքային տարրերը չեն կոչվում նախադասության այս կամ այն անդամի անունով, ապա ինչպե՞ս պետք է դրանք վերլուծվեն, ի՞նչ սկզբունքով հատուցավորվեն, եթե ոչ ըստ ԱԿ-ի։

Մյուս կողմից, նախադասության ավանդական (ինչպես և արդի) ուսմունքը զբաղվում է այն անդամների բացահայտմամբ, որոնք կապված են գլխավոր անդամների հետ՝ անկախ նրանց ծավալից։ Իսկ նախադասության ծավալուն անդամները շարահյուսական կառույցներ են, որոնք իրենց հերթին բաղկացած են ստորադասական հարաբերությամբ կապակցված կառույցներից կամ միավորներից։ Այդ կառույցների ներսում լինում են այնպիսի շարահյուսական ամբողջություններ, որոնց գլխավոր բառը այնպիսի խոսքի մաս է, որից կախված կառույցները կամ միավորները չեն կարող կրել նախադասության այս կամ այն երկրորդական անդամի անունը (ածականի, մակբայի և այլ լրացումները)։ Հասկանալի է, որ այդպիսի կառույցների քննությունը կարելի է կատարել միայն ԱԿ-ի վերլուծությամբ։

Հայտնի է, որ ավանդական քերականությունը նախադասության անդամներից դուրս է համարում միջանկյալ բառերը, բառակապակցությունները, կոչականները (բառեր կամ բառակապակցություններ), ձայնարկությունները, իսկ արդի քերականագիտության մեջ նաև եղանակավորող բա-

ները և բառակապակցությունները։ Անշուշտ սովետական լեզվաբանության մեջ վերջին տարիներին առաջարկված է դրանք ևս նախադասության անդամ համարել (մեկուսացած անդամներ), սակայն անկախ այդ հանդամանքից, նշված-ներից մի քանիսը հանդես են գալիս որպես շարահյուսական կառույցներ, որոնք վերլուծելի են։ Ինչպե՞ս պետք է կատարել դրանց վերլուծությունը, եթե ոչ ԱԿ-ի մեթոդով։ Անշուշտ, ինչպես միջարկություն, կոչական, եղանակավորող կառույցները, այնպես էլ միակազմ նախադասությունները ԱԿ-ի մեթոդով վերլուծվում են որպես բառակապակցություններ, և այս դեպքում սկզբունքային տարբերություն չկա, մի կողմից, երկկազմ նախադասության մեջ եղած բառակապակցությունների և հիշյալ տիպի կառույցների միջև։

Թեև արդի կառուցվածքաբանությունը (ստրուկտուրալիզմը) անտեսում է ավանդական քերականության ուսմունքը, մասնավորապես նախադասության երկրորդական անդամների ուսմունքը, սակայն այդ ուսմունքը հիմնականում ճիշտ է արտացոլում նախադասության քերականական կառուցվածքը, երևան հանում իրականության հատվածավորումը մտածողության լեզվական կազմակերպման մեջ և անպայման պետք է ընկած լինի շարահյուսության հիմքում։ Սակայն այդ ուսմունքը կարիք է զգում վերանայման։ Նախադասության ավանդական ուսմունքի մի շարք դրույթների վերանայման պահանջը վերջին տարիներին առավել հնչեղությամբ դրսևորվել է շատ լեզվաբանների աշխատություններում։ Նույնիսկ բանը հասել է այնտեղ, որ ամբողջությամբ այն մերժվում է։ Մի կողմ թողնելով նման ծայրահեղությունները, պետք է նշել, որ իրոք նախադասության երկրորդական անդամների արժեքավորման հարցում անհետևողականություն կա. այդ մասին կխոսվի ստորև։

Կարծում ենք, որ նախադասության ավանդական ուսմունքի կատարելագործման մեջ հսկայական դեր կխաղա անմիջական կազմիչների տեսության կիրառումը։

Նախադասության վերլուծությունը ըստ անդամների (գլխավոր և երկրորդական) չպետք է հակասի ԱԿ վերլու-

ծությանը, սակայն ոչ այս վերջինի ծայրահեղությամբ, երբ մերժվում են նախադասության անդամները, որոնք վերջին հաշվով արտացոլում են իրականության հատվածավորումը մտածողական ակտի մեջ։ ԱԿ վերլուծությունը հնարավորություն է տալիս հատուցթավորելու նախադասությունը և շարահյուսական մյուս կառույցներն այնպես, որ պարզ դառնան տվյալ ամբողջությունը բաղադրող հատվածները։ Այլ բան է, որ մի դեպքում ԱԿ-ը նախադասության անդամ է ավանդական քերականության ակզբունքով, իսկ մյուս դեպքում՝ դրանից փոքր միավոր։ Եթե ԱԿ վերլուծության մեթոդի կիրառման ժամանակ թույլ չտրվեն ծայրահեղություններ (ինչպես նախդիրի գերադասությունը նրա մոտ դրված բառի կամ շարահյուսական կառույցի նկատմամբ, երկրորդական նախադասությունը գլխավորի հետ նույն ԱԿ համարելը և այլն), ապա այն շափազանց արդյունավետ կլինի շարահյուսական վերլուծության մեջ։

III. ԿԱԽՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Կառուցվածքային լեզվաբանության մեջ ԱԿ վերլուծության հետ միասին գործադրվում է կախվածությունների բացահայտման մեթոդը։ Ո՞րն է այս մեթոդի էությունը։

Սա հիմնականում բառակապակցությունների կազմության օրինաչափությունների ամփոփումն է։ Յուրաքանչյուր լեզվում խոսքի մասերն ունեն կապակցելիության միայն նրան հատուկ օրինաչափություններ։ Իսկ յուրաքանչյուր խոսքի մասը (մասամբ նախադասության գլխավոր անդամներից ստորոգյալը) բնորոշ է լրացական հարաբերություններ իր համակարգով։ Լրացական հարաբերություններն էլ ունեն քերականական համապատասխան դրսևորում։ Այսպես, օրինակ, ռուսերենի համար ընդունված են կախվածությունների հետևյալ կանոնները.

ա) նախդիրով խնդրառվող գոյականը կախված է նախդիրից, բ) նախդիրը կախված է բայից, գ) ածականի իմաս-

տը ճշգրտող մակբայը կախված է ածականից, դ) գոյականի հետ համաձայնող ածականը կախված է գոյականից, ե) ենթական կախված է ստորոգյալից (կամ հակառակը)։ Իհարկե, սրանց կարելի է ավելացնել նաև, որ ածականի իմաստը ճշգրտող գոյականը կախված է ածականից, մակբայի իմաստը ճշգրտող գոյականը կախված է մակբայից, գոյականի իմաստը ճշգրտող խոսքի մասերը կախված են նրանից և այլն։

Այդ բոլոր կախվածությունները դրսևորվում են խնդրառությամբ, համաձայնությամբ և առդրությամբ (վերադրմամբ)։

Նախադասության (և առհասարակ շարահյուսական յուրաքանչյուր իրողության) կառուցվածքը դիտվում է իբրև կախվածությունների աստիճանական կառուցվածք, որտեղ միայն մեկ անդամն է անկախ։ Դրանով նախադասությունը ներկայանում է որպես կախվածությունների մի ծառ։ Այս դեպքում ևս նախադասության հիմքը կազմող ենթական և ստորոգյալը առանձնանում են իրենց խմբերով, որոնցից յուրաքանչյուրն ունի իր կախվածությունները, իսկ այդ երկուսը կարելի է դիտել իրար լրացում։ Իրականում կախվածությունների ծառով (եթե նկատի չունենանք վերջինի ծայրահեղությունը՝ ենթական ստորոգյալի լրացում կամ հակառակը համարելը, ինչպես և նախդիրը գերադաս բառ դիտելը) արտահայտվում են ամբողջական բառակապակցությունները։ Պետք է նշել միայն, որ եթե հատուկ բավորվում են շարահյուսական այնպիսի կառույցներ, որոնք երկկազմ նախադասություն չեն (միջարկություններ, կոչական, եղանակավորող կառույցներ, միակազմ նախադասություններ և այլն), ապա կախվածությունների ծառը լիովին արտացոլում է ամբողջական բառակապակցությունները, իսկ երկկազմ նախադասության մեջ դետերմինացնող անդամները, տրոհվող լրացումները և այլն բառակապակցություն չեն կազմում նախադասության պրեդիկատիվ հիմքի, ինչպես և նախադասության այլ անդամների հետ, սակայն դիտվում

249 — 2

ՀԱՅԿ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ

են որպես լրացումներ։ Հենց սրանով էլ կախվածությունների ծառն ավելի ամբողջական պատկերացում է տալիս շարահյուսական կառուցվածքի մասին, քան բառակապակցությունը։ Ուստի այս մեթոդը ևս գործադրելի է շարահյուսական ամբողջական կառույցների (նախադասություն և զանազան կառույցներ) վերլուծության մեջ։ Այս մեթոդի գործադրմամբ հստակ պատկերացում է ստեղծվում շարահյուսական կառուցվածքի մասին։

Պետք է նկատի ունենալ, որ կախվածությունների բացահայտումը հենվում է ԱԿ վերլուծության վրա, առանց նրա հնարավոր չէ գործադրել։ ԱԿ վերլուծությամբ բացահայտվում են լրացումների և լրացյալների հարաբերությունները, իսկ կախվածությունների բացահայտումը հնարավորություն է տալիս երևան հանելու լրացյալի բոլոր լրացումները։ Իրականում կախվածությունների բացահայտումը կատարվում է ԱԿ վերլուծության միջոցով։

IV. ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Նախադասության ըմբռնումը միատեսակ չի եղել լեզվաբանության մեջ. տարբեր ուղղություններ յուրովի են սահմանել նախադասությունը։ Բավական է նշել, որ մինչև այժմ տրված է երեք հարյուրից ավելի սահմանում[8]։ Այդ բոլոր սահմանումները հենվում են նախադասության այս կամ այն ըմբռնման վրա։ Այսպես՝ հին հունական քերականությունը նախադասությունը նույնացնելով տրամաբանական դատողության հետ, այն սահմանում էր իբրև դատողության դրսևորում, քերականական ենթական և ստորոգյալը նույնացնելով տրամաբանական սուբյեկտին և պրեդիկատին։ Այս ըմբռնումը զարգացավ ռացիոնալիստական փիլիսոփայության տիրապետության շրջանում (XVIII դարի վերջը), և պահպանվեց մինչև XIX դարի երկրորդ կեսը։ Անցյալ դարի 60-ական թվականներին տրամաբանական

8 Տե՛ս В. А. Кочергина, Синтаксис, М., 1974.

ուղղությունը քննադատվեց հոգեբանական դպրոցի կողմից (Շտայնթալ, Պոտեբնյա և ուրիշներ)։ Այս դպրոցի ներկայացուցիչները ցույց տվեցին, որ տրամաբանությունը և քերականությունը նույնական չեն. տրամաբանական կարգերը քիչ են, քերականականը՝ շատ։ Նրանք մասնավորապես ցույց տվեցին, որ նախադասության բովանդակությունը ոչ միշտ է ներկայանում իբրև տրամաբանորեն ձևավորված միտք (օր.՝ հուզական նախադասությունները)։

Ըստ այս դպրոցի՝ նախադասությունը խոսողի դիտակցության մեջ որոշակի պատկերացումների միացություն է, այսինքն հոգեբանական դատողություն։ Լեզուն արտահայտում է ոչ թե մտքի տրամաբանությունը, այլ հաղորդակցման հոգեկան պրոցեսը։ Նախադասության անդամատման տրամաբանական մոտեցումը քննադատվեց Պաուլի կողմից. ըստ որի նախադասության ամեն մի անդամ, անկախ իր քերականական ձևից, հոգեբանական տեսակետից կարող է լինել կա՛մ ենթակա, կա՛մ ստորոգյալ, կա՛մ հանգույց, կա՛մ դրանց մի մասը։ Հոգեբանական ենթական խոսողի դիտակցության մեջ նախապես եղած պատկերացումն է, իսկ ստորոգյալը՝ այն, ինչ նոր է արտահայտվում։ Քերականական նույն կառուցվածք ունեցող նախադասությունը կարող է դառնալ հոգեբանական տարբեր դատողությունների արտահայտություն։ XIX դարի վերջին և XX դարի սկզբին երևան եկած ձևական լեզվաբանությունը գտնում է, որ ձևաբանական կառուցվածքով պայմանավորված՝ տարբեր լեզուներում նախադասության կառուցվածքը տարբեր է։ Այս ուղղությունը առանձնացրեց բառախմբերը կամ բառակապակցությունները՝ իբրև շարահյուսական առանձին միավոր (Ռիս, Ֆորտունատով)։

Արդի լեզվաբանության մեջ էլ շարահյուսության առարկայի հարցում միասնական կարծիք չկա։ Ոմանց կարծիքով շարահյուսությունը ուսմունք է միայն նախադասության և նրա անդամների մասին։ Ոմանք էլ կարծում են, որ շարահյուսությունը ուսմունք է միայն բառակապակցու-

թյան մասին, քանի որ այն հաղորդակցական հիմնական միավորն է, իսկ նախադասությունը՝ նրա մի տեսակը (Մ. Պետերսոն)։ Առավել ընդունելության է արժանացել երրորդ տեսակետը, ըստ որի շարահյուսության առարկա են և՛ բառակապակցությունը, և՛ նախադասությունը (Վ. Վինոգրադով, Ն. Շվեդովա, Վ. Յարցևա, Օ. Ախմանովա և ուրիշներ)։ Սակայն այս ուղղության ներկայացուցիչները բառակապակցությունը տարբեր կերպ են մեկնաբանում։ Ըստ Վ. Վինոգրադովի, բառակապակցությունը անվանողական միավոր է՝ բառի նման։ Վ. Յարցևան բառակապակցությունը բառին հավասար չի համարում, այլ նախադասության ներսում գոյություն ունեցող միավոր, իսկ դարձվածաբանական միավորները (որոնք Վ. Վինոգրադովը բառակապակցություններից առաջացած է համարում) չի դիտում որպես շարահյուսական միավոր։ Ա. Ռեֆորմատսկին, Ս. Գվոզդևը և ուրիշներ բառակապակցությունը անվանողական միավոր չեն համարում, այլ նույնացնում են սոսյուրյան արտաքին շարույթի հետ։

Նախադասության միասնական ըմբռնման բացակայությունը վկայում է, որ այն բարդ երևույթ է։

Նախադասության էությունը հասկանալու համար պետք է հաշվի առնենք նրա հատկանիշները։

Նախադասությունը օբյեկտիվ իրականության արտացոլումն է նրա մի դրսևորմամբ (որտեղ առարկաները որևէ գործողություն են կատարում, գործողության առարկա են դառնում, հատկանշի կրող են լինում կամ հատկանիշ են արտահայտում, որևէ վիճակում են գտնվում, որտեղ գործողությունը կատարվում է ժամանակային որևէ հատվածում և այլն)։ Այնուհետև, նախադասությունը մտածողական ակտի արտահայտություն է, որի մեջ ինչ-որ մեկի (կամ մի բանի) մասին ինչ-որ բան է հաղորդվում կամ հարցվում։

Նախադասության կառուցվածքի ուսումնասիրությունը չպիտի հանգեցվի բառակապակցությունների ուսումնասիրությանը։ Բառակապակցության և նախադասության ան-

դամների նկարագրության մեջ անտեղի զուգահեռությունը բացատրվում է նրանով, որ նախադասության նկատմամբ կիրառվում է բառակապակցությունների ուսումնասիրության մեթոդը։ Նախադասության մեջ դիտվում է այն շղթան, որը կազմվում է բառերի ընդարձակման միջոցով։ Նախադասության ուսումնքը պետք է զբաղվի մտքի տարրերի արտահայտիչների կապակցության ուսումնասիրությամբ։ Նախադասության կառուցվածքային-իմաստային տարրերն են այնպիսի հասկացություններ, ինչպես գործողություն կատարողը, հատկանիշ կրողը, գործողությունը, վիճակը, հատկությունը, քանակը, տեղը, ժամանակը, պատճառը և այլն։

Հենց նրանց կապակցելիությունը, միացման եղանակները պետք է ուսումնասիրվեն նախադասության ուսմունքի կողմից։ Նախադասության ուսմունքի բովանդակությունը պիտի լինի իմաստային տարբեր արտահայտության եղանակների բացահայտումը[9]։ Նախադասությունը կոչված է որոշակի կառուցվածքային-իմաստային միավորների միջոցով հաղորդելու կամ առարկայի գործողությունը, ենթակայի կամ նրա միջավայրի վիճակը, կամ առարկաների հատկանիշները, քանակը, առարկայի առկայությունը կամ բացակայությունը, ժամանակը կամ տարածությունը, սահմանելու իրադարձության, երևույթի պատճառը, նպատակը և այլն։

Անհրաժեշտ է հաշվի առնել այն, որ բոլոր տեսակի նախադասությունները նույն կառուցվածքը չունեն։ Սովորական է այն ըմբռնումը, որի դեպքում նախադասության կառուցվածքի չափանիշը համարվում է երկկազմ նախադասությունը։ Մասնավորապես նախադասության անդամատում ասելով հասկացվում է հիշյալ տիպի նախադասությունների հատույթավորումը։

Վերջին շրջանում շատ է խոսվում այն մասին, որ նախադասության վերլուծությունը չի տարվում միասնական

---

9 Տե՛ս Г. Н. Золотова, О структуре простого предложения в русском языке (ВЯ, 1967, № 6).

սկզբունքով։ Այսպես, 1973 թ. լույս տեսած ժողովածուի մի շարք հոդվածներում (Ն. Ի. Միզիրինայի և ուրիշների) այն դրույթն է զարգացվում, որ նախադասության վերլուծության մեջ թույլ է տրվում տրամաբանական և քերականական տերմինների շփոթ, մեկը մյուսի փոխարեն գործածություն[10]։ Մասնավորապես ասվում է, որ գլխավոր անդամները սահմանվում են մտածողական պրոցեսի հիման վրա, իսկ երկրորդական անդամները՝ իրականության հատվածավորման արտացոլմամբ։ Նույն ժողովածուի մեջ տեղ գտած Գ. Վ. Պոպովի հոդվածում էլ նախադասության ավանդական ուսմունքը քննադատվում է այն բանի համար, որ գլխավոր անդամները առանձնացվում են ձևաբանական հատկանիշներով (գոյականի ուղղական հոլովաձև, դիմավոր բայ), իսկ երկրորդական անդամները՝ ըստ օբյեկտիվ իրականության կատեգորիաների հետ ունեցած կապի (գործող անձ կամ գործողության առարկա, գործողության հատկանիշ կամ առարկայի հատկանիշ, գործողության տեղ, ժամանակ, պատճառ և այլն)։

Այս դիտողությունները հեռու չեն ճշմարտությունից։ Սակայն պետք է նկատի ունենալ, որ, իրոք, երկկազմ նախադասությունը հիմնականում դատողություն է արտահայտում, և նրա կառուցվածքն էլ պետք է դիտվի իբրև դատողության լեզվական կաղապարավորում։ Նախադասության տրամաբանական վերլուծությունը հնարավորություն է տալիս սահմանելու նախադասության մասերի համապատասխանությունը դատողության մասերին։ Այս վերլուծությունը անտեսում է այդ հիմնական մասերի քերականական դրսևորումը։ Մասնավորապես պարզ համառոտ նախադասությունը հենց դատողության լեզվական արտահայտություն է։ Ուստի երկկազմ նախադասության վերլուծության նպատակը պիտի լինի դատողության երկու եզրերի՝ դատողության սուբյեկտի և պրեդիկատի բացահայտումը։ Ամեն մի երկկազմ նախադասության հիմքում այդ երկու գլխավոր ան-

10 ՊՏԿՊ (տե՛ս համառոտագրությունները)։

դամներն են ընկած։ Նախադասության տրամաբանական վերլուծությունը հանգեցնում է դրանց բացահայտմանը (որոշակի կառուցվածքում՝ անվանական ստորոգյալի դեպքում նաև երրորդի՝ հանգույցին, որի դերը մի շարք լեզուներում կատարում է հնչերանգը, ինչպես ռուսերենում)։ Նախադասության գլխավոր անդամները նրա կմախքն են, հիմքը, որի շուրջը հյուսվում է երկկազմ ընդարձակ նախադասության մյուս կազմիչների համակարգը։ Նախադասության գլխավոր անդամ հասկացությունը մտցվել է նրա կառուցվածքային հիմքը բացահայտելու նպատակով։ Այս տեսակետից էլ հնարավոր չէ գլխավոր և երկրորդական անդամների սահմանման միասնական հիմք գտնել։ Սակայն պետք է նկատի ունենալ, որ երկրորդական անդամները ոչ պակաս չափով են անհրաժեշտ հաղորդվող մտքի կազմակերպման համար։ Եթե նախադասության գլխավոր անդամները սահմանվում են մտածողության պրոցեսի հիման վրա, ապա երկրորդականները՝ իրականության հատվածավորման արտացոլումներով։ Նախադասության մեջ ոչ մի բառ (եթե նախադասությունը համապատասխանում է հաղորդվող մտքին) ավելորդ չէ։ Ի՞նչ դեր ունեն երկրորդական անդամները։ Դրանք ծառայում են սուբյեկտի և պրեդիկատի կոնկրետացմանը և ծավալմանը։

Երկրորդական անդամները բովանդակային-շարահյուսական կարգեր են, որոնք ընդհանրացնում և սինթեզում են որոշչային, խնդրային, պարագայական և այլ հարաբերություններ։

Պետք է նկատի ունենալ, որ երկրորդական անդամները գլխավոր անդամների հետ նույն մակարդակի միավոր չեն։ Նրանք երևան են գալիս երկրորդ աստիճանի, այն է՝ նախադասության գլխավոր մասերի անդամատման հետևանքով։ Դրանք ծավալում են գլխավոր անդամները կամ ուղեկցում են պրեդիկատիվ հիմքին։

Ի՞նչ երկրորդական անդամներ ունի նախադասությունը։

Նախադասության երկրորդական անդամները սահման-

վել են ավանդական շարահյուսության կողմից և մինչև այժմ համարյա պահպանվում են անփոփոխ։ Դրանք հիմնականում երկու կարգի են՝ ենթակայի և ստորոգյալի լրացումներ, ընդ որում լրացման լրացումները ևս նույն անուններով են հանդես գալիս։ Ռուս քերականագիտության մեջ երկրորդական անդամների ուսմունքը, որը գալիս է Վոստոկովից և մշակվել է Բուսլաևի, Դավիդովի, Պոտեբնյայի, Շախմատովի և ուրիշների կողմից, ընդունում է 3 տեսակ՝ որոշիչ (приложение ենթատեսակով), խնդիր, պարագա։ Այս երեք անդամներն առկա են նաև բառակապակցություններում որպես լրացումներ, ընդ որում որոշիչը բնորոշ է գոյականին, խնդիրն ու պարագան՝ բային։ Սակայն չի կարելի անտեսել այն հանգամանքը, որ պարագաները, մասամբ և խնդիրները բնորոշ են նաև բաղադրյալ ստորոգյալին։ Այսպես, «Նա բարեկամ է Վարդանին» նախադասության մեջ Վարդանին խնդիրը վերաբերում է բաղադրյալ ստորոգյալին։ Նույն ձևով և «Երևանում արդեն գարուն է» նախադասության մեջ Երևանում և արդեն պարագաները վերաբերում են ոչ բային, այլ ստորոգումային հիմքին (գարուն է)։

Այս ուսմունքի ոգով է գրված նաև ռուսերենի ակադեմիական քերականությունը (1954 թ.)։ Ռուս քերականագիտության մեջ վերջին շրջանում լրացվել է այդ ուսմունքը, մի կողմից, երկկողմանի շարահյուսական կապակցություն ունեցող (կամ խառն) անդամներով՝ պարագայական որոշիչ, պարագայական խնդիր, որոշչային խնդիր, երկրորդական ստորոգյալ կամ որոշչա-ստորոգյալ և այլն, մյուս կողմից, նախադասության ճշգրտող անդամներով, ընդ որում շարահյուսական այս կամ այն միավորի պաշտոնի երկկողմանիությունը պայմանավորված է շարադասությամբ, ինչպես և լրացյալի կապակցելիության առանձնահատկություններով։ Երկկողմանի շարահյուսական կապը առավել երևում է որևէ բառաձևի (թեք հոլովաձևեր, նախդրավոր կառույցներ, ածականներ, դերբայներ և այլն)՝ ենթակայի և ստո-

բոդյալի միջև գտնվելու դեպքում (բացառված չեն նաև այլ դիրքերը)։ Այսպես, Домик у моря выглядел живописно նախադասության մեջ у моря նախդրավոր կառույցը կարող է մեկնաբանվել և՛ իբրև домик ենթակայի որոշիչ, և՛ իբրև выглядел живописно ստորոգյալի պարագա[11]։

Ռուս քերականագիտությունը վերջերս ընդունում է նաև նախադասության դետերմինացնող անդամներ հասկացությունը, որոնք ըստ էության խնդրի և պարագայի այն դրսևորումն են, որոնք բայական բառակապակցության բաղադրիչ չլինելով, վերաբերում են ամբողջ նախադասությանը։ Անշուշտ, դետերմինանտները տարբերվում են բայական բառակապակցության մեջ եղած խնդիրներից և պարագաներից, և այդ տեսակետից ճիշտ է այն կարծիքը, որ դրանք գլխավոր անդամների հետ միասին նախադասության առաջին աստիճանի անդամատման ժամանակ են առանձնանում[12]։ Սակայն դետերմինացնող խնդիրները և պարագաները շարահյուսական-իմաստային ոչ մի նրբերանգով չեն տարբերվում բայական բառակապակցության համանուն բաղադրիչներից։ Ռուսերենի քերականության մեջ ցույց են տրված դետերմինացնող անդամների հատկանիշները, որոնք հանգում են հետևյալին. դետերմինանտները՝ ա) հանդես են գալիս վերացական իմաստով բայ ունեցող նախադասություններում (Для нас он является другом-դետերմինացնող խնդիր, В молодости он был веселее-դետերմինացնող պարագա), բ) կապակցվում են բայազուրկ նախադասության ստորոգումային հիմքին (Он мне друг), գ) ձևդրում են նախադասության սկիզբը, սակավ դեպքերում լինում են նաև կենտրոնում կամ վերջում։ Ռուսերենի քերականության մեջ ավանդաբար արժեքավորված приложение (որը համարժեք է հայ քերականագիտության մեջ գործածվող գոյական որոշչին (ուղղականով) և մասամբ սովորա-

11 Այս կարգի բազմաթիվ իրողություններ դիտված են մեր նշված աշխատության մեջ։

12 В. А. Кочергина, նշվ. աշխատ.։

կան բացահայտչին) անդամից սկսել են տարբերակել այսպես կոչված ճշգրտող անդամները, որոնք ըստ էության համապատասխանում են հայերենի բացահայտչի որոշ տեսակներին (մասնավորեցնող)։

Հայ քերականագիտությունը ևս ավանդաբար ճանաչում է նախադասության երկու գլխավոր անդամ (ենթակա և ստորոգյալ) և երկրորդական անդամներ, միայն թե ենթակայի լրացումները երեքն է համարում՝ որոշիչ, հատկացուցիչ և բացահայտիչ, իսկ ստորոգյալի լրացումները երկու տեսակ՝ խնդիրներ և պարագաներ։ Պետք է նկատի ունենալ, որ հատկացուցիչը շատ էլ հեռու չէ որոշչից. տարբերությունները երկուսն են՝ ա) հատկացուցիչը դրվում է միայն սեռական հոլովով, իսկ որոշիչն ունի արտահայտության այլ միջոցներ ևս (ուղղական, ինչպես նաև մյուս թեք հոլովաձևերը, ածական, թվական, դերբայներ, մակբայ և այլն), բ) հատկացուցիչը այլ (որոշչից տարբեր) իմաստներ է արտահայտում։ Բացահայտչի մասին պետք է ասել, որ այն, մասնավորապես նրա որոշ դրսևորումներ (սովորական բացահայտիչը ենթակայի լրացման դերում) ըստ էության որոշչի դիրքային տարբերակն են։ Ինչ վերաբերում է երկկողմանի շարահյուսական կապակցություն ունեցող անդամներին, ապա դրանք նոր են արժեքավորվում, իսկ դետերմինացնող անդամները (խնդիրներ և պարագաներ) դեռևս ըստ ամենայնի չեն ուսումնասիրվել։

Ժամանակակից հայերենի բառակապակցություններին նվիրված մեր ուսումնասիրության մեջ բազմաթիվ դիտողություններ են արված երկկողմանի շարահյուսական կապակցություն ունեցող անդամների մասին[13]։

Ինչպես նշվել է վերևում, ռուսերենի ակադեմիական նոր քերականության մեջ (1970) նախադասության երկրորդական անդամներն անտեսված են։ Դրա հետևողությամբ և դպրոցական քերականությունն ու մեթոդական գրականու-

13 Վ. Քոսյան, նշվ. աշխատ.։

թյունը դասավանդման մեջ տեղ չեն հատկացնում դրանց։ Ճի՞շտ է արդյոք այս մոտեցումը։ Կարծում ենք, որ երկրորդական անդամներից հրաժարվելը կհանդեցնի այն բանին, որ սովորողները չեն հասկանա նախադասության կառուցվածքը, և գործնականում շատ դժվար կլինի շարահյուսական իրողությունների ճանաչումը։ Այդ դեպքում ինչպե՞ս զարգացնել սովորողների տրամաբանական մտածողությունը քերականության միջոցով, ի՞նչպես նրանց վարժեցնել կետադրական նշանների տեղին գործածությանը։ Իսկ եթե սրան ավելացնենք նաև այն, որ հրաժարվում են երկրորդական նախադասությունները պարզ նախադասության անդամների անուններով կոչելուց, շատ դեպքերում նաև նրանց բնույթի որոշումից, ապա պարզ կդառնա, որ շարահյուսության ուսուցումը կորցնում է գործնականությունը։ Ի դեպ, պետք է նշել, որ սովետական լեզվաբանության մեջ շատերն են բողոքում այդ սխալի դեմ[14]։

Վերջին շրջանում ռուս քերականագիտության մեջ ընդունվում են նախադասության երեք կարգի անդամներ՝ գլխավոր, երկրորդական և ուղեկցող կամ մեկուսացած անդամներ։ Ըստ էության այս երրորդ տեսակը ավանդական շարահյուսության մեջ նախադասության անդամ չհամարված բառերը կամ կառույցներն են (միջանկյալ բառեր, բառակապակցություններ, ձայնարկություն, բացականչություն, կոչական բառեր և բառակապակցություններ)։ Թեև մեր նպատակից դուրս է այս կարգի անդամների արժեքավորման հարցը, սակայն պետք է նշել, որ նախադասության անդամ հասկացությունը ենթադրում է ավյալ շարահյուսական միավորի դերը մտքի հաղորդման մեջ՝ այլ միավորների հետ ունեցած հարաբերությամբ։ Եթե այսպես կոչված ուղեկցող կամ մեկուսացած անդամները մտային տեսակետից ինչ-որ առնչություն ունեն նախադասության հետ, ապա քերականական-շարահյուսական տեսակետից չեն

14 Տե՛ս ՊՏԿՊ ժողովածուի հոդվածները։

առնչվում նախադասության անդամներին։ Հենց դրանով էլ նրանք տարբերվում են նախադասության մեջ կիսաստորոգումային դեր ունեցող տրոհվող անդամներից։ Այսպես, օրինակ, «Լուսաբացին նա բարձրացավ կախաղան (Արևածագ, օ՜, արշալույս արյունոտ)—Կանգնած էին զինվորներն ու քահանան» (ՎՏ, 1,117) նախադասության մեջ Արևածագ, օ՜, արշալույս արյունոտ *միջանկյալ է, քանի որ շարահյուսական կապի մեջ չէ ո՛չ առաջին, ո՛չ էլ երկրորդ նախադասության հետ։ Մինչդեռ «Ու հավիտյան էլ մնացին քնած, Դավին անտեղյակ, ցավին անտարբեր» (ՀԹ, 2,143) նախադասության մեջ* դավին անտեղյակ, ցավին անտարբեր *նախադասության անդամներ են (պարագա), թեև տրոհված նրանից։*

V. ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Նախադասությունը վերլուծել նշանակում է բացահայտել այն կազմող տարրերը, նրա կազմիչները։ Կանգ չառնելով այն հարցերի վրա, որոնք կապված են նախադասության մեջ եղած բառերի բառակազմական, ձևաբանական վերլուծության հետ, նշենք, որ շարահյուսական վերլուծության նպատակն է ցույց տալ շարահյուսական միավորների դերը նախադասության մեջ։ Ինչպես մասամբ ասվել է վերևում, գոյություն ունի նաև նախադասության ակտուալ անդամատում, որի նպատակը բոլորովին այլ է, քան քերականական վերլուծությունը։ Շարահյուսական կառուցվածքի քերականական անդամատումը կախված չէ խոսքային իրադրությունից, հաղորդման բովանդակությունից, հնչերանգից։ Այդ նշանակում է, որ քերականական անդամատումը կայուն է։ Մինչդեռ նախադասությունը, իբրև հարաբերականորեն ավարտուն հաղորդում, իմաստային կառուցվածք է, որն արտացոլում է որոշակի հաղորդակցական նպատակ, և դրա հետևանքով նրա իմաստային կառուցվածքը կախված է խոսքային իրադրությունից, խոսողի վերաբերմունքից հաղորդման բովանդակության նկատ-

մամբ։ Այդ պատճառով էլ նախադասության իմաստային անդամատումը շարժուն է, սուբյեկտիվ։ Նախադասության ակտուալ անդամատումը նրա իմաստային կառուցվածքի վրա է հենվում։ Թեև ակտուալ անդամատման ուսմունքի հիմնադիրը Վ. Մատեզիուսն է[15], սակայն ըստ էության դա նախադասությունը որպես հոգեբանական դատողություն ընդունելով կատարված վերլուծությունն է, որը դալիս է հոգեբանական դպրոցից։

Ակտուալ անդամատումը նախադասությունը բաժանում է ասացվածքի ելակետին և միջուկին։ Ասացվածքի ելակետն այն է, ինչ հայտնի է կամ հեշտությամբ հասկացվում է, իսկ միջուկը՝ այն, ինչ խոսողը նոր է հայտնում ելակետի մասին։ Ըստ էության ասացվածքի ելակետը այսպես կոչված հոգեբանական ենթական է, իսկ միջուկը՝ հոգեբանական ստորոգյալը։ Ի միջի այլոց, ակտուալ անդամատման համար այժմ գործածում են մի շարք տերմիններ, ինչպես՝ հիմք և միջուկ, տրված և նոր, հիմք և ստորոգվող մաս, լեքսիկական ենթակա և լեքսիկական ստորոգյալ, իմաստային սուբյեկտ և իմաստային պրեդիկատ, թեմա և ռեմա և այլն։ Հայ քերականագիտության մեջ ակտուալ անդամատման ուսմունքը հիմնադրվել է Մ. Աբեղյանի կողմից[16]։ Նախադասությունը դիտելով իբրև հոգեբանական դատողություն, Մ. Աբեղյանը հոգեբանական (դատողության) ենթակա էր համարում այն պատկերացումը, որը առաջ է ծնվում խոսողի մտքում, իսկ հոգեբանական ստորոգյալ՝ այն պատկերացումը, որը հետո է ծնվում խոսողի մտքում և վերագրվում ենթակային։ Սակայն Մ. Աբեղյանը նախադասության հոգեբանական վերլուծությունը, որ է՝ ակտուալ անդամատումը, տարբերում էր քերականականից[17]։ Քերականական նույն կառուցվածքով նախադասությունը կարող է

---

15 Տե՛ս նրա «О так называемом актуальном членении предложения», 1947 (ПЛК հոդվածների ժողովածու)։

16 Տե՛ս «Հայոց լեզվի տեսություն», 1965, էջ 22—24, 351—354։

17 Նույն տեղում։

հիմք դառնալ հոգեբանական տարբեր դատողությունների, այսինքն ունենալ տարբեր ակտուալացում[18]։

Ակտուալ անդամատումը բոլորովին չի հակասում քերականական վերլուծությանը, ինչպես և ավելորդ զուգահեռություն չի ստեղծում։ Այդ պատճառով էլ նախադասության շարահյուսական վերլուծությունը ըստ գլխավոր և երկրորդական անդամների անհրաժեշտ է։

Ա. ԻՆՉՊԵՍ ԵՆ ԲԱՑԱՀԱՅՏՎՈՒՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԸ

Ավանդական քերականությունը նախադասության անդամների բացահայտման համար հիմնականում գործադրում է հարցի մեթոդը։ Իբրև հարց ծառայում են հարցական դերանունները՝ ո՞վ, ի՞նչ (իրենց հոլովված ձևերով՝ ո՞ւմ, ի՞նչի, ինչի՞ն, ումի՞ց, ինչի՞ց, ումո՞վ, ինչո՞վ, ովքե՞ր, ինչե՞ր), ո՞ր, ի՞նչպիսի, ի՞նչքան, ի՞նչպես, ո՞րպես, ե՞րբ, ո՞ւր, որտե՞ղ, և այլն։ Սրանց մի մասը հարաբերակից է հոլովվող խոսքի մասերի (գոյականի, որոշ դերանունների և այլն) համապատասխան ձևերին, իսկ դա նշանակում է, որ նախադասության համապատասխան անդամի համար բնորոշ է այս կամ այն խոսքի մասի որոշակի ձևը։ Այսպես՝ ենթակայի համար բնորոշ է գոյականի ուղղական հոլովաձևը (Գետը հոսում է), պարզ սահմանի համար՝ բայի դիմավոր ձևը (Գետը հոսում է, Գետը վարարեց և այլն), հատկացուցչի համար՝ գոյականի սեռական հոլովաձևը (Գետի հոսանքը դանդաղ է), ուղիղ խնդրի համար՝ հայցական հոլովաձևը (Նա մաքրեց սեղանը), անուղղակի խնդիրների համար՝ տրական, բացառական, գործիական հոլովաձևերը (Դիմեց ուսուցչին, հեռացավ պատից, գրեց մատիտով) և այլն։

Մասնավորապես նախադասության երկրորդական անդամները գտնելու համար հարցերի առաջադրումը բխում է նրանից, որ այս կամ այն անդամը տարբեր ձևավորում

---

18 Նույն տեղում, 354։

ունենալով՝ իմաստով ընդհանուր է։ Հենց այդ իմաստային ընդհանրությունն էլ թելադրում է տվյալ հարցը։ Այսպես, ձևի պարագան կարող է արտահայտվել գոյականի (և հոլովվող այլ խոսքի մասերի) տրական, բացառական, գործիական հոլովաձևերով, կապային կառույցներով, մակբայով, ածականով, դերբայներով և այլն (Նա պառկեց մեջքին, ծառը հատեցին արմատից, խոսում է բարկությամբ, դատում է երեխայի պես, հարվածեց շեշտակի, խոսեց պարզ, հարձակվեց կատաղած և այլն)։ Սակայն տվյալ բազմաձև անդամը պատասխանում է նույն ի՞նչպես հարցին, քանի որ նշված բոլոր բառաձևերն ունեն իմաստային ընդհանրություն։ Հարցն էլ հենվում է այդ ընդհանրության վրա, բխում է դրանից։

Երկար ժամանակ քերականագիտության մեջ (սկսած Պոտեբնյայից, Պեշկովսկուց) առարկում են հարցի մեթոդի դեմ։ Առարկության պատճառն այն է, որ մի շարք դեպքերում, մասնավորապես երբ նախադասության տվյալ անդամը ձևավորված է նախդրավոր կառույցներով, հնարավոր չէ հարցը ճիշտ դնել։ Երբեմն էլ նախդրավոր (որ նույնն է, թե կապային) կառույցների դեպքում դնում են 2 հարց, որ սխալ է, և ապա բողոքում, թե հարցի մեթոդը ճիշտ չէ։ Այսպես, Վ. Ա. Կոչերգինան մերժում է նախադասության երկրորդական անդամները գտնելու համար հարցի մեթոդի գործադրումը այն հիման վրա, որ հարցերը հնարավոր է դնել տարբեր ձևով, օրինակ, Книга лежит на столе նախադասության մեջ на столе-ին եթե հարց տանք на чем?, ապա այն խնդիր է, իսկ եթե հարց տանք где?, ապա այն պարագա է[19]։ Սա սխալ է, քանի որ նախդրավոր կառույցի դեպքում չի կարելի հարցն ուղղել նախդրառու բառին՝ նախդրի կրկնությամբ։ Նույն ձևով չի կարելի հայերեն «Նա բնակվում է շատրվանի մոտ» նախադասության մեջ շատրվանի մոտ լրացմանը հարց ուղղել մոտ կապից ելնելով

---

19 Տե՛ս В. А. Кочергина, նշվ. աշխատ.։

(ինչի՞ մոտ)։ Նման դեպքերում պատասխանը անհեթեթություն կլինի (տավտալոգիա)։ Կապային կառույցներով արտահայտված անդամները գտնելու համար հարցը տրվում է՝ ելնելով լրացման իմաստից։ Հիշյալ նախադասություններում ճիշտ են где?, որտեղ հարցերը։ Արդյոք կարելի՞ է հրաժարվել հարցի մեթոդից և նախադասությունը վերլուծել։ Ինչպես ասացինք, երբեմն այս կամ այն երկրորդական անդամի համար հարցի դրումը հնարավոր չէ։ Սակայն սա չի նշանակում, թե պետք է ամբողջովին հրաժարվենք հարցից։ Չէ՞ որ հարցը օգնում է բացահայտելու լրացման իմաստային կապը լրացյալի հետ։

Հարցի մեթոդն օգնում է լիովին բացահայտելու նախադասության կազմիչները։ Ակնհայտ է, որ յուրաքանչյուր կազմիչ պատասխանում է մեկ հարցի։ Այսպես, «Երեխաները բակից հավաքեցին ձյունը» նախադասության մեջ յուրաքանչյուր բառաձև պատասխանում է մեկ հարցի (ովքե՞ր հավաքեցին)—երեխաները (= ենթակա), (երեխաները) ի՞նչ արեցին—հավաքեցին (= ստորոգյալ), (հավաքեցին) ի՞նչը— ձյունը (= ուղիղ խնդիր), (հավաքեցին) որտեղի՞ց— բակից (= տեղի պարագա)։

Բ. ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ԾԱՎԱԼԸ

Ինչո՞վ կարող է արտահայտվել նախադասության այս կամ այն անդամը։ Հայտնի է, որ նախադասության անդամները քիչ դեպքում ունեն դրսևորման ձևաբանական հատուկ միջոցներ։ Սակավաթիվ այդպիսի անդամներից են պարզ ստորոգյալը, որը արտահայտվում է դիմավոր բայաձևով, և հատկացուցիչը, որն արտահայտվում է սեռական հոլովաձևով։ Նույնիսկ ենթական դրսևորման մեկից ավելի ձևեր ունի (նկատի ունենք ոչ միայն կողմնակի ենթակայի

սեռականով, այլև բացառականով[20], ինչպես և ամբողջական նախադասությունների, շարահյուսական ամբողջական կառույցների փոխանվանական ենթակա գործածությունը և այլն)։ Նախադասության անդամները սովորաբար արտահայտվում են մեկից ավելի ձևերով։ Դա առավել ևս վերաբերում է երկրորդականներին։ Այսպես, որոշիչը դրսևորվում է ածականով, թվականով, դոյականով (նաև կապային կառույցներով), մակբայով, դերբայներով և այլն։

Բացահայտիչն ստանում է բացահայտյալի ձևը։ Խընդիրներն ու պարագաները բազմապիսի դրսևորում ունեն։

Որքա՞ն է նախադասության անդամի ծավալը, և ո՞րն է այն չափանիշը, որով որոշվում է այդ ծավալը։ Այս հարցերին ավանդական քերականությունը վճռական պատասխան չունի (թեև տեղ-տեղ փորձեր են արված գտնելու դրանք), իսկ կառուցվածքային լեզվաբանությունն էլ դրանք դուրս է համարում քննարկումից, քանի որ մերժում է նախադասության անդամ հասկացությունն առհասարակ։ Ինչպես հայտնի է, ԱԿ վերլուծությունը երևան է հանում շարահյուսական կառույցները. այդ մեթոդներով նախադասության անդամները չեն բացահայտվում։ Կախվածությունների բացահայտումով էլ երևան են հանվում հիմնականում ամբողջական բառակապակցությունները։

Նախադասության անդամները, անկախ նրանց կարգից (գլխավոր կամ երկրորդական լինելուց), արտահայտման նույն հնարավորություններով են օժտված։ Այդ նշանակում է, որ և՛ գլխավոր, և՛ երկրորդական անդամները ծավալի տեսակետից հավասար պայմաններում են։ Հայտնի է, որ նախադասության անդամի ծավալի նվազագույնը ձևաբանական մեկ միավորն է, այսինքն նախադասության մեկ անդամ կարող է լինել որևէ խոսքի մասի մեկ ձևը՝ բացառու-

---

20 Բացառական հոլովի գործածությունը ենթակայի դերում առաջինը դիտված է պրոֆ. Ս. Գ. Աբրահամյանի կողմից («Ժամանակակից հայերենի շարահյուսության մի քանի հարցեր», 1962, էջ 16։ Տե՛ս նաև մեր նշվ. աշխատ., էջ 315—316։

թյամբ սպասարկու խոսքի մասերի (նախդիրներ, կապեր, շաղկապներ և այլն), ինչպես գոյականը, բայը, ածականը, մակբայը և այլն։ Ձևաբանական մեկ միավորի շարահյուսական առավելագույն արժեքը նախադասության մեկ անդամ լինելն է։ Այսպես, «Ծառերը ծաղկում են գարնանը» նախադասության մեջ յուրաքանչյուր խոսքի մասի ձև շարահյուսական մեկ դեր ունի (նախադասության մեկ անդամ է)։ Այս իմաստով էլ ճիշտ չեն այն փորձերը, երբ բայի բաղադրյալ (թեկուզ երկրորդական) ժամանակային ձևերը դիտվում են բաղադրյալ ստորոգյալ, իսկ բայական հարադրությունները (անց է կենում, բաց է անում տիպի)՝ բարդ ստորոգյալ։ Ձևաբանական համակարգի մեկ միավորը շարահյուսական համակարգում չի կարող ունենալ մեկ միավորից ավելի արժեք։ Առավել ևս, եթե հարադրական բարդությունները բառային մակարդակի մեկ միավոր են, ապա ինչպե՞ս կարող են շարահյուսական մակարդակում բարդ միավոր դիտվել (բարդ, ինչպես և բաղադրյալ միավորը կազմվում է մեկից ավելի ձևաբանական միավորներից)։ Ավելորդ չէ նշել, որ սպասարկու բառերը շարահյուսական մակարդակում ինքնուրույն դեր չունեն։ Դրանց մի մասը ձևավորում է նախադասության (համապատասխանաբար և բառակապակցության) անդամը, ինչպես՝ «խոսում է իմաստունի պես», «Գնաց դեպի տուն» և այլն, իսկ մյուսները ծառայում են նախադասության անդամների և նախադասությունների հարաբերությունների արտահայտմանը։ Նախադասության անդամի ծավալի տեսակետից նյութական և սպասարկու բառի կապակցությունը պարզ միավորի արժեք ունի։

Իսկ ձևաբանական մեկ միավորից ավելի բաղադրիչները կարո՞ղ են շարահյուսական մեկ դերով օժտված լինել։

Սովետական լեզվաբանության մեջ երկար տարիներ ի վեր այս հարցը շոշափվում է։ Ռուս քերականագիտությունը որոշակի քայլեր արել է այս ուղղությամբ։ Հայտնի են Կրոտևիչի աշխատությունները, որոնցում նա հետևողականորեն

զարգացնում է այն միտքը, որ նախադասության անդամը կարող է արտահայտվել ամբողջական բառակապակցությամբ[21]։

Ի՞նչպես են հիմնավորում նախադասության մեկ անդամի՝ ամբողջական բառակապակցությամբ դրսևորելու հնարավորությունը։

1959 թ. Ռուսաստանի Հարավի և Հյուսիսային Կովկասի լեզվաբանների՝ նախադասության անդամների հարցին նվիրված խորհրդակցությանը կարդացված մի շարք զեկուցումներում (Ե. Վ. Կրոտևիչ, Տ. Կ. Միլիխ, Ա. Ս. Պոպով և ուրիշներ) որոշակիորեն առաջ է քաշվում նախադասության այսպես կոչված ծավալուն անդամի ըմբռնումը։ Նախադասության մեկ անդամի դրսևորումը մի քանի բառերով պայմանավորված է բառերի ձևաբանական բնույթով և բառային նշանակությամբ։ Շատ բառեր, լիիմաստ լինելով հանդերձ, չունեն իմաստային ավարտվածություն, ուստի չեն կարող նախադասության ինքնուրույն անդամ լինել, թեև նրանք բառակապակցության գլխավոր անդամ են (օր.՝ Он был высокого роста)։ Դ. Ս. Գերշկովիչը իր մի հոդվածում այն միտքն է զարգացնում, որ իրականության մեջ առարկաների անվանումները կարող են արտահայտվել՝ ա) բառերով, բ) շարույթով (իմա՛ բառակապակցությամբ), գ) նկարագրաբար, դատողություն չարտահայտող նախադասությամբ (իմա՛ երկրորդական նախադասությամբ)[22]։ Այս հարցը մասնակիորեն շոշափված է նաև հայ քերականագիտության մեջ[23]։ Հիմնականում համաձայն լինելով այս մտքին, պետք է ավելացնել, որ նախադասության մեկ անդամի

---

21 *Е. В. Кротевич,* Соотношение между членами предложения и частями речи (тезисы докладов СЯЮРСК).

22 *Տե՛ս* ՊՏՀՊ.

23 *Տե՛ս մեր «Մակբայի բառակապակցությունները ժամանակակից հայերենում» (Խ. Աբովյանի անվան մանկ. ինստիտուտի «Գիտական աշխատությունների ժողովածու», № 8, 1961 թ.), «Ածականի բառակապակցությունները ժամանակակից հայերենում» («Պատմա-բանասիրական հանդես», 1962, № 2),* Ս. Դ. Աբրահամյան, *Ժամանակակից հայերենի քերականություն, 1969, էջ 259, 287, 298։*

դեր կատարող բառակապակցությունները միատեսակ չեն։ Դրանց մի մասը անտրոհելի, չբաժանվող է և հաջորդ աստիճանի շարահյուսական վերլուծության դեպքում այլևս չի բաժանվում շարահյուսական ինքնուրույն միավորների (человек высокого роста, սև մազերով աղջիկ) և իր այդ անփոփոխ ձևով հանդես է գալիս որպես և՛ բառակապակցության, և՛ նախադասության կազմիչ (անդամ)։ Երկրորդ դեպքում նախադասության անդամ է դառնում շարահյուսական այնպիսի կառույց, որն անդամատվող է, ենթակա է հաջորդ աստիճանի վերլուծության, որից ստացվող կազմիչները շարահյուսական դերով օժտված միավորներ են։

Պետք է նշել նաև, որ ճիշտ չէ այն կարծիքը, թե նախադասության մեկ անդամի դերում հանդես եկող շարահյուսական ամբողջական կառույցների կազմում եղած միավորները կարող են դիտվել իբրև նախադասության պարզ անդամներ, որոնք նախադասության մեջ այն դերն ունեն, ինչ որ պարզ նախադասությունների բարդ նախադասության կազմում[24]։ Դրանք ոչ թե նախադասության, այլ տվյալ կառույցի կազմիչներ են, և նախադասության մեկ անդամի դերը կատարում է արդեն տվյալ կառույցի գլխավոր բառը՝ կառույցի մեջ մտնող բառերի լծակցությամբ։ Իսկ կառույցի կազմիչներն արդեն անդամ են ոչ թե նախադասության համար, այլ տվյալ կառույցի, ավելի ճշգրիտ՝ գլխավոր բառի։ Այսպես, երբ ասում ենք «նա աշխատում է ընկերոջից արագ», ապա ընկերոջից արագ մակբայական բառակապակցությունը նախադասության մեջ կատարում է ձևի պարագայի պաշտոն, և ընկերոջից բառաձևը այլևս տվյալ նախադասության անդամ չէ, այլ արագ մակբայի լրացում։ Նույն ձևով և նախադասության մեջ դերբայական դարձվածով արտահայտված անդամների ներսում կան դերբայի լրացումներ, որոնք ոչ թե նախադասության, այլ դերբայի անդամներ են։ Օրինակ, «Դաս պատասխանողը Վարդանն է»

---

24 Տե՛ս Տ. Կ. Միլիխի զեկուցման թեզիսները, СЯЮРСК։

նախադասության մեջ դաս պատասխանողը դերբայական դարձվածով ենթակա է, որի մեջ դաս բառաձևը ոչ թե նախադասության, այլ պատասխանողը դերբայի լրացումն է։

Իսկ ո՞րն է նախադասության անդամի չափանիշը, ի՞նչը պետք է համարել նախադասության մեկ անդամ։ Չէ՞ որ շատ դեպքերում ձևաբանական մեկ միավորն է դառնում նախադասության անդամ, իսկ այլ դեպքերում՝ ամբողջական բառակապակցությունը։ Կարծում ենք, որ նախադասության անդամի չափանիշը որևէ հարցին պատասխանելն է. այն, ինչ պատասխան է ծառայում նախադասության այս կամ այն անդամը դտնելու համար, հենց նախադասության մեկ անդամ է։ Այսպես, «Նա վերադարձավ առավոտյան» նախադասության մեջ ե՞րբ հարցի պատասխան ծառայում է առավոտյան բառը, ուստի այն նախադասության մեկ անդամ է (ժամանակի պարագա), իսկ «Նա վերադարձավ ինձնից կես ժամ հետո» նախադասության մեջ ե՞րբ հարցի պատասխանն է ծառայում ինձնից կես ժամ հետո շարահյուսական կառույցը (ժամանակի պարագա)։ Սրա հետ կապված պետք է գործադրվի փոխարինման մեթոդը. բերված նախադասություններից առաջինի առավոտյան բառաձևը հնարավոր է փոխարինել երկրորդ նախադասության ինձնից կես ժամ հետո կառույցով։ Եթե շարահյուսական ամբողջական կառույցը համարժեք է մեկ բառի, ապա այն նախադասության մեկ անդամ է։

Սույն ուսումնասիրությունն էլ նվիրված է նախադասության մեջ հանդես եկող շարահյուսական կառույցների քննությանը։ Իրոն այդպիսի կառույցներ նկատի ունենք դերբայական դարձվածները, ածականական, մակբայական բառակապակցությունները, գոյականական մի շարք բառակապակցություններ (տարբեր բառաձևով լրացումներ պարունակող) և այլն, որոնք կարող են հանդես գալ շտրոհված և ոչ շտրոհված ձևով։ Այդ կարգի կառույցների քննությունը տարվում է նախադասության կառուցվածքի մեջ դրանց դերսևորման բոլոր առանձնահատկությունների հաշվառումով։

Ընդ որում մի դեպքում այդ կառույցները հանդես են գալիս իբրև նախադասության անդամ (ավանդական ըմբռնումով), իսկ մյուս դեպքում նախադասության մեջ այլ դեր ունեն (կամ ուղեկցող, մեկուսացած անդամ են), ինչպես՝ կոչական, միջարկություն և այլն։

VI. ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆ ԻԲՐԵՎ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ

Ա. ՄԻԱԿԱԶՄ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ

1. ԴԵՐԲԱՅԱԿԱՆ ԴԱՐՁՎԱԾ

Անցյալի մեր քերականները դիտել են դերբայների և երկրորդական նախադասությունների փոխարինման երևույթը։

Այդ իրողությանն ուշադրություն են դարձրել Ա. Բագրատունին, Վ. Զալբիյանը, Ս. Այտընյանը և ուրիշներ[25]*։ Այսպես, Ա. Այտընյանը նշում էր, որ դերբայները համառոտ խոսվածք են կազմում՝ հարաբերական (այսինքն երկրորդական նախադասության փոխարեն)։ Ս. Պալասանյանը և նրանից հետո այլ քերականներ ուշադրություն դարձրին երկրորդական նախադասության և դերբայական դարձվածի վրա՝ վերջինս համարելով իբրև երկրորդական նախադասության կրճատման հետևանք և հենց այդպես էլ անվանում են (կրճատված նախադասություն)*[26]*։ Հենց Ս. Պալասանյանը դուշակեց երկրորդական նախադասության կրճատման օրինաչափությունները, որը հետագայում հստակեցին մյուս քերականները։*

---

25 Ա. Բագրատունի, *Հայերէն քերականութիւն ի պէտս դարդացելոց*, Վենետիկ, 1852, էջ 209, Վ. Զալբիյան, *Քերականութիւն հայկազեան լեզուի*, Վիեննա, 1883, էջ 405, Ա. Այտընյան, *Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի*, Վիեննա, 1866, էջ 215։

26 Ս. Պալասանյան, *Քերականութիւն մայրենի լեզուի*, Թիֆլիս, 1906, էջ 30։

Մ. Աբեղյանը մերժում է դերբայական դարձվածը երկրորդական նախադասությունից առաջացած լինելու դրույթը և երկրորդական նախադասության կրճատման փոխարեն առաջարկում գործածել նրանց վերածումը լրացական բառերի կամ բարդ խոսքի վերածումը պարզի[27]:

Իրավացի էր Մ. Աբեղյանը՝ մերժելով դերբայական դարձվածը երկրորդական նախադասությունից առաջանալու կարծիքը, քանի որ դերբայական կառույցները կարող են գործածվել նաև բոլորովին այլ հանգամանքներում: Դրանք երկրորդական նախադասություններին համարժեք լինելուց զատ այլ կիրառություն էլ ունեն:

Հետևելով ռուս քերականագիտությանը՝ Գ. Սևակը ոչ միայն կրճատված նախադասություն տերմինը փոխարինեց դերբայական դարձված տերմինով, այլև ամենայն խորությամբ մշակեց երկրորդական նախադասության կրճատման օրինաչափությունները: Իսկ սա նշանակում է, որ նա, մի կողմից ճանաչում է դերբայական դարձվածը իբրև ինքնուրույն իրողություն, իսկ, մյուս կողմից, այն կապում է երկրորդական նախադասության կրճատման հետ:

Մի կողմ թողնելով երկրորդական նախադասությունների կրճատման օրինաչափությունների մեջ թույլ տրված անճիշտ ու վիճելի որոշ դրույթներ (որոնց քննարկումը դուրս է սույն աշխատության նպատակներից)՝ նշենք, որ տերմինը ճիշտ է ընտրված, քանի որ արտացոլում է դերբայական կառույցի առանձնահատկությունները: Դերբայական դարձվածը շարահյուսական մի կառույց է, որի կենտրոնը դերբայն է:

Այսպիսով, հայ քերականագիտության մեջ դերբայական դարձված տերմինը առաջին անգամ գործածել և նրա բովանդակությունը սահմանել է Գ. Սևակը: Այդ սահմանումով դերբայական դարձված կոչվում է նախադասության

---

27 Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 605:

այն անդամը, որն արտահայտված է որևէ դերբայով և ունի լրացումներ[28]։

Դերբայական դարձվածի այս ըմբռնումն անշուշտ կապված է ռուս քերականագիտության մեջ գործածվող причастный оборот և деепричастный оборот հասկացությունների հետ։ Սակայն պետք է նկատի ունենալ, որ ռուսերենի այդ երկու տերմինները լիովին չեն կարող արտահայտել հայերենի դերբայական դարձվածի էությունը։ Բանն այն է, որ ռուս քերականագիտության մեջ անորոշ դերբայը (инфинитив) причастие-ի և деепричастие-ի հետ նույն կարգի երևույթ չի դիտվում։ Դրանք քերականական տարբեր իրողություններ են, քանի որ ձևաբանորեն ընդհանրություն չունեն և տարբերվում են նաև շարահյուսական դերով։ Հայ քերականագիտության մեջ ևս անորոշ դերբայը երկար ժամանակ առանձին ձև է դիտվել, չի մտցվել դերբայների շարքը։ Սակայն կատարված ուսումնասիրությունները երևան են հանել անորոշի և մյուս դերբայների ոչ միայն բառիմաստային, այլև կիրառական ընդհանրությունները[29] (հմմտ. անորոշի գործիական հոլովաձևի և հարակատարի հարաբերակցությունը)։ Այնպես որ հայերենի դերբայական դարձվածը ավելի լայն ընդգրկում ունի, քան ռուսերենի причастный оборот և деепричастный оборот հասկացություններն են. այն ընդգրկում է նաև инфинитивный оборот-ը։ Այս վերջինի առնչությամբ պետք է նշել, որ շնորհիվ իր ձևաբանական հատկանիշների (հոլովվելու) հայերենի անորոշ դերբայը շարահյուսական կիրառությամբ ավելի լայն է, քան ռուսերենի անորոշ դերբայը, որն անփոփոխ խոսքի մաս է։ Այս առնչությամբ էլ պետք է

---

28 Տե՛ս Գ. Սևակ, Շարահյուսություն (դասագիրք), 1936 թ. և հետագա հրատարակությունները։ Ի դեպ, դասագրքի առաջին հրատարակության մեջ էլ գործածված էր դերբայական լրացում տերմինը, որը հետագայում փոխարինվեց նշված տերմինով։

29 Տե՛ս Ա. Աբրահամյան, Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական հատկանիշները, Երևան, 1952։

նշել, որ հայ քերականագիտության մեջ դերբայական դարձվածի հատկանիշների ըմբռնման գործում մինչև այժմ կան հնացած, հայերենի ոգուց չբխող պատկերացումներ, որոնք անշուշտ հետևանք են հայերենի դերբայական դարձվածի որոշ առանձնահատկությունների անտեսման։ Մասնավորապես այդպես է դերբայական դարձվածը միայն իբրև տրոհվող անդամ հասկանալու և նրա հետ կետադրություն կապելու հարցը, որին ըստ էության կանդրադառնանք ստորև։

Դերբայական դարձվածի ուսումնասիրությանը նվիրվել են մի շարք աշխատանքներ[30]։ Ի միջի այլոց, դրանց մեջ նյութի ընդգրկման տեսակետից աչքի է ընկնում Ժ. Ճշմարիտյանի ուսումնասիրությունը։ Հեղինակը առաջին անգամ մանրամասնորեն քննել է նախադասության բոլոր անդամների դերում հանդես եկող դերբայական դարձվածները և հատկապես ընդգծել դերբայական դարձվածը որպես նախադասության միասնական անդամ, որն ունի իր բաղադրիչները, որոնք նախադասության մեջ ինքնուրույն անդամի դեր չունեն։ Անշուշտ այդ աշխատության մեջ կան նաև վիճելի դրույթներ՝ կապված բառակապակցության և դերբայական դարձվածի փոխհարաբերության ըմբռնման հետ, սակայն դրանց քննությամբ այստեղ չենք զբաղվի առաջադիր խնդրի հետ անմիջականորեն կապ չունենալու պատճառով։ Սակայն դերբայական դարձվածի ըմբռնման գործում դեռևս կա անորոշություն։

Որո՞նք են այն հարցերը, որոնք լուծում են պահանջում։ Առաջինն այն հարցն է, թե դերբայական դարձված ի՞նչը պետք է համարել՝ դերբայն առանձին, թե՞ դերբայը իրեն հետ կապվող բառերով հանդերձ։ Կարծում ենք, որ դերբայական դարձված ասելով պետք է հասկանալ դերբայը՝ նրա շրջանակի մեջ մտնող բոլոր բառերով։ Նույնիսկ դարձված տերմինն է հուշում, որ դա միայն մեկ բառ

30 Ժ. Ճշմարիտյան, Դերբայական դարձվածը արդի հայերենում, Երևան, 1961, Ա. Մաղուրյան, Դերբայական դարձված և նախադասության գոլմնակի անդամներ (դասախոսություն), Երևան, 1971 և այլն։

(ավելի ճիշտ՝ ձևաբանական մեկ միավորը) չէ, այլ բառերի կապակցություն է։ Չէ՞ որ դարձված բառը դարձվածքի տերմինային նշանակությամբ գործածվում է լեզվաբանության մեջ իբրև բաղադրյալ ամբողջություն (դարձվածքի՝ բառային բաղադրյալ միավոր, դարձվածքի՝ արտասանական շղթայի մեծ միավոր, որը բաղկացած է տակտերից, իսկ տակտը սովորաբար մեկ բառ է)։ Եթե դերբայական դարձված ասելով պետք է հասկանանք դերբայը միայնակ, ապա ի՞նչ տարբերություն կա լրացում չունեցող դերբայի և դերբայական կառույցի միջև, ինչպես՝ «Մոտենալիս նրանք դանդաղեցրին վարգը» (ԴԴվ, 8) և «Տանը մոտենալիս նրա սիրտը ծփում էր ուրախությունից»։

Երկրորդը մասամբ կապվում է առաջինի հետ. դա այն հարցն է, թե նախադասության մեկ անդամի դեր կատարողը միայնակ դերբա՞յն է, թե՞ դերբայական կառույցն ամբողջությամբ։ Այս հարցին մասամբ պատասխանել ենք ներածական գլխում։ Ավելացնենք այստեղ մի հանգամանք։ Բանն այն է, որ փոխակերպական քերականությունը (որի սկզբունքները վաղուց են եղել քերականագիտության մեջ) որոշակի հարաբերակցություն է արձանագրում երկրորդական նախադասության և դերբայական դարձվածի միջև, իսկ այդ նշանակում է, որ դերբայական դարձվածը համարժեք է երկրորդական նախադասությանը։ Այսպես, «Հրավիրեց այն մարդկանց, ովքեր վաղուց սպասում էին» բարդ նախադասության մեջ ովքեր վաղուց սպասում էին երկրորդական նախադասությունը համարժեք է «Հրավիրեց վաղուց սպասող մարդկանց» նախադասության մեջ եղած վաղուց սպասող դերբայական դարձվածին (երկուսն էլ որոշչի պաշտոն ունեն մարդկանց ուղիղ խնդրի համար)։ Եվ եթե բարդ ստորադասական նախադասության մեջ երկրորդական կոչված նախադասությունը փաստորեն նախադասության մեկ անդամի արժեք ունի, ապա նրա փոխակերպումից ստացվող դերբայական դարձվածն էլ մեկ անդամի դերով է օժտված։ Մյուս կողմից պետք է նշել, որ նախադասության մեկ անդամի դեր են կատարում նաև մի

շարք այլ կառույցներ (ածականական, մակբայական և այլ բառակապակցություններ), որոնց մասին կխոսվի ստորև։

Հաշվի առնելով դերբայական դարձվածի ըմբռնման մեջ եղած տարակարծությունները, մասնավորապես այն թյուրիմացությունը, որ նրան կետադրություն է վերագրվում, սույն հետազոտության մեջ աշխատել ենք հանգամանորեն քննել դերբայական դարձվածի բոլոր դրսևորումները։

Դերբայական դարձվածը դերբայական կառույցի կիրառություններից մեկն է։ Դերբայական կառույց է շարահյուսական ինքնուրույն դեր ունեցող ամեն մի դերբայի շուրջը կազմվող բառակապակցությունը։ Հայտնի է, որ հայերենում շարահյուսական դերով օժտված են անորոշ, անկատարի -ի վերջավորվող (որը ոմանք մակբայական կամ ժամանակային, կամ հարակցական դերբայ են անվանում)[31], ապառնի (առաջին հերթին -ի վերջավորվող), հարակատար, ենթակայական դերբայները։ Ընդ որում դրանք կարող են նույն դերը կատարել և՛ առանց լրացումների, և՛ լրացումներով։

Դերբայական կառույցների որոշ տեսակներ կարող են հանդես գալ նախ իբրև անդեմ նախադասություններ, ինչպես՝ «Մոռանալ, մոռանալ, ամենին, ամեն ինչ մոռանալ, Չհիշել, չսիրել, չափսոսալ, հեռանալ», «Ապրել միայն կարմիր դարնան», «Շարք կանգնել» և այլն։ Պետք է նշել, որ ժամանակակից հայերենում անորոշ դերբայով կազմվող կառույցի անկախ այս գործածությամբ սպառվում է դերբայական կառույցների անկախ կիրառությունը (նկատի չունենք թերի նախադասություններում դերբայների համապատասխան գործածությունը, ինչպես՝ «Ի՞նչպես էր խոսում։ —Զայրացած»)։ Ինչպես հայտնի է, գրաբարում անցյալ, մասամբ և անորոշ դերբայները հաճախ էին անկախ գործածվում՝ դիմավոր բայի փոխարեն։ Այսպես, Կորյունի «Վարք Մաշտոցի» երկի հետևյալ նախադասության մեջ «Ի

31 Տե՛ս էդ. Աղայան, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան, 1967, 358—359, Ս. Դ. Աբրահամյան, Ժամանակակից հայերենի բերականություն, Երևան, 1969, 157—159։

մանկութեան տիսն վարժեալ հելլենական դպրութեամբն, եկեալ հասեալ ի դուռն Արշակունեաց թագաւորաց Հայոց Մեծաց, կացեալ յարքունական դիւանին, լինել սպասաւոր արքայատուր հրամանացն առ հաղարապետութեամբն Հայոց՝ Առաւանայ ուրումն»՝ վարժեալ, եկեալ, հասեալ, կացեալ անցյալ, լինել անորոշ դերբայները գործածված են դիմավոր բայի նշանակությամբ (վարժվել էր, եկել հասել էր, կացել մնացել էր, եղել էր)։ Անշուշտ, ժամանակակից հայերենում անորոշ դերբայը չունի դիմավոր ձևի նշանակություն։

Դերբայական կառույցները նախադասության մեջ կարող են հանդես գալ նաև շարահյուսական այս կամ այն դերով, այսինքն նախադասության այս կամ այն անդամի պաշտոնով։ Ընդ որում տարբերակվում են երկու գործածություն. մի դեպքում անորոշ դերբայը հանդես է գալիս երանգավորիչ իմաստով գործածված դիմավոր բայի հետ՝ կազմելով այսպես կոչված բայական բաղադրյալ ստորոգյալ, ինչպես՝ «Նա ուզում է գաս սովորել», «Չի կարողանում այդտեղից հեռանալ» և այլն։ Ինչպես կտեսնենք ստորև, այս գործածությունը միայն պայմանականորեն կարելի է բայական բաղադրյալ ստորոգյալ համարել, քանի որ հնարավոր են նաև նման կառույցների դերբայական կիրառություններ, ինչպես՝ «Չկարողանալով նրան օգնել, հեռացավ այդտեղից»։ Այս դեպքում դերբայական կառույցը բաղադրյալ է, ավելի ճիշտ, առկա է կրկնակի դերբայական դարձված (որոնց մասին ստորև կխոսվի հանդամանորեն)։

Երբ անորոշ դերբայով կառույցը (համապատասխանաբար և առանձին դերբայը) գործածվում է երանգավորիչ իմաստ ունեցող բայի հետ բաղադրված, ապա այն չունի շարահյուսական ինքնուրույն դեր այնպես, ինչպես այն հանդես է գալիս առանձին (ոչ այդպիսի բաղադրության կազմում)։ Այս դեպքում անորոշ դերբայով կառույցները շարահյուսական դերով նմանվում են մյուս դերբայներով կազմված կառույցներին։ Սակայն երկու դեպքում էլ առկա է մի կառույց, որը հայտնի է դերբայական դարձված անունով։

Նախադասության ի՞նչ անդամ կարող է դառնալ դերբայական դարձվածը։ Այս հարցին պատասխանելու համար պետք է նկատի ունենալ համապատասխան դերբայների ձևաբանական և շարահյուսական կիրառության առանձնահատկությունները։ Անորոշ դերբայը հարաբերակից է գոյականին և դրա շնորհիվ հոլովվող է (միայն եզակի թվով)։ Հենց նրանով էլ պայմանավորված է նրա շարահյուսական կիրառությունը։ Անորոշ դերբայը կարող է կատարել այն բոլոր պաշտոնները, որոնք բնորոշ են գոյականին (ենթակա, սահմանական վերադիր, որոշիչ, հատկացուցիչ, բացահայտիչ, խնդիր, պարագա)։

Ընդ որում հնարավոր է, որ անորոշ դերբայը հանդես գա և՛ անորոշ, և՛ որոշյալ առումներով, լրացումներով կամ առանց լրացումների։ Այսպես, հետևյալ նախադասություններում անորոշ դերբայը հանդես է եկել ենթակայի դերով։

«Մարգպետունի իշխանի հետ խոսակցելը *ճանձրույթ չի պատճառի ինձ» (Մուր., 4, 9)։* «Կոպիտ հովվի հետ վիճելը *բոլորովին ապարդյուն կլիներ» (Ր, 7, 326)։* «Այս գիշեր իմ այստեղ գալը և քո այնտեղ գնալը *պատահական զուգադիպություն է» (ՆԴ, 3,51)։* «Առաջին անգամ Զորագյուղ գալը *դարձավ իմ կյանքի լավ դիշերներից մեկը» (Բակ., 119)։* «Այդ օրից սկսվեց և Հյումբարի ձորի արհամամ լինելը» *(Բակ., 251)։* «Սովորել է *պետք և ոչ թե* խուսափել»։ «Սպասելը *հավասար է կործանման»։*

Հետևյալ նախադասություններում անորոշ դերբայը սահմանական վերադիր է։ «Նպատակը հուսահատության հասցրեցին էր և ստիպելը հավատուրացության» *(ԴԴվ, 317)։ «Միրանի տափի առավելությունը* քամիներից պաշտպանված լինելն է» *(Բակ., 42)։ «Մի՞թե դա* աշխատել է, *որ դու ես աշխատում»։*

Անորոշ դերբայով արտահայտված որոշիչը և հատկացուցիչը քիչ են տարբերվում իրարից։ Այդպես են հետևյալ նախադասություններում գործածված ձևերը.

«Ու պետք է քայլել, ու քայլել համառ՝ Ապրելու *հսկա տենչը բեռ արած» (Զ, 238)։ «Նորից բարձր պաշտոն ստանալու հավանականությունից սիրտը թպրտաց» (ՍԽՀ, 139)։ «Մյուսը խոսելու իրավունք չունի» (ՀԲ, 2,42)։ «Ոչ էլ մեռնելու կասկածանք կար ներսդ» (Զ, 219)։ «Սկսեց ծառանալ, պտտվել, հեծյալին շպրտելու շարժումներ անել» (ԴԴվ, 7)։ «Վերջացրել էր* պարսիկներին երկրից հշելու *գործը» (ԴԴվ, 610)։*

Անորոշ դերբայը կարող է հանդես գալ բացահայտչի դերում։

«Եվ բախտից մի բան ենք խնդրել՝ Ճամփա տալ բոլոր հովերին, *Եվ* կանգնել հողմին հակառակ։ Աշխարհում ապրել նրա պես, Նրա պես լինել հասարակ» *(ՀՍԲ, 1, 97)։ «Թողած հին պաշտոնը պոետի՝* Պենանոով ու շուռով գերվելը, *Ես երդում եմ բլուրն այս ետին» (ԳԷԱՏ, 435)։ «Նրան և Վասակյաններին շատ վիրավորեց Վարդանի անարգանքը՝* անծիսավոր ներս մտնելը» *(ԴԴվ, 430)։ «Իշխանին մնում էր մի նվազ հույս. այն է՝* ապավինել յուր կորովին և պերճախոսությանը՝ *ապստամբի սիրտը կակղացնելու համար» (Մուր., 4,88)։ «Շտապում էր թագուհուն տված յուր խոստումը կատարելու, այն է՝* նշանակած ժամանակին նրազգավորս վերադառնալու» *(Մուր., 4, 88)։ «Գնում էին ամբողջ օրով կամավոր աղախնի դեր կատարելու—*սամավար սրբելու, կերակրի կաթսաներ մոխրելով, բակն ավլելու, հավաքված աղբը թափելու, օրորոցի երեխայի աղտոտած պարուրները լվանալու *և այլն» (ՆԴ, 1, 91)։*

Անորոշ դերբայով կարող են արտահայտվել խնդիրները (ուղիղ և անուղղակի)։ Բերենք ընդհանուր օրինակներ.

«Գյուտն անօգուտ համարեց համառ ծերուկի հետ վիճելը» *(ԴԴվ, 164)։ «Մենք դիտենք* հաց քամել հողից» *(ՀՍԲ, 1, 95)։ «Ինչո՞ւ ինձ դատապարտեց* կենդանի մարմնով հավիտյան գերեզմանի մեջ խարխափելու» *(Մուր., 4, 117)։ «Եթե պատահեր, որ քաղաքից եկողը մյուս օրը համաձայնվեր* անձամբ տեսնելու Միրանի տափը, *համարյա ամբողջ Միրն էր դյուղից դուրս գալիս» (Բակ., 45)։ «Իրեն*

միանգամայն հեռու էր պահում նրանց անձնական գործերին միջամտելուց» (ՆԴ, 3, 19)։ «Զբաղվում էր կամ իր ճնամաշ շորերը կարկատելով, կամ գուլպա գործելով» (ՆԴ, 3, 20)։ «Քո ներս մտնելով ես այնպես ուրախացա» (Մուր., 4, 100)։ Անորոշ դերբայով արտահայտվում են նաև պարագաները.

«Առաջարկեց ինձ գնալ Ուտիք՝ թագավորի արշավանքի մասին տեղեկություն առնելու» (Մուր., 4, 107)։ «Լևոնը գնում էր սայլաբաելով» (Բակ., 185)։ «Սովոր լինելով դրանց լուծումը չգտնելուն՝ նա կարծես ժայռին դեմ առնելով հուսահատվեց» (ԴԴվ, 26)։ «Շատ լվացք անելուց և բոնրի մեջ հաց կող տալուց նրա դեմքի և ձեռքերի կաշին եռացրած ջրի և թոնրի կրակի մեջ մրկվել, չորացել, ճաքճաքել, մազաղաթ էր դարձել» (ՆԴ, 1, 69)։

Անկատար դերբայի –ով վերջավորվող ձևը, ինչպես նշվեց, սահմանափակ գործածություն ունի. այն հանդես է գալիս պարագայի դերում (ժամանակի, վիճակի)։ Հետևյալ նախադասություններում այն ժամանակի պարագա է։

«Մանկությունը հիշելիս՝ սիրտս դառնում է գինով» (Ջ, 418)։ «Նախիրն արածացնելիս Պետին նստում էր մի քարի վրա» (Բակ., 36)։

Այս դերբայը կատարում է նաև վիճակի պարագայի պաշտոն։

«Այնուամենայնիվ, տանը եղած ժամանակ, առաջին օրերը, ես նրան դուրս գալիս չտեսա» (ՍՋ, 4, 41)։ «Մայրը նրան գտավ տաքության մեջ զառանցելիս» (ՋԴԱվ, 64)։ «Հատուկենտ ուխտավորներ էին երևում վանքի պատերի տակ արևկող ննջելիս կամ քարերին կառչած աղոթք անելիս» (ՋԴԱվ, 125)։

Ապառնի դերբայը, մասնավորապես –իք վերջավորվող ձևը, նախադասության մեջ կատարում է որոշչի պաշտոն։ Այդպես են հետևյալ նախադասությունները. «Կանխատեսել էր Մանեից սատանայիք պատասխանը» (ՆԴ, 3, 104)։ «Բաժին էր ակնկալում Իսոյի մորթելիք եզից» (Բակ., 365)։ «Հազկերտին տվելիք պատասխանը միայն հոգևորների

գործը չէ» (ԴԴվ, 12) «Մի դիշեր Վասակը երկար հրահանգում էր հավանական դաշնակիցներին ուղղվելիք մարդկանց» (ԴԴվ, 138)։

Թեև հայ քերականագիտության մեջ շատերն են առարկում ապառնի (կամ կատարելի) դերբայի -ու վերջավորվող ձևի շարահյուսական կիրառությանը, սակայն անհերքելի է, որ այն ևս կարող է հանդես գալ որոշչի դերով։ Օրինակներ՝

«Դրանով աշխատում էր ժամանակ վաստակել, որպեսզի լավ որոշե յուր խաղալու դերը մոր մոտ» (Ր, 7, 42)։ «Դրանով կարծնե՞ս էն կապելու գժերի ձեռիցը» (ՆԴ, 1, 73)։ «Մարդկային հոգում դեռ հոգեթով հորիզոններ կան նանաշելու, եվ դեռ Լուսնից ու Մարսից հետո Միր-կաթիններ կան նվաճելու» (ՀՍՀՆՄ, 71)։

-ելիք վերջավորվող ձևը կարող է գործածվել նաև գոյականաբար։ Իսկ այդ նշանակում է, որ այն կարող է կատարել գոյականին հատուկ պաշտոններ։ Այսպես, հետևյալ նախադասություններում ապառնի (կատարելի) դերբայը գոյականաբար գործածվելով համապատասխանաբար դարձել է ենթակա, ինչպես՝ «Նրանից ստանալիքը քեզ կբավարարի», ուղիղ խնդիր, ինչպես՝ «Արքան հաղորդեց նրան ճորա պահակում նրա անելիքը» (ԴԴվ, 573), անուղղակի խնդիր, ինչպես՝ «Նա դժգոհ կմնա քո հապորդելիքից»։ «Կրավարարվենք քո կատարելիքով»։

Հարակատար և ենթակայական դերբայները շարահյուսական կիրառության տեսակետից յուրահատուկ են։ Բանն այն է, որ դրանք իմաստով հարաբերակից լինելով ածականին, կիրառությամբ ևս դրսևորում են ածականի առանձնահատկություններ։ Այդ դերբայներն առաջին հերթին հանդես են գալիս որոշչի պաշտոնով։ Օրինակներ՝

«Հնամաշ, տեղ-տեղ թելերը դուրս թափված կապերտը ցածրիկ թախտի վրա միշտ ավլած էր» (ՆԴ, 2, 47)։ «Բազում խնձված ցանցերից ու խարդախ թակարդներից ճարպկորեն դուրս սրծած աղվեսը գլուխը կախեց» (ԴԴվ, 159)։ «Թաղավորը շարունակ զբաղված էր յուր տերության այս կամ այն

մասում բռնկող *ապստամբությունները նվաճելով» (Մուր., 4, 10)։ «Թվում էր, թե նա դիտում է լուսանցքի պատի վրա այդ շողերի նկարած կամարաղարդի պատկերը, կամ հեռվում աղոտ կերպով նշմարվող մթապատ լեռների արտահայտությունը» (Մուր., 4, 40)։*

Ենթակայական դերբայը կարող է կատարել նաև ստորոգելիական վերադրի պաշտոն (հարակատար դերբայը էական բայի հետ կապակցվելով կազմում է ժամանակային ձև[32])։ Օրինակներ.

«Նա շատ շուտ հասկացող է»։ «Դո՞ւ *ինչ* գործ անող *ես».*

Հարակատար դերբայը կարող է հանդես գալ որպես պարագա։ Օրինակներ՝ «Որսի էին գնում դեռ արևը չծագած» *(Ր, 7, 60)։ «Այժմ նա տուն էր դառնում* հույսը բոլորովին կտրած և խիստ շարացած ամենքի և ամեն բանի վրա» *(ՆԴ, 1, 47)։* «Հովիտներին թողած ամեն տագնապ ու հուշ՝ *Տար լեռների հովին կարոտներդ անուշ» (Զ, 24)։*

Ենթակայական դերբայը հայերենում պարագա չի դառնում[33]։

Հարակատար և ենթակայական դերբայները կարող են գործածվել զոյականաբար, և այս դեպքում նրանց շարահյուսական կիրառությունը շատ լայն է. նրանք կարող են կատարել զոյականի բոլոր պաշտոնները։ Այսպես, հետևյալ նախադասություններում այս դերբայները ենթակա են։

«Քո կրածները *կատարելապես նմանեցրած են պատահական ձևերին» (Ր, 7, 46)։* «Դվնո դաշտից դարձողներ *վազուց հասել էին տուն» (Մուր., 4, 9)։ «Իսկ* փառքի և անձնական շահու համար ազգ վանառողներ *ամեն երկրում կան» (Մուր., 4, 75)։ «Զինվորագրվում էր, անշուշտ, միմիայն* իր մեջ մի վեհ ու սուրբ վճիռ կայացնողը, մեծ գործին նվիրվածը» *(ԴԴվ, 114)։*

---

32 *Ոմանք այդ դերբում էլ հարակատար դերբայը ստորոգելիական վերադիր են համարում։*

33 *Այս առթիվ տե՛ս նշվ. աշխատ., էջ 468—469։*

Նույն դերբայները գոյականական կիրառությամբ կարող են դառնալ նաև ստորոգելիական վերադիր։ Օրինակներ՝

«Դա նրա կատարածն է»։ «Դու շարքը փակողն ես»։

Նույն կիրառությամբ այդ դերբայները կարող են կատարել հատկացուցչի պաշտոն։ Օրինակներ՝

«Որ շատ ապրումներ կրածի *հատկություն էր» (ԴԴվ, 5)։* «Անցած ձմռանը նշանվածների *կոպերի տակով Անհամբերությամբ սահում է հիմա երազանքն այրող» (ՊՍեժ, 4, 52)։* «Քո շինողի *օր-կյանքը ջրի նման երկարի» (ՀԹ, 1, 72)։*

Դրանք լինում են նաև խնդիրներ (ուղիղ և անուղղակի)։ Օրինակներ՝

«Ի՞նչ պատասխան պիտի ես տամ ճող ու ծաղիկ ավոդին» *(ՀԹ, 1, 157)։ «Աշտարակի գլխից մեկը ահա ձայն է տալու* բարափը բարձրացողին» *(Բակ., 189)։ «Կաղմվել էր* զանազան վայրերում իրենց վանքերը բողածներից» *(ԴԴվ, 352)։ «Հրավիրեցին պլանները* գերակատարողներին»։ *«Նա գետնից բարձրացրեց* ինձ նոր վայր ընկածին»։

Այս դերբայները գոյականաբար գործածվելիս սովորաբար առանձին պարագա չեն դառնում։ Կապի խնդրի դերում նրանց գործածությունը սովորական է, և այս դեպքում նրանք կարող են դառնալ պարագա։ Այս դեպքում հարակատար և ենթակայական դերբայները չեն տարբերվում անորոշից։ Կապի խնդիր դերբայական դարձվածը ինքնուրույն դեր չունի, ինչպես գոյականը կամ հոլովվող մյուս բառերը։ Իսկ կապային կառույցները, ինչպես հայտնի է, կարող են հանդես գալ նախադասության բազմազան լրացումների դերում։ Սովորական է դրանց գործածությունը պարագայի պաշտոնով։ Այսպես են հետևյալ նախադասություններում եղած կապային կառույցները։

«Նա անցնում էր *կործանվող շինվածքների տակով, առանց* ամենափոքր վտանգ կամ երկյուղ զգալու» *(Ր, 7, 298)։ «Դրանցից շատերը* նրա գեղանի դստեր փեսայության պարծանքը վաստակելու *նպատակով էին հաճախում Գարդման» (Մուր., 4, 37)։ «Նա զայրացած էր իր հրամանա-*

տարի վրա իր զինվորներին Ատոմի զորագնդին ենթարկելու *պատճառով» (ԴԴ, 444)։ «Այսպես հանգստանում է ճանճը,* սեղանի վրա մոռացված շաքարի կտորը լիզելուց *հետո» (Բակ., 55)։ «Ներունի Արբակը* հենց նաշը վերջացնելուց *հետո իսկույն աննկատելի կերպով անհայտացավ» (Ր, 7, 114)։* «Դեպի մեկը երեսը շուռ տալու *ժամանակ՝ ետևից մյուսը հարվածում էր» (Ր, 7, 83)։ «Նրանք այնպես էին հարվածում, ինչպես իրենց անձնական թշնամուն, իրենց անձնական կեղեքիչին,* իրենց շարաշար կյանքի պատճառ եղողին» *(ԴԴվ, 698)։*

Կան դեպքեր էլ, երբ կապային կառույցը հանդես է գալիս որոշչի պաշտոնով։ Օրինակներ՝

«Դպրոցի շենք կառուցելու մասին *որոշումը սպասում է իրագործման»։ «Ստացվել է հրահանգ* ֆնենությունները նոր ձևով կազմակերպելու մասին»։

Դերբայների շարահյուսական կիրառության քննությունը ցույց է տալիս, որ դրանք նախադասության բաղմազան անդամներ են դառնում։ Այս առնչությամբ հարկ է անդրադառնալ դերբայական դարձվածի հետ կետադրության կապի հարցին։ Մինչև այժմ ցուցադրած օրինակները վկայում են, որ դերբայական դարձվածի հետ կետադրություն չի կապվում։ Եթե դերբայական դարձվածը հանդես է գալիս ենթակայի, ստորոգելիական վերադրի, հատկացուցչի, խնդիրների դերում, ապա խոսք անգամ լինել չի կարող դրանց հետ կապվող կետադրության մասին։ Իսկ ի՞նչպես է եղել, որ դպրոցական դասավանդման մեջ, ինչպես և առօրյա պրակտիկայում, այնուամենայնիվ, իշխում է այն մտայնությունը, թե դերբայական դարձվածի հետ կապվող կետադրություն կա։ Բանն այն է, որ այդ կարծիքը բխում է նրանից, որ դերբայական դարձված ասելով հասկացել են միայն տրոհվող լրացումների դերում հանդես եկող դերբայական կառույցները։

Դերբայական դարձվածին վերագրվող կետադրությունը իրականում վերաբերում է նախադասության տրոհված անդամներին։ Եթե այնպես լիներ, որ տրոհվեին միմիայն

դերբայական դարձվածով արտահայտվող անդամները, ապա գուցե և հիմք ունենար դերբայական դարձվածին կետադրություն վերագրելը։ Մինչդեռ, ինչպես կտեսնենք տրոհվող անդամներին նվիրված հատվածում, նախադասության մեջ տրոհվել կարող են նաև այլ կարգի կառույցներ (այլև առանձին բառեր)։ Իսկ սա ստիպում է կետադրությունը չկապել դերբայական դարձվածի հետ։ Եվ առհասարակ, տրոհումը պայմանավորված չէ նախադասության այս կամ այն անդամի ձևաբանական դրսևորման հետ (իսկ դերբայական դարձվածը ձևաբանական որոշակի կառուցվածք է)։

2. ԱԾԱԿԱՆԱԿԱՆ ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ինչպես հայտնի է բառակապակցությունների ուսումնից, ածականը լրացումներ է ստանում հոլովվող բառերի տրական, բացառական, գործիական, մասամբ ներգոյական հոլովաձևերով, կապային կառույցներով, մակբայով, ածականով, մասամբ թվականով։

Քանի որ ածականի լրացումների հանդամանալից քննությունը արդեն կատարված է մեր կողմից, ուստի այստեղ կանգ չենք առնի այդ լրացումների վրա[34]։

Այդ լրացումները նախադասության անդամի, նույնիսկ կողմնակի անդամի պաշտոն չունեն։ Առհասարակ ածականական բառակապակցությունն օժտված է շարահյուսական մեկ դերով։ Նախադասության անդամի դերը տվյալ դեպքում ընկնում է ածականի վրա՝ իր լրացումներով հանդերձ։ Ածականական բառակապակցությունը շարահյուսական դերի տեսակետից համարժեք է դերբայական դարձվածին։ Այսպես, երբ ասում ենք «Նա պատվից զուրկ արարած է», ապա պատվից զուրկ ածականական բառակապակցությունը նույն արժեքն ունի, ինչ որ պատվից զրկված («Նա պատվից զրկված արարած է»)։ Իսկ ի՞նչ պաշտոն կարող է ունենալ ածականական բառակապակցությունը և ինչպե՞ս է որոշ-

34 Տե՛ս մեր նշվ. աշխատ., էջ 167—192։

վում այն։ Ածականական բառակապակցությունը կարող է կատարել տվյալ կառույցի գլխավոր բառին՝ ածականին հատուկ պաշտոնները՝ որոշիչ, ստորոգելիական վերադիր և պարագա[35]։ Այսպես, հետևյալ նախադասություններում ածականական բառակապակցությունները որոշիչ են.

«Աշխարհի շար ու բարուց անտեղյակ, միամիտ երեխաներ էինք» (Բակ., 132)։ «Քառասուն գազ խոր հոր էր փորել» (ՀԹ, 2, 122)։ «Այդ ամենատաղանդավոր արծանագործի Ֆերիշին արժանի տղամարդը պարապմունքով նավավար էր» (Ր, 5, 98)։ «Չէ, ասացին, արևի ծարավ Հսկաներն են իրար դարկում» (ՀԹ, 2, 126)։ «Անգութ բնությունը երբեմն մարդկանց փոքրիկ մարմնի մեջ նրանց ուժից ավելի շար նախանձ է դնում» (Շիրվ., 2, 305)։ «Հետո պատից վերցնում եմ ծամի նման պիրկ մտրակը» (Բակ., 207)։ «Վարդանը լսում էր սարսափներով ելի այդ խոսքերը» (ԴԴվ, 573)։

Ածականական բառակապակցությունները կարող են կատարել պարագայի պաշտոն։ Օրինակներ՝

«Ջարդեցին իրար, Ջնջեցին իրար, Կորան գնացին Դեռևին հավասար» (ՀԹ, 2, 143)։ «Ու Հավիտյան էլ մնացին քնած, Դավիթ անտեղյակ, ցավիթ անտարբեր» (ՀԹ, 2, 243)։ «Ու նորից հնչեցին լարերն առաջվանից ավելի փաղաքուշ ու դյուրիշ» (ՆԴ, 1, 122)։ «Կարող ես Դու՝ երգիր նրան՝ իր հույզերով մեծ ու մանրիկ» (Զ, 116)։ «Նոր սիրով լեցուն՝ դարձա ես ձեզ մոտ» (ՎՏ, 1, 195)։ «Դադիշոն խոսում էր անգրագիտորեն ազատ» (ԴԴվ, 470)։ «Նա նայում էր պատուհանի չափ կենդանի» (ԴԴվ, 374)։

Ստորոգելիական վերադրի պաշտոնով ածականի գործածության դեպքում նրա մոտ դրված լրացումների մեկնաբանությունը դժվարության առաջ է կանգնեցնում։ Բանն այն է, որ ածականի մոտ այդ լրացումները երկու մեկնաբանություն կարող են ստանալ։ Մի դեպքում դրանք կարող

35 Նույն տեղում։

են դիտվել ածականի լրացումներ այնպես, ինչպես դիտվում են, երբ ածականը կատարում է որոշչի կամ պարագայի պաշտոն։ Երկրորդ դեպքում դրանք կարող են համարվել բաղադրյալ ստորոգյալի լրացումներ։ Մասնավորապես սա վերաբերում է համեմատության խնդիրներին և չափ ու քանակի պարագային։ Իսկ այլ բնույթի լրացումները ըստ էության միայն ածականներինն են։ Բերում ենք այնպիսի օրինակներ, որոնցում լրացումները հիմնականում ածականին են վերաբերում։

«Օտար վայրում նա մեռավ տենչավառ, Հայրենի նոդին չեղավ արժանի» (Իս., 2, 199)։ «Վերջինս թափուր է պաշտպանության միջոցներից» (Մուր., 3, 270)։ «Սրտով խաղաղ եմ ես հիմա Ու խոհերով հստակ, մաքուր» (Չ, 112)։

3. ՄԱԿԲԱՅԱԿԱՆ ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ինչպես հայտնի է, մակբայները գործածվում են առաջին հերթին պարագայի պաշտոնով։ Այս դեպքում նրանք կարող են հանդես գալ և՛ միայնակ, և՛ լրացումներով։ Այսպես՝ «Նա քայլում էր դանդաղ» նախադասության մեջ դանդաղ մակբայը ձևի պարագայի պաշտոն է կատարում միայնակ։ Ինչպես ցույց են տվել ուսումնասիրությունները, մի շարք մակբայներ ունենում են լրացումներ։ Մակբայը, որպես բառակապակցության գլխավոր բառ, նախադասության մեկ անդամի պաշտոն ունի՝ իր լրացումներով հանդերձ[36]։ Այս դեպքում ևս, ինչպես ածականի բառակապակցություններն են, գլխավոր բառի լրացումները նախադասության մեջ անդամի դեր չունեն, այլ որևէ պաշտոն կատարողի բաղադրիչ են։ Մակբայը հիմնականում պարագա է լինում։ Օրինակներ՝

«Զարկերակը զարմանալիորեն արագ էր աշխատում» (ՔԹՊ, 3, 420)։ «Անհնարին արագ պետք է գորք հասցնենք

---

36 Տե՛ս մեր նշվ. աշխատ., էջ 470—479։

մարդպանին» (ԴԴվ, 588)։ «Նրան դիտողություն էին անում չափից դուրս արագ *խոսելու համար» (ԱՍԱ, 97)։* «Սովորականից կանուխ *էր եկել» (Շիրվ., 5, 377)։ «Ինչքան մթնում* է՝ այնքան ավելի մոտ *են աստղերը» (Բակ., 158)։ «Նա բա-*վական հնում *չոմած նստեց» (ԴԴվ, 209)։ «Նրա այդ քայլը* բոլորովին *իզուր էր»։*

*Կան դեպքեր, երբ մակբայը կատարում է ստորոգելիա-*կան *վերադրի պաշտոն։ Օրինակներ՝ «Ժամանակը* շատ *ուշ էր»։ «Տեղափոխությունը* չափազանց արագ *պիտի լինի»։ «Թելադրությունը* չափից դուրս արագ *էր»։*

Նախադասության մեջ մակբայի արժեքով կարող են գործածվել նաև տեղ, ուղղություն ցույց տվող մի շարք գո-յականներ, ածականներ, և այս դեպքում հիշյալ բառերը կունենան մակբային հատուկ լրացումներ, այսինքն հանդես կգան իբրև մակբայական բառակապակցության գլխավոր բառ։ Օրինակներ՝

«Եվ ոչ ոք չգիտեր, որ Լաո-Մարգարը առվի բանդը սարքելիս մտքով ուրիշ տեղ էր, գյուղից հազարավոր վերստեր հարավ» *(Բակ., 101)։* «Ճանապարհից մի ինչ ձախ *գտնվում էր գիներտունը»։* «Այդ քաղաքից դեպի արևելք *ընկած էր նշանավոր անապատը»։*

Իսկ մակբայի գործածությունը ածականի, մակբայի լրացման դերում կքննվի առանձին։

4. ԳՈՅԱԿԱՆԱԿԱՆ ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նախադասության մեկ անդամի դերով հանդես են գա-լիս նաև գոյականական մի շարք բառակապակցություններ, որոնցում գլխավոր բառը շարահյուսական տեսակետից լիարժեք չէ և լրացումներով հանդերձ է կատարում այդպիսի դեր։ Այդպիսի բառակապակցություններից կարելի է նշել ուղղական հոլովով լրացում ունեցող մի շարք գոյականնե-րի, թվական լրացումով չափի միավոր բառերի, լրացումով սեռականի, բացառականի, տրական լրացումով գործիականի և այլ բառակապակցություններ։ Այս բոլոր տեսակի բառա-

կապակցությունների համար բնորոշն այն է, որ գլխավոր բառը իմաստային տեսակետից լիարժեք չէ և կարիք է զգում որևէ լրացման՝ շարահյուսական պաշտոն կատարելու համար։ Այսպես, հետևյալ նախադասություններում շարահյուսական ամբողջական կառույցը կազմված է չափի միավորի դեր ունեցող գոյականով՝ թվական լրացումով հանդերձ, ընդ որում ամբողջ կառույցը կատարում է որոշչի պաշտոն։ «Նրանք կոլտնտեսության տասնհինգ *հազար* ռուբլի *գումարը ինքնազլուխ բաժանել են իրենց մտերիմներին ու բարեկամներին» (ՍԽՀ, 439)։ «Առանց ծեծ ու կռվի մի-մի կտոր հաց ու պանիր էլ չպրտեց նրանց գոգը» (ՆԴ, 1, 91)։*

Այսպիսի բառակապակցությունները կարող են կատարել նաև այլ պաշտոններ, ինչպես այդ երևում է հետևյալ օրինակներից.

«*Հինգ-հինգ* հոգի *իրար դեմ ելած՝ սրամարտ էին մղում» (ԴԴվ, 14)—ենթակա, «Այսօրվա կուրսով հարյուր ֆրանկն անում է ճիշտ* երեսունհինգ ռուբլի *քսանհինգ* կոպեկ» *(ՆԴ, 3, 128) — ստորոգելիական վերադիր,* Առաջին հերթին *շուկա հանեց փոքրիկ կապերտը» (ԳՍԹ, 1, 121) — ժամանակի պարագա, «Աշխարքը իրան վրա ծախես,* մեկ կոպեկի *չի առնի» (Իս., 3, 143)։ «Տվեք* հինգ ռուբլի, *կպարապենք* հինգ ռուբլու» *(ՍՋ, 3, 272)։* «Երեք *հազար* լիր *էր կշռում Հսկայական իր մկունդը» (ՀԹ, 1, 12)։ «Հավը խոսեց* երեք *բերան» (ՀԹ, 1, 164)։* «Մի *քանի* ռոպեից *ներս մտավ բերդակալը» (Մուր., 4, 20) — չափ ու քանակի պարագա։*

Այս կարգի կառույցները կարող են գործածվել նաև կապի խնդրի դերում և կապի հետ միասին կատարել տարբեր անդամների պաշտոն։ Օրինակներ՝ «Մի օրվա փոխարեն *պապս նրան պահում էր երկու, երեք օր» (Բակ., 123)։* «Վերջին երեք *ամսվա ընթացքում նրա երկու գրքույկից մեկն ամենևին չի ծախվել» (ՆԴ, 1, 179)։* «Բացի տասը *հազար* ռուբլուց *նրա գրպաններում հայտնաբերեցին ուրիշի անվամբ մի կեղծ անձնագիր» (ՍԽՀ, 731)։* «Երկու *ֆունտի չափ արդեն պակասել էր ծանրությունս» (ՆԴ, 3, 73)։*

Ժամանակ ցույց տվող մի շարք գոյականներ (or, ժամանակ, հասակ, տարիք *և այլն*) *հաճախ նախադասության մեջ շարահյուսական դերից զուրկ են՝ առանց լրացումների։ Նման բառերը, անկախ իրենց ձևից, լրացումներով հանդերձ են կատարում նախադասության անդամի պաշտոն։ Օրինակներ՝*

«Արև or երը *գյուղացիները, մանավանդ ծերերը, հավաքվում էին ժամի պատի տակ» (ՍՁ, 4, 191)։ «Պայմանավորվեցինք, որ հենց* առաջիկա շաբաթ երեկոյան, *երբ ես բոլորովին ազատ էի, նա կգա ինձ մոտ» (ՆԴ, 2, 425)։ «Դեռ* տղա հասակում *մուրալով էր ապրել» (Մուր., 1, 420)։ «Հազիվ ձեռքդ պարզեցիր, ինչպես* աղջիկ ժամանակ» *(ՀՍՀԵՄ, 262)։ «Մայրը* տան գործերից ազատ ժամանակ *սովորաբար նստում էր ծալապատիկ և զբաղվում գուլպա գործելով» (ՆԴ, 1, 155)։ «Բավական ժամանակ էր, ինչ նա յուր ատամները կրճատում էր Աշոտ Թագավորի վրա» (Մուր., 4, 70)։* «Գանի բափուր ժամանակ *ամեն մի դավաճան հրապարակ է հանում յուր հին հաշիվները» (Մուր., 4, 438)։* «Քո ուրախ պանին *հիշիր, որ ես կամ» (ԴՍԲ, 194)։ «Սա մի ծես էր, որ կատարվում էր* ամեն երեկո *միևնույն կարգով» (Մուր., 4, 20)։* «Մեռած or ս *էլ պատակ տային» (ՀԲ, 2, 86)։* «Մի կերի տարի *ես ու մեր Ավագը մասրեքումը խոզ էինք պահում» (ՀԲ, 1, 332)։* «Վերջին ժամանակներն *ուրագը մի քանի անդամ վրա անելուց հետո շունչը կտրվում էր» (ՆԴ, 1, 27)։* «Ամբողջ օգոստոս ամիսը *ջուր էր ծախում» (ՍՁ, 4, 422)։*

Որակական սեռականը կարող է իրենից անբաժան լրացմամբ հանդերձ կատարել շարահյուսական մեկ պաշտոն։ Օրինակներ՝ «Ինքը մեզ հետ միևնույն արժեքի ու արժանիքի *պաշտոնյա չէ» (ՍՁ, 4, 157)։* «Լիպլուսնի մեծությամբ *մի արևածաղիկ էլ ընկած էր Զարուհու ծնկներին» (ԱՍԾ, 279)։ «Ես աշխարհներ կուզեմ* մանգալ, *Տեսնել ցեղերն* հազար գույնի», *(ՀՇՔՀ, 88)։ «Ոչ մի պատերազմ այնքան բազմամբոխ Ու* բարի կամքի *զորք չի հավաքել» (ՀՇՔՀ, 116)։*

Շարահյուսական մեկ դերով են օժտված նաև մասնա-

կան սեռականով, բացառականով կազմված բառակապակցությունները։ Օրինակներ՝

«Մորուքավորի մեկը *ջահ վառեց*» (ՍԽՄՍ, 262)։ «Ավազակի մեկը *խլել էր վերջին շապիկն էլ*»։ «*Հովիտը շրջապատող հրաբխային* սարերից մեկը *շատ անհանգիստ էր*» (ՎԱՍՍ, 9)։ «*Նրա* երեխաներից երեքը *հաճախում են դրպրոց*»։ «Գյուղացիներից ոմանք իրենք *էին շալակել ձիերի սանձերն ու չվանները*» (Բակ., 214)։ «*Մնացածը լրացրին* սրտացավ բարեկամներից ոմանք» (ՆԴ, 1, 11)։ «Մյուս դասընկերներից շատ շատերը *նրանից անհամեմատ ավելի բարեխիղճ ու աշխատասեր աշակերտներ էին*» (ՆԴ, 3, 218)։ «*Դուրսը մնացին և իմ* խաղընկերների մեծ մասը» (ՀԲ, 1, 110)։ «Հյուսիսի անտառներից մեկում *նա իր կնոջն էր սպանել*» (Բակ., 4)։ «Նախարարներից Վասակի կողմնակիցներ *կատաղեցին*» (ԴԴվ, 113)։

Պետք է նշել, որ այս կարգի կառույցները կարող են դառնալ նաև կապի խնդիր, այսինքն փոքր լինել նախադասության մեկ անդամից։ Օրինակներ՝ «Պատերից երկուսի *վրա շինված էին երկու-երկու նեղ, բայց երկար ու կամարավոր պատուհաններ*» (Մուր., 4, 28)։ «Հայոց իշխանական ընտանիքներից միայն մեզ *համար էին բնակության տեղ պատրաստել արքայական պալատում*» (Մուր., 4, 59)։

Սովորաբար արտաքին առարկայական, ինչպես և ներքին բնութագրմանը ծառայող գոյականների գործիական հոլովաձևերը նախադասության մեջ որոշչի պաշտոն են կատարում որևէ լրացումով հանդերձ (ածական, դերբայ, թվական, գոյական և այլն)[37]։ *Օրինակներ՝* «*Լոկ* շոր ուղեղով *մարդը կարող է միևնույն բանին հազար ու մի իրար հակառակ բացատրություններ տալ*» (ՆԴ, 3, 347)։ «*Սա* միջին տարիքով *մի կին էր*» (Մուր., 1, 97)։ «*Դիտողների ասելով* Վարդանը *ոչ մորն էր նման, այդ* բարի աչքերով *և* նեղ դեմքով *նիհար կնոջը, ոչ հորը, այդ ամրակազմ, խոժոռադեմ,*

---

37 *Տե՛ս մեր նշվ. աշխատ., էջ 104—109։*

մեծ բրով, հասա կարմիր պարանոցով մարդուն» (Շիրվ., 3. 435)։ «Ո՞ր բաղցած փորով մարդու անունն է հիշվում» (Շիրվ., 3, 597)։ «Հարուստ օժիտով մի աղջիկ առավ» (Ծ, 245)։ «Կնիկարմատներ չե՞ք հավի խելքով» (ՆԴ, 125)։ «Ես մի ընկեր ունեի՝ Լիպո անունով» (Զ, 418)։ «Լուսամփոփի պես աղջիկ աստվածամոր աչքերով» (Զ, 11)։

Մի շարք դեպքերում գործիականը պարագայի պաշտոն է կատարում՝ դարձյալ լրացումներով հանդերձ։ Առաջին հերթին պետք է նշել այն դեպքը, երբ չափի գործիականը հանդես է գալիս որևէ լրացումով (սովորաբար թվական)։ Օրինակներ՝

«Հայտնեց, որ մի-երկու օրով եկել է գյուղից» (Իս., 4, 45)։ «Մի բանի բոպեով երևաց աչքիս» (ՆԴ, 2, 539)։ «Երբ նա խմում էր մի քանի բաժակ Մադրասու գինի, ամբողջ երեսուն տարով երիտասարդանում էր» (Շիրվ., 8, 38)։ «Երևանը վերջին հիսնամյակում ընդարձակվել է մի բանի տասնյակ քառակուսի կիլոմետրով»։ «Գիրքը վաճառվում է երկու ռուբլով»։ «Մենակ երկու այս կաբայիկով կուտեի» (ԲՀՍՉ, 10)։

Հաճախ ձևի պարագայի իմաստն արտահայտվում է շարահյուսական ինքնուրույն դեր չկատարող գործիական հոլովաձևի և նրա լրացման (կամ լրացումների) բառակապակցությամբ։ Օրինակներ՝

«Հեռացավ վայելուչ քայլվածքով» (ՎՓ, 4, 634)։ «Կատվի քայլերով գնաց բարձրացավ թախտը» (ՆԴ, 1, 50)։ «Խաղաղ սրտով եմ հիշում չարերին» (ՎՏ, 2, 166)։ «Այստեղ մտքի աշխատավորն ապրում է համամարդկային կյանքով» (Շիրվ., 8, 400)։ «Քնել էր ղեկավարը Անզարքնելի քնով» (Զ, 427)։ «Արևն է զնդում անհուն զնզոցով» (Զ, 427)։

Վիճակի պարագան ևս հաճախ արտահայտվում է լրացում ունեցող գործիականով։ Օրինակներ՝

«Ես տեսնում էի նրան միշտ քայքայված առողջությամբ, քայքայված մարմնով» (Իս., 4, 141)։ «Մերոնք փախան և ինձ թողին փշրված ոտով» (ՆԴ, 1, 209)։ «Նշանտուքի ժա-

մանակ Անանիին ցույց էին տվել վրացական հագուստով» (ՆԴ, 1, 139)։

Ժամանակակից հայերենում գործածական են շարահյուսական այնպիսի կառույցներ, որոնք ըստ էության դերբայական դարձված են՝ դերբայի կրճատումով։ Սրանցում առկա են հայցական-տրական, զույգ հայցական, հայցական-ներգոյական, երբեմն էլ հայցական-բացառական հոլովաձևվեր, որոնք ենթադրյալ դերբայի լրացումների դեր կատարելով հանդերձ, միաժամանակ ստանձնում են դեղչված դերբայի պաշտոնը։ Սրանք կարող են հանդես գալ պարագայի, երբեմն էլ որոշչի դերով։ Սովորական է այսպիսի կառույցների տրոհված գործածությունը (որոնց քննությունը վարվի առանձին), սակայն քիչ չեն հանդիպում և շտրոհված անգամ կիրառության դեպքեր։ Հետևյալ նախադասություններում այդ կառույցները պարագայի պաշտոն ունեն։

«Ես ընկած էի խոր վերքը սրտիս» (Իս., 1, 148)։ «Մի բարդի ուսին գալիս է ահա» (ՀԹ, 2, 118)։ «Մի մարդ էր փախչում հոգին բերանին» (Իս., 2, 210)։ «Ժողովուրդը դուրս եկավ գենքերը ձեռին» (Մուր., 4, 103)։ «Եթե ճանապարհին տեսներ մեկին զողացած փայտը շալակին. Պանինի շները պիտի հարձակվեին նրա վրա» (Բակ., 4) «Գավաթը ձեռքը սառը ջուր էր մատուցում»։ «Գնում էր նա լացը սրտում» (ԳՍԵԺ, 1, 38)։ «Մահակն ուսին, շունն ետևից ներս է մտնում մի զբոս շրջան» (ՀԹ, 1, 258)։ «Անճանաչ էր համարյա՝ զոռշ շինելն հագին» (Զ, 419)։

Այսպիսի կառույցներից շատերը դարձվածքային բնույթ ունեն։

Դրանք կարող են գործածվել նաև որոշչային դերով։ Օրինակ՝

«Եկած կլինի, որ խաբար տանի, Թե խելքը գլխին դեռ քանի դյուղ կա» (ՀԹ, 2, 33)։

Տեղի բացառականը նույնիմաստ հայցականի հետ կայուն բառակապակցություն կազմած՝ դառնում է բայի լրացում։ Սրանց դրաբարյան որոշ ձևեր վերածվել են մեկ բառի (մակբայ)։ Օրինակներ՝

«Ուր եղջերուն է ոստնում ֆերծից ֆերծ» (Իս., 1, 168)։ «Ես կմտնեմ խրնիթից խրնիթ, ապարանքից ապարանք» (Իս., 3, 317)։ «Ես լուռ անցնում եմ փողոցից փողոց» (ՎՏ, 1, 65)։ «Նույն դրոշն ենք տարել մենք վերելքից վերելք» (ՀՍՀԵՄ, 219)։ «Դզիրը կտուրից կտուր կանչում էր զիլ ձայնով» (Բակ., 11)։

5. ԱՅԼ ԿԱՌՈՒՑՆԵՐ

Նախադասության մեկ անդամի պաշտոնով երբեմն հանդես են գալիս այնպիսի կառույցներ, որոնք կազմությամբ միատարր չեն։ Դրանք երկու կամ ավելի խոսքի մասերից են կազմված։ Մեծ մասամբ դրանց կազմում լինում են գոյականի տարբեր հոլովաձևեր, մակբայներ, թվականներ, ածականներ։ Առաջին հերթին նկատի ունենք ժամանակային չափի իմաստով գործածվող այն կառույցները, որոնք կազմվում են հայցական հոլովաձևի, թվականի և անգամ բառի հարադրմամբ։ Օրինակներ՝

«Բժիշկը շաբաթը երկու անգամ կանոնավորապես այցելում էր նրան» (ՆԴ, 1, 126)։ «Օրը երկու անգամ պտույտի էին հանում հանցավորներին» (Իս., 3, 105)։ «Օրամեջ կամ երկու օրը մեկ անգամ վերցնում էր հավերի ածած ձուն և գնում թաղի մանրավաճառի մոտ» (ՆԴ, 1, 77)։

Երբեմն հայցականի փոխարեն գործածվում է -ական ածանցով կազմված ածական։ Օրինակ՝

«Սաթո մայրիկը օրական երկու անգամ գալիս կթում էր» (ՔԹՈՀ, 206)։

Յուրահատուկ են ժամանակի իմաստով երկու բառերի այնպիսի կառույցները, որոնցում մեկը մակբայ է կամ մակբայական նշանակություն է ստանում։ Օրինակներ՝

«Առավոտը կանուխ գալիս էր հյուրանոցից» (Իս., 4, 159)։ «Երեկ իրիկուն էդ կողքիդ սնից կախ էին արած երեք հրացան» (ՀԹ, 2, 38)։ «Մենք ճամփա ընկանք առավոտ ծեգին» (Զ, 219)։ «Վաղն առավոտ կանուխ պիտի փողոց գնա» (Զ, 335)։

Այսպես են նաև որակական և հարաբերական ածականների բառակապակցությունները, որոնցում որակականը հարաբերականի գոյականական հիմքին է վերաբերում։ Սրանք լինում են որոշիչ։ Օրինակներ՝

«Ծովափին սև բավիշն գլխարկով կինը հովանոցի ծայրով ավազի վրա նշաններ էր անում և ավերում» (Բակ., 194). «Երբեմն դռները բացվում էին, ներս ու դուրս էին անում պսպղուն կոնակավոր մարդիկ» (Բակ., 139)։ «Հազար հազար մարդ բուխ միրուքավոր, Հազար հազար մարդ սպիտակ ալեոր» (ՀԲ, 2, 114)։ «Երկար կոթավոր չիբուխը լցրեց» (ՀԲ, 2, 36)։

Գոյականից -անոց, -անի *և նման ածանցներով կազմված բառերը (ածական կամ գոյական) թվական լրացումով հանդերձ են կատարում շարահյուսական դեր։ Այսպես, գործածվում են* քսանհինգ մանանակալանոց, երեք ոտանի, հինգ ռուբլիանոց *և այլն։ Օրինակներ՝*

«Մեկ տասներկու աշակերտանոց իններորդ դասարան» (ԱՍԵՈՒ, 39)։ «Մատներով անդադար պրպտում էր արխալուղի գրպանները, հուսալով, թե միգուցե տասը կամ տասնըհինգ կոպեկանոց մի դրամ խցկված կլինի կարկատանների արանքը» (ՆԴ, 1, 47)։

Նախադասության մեկ անդամի դեր ունեն նաև որոշ կառույցներ, որոնց կազմիչներից մեկը ենթակայի, մյուսը ստորոգելիական վերադրի արժեք ունեն։ Օրինակներ՝

«Հեռո Ռուստամենց նակատը նշան ձին տարան» (Բակ., 213)։ «Ագին ծաղիկ մի կով առավոտ նախիրը քշելիս միշտ ետանում էր մյուսներից» (Բակ., 32)։

Այս կարգի կառույցներն անշուշտ առաջացել են զեղչված հանգույցով բաղադրյալ ստորոգյալ ունեցող նախադասություններից, ինչպես՝ «Գնացի մարդի, Ունեցա որդի, Գդակը պոպոզ, Անունը Կիկոս» *(ՀԲ, 1, 506)։*

Շարահյուսական մեկ դերով են օժտված նաև մակբայական, ածականական բառակապակցությունների, կապային կառույցների գոյականական կիրառությունները։ Օրինակներ՝

«Նրանք գալիս էին հեռվից, շատ հեռվից» (Ր, 7, 17)։ «Քիչ առաջվա սփոփող մտքերն իսկույն ցնդում էին» ԲՍԱ, 62)։ «Ամենից անհամբերը երիտասարդներն են» (Բակ., 233)։ «Բայց ամենից տագնապալին Պարսկաստանից շարժվող պարսից զորքերն էին» (ԴԴՎ, 404)։ «Արտակ Ռըշտունին իր հետիններով հասավ տուն երկրորդ օրը» (ԴԴՎ, 549)։ «Օհանը մնաց շորս ընկերով փախստական» (Իս., 3, 133)։

Նախադասության մեկ անդամի դեր ունեն նաև զոյականական այն բառակապակցությունները, որոնց գլխավոր բառը, բայանուն լինելով, ստանում է բայական լրացումներ՝ խնդրային և պարագայական նշանակություններով։ Ըստ էության դրանք բայական բառակապակցությունների փոխակերպն են (տրանսֆորմացիա)[38]։ Այս կարգի կառույցները նախադասության մեջ կարող են հանդես գալ ենթակայի և ուղիղ խնդրի պաշտոններով։ Օրինակներ՝

« —Լուցկի եմ ուզում,— դոռաց Մելքոնը, որի նախանձը շարժել էր Միքայելի նվերը երգչուհուն» (Շիրվ., 3, 94)։ «Արդյոք ինչո՞վ կլինի բացատրած կնոջ տարաժամ բացակայությունը տնից և վերադարձը կեսգիշերին» (ՆԴ, 3, 159)։ «Երկրից երկիր թափառումները, սահմանագլխից սահմանագլուխ արտաքսումները... կոփել էին նրա մարմինը» (ՀԱՆՀ, 166)։ «Չէ՞ որ դրա համար էին կազմակերպել մեր այցը Արևմտյան Բեռլին» (լրագիր)։ «Ամբոցում արդեն գիտեին սպարապետի վերադարձը Տիզբոնից» (Ր, 7,61)։ «Նրա ամբողջ կերպարանքը մատնում էր նրան, ցույց տալով նրա վախը նախապաշարումներից» (Շիրվ., 2, 462)։ «Դիմաքսյանը Մսերյանի աչքի մեջ կարդաց նրա հոգեկան խորին դժգոհությունը յուր այժմյան վիճակից» (Շիրվ., 2, 580)։ «Շարունակում էինք մեր մասլահաթը բաղամականությունից» (ՆԴ, 2, 550)։ «Բայց նա գիտեր հալածասեր Վաղեսի անիրավ վարմունքը Ներսես Մեծի հետ» (Ր, 7, 49)։ «Թագավորի

38 Այդպիսի բառակապակցությունների մանրամասն քննությունը տե՛ս մեր նշվ. աշխատ., էջ 96—110։

այցելությունները ուտիին կրկնվում էին հաճախ» (Մուր., 4, 91)։

Նույն ձևով նաև ածականական ծագմամբ գոյականները ածականին հատուկ լրացումներով կազմում են նախադասության մեկ անդամի պաշտոն կատարող կառույց։ Օրինակ՝

«Գրում էր քո հաջողությունը նեռաձգության մեջ, գրում էր քո հաջողությունները զինավարժության մեջ» (Ր, 7, 445)։

Ժամանակակից հայերենում մի շարք բառեր հանդես են գալիս և՛ մակբայի, և՛ կապի կիրառությամբ։ Այսպես, երբ ասում ենք «Քեզնից առաջ ոչ ոք չի եկել», «Նա նստել էր ընկերներից հեռու», ապա առաջ, հեռու բառերն այստեղ կապ են։ Իսկ «Նա շատ տարիներ առաջ է ավարտել դպրոցը», «Բնակվում է շատ հեռու» նախադասություններում դրանք մակբայ են։ Պատահում է, որ այդպիսի բառերը միաժամանակ դրսևորում են և՛ մակբայի, և՛ կապի հատկանիշներ՝ ստանալով համապատասխան լրացումներ և հանդես գալով կապի դերում։ Օրինակներ՝

«Մեզանից երկու հազար տարի առաջ մարդիկ ընտանիքի պատիվն անարգող հրեշներից այդ ձևով էին իրենց վրեժը լուծում» (Մուր., 4, 167)։ «Երեկոյան գնացքի մեկնումից մի կես ժամ առաջ վահանը կառքով գնում էր երկաթուղային կայարան» (ՆԴ, 3, 118)։ «Եվ այստեղ, հազարավոր փարսախներ հեռու հայրենիքից՝ պիտի պատահեր այդ սերը» (ԴԴվ, 200)։ «Նստեցին խիճերին փռած գորգերին և բարձերին, ծոլից հազիվ մի քայլ հեռու» (ԴԴվ, 506)։ «Նրա հայրենական ավանը կես օրվա հանապարհով միայն հեռու էր Աշտիշատի վանքից» (Ր, 7, 78)։ «Դասակը կայարանից երկու հարյուր քայլ վերև կտրեց երկաթգիծը» (ՔԹՊ, 2, 161)։

Թեև շատ քիչ են հանդիպում, բայց գործածական են նաև թվականի բառակապակցությունները, որոնք նույնպես օժտված են շարահյուսական մեկ դերով։ Օրինակ՝

«Թվով մի քանի հարյուր արեղաներ կերակրվում են այնտեղ մեր հացով» (Ր, 7, 99)։

Երբեմն էլ շաղկապներով բաղադրվում են դերբայական իմաստով դոյական կամ ածական անուններ, ինչպես՝ քուն թե արթուն (—քնած կամ արթուն վիճակում)։ Օրինակ՝

«Քուն թե արթուն՝ օրիս շատը երազ եղավ, անցկացավ» (ՀԹ, 1, 154)։

Բ. ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԵՐԿԱՍՏԻՃԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ

Ինչպես նշվել է ներածական գլխում, նախադասության անդամատումը անմիջական կազմիչների հանգեցնում է շարահյուսական կառույցների կամ առանձին բառերի՝ ըստ տվյալ նախադասության մեջ եղած շարահյուսական միավորների։ Մի դեպքում նախադասությունը կարող է կազմվել ինքնուրույն պաշտոն կատարող բառերից, ինչպես «Հորդառատ անձրևը ոռոգեց ծարավ արտերը», որտեղ յուրաքանչյուր բառ նախադասության ինքնուրույն անդամ է։ Մյուս դեպքում նախադասությունը կարող է կազմվել շարահյուսական կառույցներից (անշուշտ այս կառույցների հետ կարող են լինել նաև շարահյուսական ինքնուրույն պաշտոն ունեցող բառեր), ինչպես «Մոտենալով թռիչքի պատրաստ ինքնաթիռին՝ օդաչուն սովոր շարժումով բացեց դռնակը», որտեղ մոտենալով թռիչքի պատրաստ ինքնաթիռին, սովոր շարժումով շարահյուսական կառույցներ են, իսկ օդաչուն և դռնակը՝ մեկական բառ։ Սակայն նախադասության մեջ մեկ անդամ են, մի կողմից, առանձին բառերը, մյուս կողմից, բերված կառույցները։ Բանն այն է, սակայն, որ այդ կառույցներից մեկի կազմիչներն առանձին բառեր են (սովոր, շարժումով), իսկ մյուսը կազմված է շարահյուսական կառույց պարունակող միավորից (թռիչքի պատրաստ) և վերջինի լրացյալից և դերբայից։ Ըստ անմիջական կազմիչների՝ վերլուծությունը կատարվում է հետևյալ ձևով։ Ամբողջ կառույցը նախ բաժանվում է դերբայի և նրա լրացման։ Մոտենալով և թռիչքի պատրաստ ինքնաթիռին, այս վերջինն էլ բաժանվում է թռիչքի պատրաստ և ինքնաթիռին, իսկ թռիչ-

ֆի պատրաստ ածականական բառակապակցությունը կազմված է բոիշֆի գոյականից (տրականով) և պատրաստ ածականից։

Մեր ուսումնասիրության մեջ անմիջական կազմիչների վերլուծությունը կատարվում է ոչ թե երևան հանելու, ասենք, ենթակայի և ստորոգյալի խմբերը, ինչպես այդ արվում է անմիջական կազմիչների ուսմունքի ներկայացուցիչների կողմից[39], այլ նախադասության մեկ անդամի դերում հանդես եկող շարահյուսական կառույցների բացահայտման ուղղությամբ։ Մեզ հետաքրքրողը տվյալ դեպքում շարահյուսական այն կառույցների քննությունն է, որոնցում գլխավոր բառը տվյալ նախադասության այս կամ այն անդամի դեր է կատարում։

Այսպես, անմիջական կազմիչների ուսմունքի ներկայացուցիչները «Մեր սիրելի ընկերը վերադարձել է Մոսկվայից» նախադասությունը ԱԿ վերլուծությամբ բաժանում են ենթակայի (մեր սիրելի ընկերը) և ստորոգյալի (վերադարձել է Մոսկվայից) խմբերի։ Սույն ուսումնասիրությունը այսպիսի հետաղոտության նպատակ չունի։ Եթե նախադասությունը լիներ «Մեր սիրելի ընկերոջ վերադառնալը հայտնի չէր ինձ», ապա Մեր սիրելի ընկերոջ վերադառնալը ենթակայի դեր ունեցող շարահյուսական կառույցը (դերբայական դարձված) կհամընկներ նաև առաջին անմիջական կազմիչին։ Առաջին օրինակում ենթակայի խումբը պարունակում է ենթակա (ընկերը) և նրա լրացումներ (մեր–հատկացուցիչ, սիրելի—որոշիչ)։ Մինչդեռ երկրորդ օրինակում ամբողջ կառույցն է ենթակա, իսկ կառույցի կազմիչները նախադասության անմիջական կազմիչի մասեր են։ Ենթակայի խումբը, որտեղ ենթական անմիջական լրացումներ ունի, պետք է տարբերվի շարահյուսական ամբողջական կառույցից, որը նախադասության մեկ անդամ է, և որի կազմիչները նախադասության անդամի մասերն են։ Բերված

39 Տե՛ս սույն աշխ., էջ 11—16։

օրինակներում մի դեպքում ենթակա է ընկերը, *մյուսում՝* Մեր սիրելի ընկերոջ վերադառնալը *(անշուշտ բուն ենթակայի պաշտոնը* վերադառնալը *դերբային է պատկանում, սակայն այդ դերբայը միայնակ չէ, ունի կառույցի բաղադրիչներ)։*

Այլ խոսքով, Մեր սիրելի ընկերը *ենթակայի խումբ է, իսկ* Մեր սիրելի ընկերոջ վերադառնալը՝ *ենթակա։ Ի միջի այլոց պետք է նկատի ունենալ, որ դերբայական դարձվածով կամ շարահյուսական այլ կառույցով արտահայտված ենթական կամ նախադասության այլ անդամը նույնպես կարող են լրացումներ ունենալ և նրանց հետ խումբ կազմել։ Այսպես,* «Ձեր այդ շատ խոսողները *քիչ գործ են կատարել»* նախադասության մեջ *ենթակայի խումբն է* Ձեր այդ շատ խոսողները, *որը բաղկացած է* շատ խոսողները *ենթակայից, որն արտահայտված է դերբայական դարձվածով, և նրա լրացումներից* (ձեր– *հատկացուցիչ,* այդ– *որոշիչ)։ Այս տեսակետից դերբային վերաբերող լրացումները չի կարելի դերբայական դարձվածի կազմիչ համարել։ Այսպես են բերվող նախադասությունների ընդգծված բառերը։* «Այս մեր *մոլեգնածը ապստամբության կրակը վառեց»* (ԴԴվ, 471)։ *«Հիմա բոլորն էլ՝ թե դրսից եկողները, թե* ներսի *աշխատողները, նրա վրա նայում էին որպես անբուժելի հիվանդի»* (ՍԲԱ, 214)։ «Ո՞ր *կամուրջ կառուցողի մտքով կարող էր անցնել»* (ԱՍԵՈՒ, 271)։

Նախորդ հատվածում մենք ցույց տվեցինք շարահյուսական այն բոլոր կառույցները, որոնք նախադասության մեջ մեկ անդամի դեր ունեն (դերբայական դարձված, ածականական բառակապակցություն, մակբայական բառակապակցություն, դոյականական բառակապակցություն, այլ կառույցներ)։ Այստեղ պետք է քննության առնենք շարահյուսական ավելի մեծ (երկաստիճան) կառույցները, որոնք ամբողջությամբ նախադասության մեկ անդամ են և իրենց հերթին բաղադրված են մեկից ավելի շարահյուսական կառույցներից։ Այլ խոսքով ասած՝ սրանք կառույց են՝ իրենց մեջ ունենալով այլ կառույց։

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ շարահյուսական երկաստիճան կառույցները կազմվում են նույն եղանակով, ինչ որ շարահյուսական պարզ կառույցները, այն է՝ դերբայներով, ածականով, մակբայով, գոյականով, ինչպես և խառը ձևով (այլ կառույցների նման)։ Այս դեպքում ևս նախադասության անդամի պաշտոնը ծանրացած է կառույցի գլխավոր բառի վրա, թեև վերջինս միայնակ չի կատարում այդ դերը, այլ իր կառույցով հանդերձ։ Իսկ ի՞նչ կառույցներ կարող են պարունակվել շարահյուսական երկաստիճան կառույցների մեջ։ Շարահյուսական երկաստիճան կառույցը կարող է կազմված լինել միասեռ և տարասեռ, այսինքն նույն տեսակ կառույցներից և տարբեր տեսակի կառույցներից։ Այսպես, դերբայական դարձվածը կարող է պարունակել այլ դերբայական դարձված, ինչպես և ածականական, մակբայական, գոյականական և այլ բառակապակցություններ։ Ածականական բառակապակցությունը կարող է պարունակել ածականական բառակապակցություն, դերբայական դարձված, մակբայական, գոյականական և այլ բառակապակցություններ։ Տեսականորեն յուրաքանչյուր բաղադրյալ կառույց կարող է շարահյուսական կառույցների անվերջ շղթա կազմել, սակայն գործնականորեն այդ շղթան կարճ է լինում, քանի որ այդպիսի շղթաների երկարությունը խանգարում է խոսքի պարզությանը, հանգեցնում ոճի խրթնության, ձգձգվածության։ Շարահյուսական բաղադրյալ կառույցների անմիջական կազմիչները 4—5 աստիճանից այն կողմ չեն անցնում։ Այդ նշանակում է, որ բաղադրյալ կառույցի անմիջական կազմիչ շարահյուսական կառույցի բաղադրիչը իր հերթին երեք կամ չորս անդամ է վերլուծվում շարահյուսական կառույցի։

Իսկ ի՞նչ դեր ունեն շարահյուսական բաղադրյալ կառույցի կազմիչները։ Շարահյուսական բաղադրյալ կառույցի մեջ հիմնականը գլխավոր բառն է, որը նախադասության որևէ անդամի պաշտոն ունի (ողջ կառույցով հանդերձ)։ Հենց այդ բառի խոսքի մասային պատկանելությամբ

որոշվում է կառույցը (դերբայական դարձված, ածականական, մակբայական, գոյականական բառակապակցություններ և այլն)։ Իսկ շարահյուսական բաղադրյալ կառույցի կազմիչ շարահյուսական կառույցները նախադասության մեջ անդամի դեր չունեն. նրանց դերը տվյալ կառույցի շրջանակներում է սահմանափակվում։ Ստացվում է, որ նույն շարահյուսական կառույցը մի դեպքում նախադասության անդամ է, իսկ մյուս դեպքում՝ ոչ։ Այսպես, «Թռիչքի պատրաստ ինքնաթիռը կանգնած է օդանավակայանում» նախադասության մեջ թռիչքի պատրաստ ածականական բառակապակցությունը որոշիչ է (ինքնաթիռը ենթակայի համար), մինչդեռ «Թռիչքի պատրաստ ինքնաթիռին մոտեցած օդաչուն բացեց դռնակը» նախադասության մեջ թռիչքի պատրաստ ածականական բառակապակցությունը նախադասության անդամ չէ, այլ նախադասության անդամի կազմիչ։ Նախադասության անդամ է թռիչքի պատրաստ ինքնաթիռին մոտեցած (որոշիչ)։ Իհարկե տվյալ դեպքում թռիչքի պատրաստ նույնպես որոշիչ է, սակայն ոչ նախադասության անդամի, այլ կողմնակի անդամի։

1. ԵՐԿԱՍՏԻՃԱՆ ԴԵՐԲԱՅԱԿԱՆ ԴԱՐՁՎԱԾՆԵՐ

Երկաստիճան դերբայական դարձված կարող են կազմել նույնպես այն դերբայները, որոնք ունեն շարահյուսական ինքնուրույն կիրառություն, այն է՝ անորոշ, անկատարի -իս վերջավորվող ձևը, ապառնի, հարակատար և ենթակայական։ Այդ կառույցների պաշտոնն էլ կախված է համապատասխան դերբայների շարահյուսական կիրառությունից։ Այստեղ ևս պետք է տարբերակել դերբայի բուն և փոխանվանական կիրառությունները, մասնավորապես հարակատար և ենթակայական դերբայների կապակցությամբ։ Այսպես, անորոշ դերբայով կառույցները կարող են կատարել գոյականի պաշտոններ, անկատարի -իս վերջավորվող ձևի կառույցը՝ պարագայի, ապառնի դերբայով կառույցը՝ որոշչի (գոյականաբար գործածվելիս գոյականի), հարակատար,

ենթակայական դերբայներով կազմված կառույցները բուն կիրառությամբ՝ որոշչի, ստորոգելիական վերադրի (միայն ենթակայական), պարագայի (միայն հարակատար) պաշտոններ, իսկ փոխանվանական կիրառությամբ՝ դոյականին բնորոշ պաշտոններ։

Քանի որ դերբայական դարձվածների կիրառությունը հանգամանորեն քննել ենք նախորդ հատվածում, ուստի այստեղ կանգ կառնենք դերբայական երկաստիճան կառույցների կազմության վրա։ Կբացահայտենք յուրաքանչյուր դերբայով կազմված կառույցի կազմիչները։

Ա. Անորոշ դերբայով երկաստիճան կառույցներ.— Սրանք կարող են ունենալ իրենց կազմում առաջին հերթին դերբայական դարձվածներ, որոնք կարող են հանդես գալ տարբեր ձևերով։

Անորոշ դերբայով կառույցների մեջ կարող են լինել դերբայական դարձվածներ՝ կազմված անորոշ, անկատարի -իս վերջավորվող, սպառնի, հարակատար, ենթակայական դերբայներով, ինչպես և ածականական, մակբայական, դոյականական և այլ բառակապակցություններ։

ա. Անորոշ դերբայով երկաստիճան կառույցի մեջ անորոշ դերբայով կառույց։

Ինչպես երկաստիճան կառույցի գլխավոր բառ դերբայը, այնպես էլ կազմիչ կառույցի գլխավոր բառը կարող են հանդես գալ տարբեր ձևերով։ Առաջին հերթին նշում ենք այն դեպքը, երբ մեծ կառույցը, նախադասության դիմավոր բայի մոտ գրվելով, դառնում է բայական բաղադրյալ ստորոգյալի բաղադրիչ[40]։

«Չէր փորձում |ոչնչով արգելել նրան || շարունակելու

---

40 Բերվող օրինակներում մեկ աստիճանի շարահյուսական կառույցի բաղադրիչները առանձնացվում են փոքր ուղիղ փակագծով՝ /. . . . . /, երկրորդ աստիճան կազմող բաղադրիչները՝ զույգ փոքր փակագծով՝ ||. . . . . ||, երրորդ աստիճան կազմող բաղադրիչները՝ կլոր փակագծով՝ (. . . . .), չորրորդ աստիճան կազմող բաղադրիչները՝ զույգ կլոր փակագծով՝ ((. . . . .)), հինգերորդ աստիճան կազմող բաղադրիչները՝ միջակ փակագծով՝ [. . . . .]։

իր խոշտանգիչ խոսքը ||» (ԴԴվ, 471)։ «Ըստ երևույթին ջանում էր |իր նժույգին ևս հարկադրել || պահպանելու այն համեստ միջոցը ||» (ԴԴվ, 7)։

Շարահյուսական մեծ կառույցը կարող է կազմվել նաև երանգավորիչ բայերի անորոշ դերբայով։ Այսպիսի կառույցները համարժեք են բայական բաղադրյալ ստորոգյալին, միայն այն տարբերությամբ, որ նախորդ դեպքում երանգավորիչ բայը հանդես էր գալիս դիմավոր ձևով, իսկ այստեղ՝ դերբայական ձևով։ Օրինակներ՝

«Նա հրահանգ էր տվել Մերուժանին՝ ոչնչացնել հունաց գրքերը, արգելել հունաց լեզվի ուսուցումը և | հայերին ստիպել || պարսկերեն սովորելու ||» (Ր, 7, 84)։ «Խնդրեց քեզ և դղյակի մյուս կանանց՝ | աշխատել || ուրախ պահել թագուհուն ||» (Մուր., 4, 26)։ «Վերցրեց երեխային և | շարունակելով || անեծքներ թափել ||, հոգնած նստեց թախտի վրա» (ՆԴ, 1, 68)։ «Սակայն /կամենալով ||փարատել դիմացինի անձկությունը||, ինքն էլ էր հիվանդացել» (ԴԴվ, 153)։

Այսպիսի կառույցները երբեմն հանդես են գալիս կապի խնդրի դերում։ Օրինակներ՝

«Դիտեի, որ քո ցավերի մասին խոսելով՝ միայն քընքուշ սիրտդ պիտի վշտացնեի, առանց սակայն || իմ թագուհուն մի օգուտ տալ || կարողանալով» (Մուր., 4, 14)։ «Նրանք լուռ նայում էին հատակին՝ առանց /համարձակվելու || հայացքները բարձրացնել իրար վրա ||» (ԴԴվ, 531)։

Անորոշ դերբայով կազմված դարձվածը կարող է հանդես գալ նաև այլ իմաստ ունեցող բայերի անորոշ դերբայով կազմված մեծ կառույցի մեջ՝ լինելով և՛ տվյալ դերբայի, և՛ այլ բառերի լրացում։ Օրինակներ՝

«/Տեսնելով || թշնամու փախչելը ||՝ նա ուրախացավ»։ «Նժույգը պարել սկսեց՝ /չթողնելով Ատոմին || դրկել Արտակին ||» (ԴԴվ, 143)։ «Երեսները թաղիքի մեջ թաղած քնել էին՝ /թողնելով ուղտերին || արածելով շրջել գնալ || ուր որ կուզենային սրանք» (ԴԴվ, 566)։ «Ասես մի անցած կինոնկար են նայում մարդիկ, հիշելով և /հաստատելով || նաև

իրենց մասնակից լինելու || փաստը |» (ՄՍՍԿ | 221)։ «Ընշ-տունյաց նախարարը /հրահանգներ ընդունելով Վասակից || քայքայել Վարդանի դործը ||՝ ճանապարհ ընկավ» (ԴԴՎ, 152)։ «Բժիշկներն |անդադար || իրենց լավ պահելու || հոդ-սում լինելով/, ամեն մի հակառողջական բանից երկյուղ են կրում» (ՆԴ, 2, 244)։ «|| Մոր ներս մտնելուց || սթափվե-լով/, դուրսն այդ ցնորական կյանքի ատելի հակապատկերը ներկայացավ նրա աչքին» (ՆԴ, 3, 245)։

բ. Անորոշ դերբայով երկաստիճան կառույցի մեջ այլ դերբայներով կառույցներ.

Սրանցում կարող են լինել անկատարի –իս վերջավոր-վող ձևով, ապառնիով, հարակատարով, ենթակայականով կազմված դերբայական դարձվածներ։ Ընդ որում այստեղ ևս դերբայները դրսևորում են իրենց շարահյուսական կի-րառության առանձնահատկությունները։ Հարակատար դեր-բայը կարող է դառնալ և՛ բայի, և՛ գոյականի լրացում, են-թակայականը՝ միայն գոյականի լրացում։ Իսկ երկուսը գո-յականաբար գործածվելով կարող են դառնալ ամեն մի լրա-ցում։ Վերջին հաշվով գլխավոր բառի լրացման դերում ան-միջականորեն կարող են հանդես գալ անկատար և հարա-կատար դերբայները։ Օրինակներ՝

«/Հանդիպելով ընկերոջը || տնից դուրս դալիս ||՝ նա կանգ առավ»։ «/Իր բարեկամին || խիստ զայրացած || տես-նելը/ անսպասելի էր նրա համար»։ «Որոնցից ամեն մեկն իր տեսքն ուներ և բոլորը միասին ընդհանուր սովորույթ՝ շոգ օրին տուն վազելու, || մոր բառաչը լսելիս պոչը կեռաց-րած || դեպի բառաչը փախչելով» (Բակ., 409)։

Ապառնի, հարակատար, ենթակայական դերբայները անորոշ դերբայով կազմված երկաստիճան կառույցում կա-րող են դառնալ լրացման լրացում (որևէ գոյականի լրա-ցում)։ Օրինակներ՝

«Ոչ միայն շինական, այլև ազնվական կանայք շատ ղինավարժ էին՝ /մանկուց մասնակցելով վտանգավոր որսե-րի և անդամ կռիվների || Հայաստանի մի քանի բերդերում

տեղավորված || պարսից վերակացու զորքերի դեմ/» (ԴԴվ, 8)։ «Դուրս եկավ Վահան Ամատունին՝ /վեր ցցելով || բրդե փաթաթանով պինդ կապած || վիզը/» (ԴԴվ, 56)։ « || Ընկերոջից ստանալիք || ծանրոցին սպասելը/ երկար տևեց»։ «Զգում էր, թե ինչպես այս ու այն կողմից ներս ծորացող առվակները շատանում են, և վերմակն || անձրևի ջրերից թրջված || տոպրակներից ու կապերտից հետզհետե խոնավանալով | ճնշում է իր վտիտ մարմինը» (ՆԴ, 1, 41)։ «Բարձրացան վանքի կտուրը՝ || կտուրին բուսած ||թփերը կրծելու |» (Բակ., 50)։ «—Հըմ,— ասեց տխուր և դառն քմծիծաղով գորականը, || իրեն մտահոգող || լուրերին չվերագրելով/ || որսի գնացածների || տարաժամ վերադարձը/» (ԴԴվ, 8)։ «Սըրտի խորքում նրան հաճելի էր /Աստղիկի այցելությունները չհամարել || միայն վիրավորին տածած || համակրանք |» (ԴԴվ, 607)։

Նույն դերբայները գոյականական կիրառության դեպքում ևս կարող են դառնալ անորոշ դերբայով մեծ կառույցի կազմիչ։ Օրինակներ՝

«Դավիթ Ֆոմիչը ժամանակ չունեցավ || իր ինչ անելիքը|| որոշելու |» (ՆԴ, 1, 220)։ «| Գուշակելով || արքունիքում պատահելիքն || ու գալիքը|՝ հնարներ էին մտածում չոր դուրս գալու այս դեպքից» (ԴԴվ, 269)։ «Մտածեց /հիշելով || փոքր առաջ կատարվածը || » (ԴԴվ, 362)։ «/Հասնելով || իր առջևից արագ գնացողներին ||՝ նա խնդրեց կանգ առնել»։ «Դուրս եկան /բաջալերելու || կռիվ գնացողներին || » (ԴԴվ, 609)։ «Այսպիսի հրեշավոր մի բան հրապարակ չհանել, || համայնական մի սեփականության հափշտակողի, մատաղ մի աղջկա լլկողի և ապա գազանաբար սպանողի ||՝ հասարակաց դատարանին չհանձնել/,—այդ ես չեմ կարող հասկանալ» (ՆԴ, 3, 108)։

Պետք է նկատի ունենալ, որ նույն մեծ կառույցի մեջ կարող են լինել մեկից ավելի դերբայական դարձվածով արտահայտված կազմիչներ՝ իբրև համադաս կամ տարբեր անդամների լրացումներ։ Օրինակներ՝

«Նաժիշտներից մեկը մոտեցավ քնարանի սնարին և || այդտեղ դրված || փոքրիկ դարակից հանելով ոսկեկազմ և || ակունքներով զարդարված || մի գիրք/, համբուրեց այն և տվավ թագուհուն» (Մուր., 4, 29)։ «Նա կտրեց փողոցը, /զգուշությամբ կոխելով || անձրևից թրջված և լապտերների լույսից փայլփլող || սալաքարերը | » (Բակ., 178)։ «Մի օր, երբ || վիրաբույժի կարգադրած || դարմանը իշխանի վերքին դնելով /թեր խնամքով փաթաթում էի, նա ժպտալով ասաց» (Մուր., 4, 48)։ «Եվ երևի այդ պատճառով էլ շտապեց || նույն նպատակներին հակառակող || արգելքը բառնալով» (Մուր., 4, 58)։

Անորոշ դերբայով կազմված մեծ կառույցի կազմիչ կարող են դառնալ դերբայները նաև կապի խնդրի դերում։ Օրինակներ՝

«Պարսիկները || նրա հեռանալու մեջ || տեսնելով ուժերի թուլության ակներև նշան|, պատրաստվում էին հանկարծ հարվածել» (ԴԴվ, 347)։ «Զշարժվեց, չնայեց վեր՝ | լսելով անգամ || կնոջ սպանվելու, տան վառվելու, շենի կողոպտվելու մասին ||» (ԴԴվ, 45)։

գ. Անորոշ դերբայով երկաստիճան կառույցի մեջ ածականական, մակբայական, գոյականական և այլ կարգի կառույցներ.— *Անորոշ դերբայով կազմված երկաստիճան կառույցի մեջ կարող են լինել ածականական, մակբայական, գոյականական և այլ տեսակի բառակապակցություններ։ Դրանք մի դեպքում կարող են դառնալ անմիջապես դերբայի լրացումներ։ Այսպես, հետևյալ օրինակներում ածականական բառակապակցությունը լրացում է դերբայի համար։*

«Հորձանք էին տալիս դեպի երկինք՝ |փակելով հորիզոնը տեղ-տեղ || շեշտակի բարձր ||» (ԴԴվ, 24)։ «|| Զատիից դուրս աղնիվ || լինելը/ նա համարում էր միամտություն»։ «|| Գետի հոսանքին հակառակ || քայլելով/՝ նա հասավ ակունքին». «Այս ցրտում || գլուխը բաց || քայլելը/ վտանգավոր է»։

Մակբայական բառակապակցությունը ևս կարող է դառնալ դերբայի լրացում։ Այդպես են հետևյալ նախադասու-

թյունները։ «|| Ընկերներից շուտ || արթնանալով|՝ նա դուրս եկավ սենյակից»։ «|| Բոլորից շատ || աշխատելը| նրան հոգնեցրեց»։

Անորոշ դերբայի լրացում կարող են դառնալ գոյականական բառակապակցությունները։ Օրինակներ՝

«|| Ուժեղ թափով || հարձակվելով|՝ ընկճեց թշնամու դիմադրությունը»։ «|| Ձեռնափայտը ձեռքին || շան մոտով անցնելը| վտանգավոր է»։ «Երևում է, որ շատ դժվար էր նրա համար || քսան ռուբլուց || զրկվելը|» (ՆԴ, 1, 25)։

Ածականական, գոյականական, ինչպես և այլ կարգի բառակապակցությունները կարող են երկաստիճան կառույցի կազմում հանդես գալ նաև այլ անդամների լրացման դերով։ Օրինակներ՝

«|| Այդ պաշտոնին հարմար || թեկնածու փնտրելը| երկար ժամանակ տևեց»։ «|| Դինով լիքը || բաժակ բարձրացնելով|՝ խմեց հյուրի կենացը»։ «|| Գրքերից ազատ || սեղանին մոտենալը| երկար չտևեց»։ «Հավատարիմ և զվարթ ուժերը գնացին թշնամու դեմ՝ |զիջելով իրենց տեղը || շատ կասկածելի, իսկ Ատոմի համար միանգամայն թշնամի || մարդկանց |» (ԴԴվ, 543)։ «Երեկոյան | իր || հավաքնի չափ փոքրիկ || խանութը փակելուց| հետո տուն էր գնում» (ՆԴ, 1, 54)։

Բ. Անկատար դերբայով (–ԻՍ վերջավորվող ձևով) կառույցներ.— *Այսպիսի մեծ կառույցի մեջ դերբայի լրացում կարող են դառնալ դերբայական դարձվածներ, ածականական, մակբայական, գոյականական բառակապակցություններ և այլ կառույցներ։ Ընդ որում դրանցից մի քանիսը հանդես են գալիս որպես դերբայի անմիջական լրացումներ, իսկ մյուսները՝ որպես լրացման լրացումներ։ Ոճական տեսակետից անհարիր է անկատար դերբայի լրացման դերում անկատար դերբայի գործածությունը։ Այսպես, հարմար չէ ասել «Տնից վերադառնալիս լինելիս նա հիշում էր իր խոստումը»։*

ա. Անորոշ դերբայը անկատարով կազմված երկաստի-

նան կառույցի կազմիչ.— Երբ գլխավոր բառը երանգավորիչ իմաստ ունեցող բայ է, ապա անկատար դերբայի լրացումը կարող է արտահայտվել գոյականաբար գործածված անորոշ դերբայով։ Օրինակներ՝

«Մի օր այսպես ասացիր || նրան շուտ տուն ուղարկելդ || արդարացնելիս|» (ԱՍԵՌԽ, 392)։ «|| Մեքենայի աշխատելը || փորձելիս/ չի կարելի մոռանալ անվտանգության կանոնները»։ «|| Առավոտյան մարզվել || սկսելիս/ նա օդափոխում է սենյակը»։ «|| Տուն վերադառնալ || ցանկանալիս/ դիմում էր զեկավարին»։ «Վեց տարի առաջ /Հավլաբարի դպրոցից || դասերս ավարտելուց հետո || տուն դառնալիս/ ես համարյա ամեն օր տեսնում էի այդ տիպը» (ՆԴ, 2, 598)։

բ) Հարակատար դերբայը անկատարով կազմված երկատիճան կառույցի բաղադրիչ.— Հարակատար դերբայը կարող է դառնալ անկատար դերբայի լրացում։ Օրինակներ՝

«|Նրան || սեղանի մոտ կանգնած || տեսնելիս| զայրանում էր»։ «|Ընկերներին || շատ խմած || հանդիպելիս| խուսափում էր նրանցից»։ «Նրան տեսել եմ || իրենց դուռը նըստած || ծխելիս|»։ «Կտեսնես նրանց| նորից || մեկտեղ հավաքված || տառջվա պես խաղաղ զրույց անելիս/» (ՆԴ, 2, 603)։

Անկատար դերբայով կազմված մեծ կառույցի մեջ լրացման լրացումների դերում կարող են հանդես գալ շարահյուսական ինքնուրույն գործածություն ունեցող բոլոր դերբայները (բացի հենց անկատարից)։ Օրինակներ՝

«|| Դռներին նստոտած || կանանց խմբերի մոտով անցնելիս| մի ջահել կին կանչեց նրա հետևից» (ՆԴ, 1, 57)։ «|| Լավ աշխատող || բանվորներին տեսնելիս| նա հարգանքով խոնարհվում էր նրանց առաջ»։ «|| Իրեն հասանելիք || բաժինն ստանալիս/ նա մենակ չէր ուտում»։ «|| Սարում ծնած || հորթը տուն բերելիս/ տան տերն առաջվա պես չէր ուրախանում» (Բակ., 37)։

Անկատար դերբայի լրացում կարող են դառնալ նույն դերբայները՝ գոյականաբար գործածվելիս։ Օրինակներ՝

«|| Դրսից եկածներին || հանդիպելիս/ հարցուփորձ էր

անում»։ «|| Նոր մեքենայի վրա աշխատողներին || տեսնելիս/ ձգտում էր նրանցից մի բան սովորել»։ «|| Հաջորդ օրվա կատարելիքը || պլանավորելիս/ ոչ մի մանրուք բաց չէր թողնում»

գ) Շարահյուսական այլ կառույցները անկատարով կազմվող երկաստիճան կառույցի բաղադրիչ.— *Անկատար դերբայի լրացում կարող է դառնալ ածականական բառակապակցությունը։ Օրինակներ՝*

«|| Դասերից ազատ || լինելիս/ գնում էր այգի»։ «Ես միայն մի անգամ եմ նրան տեսել || շատ բարձր || խոսելիս/»։

Նույն դերը կարող է կատարել մակբայական բառակապակցությունը։ Օրինակներ՝

«|| Ջափից դուրս արագ || քայլելիս/ մարդը շուտ է հոգնում»։ «/Աշխատանքից || մի քանի րոպե շուտ || գնալիս/ թույլտվություն էր ստանում»։

Գոյականական բառակապակցությունները ևս կարող են դառնալ անկատար դերբայով կազմված կառույցի կազմիչ, ընդ որում լրացնելով կա՛մ անմիջապես դերբային, կա՛մ նրա լրացումներին։ Օրինակներ՝

«/Քաղաքից || նույնիսկ երկու օրով || բացակայելիս/ բարեկամներից որևէ մեկին իրենց տանն էր թողնում»։ «Տեսավ Նասիբյանին || փոքրիկ, արագ քայլերով || դեպի Հեղինեի բնակած տան դուռը դիմելիս/» (ՆԴ, 3, 35)։ «|| Գլխարկը գլխին || դասի նստելիս/ չէր ամաչում»։ «|| Մի տեղից մյուսը || տեղափոխվելիս/ իրեն հետ տանում էր շատ նվիրված աշխատակիցներին»։ «|| Մի քանի հոգով || հյուր գնալիս/ նախօրոք զգուշացնում էր տանտերերին»։

Անկատար դերբայով կազմված կառույցի բաղադրիչ կարող են լինել նաև այլ կառույցներ։ Օրինակներ՝

«|| Երկար կոթավոր || ծխամորճը մաքրելիս/ օգտագործում էր մի հատուկ ձող»։ «Նույնիսկ || օրական մի քսան անգամ || մարդկանց հանդիպելիս/ նա բարևում է գլխարկը վերցնելով»։ «|| Առավոտը ծեգին || տնից դուրս գալիս/ նրան ոչ ոք չէր տեսնում»։

9. Ապառնի դերբայով երկաստիճան կառույցներ.— *Ապառնի դերբայի –իմ վերջավորվող ձևը, ի տարբերություն –ու վերջավորվող ձևի, սահմանափակ ընդգրկում ունի։ Սակայն երկուսն էլ ունեն որոշիչ կիրառություն։ Նկատելի է, որ –իմ վերջավորվող ձևով կազմվող կառույցները բազմաբաղադրիչ չեն լինում։ Այդպիսի դերբայական դարձվածներում գլխավոր դերբայը համարյա չի ունենում դերբայներով արտահայտված լրացում։ Երբեմն ապառնի դերբայի լրացումը կարող է արտահայտվել մակբայական բառակապակցությամբ։ Օրինակ՝ .*

«|| Ձափից դուրս արագ || վերջացնելիք/ աշխատանքը նա ձգձգեց ժամերով»։

Սակայն ապառնի դերբայով կազմված մեծ կառույցի կազմում կարող են լինել ինչպես դերբայական դարձվածներ, այնպես էլ ածականական, գոյականական և այլ կարգի բառակապակցություններ։ Այսպես, հետևյալ նախադասություններում ապառնի դերբայով կազմված երկաստիճան կառույցի մեջ կան դերբայական դարձվածներ։

«|| Քաղաքից վերադարձած || ընկերոջն ուղարկելիք/ միրգը պատրաստ էր»։ «|| Մոսկվայում բնակվող || բարեկամին գրելիք/ նամակը դեռևս չէր ավարտել»։

Ապառնի դերբայը կարող է ունենալ ածականական բառակապակցություններով արտահայտված կազմիչներ։ Օրինակներ՝

«Այդ || ունեցվածքից զուրկ || մարդուն տրվելիք/ օգնությունը նրան ոտքի կկանգնեցնի»։ «|| Արտաքինով գրավիչ || երիտասարդին գրելիք/ նամակը շուշացրեց»։

Այսպիսի մեծ կառույցների կազմում կարող են լինել նաև գոյականական և այլ բառակապակցություններ։ Օրինակներ՝

«|| Մեկ ամսում || ավարտելիք/ աշխատանքը տևեց երկու տարի»։ «|| Փողոցների մեծ մասում || տեղադրվելիք/ լամպերի հենարանները դեռևս պատրաստ չեն»։ «|| Առաջին հարկի || սենյակներից տեղափոխելիք/ իրերը կապված են»։

«|| Տղաներից երկուսին || նշանակելիք| թոշակը կկազմի հարյուր ռուբլի»։

Նույնպիսի կառուցվածք ունի նաև ապառնի դերբայի -ու վերջավորվող ձևով կազմվող կառույցը։ Գործածական կառույցներից նշենք մի երկու օրինակ.

«|| Շահագործման պատրաստ || շենքերում օգտագործելու/ հաշվիչները դեռևս չեն ստացվել»։ «|| Նոր ստացած || բնակարանում կարգի գցելու/ գործերը ստիպեցին արձակուրդ վերցնել»։

Դ. Հարակատար դերբայով երկաստիճան կառույցներ.— Այսպիսի մեծ կառույցներում կարող են գործածվել բոլոր տեսակի կառույցներ։ Ընդ որում լրացումները կարող են հանդես գալ հարակատար դերբայի և՛ բուն, և՛ դոյականական կիրառության դեպքում։ Շարադրանքը չձգձգելու նպատակով տարբերակում չենք կատարում։ Նշենք առանձին-առանձին։

ա. Անորոշ դերբայը հարակատար դերբայով կառույցի կազմիչ.— Առաջին հերթին պետք է նշել այն դեպքը, երբ անորոշ դերբայը գործածվում է երանգավորիչ իմաստ ունեցող բայերի հարակատար դերբայի լրացում։ Օրինակներ՝

«|| Ճանապարհից շեղվել || սկսած/ մարդուն ետ էր պահում սխալից»։ «|| Մարդկանց առաջ արդարանալ || փորձած հանցագործը մերկացվեց»։ «/Արդեն || դեղնել || սկսած/ տերևները կաթում էին օդի ամենաթեթև շնչից» (ԴԴվ, 499)։

Երկրորդ դեպքում անորոշ դերբայը հանդես է գալիս դոյականաբար։ Նկատելի է, որ ավելի շատ հարակատար դերբայի լրացում դառնում են անորոշի թեք հոլովաձևերը (գերազանցապես բացառական և գործիական), ինչպես և կապային կառույցները։ Օրինակներ՝

«|| Աղստև գնալու || նշանակված/ հեծյալները ղրկվեցան Գուգարք» (Մուր., 4, 80)։ «|| Շատ աշխատելուց || հոգնած/ մարդը պառկեց հանգստանալու»։ «|| Լավ աշխատելով || բարձր դիրքի հասած/ մարդը համեստ էր»։

Անորոշ դերբայը կարող է դառնալ երկաստիճան կառույցի որևէ կազմիչի լրացում։ Օրինակներ՝

«Մանեն զղջաց, թե ինչու ինքն այդքան փոքրոգի եղավ ընկերուհու հեղնական նկատողությունների դեմ և, || նրանից վրեժ լուծելու || պախարակելի զգացումից դրդված/, այդպես հանկարծ ու խստորեն ասաց այն» (ՆԴ, 3, 34)։

Անորոշ դերբայը կարող է կապային կառույցով նույնպես դառնալ հարակատարի լրացում։ Օրինակներ՝

«|| Դենշապուհի խոշտանգումներին բռնի ականատես լինելու || համար քշված/ շինականները փողոցից լսում էին ներսի աղմուկը» (ԴԴվ, 363)։ «Քիչ հետո հայտնվեց Բակուրը՝ || անծանոթ դառնալու || չափ կորցրած իրեն/» (ԱՍԵՈՒ, 234։)

բ) Անկատար դերբայի -իս վերջավորվող ձևը հարակատարով կազմված կառույցի կազմիչ.— *Այսպիսի երկաստիճան կառույցները սովորաբար քիչ են հանդիպում, սակայն գործածական են։ Օրինակներ՝*

«|| Բուքի պայմաններում աշխատելիս || մրսած/ մարդկանց տաք թեյ մատուցեցին»։ «|| Շեմքից ներս մտնելիս || սայթաքած/ վարպետին բժշկական օգնություն ցույց տվեցին»։

գ) Ապառնի դերբայը հարակատարով կազմված երկաստիճան կառույցի կազմիչ.— *Որպես կանոն, ապառնի դերբայը բայի լրացում չի դառնում, ուստի հարակատար դերբայով կազմված մեծ կառույցի կազմում ապառնի դերբայը կարող է հանդես գալ որևէ գոյականի լրացում։ Օրինակներ՝*

«|| Ընկերոջն ուղարկելիք || նամակը գրպանը դրած/՝ նա դուրս եկավ տանից»։ «|| Տանը նույն օրն ավարտելիք || գործերը հաջորդ օրվան թողած/՝ նա այցի գնաց ընկերուհուն».

դ) Հարակատար դերբայը հարակատարով կազմված երկաստիճան կառույցի կազմիչ.— *Թեև հարակատար դերբայը բուն կիրառությամբ կարող է դառնալ բայի լրացում, սակայն ոճական տեսակետից հարմար չէ այնպիսի*

կառույցի գործածությունը, որտեղ հարակատար դերբայը մի այլ հարակատար դերբայի լրացում դառնա (թեև դա տեսականորեն կարելի է)։ Այսպես, գեղեցիկ չի հնչի, եթե ասենք «Ձենքերը դեն նետած փախած զինվորները դասալիք են»։ Նման դեպքում նախընտրելի է հարակատար դերբայի լրացման դերում անորոշի գործիականի կիրառությունը (Ձենքերը դեն նետելով փախած)։ Ասվածը, սակայն, չի վերաբերում այն դեպքին, երբ հարակատար դերբայը գոյականաբար գործածվելով կարող է դառնալ հարակատար դերբայի լրացում։ Օրինակներ՝

«|| Իրենց կորցրածը || մոռացած/՝ նրանք մտահոգվել էին այդ աղքատ մարդուն օգնելու հարցով»։ «|| Իր ձեռքով վաստակածը || ուրիշին վստահած/ մարդը չզղջաց»։

Սակայն հարակատար դերբայը կարող է հանդես գալ հարակատարով կազմված մեծ կառույցի կազմիչ՝ որևէ գոյականի լրացման դերում։ Օրինակներ՝

«|| Սյունի տակ ընկած || կաշվե պայուսակի մեջ պահված/ թուղթը կմատներ մոնտյորին» (Բակ., 161)։ «|| Բեղերը դեռևս նոր ծլած || երիտասարդին գործարան բերած/ վարպետը նրա հայրն էր»։ «Նրանց աղաղակը դարձավ ավելի սուր ու համառ, /համեմված երեխայական անհոգ քրքիջով և || մեծերից լսած || փոխադարձ հայհոյանքով|» (ՆԴ, 1, 56)։

ե) Ենթակայական դերբայը հարակատարով կազմված կառույցի կազմիչ.— *Այս դեպքում ևս պետք է նկատի ունենալ, որ ենթակայական դերբայը, բայի լրացում լինելու հատկությունից զուրկ լինելով, այդ դերը կարող է ստանձնել միայն գոյականաբար գործածվելով։ Օրինակներ՝*

«/Հենված || իրեն բերողներին ||՝ նա դանդաղ քայլում էր աստիճաններով»։ «|| Լավ աշխատողներին || մերժած/ գործատերը վերջում զղջաց»։

Այս դերբայը կարող է դառնալ հարակատարով կազմված երկաստիճան կառույցի մեջ որևէ գոյականի լրացում։ Օրինակներ՝

«|| Այդ շենքում աշխատող || բանվորների արարքից

զայրացած/՝ վարպետը հրաժարվեց նրանցից»։ «|| Իր առջևից փախչող || որսը տեսած| շունը առաջ նետվեց»։ «Միաբան էին գալիս Կռիլովի || վարից վերադարձող || եզան պոչին նստած/ ճանճի պարծենկոտ խոսքերը» (ՆԴ, 1, 228)։ «Չէր կարդացել || խոսելու նյութ չգտնող || անշնորհք մարդկանց մասին նրա կարդացածը/» (ՆԴ, 3, 232)։

գ) Այլ կառույցները հարակատար դերբայով կառույցի կազմիչ.— *Հարակատար դերբայի լրացում կարող են դառնալ ածականները, մակբայները, գոյականները, հետևաբար այս վերջինների կառույցները ևս կարող են հանդես գալ հարակատարով կազմված երկաստիճան կառույցի կազմում։ Մի դեպքում դրանք դերբայի անմիջական լրացումներ են լինում։ Օրինակներ՝*

«|| Դիրքին պատշաճ || հագնված/՝ դեսպանը ներկայացավ թագավորին»։ «/Օրվա հացի կարոտ || ապրած/ մարդ էր նա»։ «|| Մի քանի օր առաջ || ստացված| դրքերն սպառվել էին արդեն»։ «Վտիտ ուսերով, թխադեմ ու || ժամանակից շուտ || սպիտակած| Աշխենը թեքվել էր մոր վրա» (ԱՍԱ, 8)։ «|| Հողմից արագ || սլացած| ինքնաթիռը բախվել էր ռմբակոծիչին»։ «Հնչեց նրա ականջին || մի փոքր առաջ || ասված| գեղջկուհիների խոսքը» (ԴԴՎ, 439)։ «|| Արեգակից շատ ավելի || կարմրատակած իրենց շողքից|,— Շաղ են գալիս ծլնգոցով» (ՊՍԵԺ, 4, 99)։ «Թամարը || ժամանակից շատ վաղ || ծերացած| մի կին էր» (ՆԴ, 3, 239)։ «|| Մեր արքաների և իշխանների արածի վրա || չարածը դրած|՝ նրանց գործն էինք դեռ շարունակում» (ՊՍՄԱՄ, 226)։ «|| Բանվորներից մեկի || առաջարկած| մեթոդը շատ օգտակար եղավ»։

Երկրորդ դեպքում ածականական, գոյականական կառույցներն ի վիճակի են դառնալու հարակատար դերբայով կազմված երկաստիճան կառույցի մեջ եղած որևէ բառի լրացում։ Օրինակներ՝

«|| Գործին անտեղյակ || մարդու տված| խորհուրդը օգտակար չէ»։ «|| Ապահով կյանքի սովոր || երիտասարդի ըն-

դունած | որոշումը հեռավոր շրջանից հրաժարվելու մասին զարմանք չառաջացրեց»։ «|| Բարձր որակի || արտադրանք թողարկած | գործարանն արժանացավ մրցանակի»։ «| Երկաթուղու || երկրորդ կարգի || վագոնում նստած |՝ նա վերադառնում էր Թիֆլիս» (ՆԴ, 2, 232)։

Ե. Ենթակայական դերբայով երկաստիճան կառույցներ.— *Այս տեսակի երկաստիճան կառույցներում նույնպես կազմիչ կարող են դառնալ նշված բոլոր տեսակի կառույցները։*

ա) Անորոշ դերբայը ենթակայականով կազմված երկաստիճան կառույցի կազմում.— *Այս դեպքում անորոշ դերբայը նախ գործածվում է երանգավորիչ բայերի ենթակայական դերբայի հետ։ Ընդ որում լրացումը գործածվում է անիմիտիվ ձևով։ Օրինակներ՝*

«|| Լուրջ պատասխանատվությունից խուսափել || փորձող | մարդուն չի կարելի վստահել այդպիսի աշխատանք»։ «|| Հենց նոր աշխատել || սկսող | երիտասարդին պետք է օգնել»։ «|| Տուն վերադառնալ || ցանկացողը | լռում է» (ՄՄՍԿ, 137)։ «Որ || հանդիստ մեռնել || ցանկացողն | ինքն պիտի վճարեր» (ՊՍԵժ, 4, 286)։ «Դառնություն կար || կատակել || ձգտող | ձայնի մեջ» (ԱՍԵՈՒ, 153)։ «Որ անշուշտ պիտի ցավ պատճառի || ինձ ցավ պատճառել || ցանկացող | մարդկանց» (ՊՍՄԱՄ, 188)։

Երկրորդ դեպքում անորոշ դերբայը հանդես է գալիս գոյականաբար և ենթակայականի լրացման դերում գործածվում է թեք հոլովով։ Օրինակներ՝

«|| Շատ աշխատելու || ձգտող | մարդու համար բոլոր պայմանները պիտի ստեղծել»։ «|| Իր ապրուստը քրտինքով վաստակելու || վարժվող | երիտասարդ էր նա»։ «|| Ջրի հոսանքի նավարկելուն || հետևող | մարդիկ հայտնեցին, որ կարելի է սկսել գետանցը»։

Անորոշ դերբայը ենթակայական դերբայով կազմված երկաստիճան կառույցի մեջ կարող է դառնալ նաև որևէ գոյականի լրացում։ Օրինակներ՝

«|| Անտառ մեկնելու || ժամից ուշացողները | հավաքվե-

լու էին բակում»։ «|| Դասագրքեր ու տետրեր գնելու || փող չունեցողներին| օգնում էր անձամբ»։

բ) Անկատար դերբայի -Ի վերջավորվող ձևը ենթակայականով կազմված երկաստիճան կառույցի մեջ.— *Այս դերբայը կարող է դառնալ միայն բայի լրացում։ Հետևյալ նախադասություններում առկա են այսօրինակ կառույցներ։*

«|| Նյութն ուսումնասիրելիս || հանդիպող| անհասկանալի բառերի բացատրությունը գտնում էր բառարաններում»։ «|| Գլուխը շարժելիս || զգացվող| սուր ցավը ստիպեց դիմելու բժշկին»։

գ) Ապառնի դերբայը ենթակայականով կազմվող երկաստիճան կառույցի մեջ.— *Այն պատճառով, որ այս դերբայը բայի լրացում չի դառնում, այն կարող է լինել նշված երկաստիճան կառույցում միայն իբրև որևէ գոյականի լրացում։ Օրինակներ՝*

«|| Իրեն հասանելիք || դրամն ստացող| վարպետը մոտեցավ գանձապահին»։ «|| Ընկերոջն ուղարկելիք || ծանրոց պատրաստողը| Հակոբն էր»։

դ) Հարակատար դերբայը ենթակայականով կազմված մեծ կառույցի մեջ.— *Այս դերբայը մի դեպքում անմիջապես է դառնում ենթակայականի լրացում։ Օրինակներ՝*

«|| Այդ մարդու վատ արարքից խիստ զայրացած || խոսող| մարդիկ հետո խնայեցին նրան»։ «|| Մեքենայի մոտ կանգնած || աշխատող| մարդիկ շուտ էին հոգնում, իսկ || հարաշարժի առջև նստած || աշխատողները| համեմատաբար հանդիստ էին»։

Նույն դերբայը գոյականաբար ևս կարող է դառնալ ենթակայականի լրացում։ Օրինակներ՝

«|| Ուրիշների գրածը || շտկող| մարդը անշուշտ գրագետ կլինի»։ «|| Աշակերտների կոտրածները || համբերությամբ վերանորոգող| վարպետը շարունակում էր աշխատել նույն դպրոցի արհեստանոցում»։

Հարակատար դերբայը կարող է հանդես գալ նաև երկաստիճան կառույցի կազմում որևէ գոյականի որոշչի դերում։ Օրինակներ՝

«|| Վաղուց աղավաղված || մագաղաթե մատյանը վերանորոգողները | հսկայական ջանքեր են թափել»։ «|| Ուրիշի գրած || շարադրությունն արտագրող | աշակերտը ուղղագրական սխալներ էր թույլ տվել»։ «| Դատարանի հետ || փոքր ի շատե խճճված || գործ ունեցողը | առանց փաստաբանի ոչինչ չի կարող անել» (ՆԴ, 2, 266)։

Նույն դերբայը երկաստիճան կառույցի մեջ մտնող որևէ գոյականի լրացման դեր կարող է կատարել նաև գոյականաբար գործածվելով։ Օրինակներ՝

«|| Իմիջայլոց ասածի || նպատակը հասկացող | մարդը չմոռացավ այդ խոսքը»։ «|| Ջուրն ընկածի || հագուստից բռնող | նավաստին օգնություն կանչեց ընկերներին»։

ե) Ենթակայական դերբայը ենթակայականով կազմված երկաստիճան կառույցի մեջ.— Այս դեպքում ենթակայական դերբայը դառնում է միայն այդ կառույցի մեջ եղած որևէ գոյականի լրացում։ Օրինակներ՝

«|| Դասից ուշացող || աշակերտներին հանդիպող | ուսուցիչները կշտամբում էին նրանց»։ «|| Հաղթանակով վերադարձող || զինվորներին ցնծությամբ ընդունող | ժողովուրդը նրանց մեծ պատիվների արժանացրեց»։

Անշուշտ այսպիսի կառույցները ոճական միապաղաղություն են առաջացնում, ուստի և սովորաբար խուսափում են դրանց գործածությունից։ Նման դեպքում աշխատում են հարակատարի փոխարեն այլ ձև գործածել։ Այսպես, բերված նախադասություններում հարմար է ուշացող-ի և վերադարձող-ի փոխարեն ուշացած, վերադարձած ձևերի գործածությունը։

Նման կառույցներում ենթակայական դերբայը գոյականաբար գործածվելով կարող է դառնալ կառույցի գլխավոր բառի լրացում։ Օրինակներ՝

«|| Քաղաք մեկնողներին || ուղեկցող | հարազատները վերադարձան»։ «|| Պլանը գերակատարողներին || պարգևատրող | հանձնաժողովը վերջացրեց իր աշխատանքը»։

զ) Այլ կառույցները ենթակայական դերբայով կազմված երկաստիճան կառույցի մեջ.— Ենթակայական դեր-

բայով կազմված կառույցի կազմում կարող են հանդես գալ ածականական, մակբայական, գոյականական և այլ կարգի բառակապակցություններ։ Ընդ որում մի դեպքում դրանք լինում են ենթակայական դերբայի լրացում։ Օրինակներ՝

«|| Հոգսերից ազատ || ապրող| մարդը դժվարությամբ է տանում նեղությունները»։ «|| Ամպերից բարձր || թռչող| ինքնաթիռը աննկատելի մնաց թշնամուց»։ «|| Կրիայից դանդաղ || շարժվող| այդ կենդանին հեռու գնալ չէր կարող»։ «|| Մի քանի օր ուշ || մեկնող| խումբը դեռևս պատրաստ չէր»։ «|| Կոշիկները հագին || թանգարան մտնողներին| դիտողություն արեցին»։ «|| Ամբողջ թափով || հարձակվող| թշնամին չախչախվեց»։

Երկրորդ դեպքում այդ կառույցները կարող են հանդես գալ ենթակայական դերբայով կազմվող երկաստիճան կառույցի կազմում որևէ բառի լրացման դերով։ Օրինակներ՝

«|| Հոգսերից ազատ || այդ մարդուն օգնող| քույրը չկար»։ «|| Չափից ավելի դանդաղ || ընթացքն արագացնող| մեքենան դործի դրվեց»։ «|| Վերարկուն հագին || այցելուին դիտողություն անող| աշխատակիցը գնաց»։

2. ԵՐԿԱՍՏԻՃԱՆ ԱԾԱԿԱՆԱԿԱՆ ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ածականական բառակապակցությունը նույնպես կարող է կազմված լինել շարահյուսական մեկից ավելի կառույցներից (որոնց մեջ գլխավորը ածականով կազմվածն է)։ Ածականական բառակապակցության մեջ մեկ կազմիչի դերով հանդես են գալիս դերբայական դարձված, մակբայական, ածականական, գոյականական բառակապակցություններ և այլ կարգի կառույցներ։ Ընդ որում դրանց մի մասը կարող է դառնալ անմիջապես գլխավոր բառի՝ ածականի լրացում։ Ածականը լրացումներ է ստանում հոլովվող բառի տրական, բացառական, գործիական, երբեմն և ներգոյական հոլովներով, կապային կառույցներով, մակբայով, ածականով։ Հայտնի է, որ հոլովվել կարող են նաև անորոշ, հարակատար, ենթակայական դերբայները (գոյականական կիրառությամբ)։ Ածականական բառակապակցության մեջ էլ

նշված բառաձևերը կարող են ածականի կամ կառույցի որևէ կազմիչի լրացման դեր կատարել՝ լինելով կառույցի գլխավոր բառ։ Ինչպես ասվել է դերբայով կազմվող երկաստիճան կառույցների ընդունության կապակցությամբ, այստեղ ևս մեծ կառույցի կազմիչ ծառայող բառակապակցությունները ոչ թե նախադասության անդամ են, այլ նախադասության անդամի կազմիչ։

Ա. Անորոշ դերբայը երկաստիճան ածականական բառակապակցության կազմիչ.— Անորոշ դերբայը ածականի լրացում կարող է դառնալ թեք հոլովներով (տրական, բացառական, գործիական, ներգոյական)։ Հետևյալ նախադասություններում ածականի լրացումն արտահայտված է անորոշ դերբայով։

«Մենք || ամեն վճիռ ընդունելու || պատրաստ| պիտի լիննենք» (ԴԴվ, 206)։ «|| Օտարներին հարկ վճարելուց || ազատ| երկիրը կարճ ժամանակում առաջադիմեց»։ «|| Ոտքի վրա մնալու || անընդունակ| մարդուն տուն տարան»։ «|| Եվ իսկապես, |երբեմն || լավ ուտել-խմելուն || սովոր|, այժմ շատ հազիվ էր պատահում, որ նա կուշտ փորով հաց ուտեր» (ՆԴ, 3, 54)։ «|| Ոչինչ ասելու || անկարող|՝ Արսենը սեղմեց բոլորի ձեռները» (ԴԴվ, 498)։

Այս դեպքում անորոշ դերբայը կարող է հանդես գալ նաև կապի խնդրի դերում (կապի հետ միասին դառնալ ածականի լրացում)։ Օրինակներ՝

«|| Արհեստ սովորելու || մեջ ընդունակ| պատանիների համար խմբակ կազմակերպեցին»։ «|| Հանքում աշխատելու || համար ոչ պիտանի| գերիներին գնդակահարում էին»։

Անորոշ դերբայը կարող է դառնալ նաև ածականական բառակապակցության մեջ որևէ գոյականի լրացում։ Օրինակներ՝

«|| Գյուղ մեկնելու || պատրաստություններին անտեղյակ|՝ նա անհոգ թրև էր գալիս»։ «|| Ընտանիք կերակրելու || հոգսից ազատ| մարդը չի պատկերացնում դժվարությունները»։ «|| Թշնամու զորեղ հարձակումից պաշտպանելու || հարմարությունից զուրկ| ամրոցը երկար չդիմացավ»։

Բ. Անկատար դերբայը երկաստիճան ածականական բառակապակցության կազմիչ.— *Անկատար դերբայը սովորաբար քիչ է դառնում ածականի լրացում։ Նկատելի է, որ լրացումը սահմանափակման իմաստ է ունենում։ Հաղվադեպ գործածվող օրինակներից կարելի է նշել մի երկուսը.*

«|| Թշնամու դեմ կռվելիս || խիզախ| այդ մարդը անհամարձակ էր առօրյա կյանքում»։ «|| Ուրիշին պարտք տալիս || ժլատ| մարդը փոխվում էր պարտք վերցնելու դեպքում»։

Գ. Ապառնի դերբայը երկաստիճան ածականական բառակապակցության կազմիչ.— *Ապառնի դերբայը ածականի լրացում չի դառնում իր բուն կիրառությամբ։ Սակայն այն կարող է գործածվել նշված տիպի բառակապակցություններում երկու դեպքում։ Առաջինն այն է, որ ապառնի դերբայը գոյականաբար գործածվելով կարող է դառնալ ածականի լրացում։ Օրինակներ՝*

«|| Ուրիշի կատարելիքին || անտեղյակ|՝ իզուր ժամանակ էր վատնել»։ «|| Հաջորդ օրը տեղի ունենալիքին || հարմար| զգեստներ պատրաստեց»։

Երկրորդ դեպքում ապառնի դերբայը կարող է դառնալ ածականական երկաստիճան կառույցի մեջ որևէ գոյականի լրացում։ Օրինակներ՝

«|| Աղքատներին տրվելիք || նպաստին կարոտ| մարդիկ հերթի էին սպասում»։ «|| Իր կատարելիք || դերին վայել| էր հագնված»։

Դ. Հարակատար դերբայը երկաստիճան ածականական բառակապակցության կազմիչ.— *Հարակատար դերբայը անմիջապես չի կարող դառնալ ածականի լրացում։ Հնարավոր է ածականական բառակապակցության մեջ հարակատար դերբայի գործածության երկու դեպք։ Նախ, գոյականաբար գործածված հարակատար դերբայը կարող է դառնալ ածականի լրացում։ Օրինակներ՝*

«|| Իր գրածներին || հարմար| շարժուձև չէր կարողացել ընտրել»։ «|| Բարեկամի ուղարկածին || արժանի| տեղ չգտնվեց տանը»։

Երկրորդ դեպքում հարակատար դերբայը երկաստիճան կառույցի մեջ կարող է դառնալ որևէ գոյականի լրացում։ Օրինակներ՝

«|| Իրենց կատարած || աշխատանքին արժանի | վարձատրություն չստացան»։ «|| Նրա գնած || զգեստին վայել | փողկապ ընտրեցի»։ «Ուզում եմ, որ դու քո պարտքը կատարես՝ || Բնության քեզ տված || շնորհներին վայել |» (ԴՍՐԵ, 197)։

Նույն դերում հարակատար դերբայը կարող է հանդես գալ նաև գոյականաբար։ Օրինակներ՝

«|| Նրա գրածի || բովանդակությանը հարմար | ձև չի ընտրված»։ «Վերադարձավ տուն || նոր լսածի || տպավորությամբ լի |»։

Ե. ենթակայական դերբայը երկաստիճան ածականական բառակապակցության կազմիչ.— *Այս դեպքում նույնպես դերբայը անմիջապես ածականի լրացում չի դառնում. այլ նման դեր է ստանձնում գոյականաբար գործածվելիս։ Օրինակներ՝*

«|| Օտար երկրներից ժամանողներին || հարմար | սենյակներն աղատեցին»։ «|| Սենյակ մտնողներից || աննկատ | թաքնվել էր դռան ետևում»։ «Քայլում էր || իրեն հետ գնացողներից || անջատ |»։

ենթակայական դերբայով կարող է արտահայտվել երկաստիճան ածականական բառակապակցության կազմիչ գոյականի լրացումը։ *Օրինակներ՝*

«|| Հնշտ կատարվող || աշխատանքի սովոր | մարդը չէր կարողանում դիմանալ ծանր գործին»։ «|| Իրեն հետ քայլող || մարդուն ծանոթ | վարպետը ցույց տվեց ճանապարհը». «Գնում էր նա՝ | տեղյակ || շուրջը կատարվող || բոլոր դեպքերին | և անբարբառ բոլոր դժբախտություններին | և անբարբառ բոլոր դժբախտությունների նկատմամբ» (ԱՍԵՈՒ, 504)։

Նույն պաշտոնում ենթակայական դերբայը կարող է հանդես գալ նաև գոյականաբար։ Օրինակներ՝

«|| Հանքերում աշխատողների || պահանջներին սովոր |

մատուցողը չզարմացավ այդ պատվերից»։ «|| Պատերազմի դաշտում կովողների || կամքին հակառակ| նրանց տերերը հաշտություն կնքեցին»։

Զ. Մակբայը երկաստիճան ածականական բառակապակցության կազմիչ.— Ինչպես հայտնի է, մակբայը կարող է դառնալ որակական ածականի լրացում։ Մասնավորապես այդպիսի դերով հանդես են գալիս չափ ու քանակի, աստիճանի մակբայները, ինչպես՝ առավել, խիստ, շատ, քիչ, բավական, չափազանց, սաստիկ և այլն[41]։ Ածականական երկաստիճան կառույցում սրանք կարող են հանդես գալ բառակապակցությամբ։ Օրինակներ՝

«Նա || ուրիշներից ավելի || ծանր| վիշտ էր տարել»։ «Այդ ապրանքը || նրա կարողությունից պակաս || մատչելի| արժեք ուներ»։ «|| Նրանից քիչ || արժանավոր| մարդուն նախապատվություն էին տվել»։ «Նա կրկնեց հարվածն || առաջվանից ավելի || պինդ|» (ՆԴ, 1, 47)։

Մակբայը կարող է դառնալ նաև երկաստիճան ածականական բառակապակցության կազմիչ գոյականի լրացում, եթե վերջինս բայական կամ ածականական ծագում ունի։ Օրինակներ՝

«|| Ձափից դուրս արագ || վազքին անվարժ| նորակոչիկները շուտ էին հոգնում»։ «|| Կրիայի պես դանդաղ || ընթացքի սովոր| մարդը չէր կարողանում երիտասարդի հետ հավասար քայլել»։

Է. Գոյականական բառակապակցությունները երկաստիճան ածականական բառակապակցությունների կազմիչ.— Գոյականը ածականի լրացում կարող է դառնալ տրական, բացառական, գործիական, մասամբ ներգոյական հոլովներով, կապային կառույցներով։ Այս բոլոր դեպքերում էլ հնարավոր է, որ գոյականը անբաժանելի կառույցով կապարի այդ պաշտոնը։ Այսպես, հետևյալ նախադասություն-

---

41 Տե՛ս մեր նշվ. աշխատ., էջ 185—189։

ներում ածականը ստացել է լրացումներ գոյականի տարբեր հոլովաձևով։

|| Փոքր տարիքին || վայել| խաղերը նրան զբաղեցնում էին նաև այժմ, հասուն տարիքում» «|| Ընտանեկան հոգսերի մեծ մասից || ազատ| մարդիկ զբաղվում էին ինքնակրթությամբ»։ «Այնտեղ ձկնորսները || հարյուր գրամից || թեթև| ձկները կրկին ջուրն են գցում»։ «|Կնոջից || երեսուն տարով || ծեր| այդ մարդը նրան հայր կսազեր»։

Գոյականական բառակապակցությունները կարող են դառնալ նաև երկաստիճան բառակապակցության որևէ կազմիչի լրացում։ Օրինակներ՝

«|| Նրանց ունեցած || || հազար ռուբլի || գումարին հարմար| նվեր չկար խանութում»։ «|| Երեխաներից ոչ մեկի || Ճաշակին վայել| խաղալիք չէր գնել»։ «|| Փոքր հասակի || երեխաների ուժից բարձր| աշխատանքը կկասեցնի նրանց աճը»։ «Դա || շոր ուղեղով || մարդուն սաղական| դատողություն է»։

Ածականի լրացման դերում գոյականը կարող է հանդես գալ նաև կապային կառույցի մեջ։ Օրինակներ՝

«|| Հինգ հազար մետրի || չափ բարձր| գագաթը ծածկված է հավերժական ձյունով»։ «|| Հինգ հոգու || հետ հավասար| աշխատելը սպառեց նրա ուժերը»։

Կապային կառույցները կարող են դառնալ նաև ածականական բառակապակցության որևէ կազմիչի լրացում։ Օրինակներ՝

«|| Հարյուր ռուբլու || չափ գումարին հարմար| նվեր գնեցին»։

Ը. Այլ կարգի կառույցներ երկաստիճան ածականական բառակապակցության կազմիչ.— Այս դեպքում որոշ կառույցներ կարող են դառնալ անմիջապես ածականի լրացում։ Օրինակներ՝

«|| Դեռևս շատ հեռվից || նկատելի| կետը գնալով մեծացավ և աշտարակ դարձավ»։ «|| Բավական մոտիկից || ծանոթ| մարդիկ խորհուրդ տվեցին զգուշանալ նրանից»։

«|| Հինգ տարեկանից || հաշմանդամ| այդ մարդը չէր կորցրել հոգու արիությունը և ստեղծագործում էր»։

Մի շարք կապակցություններ էլ լինում են մեծ կառույցի որևէ կազմիչի լրացում։ Օրինակներ՝

«|| Օրական վեց ժամանոց || պարապմունքից ազատ| ուսանողները զբաղվում էին ընթերցանությամբ»։ «|| Մի քանի հարյուր || հյուրերին հարմար| շենքը տրամադրվել էր ընդամենը քսան հոգու»։ «|| Մի փոքր առաջվա || կյանքով լի| տունը լռեց ինքնամփոփ կեցվածքով» (ԴԴվ, 144)։

Բ. Ածականը երկաստիճան ածականական բառակապակցության կազմիչ.— Ածականները կարող են դառնալ ածականական կառույցի կազմիչ որևէ գոյականի լրացում։ Այսպես են հետևյալ նախադասություններում գործածված ածականական բառակապակցությունները։

«|| Սովորաբար մրջյունների չափ խիտ || բնակիչներից թափուր| բնակավայրն այժմ ավերակի տպավորություն էր թողնում»։ «|| Դինով լի || բաժակի կարոտ| այդ մարդը այժմ խմում էր ազահորեն»։ «|| Չափից դուրս ծանր || աշխատանքի սովոր| մարդու համար այդ գործը հեշտ էր»։

3. ԵՐԿԱՍՏԻՃԱՆ ՄԱԿԲԱՅԱԿԱՆ ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մակբայը սովորաբար քիչ լրացում է ստանում։ Դրանք հիմնականում համեմատության աստիճանի իմաստ արտահայտող բառեր են։ Ընդ որում այդ դերով հանդես են գալիս առաջին հերթին չափ ու քանակի, աստիճանի մակբայները։ Այս պատճառով էլ երկաստիճան մակբայական բառակապակցություններում լրացական կառույցը առաջին հերթին մակբայական է։ Օրինակներ՝

«Այսօր || մի փոքր ավելի || շատ| աշխատեցի»։ «Նա || դրանից մի քիչ || արագ| ավարտեց աշխատանքը»։ «|| Իր ընկերներից մի քանի անգամ ավելի || դանդաղ| էր քայլում»։

Այն դեպքում, երբ մակբայը կապային դեր էլ է ստանձ-

նում, ապա նրանով կազմված երկաստիճան կառույցի կազմում կարող են լինել այլ խոսքի մասերով կազմված բառակապակցություններ։ Այսպես, հետևյալ նախադասություններում առկա են դերբայական դարձվածներ։

«|| Ընկերոջ դյուղ մեկնելուց || շատ ուշ| միայն նա նամակ ստացավ»։ «|| Քննություն հանձնելուց || երեք օր հետո| մեկնեց դյուղ»։ «|| Փողոցում տեսած || դեպքից քիչ առաջ| հանդիպել էր ընկերոջը այլայլված վիճակում»։

Նույն դերում կարող են գործածվել ածականական բառակապակցություններ։ Օրինակներ՝

«|| Ջրով լի || սափորից շատ հեռու| մի անկյունում դրված էր ծաղկամանը»։ «|| Մոլախոտերից զերծ || արտից մի քիչ վեր| ծփում էր արհեստական լճակը»։

Գոյականական բառակապակցությունների գործածությունը նշված երկաստիճան կառույցներում նույնպես սովորական է։ Օրինակներ՝

«|| Երկու ժամից || մի քիչ ավելի| աշխատեց այնտեղ»։ «|| Երեք հարյուր կիլոմետր || արագությունից ավելի դանդաղ| է վարում ինքնաթիռը»։

4. ԵՐԿԱՍՏԻՃԱՆ ԳՈՅԱԿԱՆԱԿԱՆ ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գոյականական բառակապակցություններն առհասարակ ունեն բազմաղան ներքին կառուցվածք։ Այս դեպքում ևս շարահյուսական մեկ դերով օժտված կառույցը ներկայացնում է մի շարք կառուցվածքային տարրերի միասնություն։ Գոյականական երկաստիճան բառակապակցությունների կազմում կարող են հանդես գալ բոլոր տիպի շարահյուսական ամբողջությունները։

Ա. Դերբայական դարձվածը երկաստիճան գոյականական բառակապակցության կազմիչ.— Ինչպես հայտնի է, գոյականի լրացում կարող են դառնալ անորոշ, ապառնի, հարակատար և ենթակայական դերբայները։ Սրանցով կազմված կառույցներն էլ կարող են դառնալ երկաստիճան գո-

յականական բառակապակցությունների կազմիչ՝ գլխավոր բառի լրացման դերում։

ա) Անորոշ դերբայը երկաստինան գոյականական բառակապակցության կազմիչ.— *Որպես կանոն, անորոշ դերբայը հանդես է գալիս հոլովված ձևով։ Մի դեպքում անորոշ դերբայը դառնում է տվյալ կառույցի գլխավոր բառի անմիջական լրացում։ Օրինակներ՝*

«|| Ընկերոջս վերադառնալու || օրը| ես դանվում էի քաղաքից դուրս»։ «|| Իր սենյակում աշխատելու || պահին| նա մոռանում էր ամեն ինչ»։ «Այդ հարմար բոպեն պետք է լիներ || բոլշևիկների Թիֆլիս մտնելու || նախորդ օրը|» (ՆԴ, 1, 229)։

Երկրորդ դեպքում անորոշ դերբայը կարող է դառնալ գոյականական բառակապակցության որևէ կազմիչի լրացում։ Օրինակներ՝

«|| Այնտեղ աշխատելու || երկու տարվա ընթացքում| ձեռք բերեց մեծ հեղինակություն»։ «Նա վարժվել էր || գերիներին տանջելու || ձևերից մեկին|»։ «Ճեմում էր || տղամարդկանց դուր գալու || քայլվածքով|»։ «Ներս մտավ || հաց կտրելու || դանակը ձեռքին»։

բ) Ապառնի, հարակատար, ենթակայական դերբայները երկաստինան գոյականական բառակապակցության կազմիչ.— *Այս դեպքում ևս լրացումը կարող է նախ վերաբերել մեծ կառույցի գլխավոր բառին։ Օրինակներ՝*

«Խանութներում կարող է ձեռք բերել || իր հավանելիք || դույնի| փողկապներ»։ «Արձակուրդ կստանաք || ձեզ տրամադրվելիք || ամսին|»։ «Որ լաց է լինում || խաղալիք ուզող || ձեր երեխայի Անմեղ աչքերով|» (ՊՍՄԱՄ, 208)։ «|| Նրա զայրացած || պահին| վտանգավոր է հետը խոսել»։ «Նա շրջում էր |հնամաշ, || տեղ-տեղ կարկատած || հագուստով|»։ «Մարտիկն ընկած էր խրամատիմբին՝ |հեռախոսալարը || ցրտից կծկված || ձեռքին|»։ «Խոսում էր || սարսափ ազդող || ձայնով»։ «|| Քաղաքում անցկացնելիք || երեք շաբաթվա մեջ| մտադիր էր հաճախել բոլոր տեսարժան վայրերը»։

Հնարավոր են նաև այնպիսի երկաստիճան կառույցներ, որոնցում այս դերբայներն ստանձնում են կազմիչի լրացման պաշտոն։ Օրինակներ՝

«|| Նրա որդեգրելիք || երեխաներից մեկը| տղա պիտի լիներ»։ «Նա փողոց դուրս եկավ || ընկերոջն ուղարկելիք || նամակը գրպանում|»։ «|| Իրեն հասանելիք || դրամի չեկը ձեռքին| դուրս եկավ պետի առանձնասենյակից»։ «Դուշել էր |մեկը || քարերով ջարդված || այդ հանճարներից|» (ՊՍԵԺ, 4, 175)։ «|| Դեղեցիկ դերասանուհիների կենացը խմող || երիտասարդներից մեկը| ասում էր և փաստերով հաստատում» (Մուր., 1, 30, 1951)։ «|| Շատ մաշված || կոշիկները հագին| անցնում էր փողոցով»։ «Սկզբում Դավիթ Ֆոմիչն այս հարվածը տարավ զարմանալի տոկունությամբ ու || մինչև սրտի խորքը վիրավորված || մարդու լուռ հպարտությամբ|» (ՆԴ, 1, 231)։ «Ճաշ եփելու համար վառեցին || ոտքը կոտրած || աթոռներից մեկը|»։ «Նա ուտում էր || շատ քաղցած || մարդու ախորժակով|»։ «Նա անցնում էր || ինչոր բան որոնող || մարդու քայլերով»։ «Մտածում էր || կյանքի և մահվան առեղծվածի առջև կանգնած || մարդու մտատանջանքով |» (ՆԴ, 1, 52)։ «||Պատի տակ նստոտած|| ալևորներից ոմանք | հոնի կարմիր փայտերը մեկնում էին Միրի կողմը» (Բակ., 42)։ «Որոնք շարունակ ժպտում էին || ամենքին և ամեն բանի ուրախ հեգնությամբ վերաբերող || բարեսիրտ մարդու քաղցր ժպիտով|» (ՆԴ, 3, 43)։ «Այդպիսի դեպքերում նա անցնում է || գործի գնացող || մարդու շտապ քայլերով |» (ՆԴ, 3, 267)։

Բ. Ածականը երկաստիճան գոյականական բառակապակցության կազմիչ.— *Գոյականական մեծ կառույցներում ածականը և ածականական բառակապակցությունը կարող են դառնալ նախ գլխավոր բառի լրացում։ Օրինակներ՝*

«|| Ինձ համար շատ ծանր || մի պահի| ես թուլություն ունեցա ընդունելու նրա օգնությունը»։ «Այդ գործարանը || չափից դուրս ցածր || որակի| արտադրանք էր տալիս»։ «Նա || միջինից բարձր || տարիքով| մարդ էր»։ «|| Ամենքին անտես || քայլերով| Անցնում են բոլոր փողոցները» (2, 404).

«Իսկ գրքաց Գրիգորը մինչև օրս էլ շարունակում է իր արհեստը՝ || առաջվա պես ժպտուն || աչքերով և կարմիր այտերով|» (ՆԴ, 1, 25)։

Նույնպիսի բառակապակցությունները գործածվում են նաև որևէ կազմիչի լրացման դերում։ Օրինակներ՝

«|| Գյուղին անվարժ || մանուկի հետաքրքրությամբ| դիտում էր գյուղական ամեն մի աշխատանք» (Բակ., 62)։ «|| Աշխարհից անտեղյակ || մարդու մեկը| մի սիսալ խորհուրդ է տվել»։ «Նա ներս մտավ || դինով լի || փարչը ձեռքին|»։ «|| Զբոսանքի սովոր || մարդու քայլերով| էր գնում»։ «Ժպտում էր || իր ֆիզիկական ուժի վրա վստահ || մարդու արհամարհական ժպիտով|» (ՆԴ, 3, 84)։ «Խմբագրի վրա նայում էր || իր իշխանության վրա վստահ|| պաշտոնյայի բարձրությունից|» (ՆԴ, 1, 201)։

Գ. Մակբայը երկաստիճան գոյականական բառակապակցության կազմիչ.— Մակբայը գոյականի լրացման դեր կատարում է սահմանափակ դեպքերում։ Լրացյալ լինում են սովորաբար բայանունները։ Հետևյալ նախադասություններում մակբայը կառույցի գլխավոր բառի լրացումն է։

«Նա գնում էր || շտապից դուրս դանդաղ || քայլերով |»։ «Այդ տարածությունը անցավ || արտակարգ արագ || ընթացքով|»։ «|| Հինգ տարեկանից վաղ || հասակում| երեխան դրսևորեց արտակարգ ընդունակություններ»։ «|| Մի քիչ ավելի ուշ || տարիքից| նա ակնոց էր կրում»։

Մակբայը կարող է դառնալ նաև կառույցի այլ բաղադրիչի լրացում։ Օրինակներ՝

«|| Շատ վաղ || մանկության տարիքում| մարդը հոգսեր չի ունենում»։ «|| Շատ շտապ || կարգադրությունը ձեռքին| նա մոտեցավ վարորդին»։ «|| Արտակարգ հապճեպ || ձևակերպման հրամանը գրպանում| դուրս եկավ դրասենյակից»։

Դ. Այլ կառույցները երկաստիճան գոյականական բառակապակցության կազմիչ.— Սրանք կարող են դառնալ գոյականի լրացում, ուստի տարբերություն չկա, թե մեծ կառույցի մեջ որ կազմիչի լրացում են լինում։ Օրինակները բերվում են խառը։

«Նա հագել էր || քսան տարի առաջվա || մոդայի| զգեստներ»: «Նա || չափից դուրս եսասերի || սնտակտուությամբ| անվերջ ընդհատում էր ուրիշներին»: «Ապրանքն ընտրում էր || իր հետինների || ճաշակով|»: «|| Ծանր կոթավոր || մտրակը ձեռքին| վարում էր կառքը»:

5. ԱՅԼ ԿԱՐԳԻ ԵՐԿԱՍՏԻՃԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ

Ինչպես ասվել է, այլ կարգի կառույցները ներկայացնում են ոչ միատարր կազմություն: Այս կառույցները բաղադրվում են ոչ բոլոր տեսակներով: Այսպես, գործածական են մակբայական, ածականական կառույցների դոյականացած փոխակերպները, ինչպես՝ || մի քանի քայլ || հեռու |— || մի քանի քայլ || հեռվից| (հեռավորություն, հեռավորությամբ և այլն), || իր շահը հասկանալու || չափ խելոքություն| և այլն: Օրինակներ՝

«Իրեն ուղեկցող կնոջ հետ |նրանից || մի քանի քայլ || հեռավորությամբ| պետք է անցներ նրա մոտով» (ՆԴ, 2, 267): «Դուք սարսափելի եսասերներ եք| || բնական արարածի պատկերը կորցնելու || չափ եսասերներ|» (ՆԴ, 3, 32):

Գ. ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԵՌԱՍՏԻՃԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ

Ինչպես նշեցինք նախորդ հատվածում, շարահյուսական յուրաքանչյուր կառույց կարող է շարահյուսական կառույցների անվերջ շղթա լինել, սակայն գործնականորեն այդ շղթան կարճ է: Այստեղ պետք է ավելացնենք, որ դերբայական դարձվածներն ավելի շատ են հակված երկար շղթա կազմելու: Մասամբ այդպես են նաև ածականական բառակապակցությունները: Մինչդեռ մյուս կարգի բառակապակցությունները համեմատաբար կարճ շղթա են լինում: Սա բացատրվում է դերբայների, մասամբ և ածականների, կապակցելիության լայն հնարավորություններով:

Եռաստիճան շարահյուսական կառույցների յուրահատ-

կությունն այն է, որ երրորդ աստիճանի կազմիչը կախված է ոչ թե առաջինից, այլ երկրորդ աստիճանի կազմիչից։ Ուստի շարահյուսական կապը պայմանավորված է երկրորդ բաղադրիչով։ Ամբողջ կառույցի հիմքը, սակայն, մնում է առաջնային կազմիչը, ուստի և այն անվանում ենք նրանով։ Քանի որ կառույցների շարահյուսական պաշտոնների քննությունը տրվել է սկզբում, այստեղ ևս կանգ կառնենք միայն կառույցի ներքին կառուցվածքի վրա։ Կլոր փակագծով նշվում է երրորդ աստիճանի բաղադրիչը, երկու ուղիղ փակագծով՝ երկրորդ աստիճանի բաղադրիչը, մեկով՝ առաջին աստիճանի բաղադրիչը։

1. ԵՌԱՍՏԻՃԱՆ ԴԵՐԲԱՅԱԿԱՆ ԴԱՐՁՎԱԾՆԵՐ

Եռաստիճան դերբայական դարձվածի առաջին բաղադրիչի դերում կարող են հանդես գալ բոլոր դերբայները։

ա) Անորոշ դերբայով եռաստիճան դարձվածներ.— *Այսպիսի դարձվածների գլխավոր բառը անորոշ դերբայն է, որը կարող է ունենալ երկաստիճան դերբայական կառույցներ, երկաստիճան ածականական բառակապակցություններ, երկաստիճան մակբայական բառակապակցություններ, երկաստիճան գոյականական բառակապակցություններ և այլն։ Քանի որ երկաստիճան կառույցների քննությունը տարվել է բավական հանգամանորեն, ուստի կբավարարվենք միայն օրինակներ նշելով։ Ընդ որում երկաստիճան դերբայական դարձվածները կարող են ունենալ տարբեր կառույցներով կազմիչներ։ Հետևյալ նախադասություններում լրացման դեր են կատարում երկաստիճան դերբայական դարձվածները։*

«Նա դիտավորություն ուներ՝ |մոտ օրերում Սամվելին ճանապարհ դնել| ||հորը ընդառաջ երթալու և դիմավորելու նրան||՝ (նախքան Տարոնի սահմանից ներս մտնելը)» (Ր. 7, 110)։ «Նա սկսավ անհագաբար շնչել թարմ օդը կարծես |կամենալով || մեղմել նրա գովությամբ || (յուր սիրտը վառող) || կրակի տապը||» (Մուր., 4, 27)։ «Հաստատում է հայրս նրա խոսքը ու |թողնելով ծերունուն| (դուռը նրա-

տած) || ծխելիս ու հազալիս ||, ձեռքս իր ափի մեջ՝ տանում է ինձ» (Մ. Խերանյան, Երկար, երկար մի ճանապարհ, 11, 1965)։ «Ընկել էին նժույգների հետև՝ |ճիգելով ||նրանց որսալ || (օղապարանները վզները գցելով)» (ԴԴվ, 567)։ «Վարդանը կանգ առավ նրա առջև, |շարունակելով| || հայացքը սևեռել || (իրեն զբաղեցնող) || նոր մտքի շարժումներին համաձայն ||» (ԴԴվ, 218)։ «Սիրում են |մի տեսակ ծաղրածուի դեր կատարել || մասամբ իրենց շնչինությունը ծածկելու և մասամբ || (հասարակության մեջ սրամիտ ու սրախոս մարդու համբավը վայելողի) անմեղ փառասիրությանը գոհացում տալու համար ||» (ՆԴ, 3, 75)։ «(Դուրս գալու) || նոպատակով պատրաստվելս || տեսնելով|, հարցրեց, թե ուր արիտի գնամ» (Մուր., 3, 41)։ «Ավելի լավ համարեց լռել, քան թե (եղանակի մասին խոսել) || սկսելով || իր անշնորհքությունը ցույց տալ |» (ՆԴ, 3, 232)։ «Վերջապես կնոջը մի կերպ հաջողվեց (համարյա զոռով) || նրա թևից բռնած՝ քարշ տալով || տանել նրան մյուս սենյակը|» (ՆԴ, 1, 237)։ «Նորին մեծություն Պարսկական Շահը |հաշվի առնելով (երկու պետությունների միջև ծագած) || պատերազմի հետևանքով Ռուսական կայսրությանը պատճառած || զգալի վնասները |... պարտավորվում է դրանք փոխհատուցել դրամական վարձատրությամբ» (ՀՄԴՍԱՔՓ, 68)։

Անորոշ դերբայով կազմված կառույցներում իբրև երրորդ աստիճանի կազմիչ կարող են հանդես գալ ածականական, գոյականական, մակբայական և այլ կարգի բառակապակցություններ։ Այսպես են հետևյալ նախադասությունները։

«Փորձում էր |խանգարել ընկերոջը || ստանալու || (իր կոչումին հարմար) պաշտոն ||»։ «|Շարունակելով || աշխատել (հետազոտության կարոտ) թեմայի վրա || նա լավ արդյունքների հասավ»։ «|Հիշելով (աշխատանքից ազատ) || ընկերոջը տված || խոստումը|՝ դուրս եկավ տանից»։ «|Զայրանալով (մի քանի ժամ առաջ) || փողոցում կատարված || դեպքից|՝ նա որոշեց տանից դուրս չգալ»։ «|Զգալով || Բշ-

նամու (ամբողջ թափով) կովի նախապատրաստվելը ||՝ նա օգնական զորք պահանջեց»։ «|| Ստանալով (շատ հեռվից) || վերջերս ուղարկած || նամակը|՝ համոզվեցի, որ այլևս չի վերադառնա»։ «Սկսեց հեռացնել կանանց ամբոխը պատուհանի մոտից, |միևնույն ժամանակ կցկտուր պատասխաններ տալով (շորս կողմից) || իրեն ուղղված || անհամբեր հարձուփորձերին|» (ՆԴ, 1, 20)։

Հնարավոր են նաև անորոշ դերբայով կազմված եռատիճան այնպիսի կառույցներ, որոնցում երկրորդ աստիճանի լինեն ածականական, մակբայական, գոյականական բառակապակցությունները։ Այսպես, հետևյալ նախադասություններում անորոշ դերբայի լրացումը երկաստիճան ածականական կառույց է։

«Նա աչքի էր ընկնում || մյուսներից (մի քիչ ավելի) ազատ || պահելով|»։ «Նա վախենում էր (չափից ավելի) || աղքատ || ապրելուց|»։ «— Անշուշտ,— հաստատեց վասակը՝ |ջանալով || ասել (հնարավորին չափ) անկեղծ ||» (ԴԴվ, 548)։

Երկաստիճան ածականական կառույցը կարող է դառնալ նաև անորոշ դերբայի լրացման լրացում։ Օրինակներ՝

«(Չափից ավելի) || իր ուժերին վստահ || մարդու հետ գործ ունենալը| համարձակ բան է»։ «|| Պաշտոնով (մի քիչ ավելի) բարձր || մարդկանց առջև քծնելով| հասել էր այժմյան դիրքին»։ «|Դահլիճում (մի կտոր) || խավյարով || բուտերբրոդ և || չափից դուրս հում || բիֆշտեքս ուտելուց| և վրան էլ || մի քանի բաժակ || գարեջուր խմելուց| հետո, երբ Շահյանը վերադարձավ վագոն, տեսավ» (ՆԴ, 3, 227)։

Անորոշ դերբայի լրացումը կարող է արտահայտվել նաև երկաստիճան մակբայական բառակապակցությամբ։ Օրինակներ՝

«(Նույն սենյակում քնածներից) || երկու ժամ շատ || արթնանալով|՝ դուրս եկավ շենքից»։ «(Հիվանդությունից նոր ապաքինվողի) || պես դանդաղ || քայլելով| նայում էր շուրջը»։ «(Համալսարանում սովորող) || իր հասակակիցնե-

ից շուտ || աշխատանքի տեղավորվելը | նրան օգնեց նյութապես ապահովվելու»։

Անորոշ դերբայի լրացման դերում կարող են հանդես գալ նաև երկաստիճան գոյականական բառակապակցություններ։ Օրինակներ՝

«(Տեղ-տեղ խունացած) || հնամաշ վերարկուն հագին || դանդաղ քայլելով |՝ մոտենում էր հացի խանութին»։ «(Խնամքի կարոտ) || այդիներից մեկը || դնելը | լրացուցիչ ծախսեր կպահանջեր»։

բ) Անկատար դերբայով երկաստիճան դարձվածներ.— *Այսպիսի մեծ կառույցներում նույնպես անկատար դերբայի լրացման դեր կարող են կատարել դերբայական դարձվածները, ածականական, մակբայական, գոյականական բառակապակցությունները և այլ կառույցներ։*

Հետևյալ նախադասություններում անկատար դերբայի լրացումն արտահայտված է երկաստիճան դերբայական դարձվածներով։

«(Քաղաքից դուրս կառուցվող) || իր առանձնատունը մեկնել || ցանկանալիս | էր օգտագործում ավտոմեքենան»։ «|| Իր (կոշիկ կարելու) գործիքները ուրիշի սեղանին դրված || տեսնելիս | շատ էր զայրանում»։ «Ես նրան հաճախ եմ հանդիպում (այգում զբաղվող) || խաղասենյակում նստած || շախմատ խաղալիս |»։ «Իսկ շատ հաճախ նրան տեսնում էի || հասարակաց այգու մի խուլ անկյունում || (իր պես խունացած) նախկին մարդկանց հետ նստած || խաղաղ զրույց անելիս |» (ՆԴ, 1, 233)։

Երկաստիճան դերբայական դարձվածները կարող են դառնալ նաև անկատար դերբայի լրացման լրացում։ Օրինակներ՝

«(Գործից ազատ) || մարդկանց հետ զրուցող || իր աշխատակիցներին հանդիպելիս | շատ էր զայրանում»։ «(Ջափից դուրս արագ) || ընթացող || մեքենա տեսնելիս | կանգնեցնում էր և վարորդին հանդիմանում»։

Անկատար դերբայի լրացում կարող են դառնալ նաև

Երկաստիճան ածականական բառակապակցությունները։ Օրինակներ՝

«|| Սովորականից (մի քիչ ավելի) բարձր || խոսելիս| նա հուզվում էր»։ «(Պատերազմի դաշտում գտնվող) || որդուն հարկավոր || նվեր պատրաստելիս| ոչինչ չէր խնայում»։

Նույն դերով կարող են գործածվել նաև երկաստիճան մակբայական բառակապակցությունները։ Օրինակներ՝

«(Իր հետևից քարշ եկող) || մարդկանցից արագ || քայլելիս| խիղճը տանջում էր նրան»։ «(Նույն սենյակում քընած) || ընկերներից վաղ || արթնանալիս| զգուշությամբ դուրս էր գալիս»։

Գոյականական երկաստիճան բառակապակցությունները նույնպես կարող են հանդես գալ անկատար դերբայով կազմված կառույցի կազմում։ Օրինակներ՝

«(Ընկերոջ գրած) || նամակը ձեռքին || միջանցքով անցնելիս| հանդիպեց Պետրոսին»։ «(Պտուղ չտված) || մի ծառից մյուսին || անցնելիս| մտածում էր հին այգին վերացնելու և նորը տնկելու մասին»։ «(Դոներին նստոտած) || կանանց խմբի մոտով || անցնելիս| մի ջահել կին կանչեց նրա հետևից» (ՆԴ, 1, 57)։

Այլ բնույթի երկաստիճան կառույցները ևս կարող են գործածվել անկատար դերբայով կազմված կառույցի մեջ։ Օրինակ՝

«(Մեղրի չափ քաղցր) || միջուկավոր || կարկանդակներն ուտելիս| նա հաճույք էր զգում»։

գ) Ապառնի դերբայով եռաստիճան դարձվածներ.— *Ինչպես ասվել է, ապառնի դերբայը չի ունենում դերբայով արտահայտված լրացումներ։ Վերջիններս կարող են հանդես գալ ապառնի դերբայով կառույցի որևէ կազմիչի լրացման դերում։ Այսպես, հետևյալ նախադասություններում դերբայական երկաստիճան դարձվածները ապառնի դերբայի լրացման լրացում են։*

«(Հեռավոր հյուսիսում գտնվող) || քաղաքից վերադար-

ձած || բարեկամին ուղարկելիք | ծանրոցը դեռևս պատրաստ չէր»։ «(Անտառից բերած) || պտուղներից ստացվող || հյուլից պատրաստվելիք | մածուկը բուժիչ է»։

Հետևյալ նախադասություններում ապառնի դերբայով եռաստիճան կառույցի մեջ կան ածականական երկաստիճան կառույցներ։

«(Պապերից ժառանգած) ||հարստությամբ հպարտ || մարդուն տրվելիք | այդ չնչին գումարը նրան չէր ուրախացնի»։ «(Կապեր ունեցող) || ընկերներով հարուստ || բարեկամից սպասելիք | օգուտը մեծ էր լինելու»։ «(Ամենօրյա ապրուստի համար անհրաժեշտ) || միջոցներից զուրկ || ընտանիքին տրվելիք | նպաստը երկնային պարգև կլիներ»։

Նույն դերում կարող են հանդես գալ նաև մակբայական երկաստիճան բառակապակցությունները։ Օրինակներ՝

«(Բժշկի նշանակած) || ժամկետից մի քիչ շուտ || ընդունելիք | դեղը կտպաներ հիվանդին»։ «(Քաղաք մեկնելուց) || հինգ օր ուշ) ստանալիք | փողը ծնողները պիտի ուղարկեին փոստով»։

«(Քարերից ազատված) || հողակտորների մեծ մասում || ցանելիք | սերմացուն տեղափոխված էր դաշտ»։ «(Նոր կառուցվող) || շենքի առաջին հարկում || տեղադրվելիք | խանութը հատկացվելու է գրքի առևտրին»։

Նույն դերով կարող են հանդես գալ նաև երկաստիճան այլ կառույցներ։ Օրինակներ՝

«(Մագի չափ բարակ) || ցողունավոր || հասկերին սրբսկելիք | հեղուկը լցված էր մի ամանի մեջ»։

դ) Հարակատար դերբայով եռաստիճան դարձվածներ.— Այսպիսի մեծ կառույցներում կազմիչ կարող են լինել երկաստիճան դերբայական դարձվածները, ինչպես և մյուս տեսակի բառակապակցությունները։ Այսպես, հետևյալ նախադասություններում հարակատար դերբայով կազմված կառույցների կազմիչն արտահայտված է երկաստիճան դերբայական դարձվածներով, որոնք կա՛մ դերբայինն են, կա՛մ նրա լրացմանը։

«(Թագավորին հասանելիք) || հարկը հավաքելու || նպատակով գավառներն ուղարկած| հարկահանները ձեռնունայն վերադարձան»։ «(Դաշտում աշխատող) || կոլտնտեսականներին ճաշ տանելու || նշանակված| ավտոմեքենան դուրս եկավ գյուղից»։ «(Տանն անհրաժեշտ) || իրեր գնելուն || հատկացված |գումարը պահում էր խնայդրամարկղում»։ «(Հինգ ամիս) || դաշտում կատարվող || աշխատանքից ըստացված| գումարը կազմում էր հազար ռուբլի»։

Հարակատարով կազմվող եռաստիճան դարձվածի մեջ որպես դերբայի լրացում կարող են գործածվել ածականական երկաստիճան բառակապակցություններ։ Օրինակներ՝

«(Բարձր խավի) || մարդու դիրքին վայել || հագնված|՝ նա գնաց հրավերքին»։ «Պետք է հաններն (բակում դտնվող) || շենքի հիմքից ավելի խոր || թաղված| խողովակները»։

Նույնպիսի կառույցները կարող են դառնալ նաև հարակատար դերբայի լրացման լրացում։ Օրինակներ՝

«(Նախորդ օրվա || իրադարձություններին անտեղյակ || մարդու արտահայտած| կարծիքը ոչ ոք բանի տեղ չդրեց»։ «(Հոգսից ազատ) || կյանքի սովոր || մարդկանց վաստակածը| մի տեսակ դտած բան է նրանց համար»։ «(Ծնողների դրսևորելիք) || փայփայանքին կարոտ || երեխայի կատարած| քայլը զարմանալի չէր թվում»։

Մակբայական երկաստիճան կապակցությունները նույնպես կարող են դառնալ հարակատար դերբայի լրացում։ Օրինակներ՝

«(Գյուղ մեկնելուց) || մի քանի օր առաջ || գնած| իրերը տեղափոխել էր տուն»։ «(Քաղաք մեկնող) || ընկերներից մի քիչ ուշ || դուրս եկած| մարդը քայլում էր շատ արագ»։

Հարակատար դերբայի լրացում կարող են դառնալ նաև երկաստիճան դոյականական բառակապակցությունները։ Այդպես են հետևյալ նախադասությունները։

«(Քաղաքում աշխատող) || տղաներից մեկի || ուղարկած| փողը բավականացնում էր ծնողներին»։ «(Ընկերոջն ուղարկելիք) || նամակը ձեռքին || մոտեցած| մարդը Պետրոսն էր»։

Ե) ենթակայական դերբայով եռաստիճան դարձվածներ.— *Այս դեպքում ենթակայական դերբայով կազմված մեծ կառույցի մեջ կարող են լինել երկաստիճան դերբայական դարձվածով լրացումներ։ Ընդ որում մի դեպքում այդ լրացումները վերաբերում են անմիջապես ենթակայական դերբային։ Օրինակներ՝*

«(Լավ աշխատած) || բանվորներին կարգին վարձատրել || չցանկացող| գործարանատերը զրկվում էր աշխատուժից»։ «(Քարից ծանր) || այդ առարկաները տեղափոխելիս || հոգնող| մարդիկ նստում էին հանգստանալու»։ «(Աքլորականչից շուտ) || աշխատանքի գնալու || վարժվող| գյուղացին չէր կարող հաշտվել անգործության հետ»։

Դերբայական դարձվածները կարող են հանդես գալ նաև իբրև ենթակայական դերբայի լրացման լրացում։ Օրինակներ՝

«(Բերքը հավաքելուց) || հետո դաշտում մնացած || ծղոտը տեղափոխող| մեքենաները օրական մի քանի ուղերթ էին կատարում»։ «(Շինարարությանն անհրաժեշտ) || նյութերը ձեռք բերելու || գործը կատարող| աշխատակցի հաստիք չէր սահմանված»։

Ենթակայական դերբայի լրացում կարող են դառնալ երկաստիճան ածականական բառակապակցությունները. Օրնակներ՝

«(Ընտանիք կերակրելու) || հոգսերից ազատ || ապրող| այդ մարդուն համարյա չէին հետաքրքրում շրջապատի իրադարձությունները»։ «(Գլուխը ձյունների մեջ թաղված) || լեռան գագաթից բարձր || թռչող| ինքնաթիռը նմանվում էր արծվի»։

Երկաստիճան մակբայական բառակապակցությունը կարող է դառնալ ենթակայական դերբայի լրացում։ Օրինակներ՝

«(Լույսը բացվելուց) || երեք ժամ շուտ || անցնող| գրնացքը այդ կայարանում չի կանգնում»։ «(Հարյուր քսան

տարեկան) || այդ ծերունուց ավելի դանդաղ || քայլող| մարդը ընդամենը երեսուն տարեկան էր»։

Գոյականական երկաստիճան բառակապակցությունները կարող են դառնալ ենթակայական դերբայի լրացում։ Օրինակներ՝

«(Ջրով լիքը) || դույլը ձեռքին || անցնող| կինը կանգ առավ»։ «Անտառապահը հանդիպեց (նոր կտրած) || ծառ ուսին || գաղտագողի գնացող| մի մարդու»։

2. ԵՌԱՍՏԻՃԱՆ ԱԾԱԿԱՆԱԿԱՆ ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Եռաստիճան ածականական բառակապակցությունները նույնպես կարող են կազմվել տարբեր կառույցներով։ Ածականի լրացումներ դառնում են երկաստիճան դերբայական դարձվածները, մակբայական, մասամբ և այլ կառույցներ։

ա) Երկաստիճան դերբայական դարձվածները եռաստիճան ածականական բառակապակցության կազմում.— Ինչպես նշվել է երկաստիճան ածականական բառակապակցությունների բաժնում, դերբայները ածականական բառակապակցությունների կազմում հանդես են գալիս գոյականաբար և դառնում ածականի կամ նրա լրացման լրացում։ Հետևյալ նախադասություններում այդ կառույցներն ածականի լրացում են։

«(Արևմուտքից հարձակվող) || թշնամու դեմ գնալու || պատրաստ| զորքերն առաջ շարժվեցին»։ «(Գետնի տակ գտնվող) || հանքերում աշխատելու || անընդունակ| բանվորներին ուղարկեցին թեթև աշխատանքի»։ «(Առավոտից մինչև երեկո) || հեշտ կյանք վարելուն || սովոր| երիտասարդը չէր դիմանում աշխատանքին»։ «(Քաղաքում ապրող) || բարեկամի նվիրածին || համարժեք| բան չգտավ, որ ուղարկի նրան»։ «Մյուս օրը նա գնաց (նոր բացված) || հանքում աշխատողին || հարմար| հագուստ»։

Դերբայական երկաստիճան դարձվածները կարող են դառնալ նաև ածականի լրացման լրացում։ Օրինակներ՝

«(Աշխատանք չունեցող) || աղքատներին տրվելիք || նը-

պատին կարոտ| մարդիկ սպասում էին դրսում»։ «(Հողի խոշոր շերտերի տակ գտնված) || հանքը փորելու || աշխատանքին ընդունակ| բանվորներին առանձնացրին»։

բ) Մակբայական երկատիճան բառակապակցություններ եռատիճան ածականական բառակապակցության կազմիչ.— *Առաջին հերթին պետք է նշել այն կառույցները, որոնք դառնում են ածականի անմիջական լրացում։ Սրանք կարող են լինել որակական ածականների համեմատության աստիճան կազմող կամ այլ իմաստ արտահայտող մակբայների բառակապակցություններ։*

«(Նախորդ տարում հայտնաբերածից) || շատ ավելի || խոր| հանքաշերտի էին հանդիպել»։ «Դա (շոգու ուժն օգտագործող) || գիտնականից առավել շատ || ընդունակ| մարդու ստեղծագործություն էր»։ «(Մի քանի բոպե) || առաջ || այնքան պարզ և հասկանալի| այդ մարդն այժմ իր շփոթված և մռայլ դեմքով այն աստիճանի մութ և խորհրդավոր էր երևվում նրան» (ՆԴ, 2, 268)։

Նույն կարգի բառակապակցությունները կարող են հանդես գալ նաև իբրև ածականի լրացման լրացում։ Օրինակ՝

«Դա (շքերթի դուրս եկածներից) || ավելի դանդաղ || ընթացքի սովոր| մարդու քայլվածք էր»։

գ) Գոյականական երկատիճան բառակապակցություններ եռատիճան ածականական բառակապակցությունների կազմիչ.— *Ինչպես ասվել է, գոյականը ածականի լրացման դեր է կատարում տարբեր հոլովաձևերով։ Օրինակներ՝*

«(Դեռևս դպրոցական չդարձած) || աղջիկների տարիքին || վայել| խաղերը այլևս չէին հետաքրքրում նրան»։ «(Ընտանիք կերակրելու) || հոգսերի մեծ մասից || ազատ| երիտասարդը ամբողջապես նվիրվել էր հաճույքներին»։

Գոյականական երկատիճան բառակապակցությունը կարող է դառնալ նաև ածականի լրացման լրացում։ Օրինակ՝

«(Իր ունեցած) || երեխաներից ոչ մեկի || ճաշակին համար| խաղալիք չկար խանութում»։

3. ԵՌԱՍՏԻՃԱՆ ՄԱԿԲԱՅԱԿԱՆ ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մի շարք ձևի և չափ ու քանակի մակբայներ ստանում են համեմատության աստիճան կազմող լրացումներ։ Իսկ համեմատության աստիճան կազմող բառի դերում հանդես են գալիս հենց աստիճանի մակբայները։ Ուստի և, ինչպես երկաստիճան մակբայական բառակապակցությունների կազմության դեպքում էր, այստեղ էլ մակբայի լրացում կարող են լինել հենց մակբայական բառակապակցությունները։ Օրինակներ՝

«Այսօր (դեկավարի հանձնարարածից) || մի քիչ ավելի || շատ| կատարեցի»։ «(Իրեն հետ աշխատող) || ընկերներից շատ ավելի || արագ| էր գործում»։

Եռաստիճան մակբայական բառակապակցություններում միաժամանակ կապի դեր կատարող մակբայի մոտ իբրև կապի խնդիր գործածվող բառը կարող է ունենալ երկաստիճան այլ բառակապակցություններ։ Այսպես, հետևյալ նախադասություններում այդպիսի դերով հանդես են գալիս դերբայական դարձվածները։

«(Բարձր որակի) || գինով լցված || սափորից քիչ հեռու| դրված էր օղու շիշը»։ «(Վերևից իջնող) || փողոցում տեսած || դեպքից մի փոքր հետո| նույնպիսի բան պատահեց իրենց տան մոտ»։

Նույն դերով կարող են հանդես գալ երկաստիճան գոյականական բառակապակցությունները։ Օրինակներ՝

«(Իրեն հատկացված) || երեք ամսից || մի փոքր պակաս| աշխատեց»։ «Նա կանգնած էր (մրգով լի) || կողովը ձեռքին || մարդուց շատ հեռու|»։

4. ԵՌԱՍՏԻՃԱՆ ԳՈՅԱԿԱՆԱԿԱՆ ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսպիսի մեծ կառույցի բաղադրիչ կարող են լինել բոլոր տեսակի երկաստիճան բառակապակցությունները։ Նշենք առանձին-առանձին։

ա) Դերբայական դարձվածը եռաստիճան գոյականա-

կան բառակապակցության կազմիչ.— *Դերբայական դարձվածները գոյականական եռաստիճան կառույցի մեջ կարող են հանդես գալ կա՛մ իբրև գլխավոր բառի, կա՛մ նրա լրացման լրացում։ Անորոշ և ենթակայական դերբայները գործածվում են գոյականաբար, իսկ անկատար դերբայը գոյականի լրացում չի դառնում։ Ապառնի և հարակատար դերբայները տվյալ պաշտոնը կարող են կատարել և՛ բուն, և՛ գոյականական կիրառությամբ։ Քանի որ երկաստիճան գոյականական կառույցներում այս դեպքերը հանդամանորեն քննվել են, այստեղ դրանց վրա կանգ չենք առնի։ Բերում ենք երկաստիճան դերբայական դարձվածներով արտահայտված կազմիչների օրինակներ ընդհանուր ձևով։*

«(Մոսկվայում ապրող) || ընկերոջս վերադառնալու || օրը| ես բացակայում էի քաղաքից»։ «(Միջանցքի ծայրին տեղավորված) || իր սենյակում աշխատելու || պահին| նա մոռանում է ամեն ինչ»։ «(Հյուսիսում գտնվող) || այդ քաղաքում անցկացնելիք || հինգ ամսում| մտադիր է ավարտել իր աշխատությունը»։ «(Այգու մոտ գտնվող) || պատի տակ նստած || գյուղացիներից ոմանք| ճանաչեցին նրան»։

բ) Ածականական երկաստիճան բառակապակցությունը եռաստիճան գոյականական կառույցի կազմիչ.— *Ածականական երկաստիճան բառակապակցությունը կարող է լինել կա՛մ կառույցի գլխավոր բառի, կա՛մ նրա լրացման լրացում։ Օրինակներ՝*

«Յեխոն արտադրում էր (պետության կողմից հաստատված) || նորմայից ավելի ցածր || որակի| արտադրանք»։ »(Շատ զբաղվիչ) || աշխատանքին անվարժ || մարդու հետաքրքրությամբ| հետևում էր մեքենային»։ «(Քնից առաջ կատարվող) || զրոսանքի սովոր || մարդու քայլերով| անցնում էր փողոցով»։ «Նա ներս մտավ (հենց նոր պատրաստած) || գինով լի || փարչը ձեռքին|»։ «Եվ մի միտք, (ծանր բեռից ավելի) || դժվար || ծանրությամբ|, նստել էր նրա գլխում» (Բակ., 215)։ «Ամենևին,— պատասխանեց նա (բնավորություն չունեցող) || մարդկանց հատուկ || կակղությամբ|»։ (ՆԴ, 3, 221)։

գ) Մակբայական և այլ կարգի երկաստիճան բառակապակցությունները եռաստիճան գոյականական կառույցի կազմիչ.— *Այս կազմիչները կարող են հանդես գալ մեծ կառույցի կազմում կա՛մ իբրև գլխավոր բառի, կա՛մ նրա լրացման լրացում։ Օրինակներ՝*

«(Կենսաթոշակի անցնելուց) || մի քիչ վաղ || տարիքում| նոր էր ամուսնացել»։ «(Մեղրից քաղցր) || միջուկավոր || կարկանդակը ձեռքին|՝ աշխատում էր հրապուրել երեխային»։

Դ. ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՔԱՌԱՍՏԻՃԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ

Թեև տեսականորեն հնարավոր են բազմաստիճան շարահյուսական կառույցներ, սակայն գործնականում այդ կառույցները սակավաբաղադրիչ են լինում։ Պատճառը ոճի խրթնությունից խուսափելու ձգտումն է. որքան շատ կառույցներ են բաղադրվում շարահյուսական մեծ կառույցի մեջ, այնքան ծանր է դառնում ոճը։ Մի կողմից, լեզուն հնարավորություն է տալիս բազմաստիճան կառույցներ կազմելու, իսկ, մյուս կողմից, այդ հնարավորությունը չի իրագործվում։ Այնուամենայնիվ հնարավոր են ոչ միայն քառաստիճան, այլև հնգաստիճան և ավելի բարդ կազմություն ունեցող շարահյուսական կառույցներ։ Ընդ որում դրանց մեջ առավել կենսունակը դերբայական դարձվածների և ածականական բառակապակցությունների միջոցով ստացվող կառույցներն են։ Հաշվի առնելով այն հանգամանքը, որ երկաստիճան և եռաստիճան կառույցների քննությունը կատարվել է համեմատաբար մանրամասնորեն, ինչպես և ելնելով շարադրանքի մեջ շատ կրկնություններից խուսափելու միտումից՝ այստեղ կներկայացնենք կառուցվածքային մի քանի ընդհանուր տեսակներ միայն։

1. ՔԱՌԱՍՏԻՃԱՆ ԴԵՐԲԱՅԱԿԱՆ ԴԱՐՁՎԱԾՆԵՐ

Սրանք կարող են կազմվել շարահյուսական ինքնուրույն դերով օժտված որևէ դերբայով։ Ընդ որում դերբայի անմի-

ջական լրացման կամ նրա որևէ կազմիչի լրացման դերը կարող են կատարել ավելի շատ եռաստիճան դերբայական դարձվածները, երբեմն էլ ածականական կամ գոյականական բառակապակցությունները։

ա) Անորոշ դերբայով բառաստիճան դարձվածներ.— *Անորոշ դերբայի կամ նրա լրացման լրացումը կարող է արտահայտվել եռաստիճան դերբայական դարձվածներով։ Օրինակներ՝*

«((Ուրիշ քաղաքում սովորելու)) (մեկնած) || որդուն տեսնել || ցանկանալով|՝ նա ինքնաթիռ էր նստել»։ «((Նոր ծլած)) (արտում արածող) || ոչխարի հոտը հսկելիս || քնելը| նա հանցանք չէր համարում|»։ «((Երկու ժամ առաջ)) (գյուղ մեկնած) || ընկերոջը հասնելու || փորձ անելը| օգուտ չտվեց»։ «((Տանն անհրաժեշտ)) (իրեր գնելիս) || մի խանութում տեսած || հին նկարը գնելով| նա անսպասելի գյուտ էր արել»։ «((Քսան ռուբլիանոց)) (բաղկաթոռը վերանորոգելիս) || պաստառի տակ գտած || հին թղթադրամները թանգարանին հանձնելով|՝ վերադարձավ տուն»։ «((Տասներկու տարեկան)) (որդուն ծառա տալու) || համար քաղաք եկած || Համբոյին հանդիպելը| բաղաղ Արտեմին ուրախացրել էր»։

բ) Անկատար դերբայով բառաստիճան դարձվածներ.— *Այս դեպքում ևս դերբայի լրացում ավելի հաճախ լինում են դերբայական դարձվածները, ինչպես և ածականական բառակապակցությունները։ Օրինակներ՝*

«Ավտոմեքենան օգտագործում էր միայն ((Արագածից իջնող)) (ճանապարհի մոտ կառուցած) || առանձնատունը մեկնել || ցանկանալիս|»։ «Ես նրան մի անգամ տեսել եմ ((Հրազդանի ձորի)) (այգում գտնվող) || խաղասենյակում նստած || շախմատ խաղալիս|»։ «((Դաշտ դուրս եկած)) (տրակտորի վրա աշխատողներին) || օգնելու || գնալիս| վարպետը տանում էր նաև իր աշակերտներին»։

Եռաստիճան դերբայական դարձվածները կարող են լինել նաև դերբայի լրացման լրացում։ Օրինակներ՝

«((Մեքենան վերանորոգելու)) (համար հատկացված) || գումարը ծախսող || վարպետին հանդիպելիս| հիշեցնում էր պարտքի մասին»։ «((Գնացքի մեկնելուց)) (հետո դուրս եկած) || ինքնաթիռը վարող || օդաչուի հետ խոսելիս| համոզվեց, որ ճանապարհն ազատ է»։ «((Բակում գտնվող)) (շենքի հիմքից ավելի խոր) || թաղված || խողովակները հանելիս| հին իրեր հայտնաբերեցին»։

գ) Ապառնի դերբայով բառաստեղան դարձվածներ.— Ապառնի դերբայով կազմված բառաստեղան դերբայական դարձվածի մեջ եռաստիճան դարձվածները անմիջապես դերբային չեն վերաբերում, այլ նրա լրացումներին։ Օրինակներ՝

((Շաքարից քաղցը)) (պտուղները քաղելու) || համար գնացած || մարդկանց ուղարկելիք| ամանները տվեցին վարորդին»։ «((Վերջերս կառուցված)) (քաղաքներից մեկում) || պայմանագրով աշխատող || ընկերոջից ստացվելիք| նամակը պիտի վճռեր նրա բախտը»»։

Այդպիսի դեր կարող են կատարել նաև ածականական, գոյականական, մակբայական եռաստիճան բառակապակցությունները։ Օրինակներ՝

«((Քաղաքում աշխատող)) (եղբորից ստացած) || նվերներով հպարտ || պատանուն տրվելիք| պարգևը նրան շատ չէր ուրախացնի»։ «((Հերկին խանգարող)) (քարերից ազատված) || հողակտորների մի մասում || ցանելիք| սերմացուն պատրաստ էր»։ «((Իր ցանկացած)) (գյուղը մեկնելու) || օրից բավական ուշ || ստանալիք| դրամը այլևս պետք չէր լինի նրան»։

դ) Հարակատար դերբայով բառաստեղան դարձվածներ.— Այսպիսի կառույցներում կազմիչի դեր կարող են կատարել գոյականաբար գործածված (կապի հետ կամ առանց կապի) դերբայական եռաստիճան դարձվածները, որոնք կարող են հանդես գալ կա՛մ իբրև դերբայի լրացում, կա՛մ նրա լրացման լրացում։ Օրինակներ՝

«((Նոր կառուցվող)) (տանն անհրաժեշտ) || իրեր գնելու || համար առանձնացված| գումարը պահում էր խնայ-

դրամարկղում»։ «((Օտար երկրում սովորող)) (տղային ուղարկելիք) || նամակը գրելու || համար տուն հրավիրված| երիտասարդը հուսադրեց ծնողներին»։ «((Գյուղի ներքևի)) (դաշտում աշխատող) || կոլտնտեսականներին ճաշ տանելու || հատկացված| ավտոմեքենան վարում էր Պետրոսը»։

Գոյականական, ածականական, մակբայական եռաստիճան կառույցները նույնպես կարող են լինել այսպիսի կառույցների կազմիչ։ Օրինակներ՝

«((Նախորդ տարվանից)) (պարտք ունեցող) || ուսանողների մի մասի || հանձնած| քննություններին մասնակցում էին ամբիոնի բոլոր անդամները»։ «((Դպրոցն ավարտելու)) (հանդեսին նվիրված) || արարողություններին վայել || հագնված| նա դուրս եկավ տանից»։ «((Ընտանիք պահելու)) (հոգսից ազատ) || կյանքի սովոր || մարդու վաստակած| փողը հեշտ է ծախսվում»։ «((Իրեն հատկացված)) (բնակարանը տեղափոխվելուց) || մի քանի օր առաջ || գրնած| իրերը պահում էր ընկերոջ տանը»։ «((Ոչ հեռու ընկած)) (քաղաք մեկնող) || ընկերներից մի քիչ ուշ || դուրս եկած| երիտասարդն շտապում էր հասնել նրանց»։

ե) Ենթակայական դերբայով բառաստիճան դարձվածներ.— Առաջին հերթին պետք է նշել այն կառույցները, որոնցում իբրև կազմիչ հանդես են գալիս եռաստիճան դերբայական դարձվածներ։ Ընդ որում դրանք կարող են լինել թե՛ ենթակայական դերբայի, թե՛ նրա լրացման լրացում։ Օրինակներ՝

«((Արտակարգ հարուստ)) (բերքը հավաքելուց) հետո դաշտում մնացած || ծղոտը տեղափոխող| մեքենաներն անընդհատ վազքի մեջ էին»։ «((Տունը կառուցելուց) (հետո տեղում մնացած) || շինարարական աղբը փոխադրելիս || թափվող| հողը ամբողջովին ծածկել էր ասֆալտը»։ «((Գյուղում հիմնադրված)) (շինարարությանն անհրաժեշտ) || նյութերը ձեռք բերելու || գործը կատարող| աշխատակից չկար»։

Ենթակայական դերբայով կազմված քառաստիճան կառույցի կազմիչ կարող են դառնալ նաև գոյականական.

ածականական եռաստիճան բառակապակցությունները։ Օրինակներ՝

«((Հարյուր հոգուց)) (բաղկացած) || խմբի մի մասի || աշխատանքն ստուգող| վերահսկիչը դժգոհ մնաց նրանցից։ «((Երբեք չհալվող)) (ձյունների մեջ թաղված) || լեռան գագաթից բարձր || թռչող| ինքնաթիռը չհայտնաբերեց կորածներին»։

2. ՔԱՌԱՍՏԻՃԱՆ ԱԾԱԿԱՆԱԿԱՆ ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Քառաստիճան ածականական կառույցների մեջ կազմիչի դերով կարող են հանդես գալ եռաստիճան դերբայական դարձվածներ, գոյականական, մակբայական բառակապակցություններ։

Այսպես, հետևյալ նախադասություններում եռաստիճան դերբայական դարձվածները գոյականաբար գործածվելով դառնում են քառաստիճան ածականական բառակապակցության կազմիչ.

«((Հինգ հարյուր մետրից)) (ավելի խորություն ունեցող) || հանքերում աշխատելու || ընդունակ| բանվորները շատ բարձր վարձատրություն են ստանում»։ «((Նոր բացված)) (տեղամասը ղեկավարող) || աշխղեկի կողմից պարգևատրվելու || արժանի| բանվորներին կանչեցին դրասենյակ»։ «((Նոր տեսակի)) (արտադրանք թողարկելու) || համար պարտավորություն ստանձնած || գործարաններին հարկավոր| նյութերն ստացվել էին»։

Քառաստիճան ածականական բառակապակցությունների կազմիչ կարող են դառնալ եռաստիճան գոյականական բառակապակցությունները։ Օրինակներ՝

«((Շենքը կառուցելու)) (համար խիստ անհրաժեշտ) || նյութերի մեծ մասից || զուրկ| աշխղեկը մոլորվել էր»։ «((Մոսկվայում սովորող)) (եղբոր հետ եկած) հյուրերից մեկին || հարկավոր| իրերն արդեն գնել էր»։

Եռաստիճան մակբայական բառակապակցությունը

նույնպես կարող է դառնալ քառաստիճան ածականական կառույցի կազմիչ։ Օրինակ՝

«((Զեմպիոնի տիտղոսը նվաճելու)) (մրցամարտում հաղթած) || մարզիկից ավելի || վստահ| էր զգում իրեն»։

3. ՔԱՌԱՍՏԻՃԱՆ ԱՅԼ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ

Կարող են կազմվել նաև քառաստիճան գոյականական, մակբայական և այլ կարգի կառույցներ։ Սակայն դրանք սակավ են հանդիպում։ Այնպես որ այդպիսի կառույցներն ավելի շատ տեսականորեն են հնարավոր։ Այսպես օրինակ, հետևյալ նախադասության մեջ առկա է քառաստիճան գոյականական բառակապակցություն։

«((Գետնից բավական բարձր)) (գտնված) || լուսամուտի չորս ապակիներից || երկուսը| կոտրված էին» (ՆԴ, 1, 86)։

Ե. ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՀԻՆԳ ԵՎ ԱՎԵԼԻ ԱՍՏԻՃԱՆԻ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ

Ինչպես նշվել է, բազմաստիճան կառույցները հնարավոր են ավելի շատ տեսականորեն, իսկ իրականում հազվադեպ են գործածվում։ Այս դեպքում ևս կազմության հնարավորություններ ունեն դերբայական դարձվածները, որոնց անմիջական կազմիչ կարող են դառնալ ինչպես դերբայական, ածականական, երբեմն էլ այլ կարգի քառաստիճան կառույցներ։ Նպատակ չունենալով կրկնելու նախորդ աստիճանների կառույցների կազմության նկարագրությունը՝ բերենք մի քանի օրինակներ միայն։

«[Մոսկվայում սովորող] ((եղբոր հետ եկած)) (հյուրերից մեկին) || հարկավոր || նյութեր փնտրելիս| հանդիպեց իր հին ծանոթին»։ «[Արտասահմանում ապրող] ((բարեկամի նամակը բերած)) (երիտասարդներից երկուսի) || համար նվերներ գնելու || նպատակով խանութները շրջելը| տևեց երեք ժամ»։ «[Զեմպիոնի տիտղոսը նվաճելու] ((մրցամարտում հաղթած)) (մարզիկից ավելի) || վստահ || խաղալով|՝ անսպասելիորեն պարտվեց»։

VII. ԱՅԼ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՑՆԵՐ

Ինչպես ասվել է ներածական գլխում, նախադասության անդամների ավանդական ըմբռնումով՝ մի շարք բառեր և կառույցներ դուրս են նրանցից, նախադասության անդամ չեն։ Այդ ըմբռնումը ելնում է այն իրողությունից, որ այդ բառերը կամ կառույցները շարահյուսական կապի մեջ չեն նախադասության անդամների և նրանց ոլորտի մեջ մտնող կառույցների հետ։ Սակայն շարահյուսական կապի բացակայությունը չի նշանակում, թե այդ բառերն ու կառույցները մտային կապ չունեն նախադասության կազմիչների հետ։ Առանց այդպիսի կապերի առկայության նրանք չէին դրդածածվի առհասարակ։ Այսպես, երբ ասում ենք «Նրա եղբայրը, ինչ խոսք, կողմնակից չէր այդ միությանը»։ Այստեղ ինչ խոսք միջարկությունն է, որը թեև չունի շարահյուսական կապ ավելի նախադասության անդամների հետ, սակայն ծառայում է խոսողի մտային վերաբերմունքի դրսևորմանը։ Սովետական քերականագիտության մեջ այժմ ավանդաբար նախադասության անդամ չհամարվող բառերն ու կառույցներն անվանում են մեկուսացած անդամներ։ Իբրև այդպիսի անդամներ ընդունված են կոչականները, միջանկյալ և ներդրյալ բառերն ու կառույցները, ձայնարկությունները։

Համաձայն չլինելով այն կարծիքին, թե կոչականները, միջանկյալ և ներդրյալ բառերն ու կառույցները, ձայնարկությունները նախադասության անդամ են, այնուամենայնիվ կարծում ենք, որ դրանք նախադասության ձևավորման, հաղորդվող մտքի նրբերանգների դրսևորման գործում որոշակի դեր ունեն։ Եվ եթե դրանք նախադասության անդամ չեն, ապա նախադասության մաս են։

Նախադասության այդ մեկուսացած մասերը ունեն իրենց դրսևորման ձևը։ Ընդ որում դրանց մի մասը երբեմն մյուսների հետ բաղադրված է դրսևորվում։ Այսպես, հայտ-

նի է, որ որոշ ձայնարկություններ կարող են արտահայտվել կոչականներին հարադրված։ Օրինակներ՝

«Հե՜յ ագահ մարդ, հե՜յ անզոհ մարդ, միտքդ երկար, կյանքդ կարճ, Քանի՜ քանիսն անցան քեզ պես, քեզնից առաջ, քո առաջ» (ՀԹ, 1, 153)։ «—Ո՞վ քեզ ծեծեց, Մարո ջան» (ՀԹ, 2, 12)։

Հայտնի է, որ մեկուսացած անդամները կարող են արտահայտվել թե՛ առանձին բառերով, և թե՛ բառակապակցություններով։ Մեզ հետաքրքրողն այստեղ այդ անդամների դրսևորումն է բառակապակցություններով, ուստի կանգ չենք առնի այդ անդամների՝ առանձին բառով դրսևորվելու երևույթի վրա։

Տեսականորեն մեկուսացած անդամները ևս կարող են ունենալ այն արտահայտությունը, ինչ որ նախադասության մյուս անդամները (բացի պարզ ստորոգյալից, որն արտահայտվում է դիմավոր բայով, իսկ վերջինս արդեն նախադասություն է)[42]։ Մեր քննությունը նպատակ ունի բացահայտելու բառակապակցություններով արտահայտվող մեկուսացած անդամների ներքին կառուցվածքը։

Մեկուսացած անդամների դեր կատարող բառակապակցությունները կարող են լինել սովորական (մեկ աստիճանի) կառույց և բաղադրյալ կառույց՝ բաղադրված երկու և ավելի կազմիչներից։ Բանն այն է, որ այս դեպքում ոչ ամբողջ կառույցը և ոչ էլ առանձնապես նրա կազմիչները նախադասության անդամ կոչվել չեն կարող։ Շարադրանքի ձևի կրկնությունից խուսափելու նպատակով մեկուսացած անդամների կառուցվածքը առանձին-առանձին չենք քննում, այլ դրանք ներկայացնում ենք ըստ կազմության։

Ա. ՄԻԱԿԱՌՈՒՑ ՄԵԿՈՒՍԱՑԱԾ ԱՆԴԱՄՆԵՐ

Մեկուսացած անդամներ են կոչականը, միջանկյալ և ներդրյալ բառերը, ձայնարկությունները։ Կոչականը, միջ-

42 Նշենք, որ միջանկյալ կարող են լինել նաև նախադասությունները (ինչպես պարզ, այնպես էլ բարդ), սակայն դրանց քննությունը դուրս է մեր նպատակից

անկյալ և ներդրյալ բառերը կարող են արտահայտվել ինչպես առանձին բառերով, այնպես էլ բառակապակցություններով (ամբողջական կառույցներով)։ Ընդ որում կոչականը կարող է արտահայտվել գոյականով և գոյականաբար գործածված խոսքի մասերով (դերանուն, ածական, դերբայ և այլն)։ Հետևյալ նախադասություններում առկա են միաբառ կոչականներ։

«Հայրիկ՛, հայրիկ՛, մի՞թե չկա էս աշխարհքում անշեջ հուր» (ՀԹ, 1, 228)։ «Զէ՛, փոfրիկս, Գնամ պիտի» (ՀԹ, 1, 170)։ «Ո՞վ ես դու, սիրո՛ւն,— հարցնում է արքան» (ՀԹ,1, 233)։ «Դե՛, ե՛կ, սիրելի՛ս, տանեմ քեզ երկինք» (ՀԹ, 2, 94)։ «Ողբամ, սո՛ւտ, և քեզ» (ՊՍՄԱՄ, 127)։ «Ո՞ւր եք, մրսողնե՛ր, Մոտ եկեք գոնե» (ՊՍՄԱՄ, 137)։ «Օ, դո՛ւ,— կարո՞ղ եմ արդյոք երբեք Մոռանալ ես քեզ, քանի իմ մեջ Հնչում է թեկուզ չնչին մի էջ» (Զ, 82)։ «Վտարանդի, երկրում աղոտ, Լուսե՛ղ, քեզ եմ երազում» (ՎՏ, 1, 235)։

Երբեմն կոչականը և ձայնարկությունը նույնանում են, այսինքն արտահայտվում են նույն բառով։ Օրինակներ՝

«Արի՛, ջա՛ն, արի՛, Քու գալուն մեռնեմ» (ՀԹ, 1, 69)։ «Ամոան անուշ, հուրհրատող տոթ ես, ջան» (Զ, 44)։

Միաբաղադրիչ կարող են լինել նաև միջանկյալ բառերը։ Օրինակներ՝

«Անցյալի քաղցր հիշատակները ոչ միայն չամոքեցին նրա վշտերը, այլ, ընդհակառակը, նորոգեցին դրանց» (Մուր., 4, 66)։ «Նա, արդարև, սիրում է անկեղծությամբ» (Մուր., 4, 90)։ «Դրամների չխչխկոցը, հիրավի, իր մոգական ազդեցությունն ունեցավ պառավի վրա» (ՆԴ, 1, 81)։ «Զգիտեմ, նշմարիս, ինչ անեմ» (ՆԴ, 2, 391)։

Ինչ վերաբերում է ձայնարկություններին, ապա դրանք սովորաբար առանձին բառեր են, և համարյա բացառվում է դրանց դրսևորումը բառակապակցություններով։

Պետք է նշել, որ մեկուսացած անդամները քիչ դեպքե-

բում են բազմատիճան կառուցվածք ունենում. սովորաբար դրանք միակառույց են լինում: Նշենք առանձին-առանձին:

1. Միակառույց կոչականներ.— *Միակառույց կոչականները կարող են արտահայտվել ինչպես գոյականական բառակապակցություններով, այնպես էլ դերբայական դարձվածներով, որոնք սովորաբար հանդես են գալիս գոյականաբար (առհասարակ կոչականի դեր կատարող բառերն ու կառույցները գոյական են կամ իբրև այդպիսին գործածվող): Գոյականական միակառույց բառակապակցությունները այս դեպքում չեն դրսևորում նախադասության մեկ անդամի դեր կատարող կառույցների հատկանիշ, այն է՝ կազմիչների՝ շարահյուսական դերից զուրկ լինելը: Բանն այն է, որ կոչականի դեր կատարող կառույցը իր ամբողջության մեջ է իբրև այդպիսին գործածվում (ինչպես որ տրոհվող անդամներն են լինում): Իհարկե այդպիսի կառույցի մեջ առկա է լրացյալ-լրացում կապակցություն, և կառույցի գլխավոր բառն է ստանձնում կոչականի դեր, սակայն ակնհայտ է, որ մեկուսացած անդամի դերը կատարում է կառույցը, այսինքն բոլոր կազմիչները համաբաշխ ֆունկցիայով են հանդես գալիս:*

Միակառույց համարում ենք կոչականի դեր ունեցող այն բառակապակցությունները, որոնցում գլխավոր բառի լրացումները առանձին բառ են և ոչ ամբողջական կառույց: Այսպես, «—Կգա, դատրիկ իմ թանկագին» (ՀԹ, 1, 228) նախադասության մեջ դատրիկ իմ թանկագին *կոչականը միակառույց է, քանի որ բուն կոչականի դեր կատարող* դատրիկ *լրացյալն ունի առանձին բառերով արտահայտված* իմ *և* թանկագին *լրացումները: Գոյականական բառակապակցություններով արտահայտված կոչական կառույցի մեջ լրացումները կարող են լինել որոշիչ և հատկացուցիչ, ընդ որում դրանք արտահայտվում են տարբեր խոսքի մասերով:*

Հետևյալ նախադասություններում կոչական կառույցն ունի որոշիչ և հատկացուցիչ լրացումներ:

«—*Է՜յ,* Փարվանա *չքնաղ փերի՜, Ի՞նչն է հավան քո*

սրտին» (ՀԹ, 1, 226)։ «Քեզ մոտ եմ գալիս, իմ հին տրամուրյուն» (ՀԹ, 2, 31)։ «Ողջույն քեզ, կյանքիս անդրանիկ հուրեր» (ՀԹ, 2, 45)։ «Է՜յ, հսկեցեք, ի՞նչ եք քնում, Քաջ զինվորներ Թաթուլի» (ՀԹ, 2, 142)։ «Հիշում եմ դեմքը քո ծեր, մայր իմ անուշ ու անգին» (Ջ, 32)։ «Ժամ է, ե՛լ նորից, իմ ծիրանավառ» (ՎՏ, 1, 237)։

Այսպիսի կոչական կառույցներում լրացումն էլ կարող է իր հերթին միաբառ լրացումներ ունենալ, և դրանից կոչականը չի դադարի միակառույց լինելուց։ Օրինակներ՝

«Եկե՜ք, քույրե՜ր, || սեգ || սարերի Ջինաղազեղ ոգիներ|» (ՀԹ, 2, 43)։ «Ջարթի՛ր, || ըղձալի || գարնան շառաչյուն|» (ՎՏ, 1, 134)։ «—Շողա՛, || նոր || կյանքի արյունավառ ծեգ|» (ՎՏ, 1, 141)։ «Դուք էլ եք յարիս կանչում, || Իմ կորած || յարի գառներ |» (ՀՇՔՀ, 5)։

Կոչականը կարող է արտահայտվել նաև դերբայական դարձվածով, ընդ որում ավելի հաճախ այդ դերով հանդես է գալիս հարակատար դերբայով կառույցը։ Պետք է նկատի ունենալ, որ սրանք մեծ մասամբ դարձվածքային բնույթի բառակապակցություններ են լինում։ Օրինակներ՝

«Դե, հե՛ր օրհնած, էտենց ասա» (ՀԹ, 1, 196)։ «—Ո՞ւր կորար, ա՛յ մազդ կտրած» (ՀԹ, 2, 48)։ «—Տո՛ Ջենով Օհան, տո՛ մահի տարած, էս խենթը բերիր, արիր գառնարած» (ՀԹ, 2, 201)։ «Ծաղի՛կ ծախող, ի՞նչ արժե մեխակը»։ «Ջուր ուզողնե՛ր, եկեք այստեղ»։

2. Միակառույց միջանկյալ և ներդրյալ բառեր.— Ինչպես կոչականների դեպքում, այստեղ ևս միակառույց են կոչվում այն մեկուսացած անդամները, որոնցում լրացումներն արտահայտվում են առանձին բառերով (ոչ ամբողջական բառակապակցություններով)։ Միջանկյալ բառերը շատ հաճախ հանդես են գալիս որևէ եղանակավորող բառի հետ զուգակցված (որով եղանակավորող դեր է ստանձնում միջանկյալ բառակապակցությունն առհասարակ)։ Նկատելի է, որ միջանկյալ կառույցները սակավաբաղադրիչ են լինում։ Հետևյալ նախադասություններում առկա են միակառույց բառակապակցություններ։

«Որ մի վիշտ— և այն էլ ծանր վիշտ— կրծում է նրա սիրտը և մեծ մտատանջություն է պատճառում նրան,— այդ ես գիտեմ» (ՆԴ, 2, 168)։ «Նոր բնակարանում— մի խոնավ, կեղտոտ, անպիտան բնակարան— *սիրտս վեր չի գալիս» (ՆԴ, 2, 577)։ «Միանգամայն անսպասելի նորությունը,—* գեր սկզբի բոպենեռին,— *ահա թե ինչն էր» (ՆԴ, 2, 605)։ «Ինչ-որ բան պատվիրեց այնտեղ,—* երևի ուտելու բան,— *և նույն արագ քայլերով դուրս գնաց» (ՆԴ, 3, 216)։*

Միջանկյալ կառույցների մի մասը դարձվածքային բնույթ ունի, իսկ կազմությամբ մեծ մասամբ դերբայական դարձված է։ Օրինակներ՝

«Այսինքն ազգային կուլտուրային ձգտելով, այլես ասած, *մենք պետք է նախ դուրս գանք մեր այժմյան ազգային կճեպից» (ՎՏ, 2, 280)։ «Ճշմարիտն* ասած, *ես շատ տխրեցի» (Մուր., 4, 47)։ «Թորոսը, Օսանը և մյուսները մի տեսակ հարցական հայացքով,* կարծես խոսքը մեկ արած, *լուռ նայեցին իրար երեսի» (ՆԴ, 1, 18)։ «Եվ,* փառք ասածս, *ուրիշ ի՞նչ էր հարկավոր» (ՆԴ, 2, 284)։ «Որոնք — ի դեպ* ասած— *մեծ դեր են խաղում այսպիսի դեպքերում» (ՆԴ, 1, 354)։ «Հալա* ասածս, *շատ լավ մարդ է» (ՆԴ, 3, 222)։*

Ներդրյալ բառերն ավելի շատ են բազմաբաղադրիչ լինում։ Օրինակներ՝

«Սակայն այս խրճիթը մյուս տնակներից տարբերվում էր միայն նրանով, որ սրա պատերի կեսն ալիզից էր (կավի և հարդի շաղախից) *և կտրանը երդիկ ուներ» (ՆԴ, 1, 3,)։ «Որի մեջ կար մի քիչ «դոշ»* (ձուկ), *մի քիչ կանաչի, մի կապոց կարմիր բողկ և երկու սպիտակ «շոթի»* (վրացական երկայն ու նեղ հաց) *(ՆԴ, 1, 55)։ «Սերգեյ Ալեքսիչը մեկ թե երկու անգամ «կուտր էր ընկել»* (սնանկացել), *բայց և այնպես* (թե՞ հենց այդ պատճառով) *բավական լավ էր ապրում» (ՆԴ, 2, 548)։ «Չնայելով իր դեռևս շատ ջահել հասակին* (հագիվ 23—24 տարեկան), *արդեն ավարտել էր բժշկական ֆակուլտետը» (ՆԴ, 2, 551)։ «Ձեր գնալուց հետո Սաշան* (բժիշկ եղբայրը) *գնաց նրանց էլ նայեց» (ՆԴ, 2, 585)։ «Չէ՛, թույլ եմ տալիս, երբ տեղն է գալիս, Բանաս-*

տեղծները բանաստեղծելիս (Ոչ զիգի-բիգի բան ստեղծելիս) *Ձափածո խոսքում երբեք չդրված, Կոպիտ համարվող, նույնիսկ արգելված Բառեր ու խոսքեր թող օգտագործենք» (ՊՍՄԱՄ, 121)։*

Բ. ԵՐԿԱՍՏԻՃԱՆ ԿԱՌՈՒՑՅՆԵՐՈՎ ՄԵԿՈՒՍԱՑԱԾ ԱՆԴԱՄՆԵՐ

Երկաստիճան են այն մեկուսացած անդամները, որոնցում գլխավոր բառը՝ լրացյալը, ունենում է շարահյուսական ամբողջական կառույցով արտահայտված լրացում։ Այս դեպքում մեկուսացած անդամի դեր կատարող ամբողջական կառույցն ունենում է այնպիսի կազմիչներ, ինչպիսիք առկա են նախադասության անդամ կառույցների մեջ։ Կառուցվածքային ընդհանրությունը հաշվի առնելով՝ այստեղ կբերեինք չենք քննի այդ կառույցները, այլ կնշենք ընդհանուր օրինակներ։ Այսպես, կոչական կառույցի գլխավոր բառի լրացումն արտահայտված է դերբայական դարձվածով հետևյալ նախադասություններում։

«Հեռացիր, |աշուն || համբորեն լացող ||» (ՎՏ, 1, 247)։ «|| Ծաղիկներ ծախող || դու մատաղ գնչու|, Դու սարի ծաղիկ, սարից ես գալիս» (ՀՇԳՀ, 41)։ «|| Երուսաղեմում երբեք չեղած || աղջիկներ խարտյաշ|, Դուստրեր Հյուսիսի, ինձ էլ սնուցեք կապդուրիչ գինով» (ՊՍՄԱՄ, 279)։ «Օ, դու, || Նաիրյան մարքսիզմի չստեր Հագած || ֆիլիստեր|, Լսիր մի անգամ խոսքը պոետի» (Զ, 109)։ «|| Հունձ անող || տղա|, մեր այգին արի» (ԳՍԵԺ, 1, 381)։

Կոչականի լրացումը կարող է արտահայտվել նաև գոյականական, ածականական և այլ կարգի բառակապակցություններով։ Օրինակներ՝

«Սարերը կընկնեմ—կորչեմ անդյուման, Ա՜յ || սև աչքերով ||, Ա՜յ || ծով աչքերով ||, || Ունքերդ կամար || Աղջիկ|, քեզ համար» (ՀԲ, 2, 46)։ «Ա՜յ || թուխ մազավոր || աղջիկ|. Ա՜յ || սարի սավոր || աղջիկ |, Ջիգյարին գյուլլա դիպչի Քեզ սիրի ով որ, աղջիկ» (ՀԲ, 2, 53)։ «Ձեզ, ձեզ, || վերստին ամպամած || լեռներ |, Կյանքի տխրության ամպերի տակից

Ես ձայն եմ տալիս ու ծանրաթախիծ Հոգուս ձայները ձեզ բերում նվեր» (ՀԹ, 2, 31)։ «Լուսամփոփի պես |աղջիկ || ասուվածամոր աչքերով ||, Թորախտավոր, թափանցիկ, մարմինի պես երազի, Կապույտ աղջիկ, ակաթի ու կաթի պես հոգեթով, Լուսամփոփի պես աղջիկ... Ես ի՞նչ անեմ, ի՞նչ անեմ, որ չմեռնի իմ հոգին» (Զ, 11)։ «|| Մորս նման քաղցր ու աղնիվ || իմ հայրենիք|, Հովեր ունես՝ մորս քնքուշ ձեռքի նման» (ՀՇՔՀ, 321)։ «Քեզ մոտ եմ գալիս, իմ հին տրտմություն, |Վեհափառ դայակ || Մանուկ օրերիս ||» (ՀԹ, 1, 17)։

Սովորաբար միջանկյալ (ավելի շատ) և ներդրյալ կիրառություն ունեցող կառույցները քիչ են բազմաբաղադրիչ, առավել ևս երկաստիճան կամ բազմաստիճան կազմություն ունենում։ Այնուամենայնիվ, բացառված չէ այդպիսի կառույցների գործածությունը։ Նշենք օրինակներ՝

«Մի անդամ միայն,— այն էլ || հազիվ երկու || բոպե|,— ճանաչեց ինձ և լաց եղավ» (ՆԴ, 2, 180)։ «Երբ հասանք «Զասեկա» (|| Յասնայա Պոլյանայից 4 վերստ հեռավորության վրա գտնվող || կայարանը|), այնտեղ արդեն սպասում էր բազմամարդ ամբոխ» (ՎՏ, 2, 210)[43]։ «Այս դարը հերքումն է բոլոր հրաշքների» (Նաև՝ || հավերժական կոչված || սիրո |)» (ՊՍՄԱՄ, 297)[43]։

Պետք է նշել, որ հնարավոր են նաև երեք և ավելի աստիճանի կազմություն ունեցող կոչականներ, միջանկյալ և ներդրյալ կառույցներ։ Սակայն այդպիսի կառույցները քիչ են հանդիպում։ Բավարարվենք մի երկու օրինակով։

«Օ, դու, (պատահմամբ սերտած) || մտքերի մի խղճուկ դերի Դարձած || կրետին|— Լսիր մի անդամ խոսքը պոետի» (Զ, 109)։ «Առանձին էին պահում մատղաշ անասունները (((նախորդ տարվա)) (մայիսից ավելի ուշ) || ծնված || հորթերը և գառները |)»[43]։

---

43 *Այս օրինակներում առաջին կլոր փակագծերը բնագրինն են և ոչ մեր կողմից կիրառվող պայմանական նշաններ, քանի որ, իբրև ներդրյալ կառույցներ, դրանք փակագծերով են անջատվում տվյալ նախադասության մյուս մասերից։*

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՏՐՈՀՎԱԾ ԱՆԴԱՄՆԵՐ

I. ՀԱՐՑԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Նախադասության տրոհված անդամների ուսումնքը հայ քերականագիտության մեջ արմատավորելու գործում անժխտելի է ռուս քերականագիտության ազդեցությունը։ Ռուսերենի և գիտական, և դպրոցական քերականագիտության մեջ այդ ուսումնքը մշակվել է վաղուց։ 1945 թ. լույս տեսած իր մի հոդվածում Ա. Ղարիբյանը առաջին անգամ հարց բարձրացրեց հայերենի քերականության մեջ արժևքավորելու տրոհված լրացումները (որոնք նա տրոհիվող է անվանում)[44]։ *Հետևելով իր պահանջին՝ 1947 թ. լույս տեսած «Հայոց լեզվի մեթոդիկա» աշխատության մեջ առաջին անգամ քննել է տրոհված լրացումների դրսևորումները ժամանակակից հայերենում, ցույց տվել լրացման տրտահայտած լրացուցիչ իմաստը տրոհման դեպքում, ըստ հնարավորին երևան հանել տրոհման հանգամանքները, որոնցից էականը նախադասության իմաստի ճշտումն է, ինչպես և շարադասական հանգամանքը։ Ա. Ղարիբյանը թվարկում է տրոհված լրացումները՝ որոշիչ, բացահայտիչ, պարագաներ (ժամանակի, պատճառի կամ հիմունքի, նպատակի, ձևի, չափի ու քանակի, տեղի), ինչպես և նշում է* բացի, բան *բառերով կապակցվող խնդիրները։ Հեղինակը միաժամա-*

---

44 *Տե՛ս Հայկական մանկավարժական ինստիտուտի «Գիտական աշխատությունների ժողովածու» № 2, 1945։*

նակ խոսում է տրոհված լրացումների կետադրության մասին։ Ի դեպ, տրոհված լրացումների արժեքավորման նպատակը շարահյուսության ուսուցումը բարելավելն է։ Այս կապակցությամբ նա գրում է. «Տրոհվող լրացումների ըմբռնումը քերականության մեջ մտցնելը զգալի չափով կայունացնում է հայերենի կետադրությունը»[45]։

Ի դեպ պետք է նշել, որ այդ աշխատության մեջ հեղինակը մի ծանոթությամբ տրոհված լրացումների մեջ ընդգրկում է նաև դերբայական դարձվածը (որը նա տրոհվող դերբայական լրացում է անվանում)։ Սա այն մտայնության արտահայտությունն է, թե դերբայական դարձվածը նախադասության մեջ հանդես է գալիս միայն իբրև տրոհված լրացում։ Ինչպես կտեսնենք ստորև, դերբայական դարձվածին կետադրություն վերագրելը զուրկ է գիտական հիմքից։ Ճիշտ չէ այն միտքը, թե տրոհված լրացումները սովորաբար ստացվում են կրճատված ստորադասական նախադասություններից։

Տարիներ անց Ա. Ղարիբյանի ղեկավարությամբ տրոհված անդամների ուսումնասիրությամբ զբաղվեց Ջ. Քոչինյանը, որի թեկնածուական դիսերտացիան վերնագրված էր հենց «Տրոհվող լրացումները հայերենում»։ Այդ աշխատությունից մի հոդված է տպագրվել տրոհված պարագաների վերաբերյալ[46]։

Ջ. Քոչինյանը մասնավորապես նշում է տրոհումը պայմանավորող չորս հանգամանք, այն է՝ նախադասության անդամների շարադասությունը (շրջուն շարադասության դեպքում լրացումները ավելի հաճախ են տրոհվում), լրացման ծավալը (որքան ծավալուն է լրացումը, այնքան հավանական է տրոհումը), լրացման պարզաբանող բնույթը (հավանական է այն լրացման տրոհումը, որն ունի պարզաբանող բնույթ) և լրացման անջատվելը լրացյալից այլ բա-

---

45 «Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա», 1947, էջ 332։

46 Տե՛ս ՀՍՍՀ ԳԱ տեղեկագիր (Հաս. գիտություններ), 1958, № 12։

ներով։ Ապա մեկ առ մեկ ներկայացված են տրոհված ձևի, ժամանակի, նպատակի, հիմունքի, հակառակ հիմունքի, միասնության պարագաները՝ համապատասխան դրսևորումներով։ Մասնավորապես ցույց են տրվում տրոհված լրացումների դերում հանդես եկող դերբայական դարձվածները, գոյականական որոշ բառակապակցություններ, ածականներ, կապային կառույցներ։

Տրոհված անդամների ուսումնքի մշակմանը որոշակիորեն նպաստել է Վ. Առաքելյանը, որի «Հայերենի շարահյուսություն» աշխատության առաջին հատորում առանձին հատված է նվիրված այդ հարցին[47]։ Այստեղ հեղինակը տրոհումը պայմանավորող հանգամանքներից առանձնացնում է երկուսը՝ շրջուն շարադասությունը և երկրորդական անդամի ընդարձակությունը, ինչպես նաև նշում է լրացյալի՝ այլ լրացումներով ծանրաբեռնված լինելը, որի հետևանքով ի վիճակի չէ մի ուրիշ ընդարձակ լրացում ստանալու։

Վ. Առաքելյանը բավական հարուստ նյութի հիման վրա քննության է առնում տրոհված որոշիչն ու տրոհված պարագաները։ Ընդ որում նա հանդամանորեն կանգ է առնում այդ անդամների ձևաբանական արտահայտության վրա՝ առանձնապես շեշտելով դերբայական դարձվածի կիրառությունը տրոհված անդամների դերում, միաժամանակ ցույց են տրված ածականները, գոյականական որոշ բառակապակցություններ իբրև տրոհված անդամներ։ Սակայն պարագաների քննության բաժնում խոսում է նաև բացառման անուղղակի խնդրի, բայանունների տրոհված խնդիրների, ինչպես և որոշ տեսակի բացահայտիչների, որոշիչների մասին։ Այս վերջին հանգամանքը, ինչպես և որոշ միջանկյալ բառեր տրոհված լրացումներից չտարբերելը բխում է տրոհված անդամների ուսումնքի դեռևս անբավարար մշակվածությունից։ Տուրք տալով տարածված մոտայությանը՝ հեղինակը տրոհված լրացումները առաջացած է համարում երկրորդական նախադասություններից։

47 Վ. Առաքելյան, Հայերենի շարահյուսություն, Երևան, 1958, հ. I, էջ 444—456։

Համարյա սրանցով սպառվում է տրոհված անդամների ուսումնասիրությունը սովետահայ քերականագիտության մեջ։ Այս հանգամանքն էլ ստիպում է քննել տրոհված անդամները, բացահայտել տրոհումը պայմանավորող հանգամանքները, ցույց տալ տրոհված յուրաքանչյուր անդամի բոլոր դրսևորումները։ Մասնավորապես անհրաժեշտ է քննել այն հարցը, թե ինչ առնչություն կա դերբայական դարձվածի և տրոհված անդամների միջև, պարզաբանել դերբայական դարձվածով դրսևորվող անդամների տրոհման երևույթը, ցույց տալ բուն տրոհված լրացումների տարբերությունը նախադասության այն անդամներից, որոնք լրացյալից տրոհվում են խոսքային հանգամանքների բերումով։ Այս վերջինների տրոհումը ինչ-որ չափով հարկադրական բնույթ ունի։ Այս իմաստով էլ ամեն մի տրոհում դեռևս տրոհված լրացում չի առաջացնում, և նախադասության ամեն մի անդամ չէ, որ կարող է տրոհվել[48]։

II. ՏՐՈՀՈՒՄԸ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՈՂ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

Քերականագիտության մեջ տրոհման վերաբերյալ կատարված ուսումնասիրություններում առանձնապես շեշտվում է տրոհման երկու պատճառ՝ լրացման ծավալուն լինելը և նատադաս շարադասությունը[49]։ *Անշուշտ չի կարելի չհամաձայնվել այս բացատրության հետ։ Կատարված հետազոտությունները ցույց են տալիս, որ առաջին հերթին տրոհվում են ծավալուն լրացումները։ Այսպես, հետևյալ նախադասության մեջ լրացումը շատ ծավալուն է. «Ահա իրենց ամրոցը՝ առավոտյան աբևի լույսը վրան շաղված» (ԴԴվ,*

---

48 *Սույն աշխատությունը խմբագրված և ներկայացված էր տպագրության, երբ լույս տեսավ Ա. Մարությանի «Տրոհվող լրացումները արդի հայերենում (դասախոսություններ ժամանակակից հայերենի դասընթացից») գրքույկը (Հ. Աբովյանի անվան մանկ. ինստիտուտի հրատարակություն, Երևան, 1975 թ.)։*

49 *Տե՛ս Г. П. Фирсов,* Обособленные второстепенные члены предложения, Учпедгиз, М., 1955.

495)։ Այսպիսի ծավալուն լրացումները առանց տրոհման համարյա չեն հանդիպում։ Ճիշտ է նաև այն բացատրությունը, թե տրոհման պատճառներից մեկն էլ լրացման հատադաս լինելն է։ Սովորաբար լրացումներն ավելի շատ տրոհվում են հատադաս լինելիս։ Օրինակներ՝

«Ահա կրկին իմ դեմ ծաղիկներ ու կյանքեր՝ Քո գարունին բացված ծաղիկների նման» (Զ, 77)։ «Նախշքար Դավիթը գնում էր տուն, մատների ծայրերը կապույտ արխալուղի գրպանները կոխած» (ՆԴ, 145)։ «Եվ ամեն ոք շտապում էր դեպի կուլիս՝ անձամբ սեղմելու երիտասարդ հանճարի ձեռքը և իր հիացքն ու շնորհակալությունը հայտնելու նրան» (ՆԴ, 126)։

Սակայն տրոհման համար լրացման ծավալուն լինելը պարտադիր պայման չէ։ Բանն այն է, որ ծավալուն լրացումները մի շարք դեպքերում չեն տրոհվում։ Առանձնապես դա լինում է լրացման նախադաս շարադասության դեպքում։ Այսպես, հետևյալ նախադասություններում ծավալուն լրացումները տրոհված չեն. «Հնամաշ, տեղ-տեղ թելերը դուրս թափված կապերտը ցածրիկ թախտի վրա միշտ ավլած էր» (ՆԴ, 164)։ «Նախիրն Այու սարի փեշերին արածացնելիս Պետին նստում էր մի բարձր քարի վրա» (Բակ., 36)։ «Հիշեց, որ այդ գիշեր Մանեին հանապարհ դնելուց հետո տուն դառնալիս այն ստիպեցավ թրջվել էր անձրևից և քրտնել, որ հագիվ էր կարողացել շորերը հանել անկողին մտնելու համար» (ՆԴ, 3, 156)։

Ծավալուն լրացումները հատադաս գործածվելիս էլ կարող են չտրոհվել։ Այնպես որ ծավալուն լինելն ու հատադաս գործածությունը երբեմն պարտադիր պայման չեն լրացման տրոհման համար։ Այսպես, հետևյալ նախադասություններում հատադաս ծավալուն լրացումները տրոհված չեն։

«Նստած է մյուս նախարարներին և իշխաններին հավասար միևնույն օթյակում» (ԴԴվ, 281)։ «Այժմ նա տուն էր դառնում հույսը բոլորովին կտրած և խիստ շարացած

ամենի և ամեն բանի վրա» (ՆԴ, 1, 471)։ «Իմ երևակայության մեջ նա դեռ մնում է բեժ արևի տակ բոկերով ճաշիցը կապած ու ղլխակոր» (ՀԲ, 1, 413)։

Ընդհակառակը, պատահում են տրոհված լրացումներ, որոնք արտահայտվում են մեկ բառով։ Օրինակներ՝

«Շփում էր ճակատը և, տանջվելով, աշխատում էր հիշել մի բան» (ՆԴ, 3, 104)։ «Տերևները դողդողում էին, դեղնում ու իրանց իրանց թափվում, և թափվելով՝ տխուր շրջում» (ՀԲ, 1, 330)։ «Բորբոքված՝ նա հազիվ էր զսպում զայրույթը» (ԴԴԸ, 431)։ «Գնալիս՝ ճանապարհին էլ շատ եմ խոսել հետները» (ԴԴվ, 471)։ «Իսկ դհոլը՝ սպառնալով՝ Այնուհանդերձ չի տրաքվում» (ՊՍԵժ, 4, 98)։ «Այ, ինվանդ, համարյա շունչը կտրելով իրեն սարերն է գցել» (ԲՍԱ, 86)։

Այսպիսով, թեև տրոհման համար կարևոր են լրացման ծավալը և շարադասությունը, սակայն ակնհայտ է, որ դրանք միակ պայմանավորող գործոնները չեն։ Ուստի անհրաժեշտ է պարզել այն բոլոր հանգամանքները, որոնք պայմանավորում են տրոհումը։

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ նախադասության մեջ ամեն մի տրոհում դեռևս չի նշանակում, թե գործ ունենք տրոհված անդամի հետ։ Տրոհված կոչվում են այն անդամները (լրացումները), որոնք հաղորդման մեջ առանձնանալով՝ արտահայտում են լրացուցիչ իմաստ։ Այդ լրացումների տրոհումը պետք է տարբերել նախադասության մեջ տրոհման մյուս դեպքերից, որոնք կարող են ունենալ տարբեր պատճառներ։

Ստորև նշելով հանդերձ տրոհման բազմազան դրսևորումներ՝ տարբերակում ենք տրոհված անդամների տրոհումը այնպիսի դեպքերից, երբ նախադասության այս կամ այն անդամը անջատվել է լրացյալից։ Այս վերջինը թերևս կարելի էր անվանել հարկադրական տրոհում, քանի որ տվյալ անդամը իմաստային հանգամանքներով չէ, որ անջատվել է իր լրացյալից։ Սակայն պետք է նկատի ունենալ, որ երբեմն շատ դժվար է այսպես կոչված հարկադրական

տրոհումը տարբերել տրոհված լրացումների տրոհումից։ Այս պատճառով էլ ներածական մասում ընդհանուր ձևով կքննենք տրոհումը պայմանավորող հանգամանքները, իսկ հետո առանձին կանգ կառնենք տրոհված անդամների և նրանց դրսևորումների վրա։

Հայտնի է, որ տրոհված լրացումն ունի կիսաստորոգումային բնույթ։ Այդ նշանակում է, որ նախադասության այս կամ այն լրացմանը առանձին նշանակություն տալու նպատակով է այն տրոհվում։ Տրոհվում է այնպիսի լրացումը, որը տվյալ հաղորդման մեջ ձեռք է բերում առանձնահատուկ դեր, առաջին պլան է մղվում, առանձնանում։ Եթե նախադասությունն ունի ստորոգում (իսկ այդպիսին են երկկազմ նախադասությունները), ապա մյուս լրացումները ստորոգվող հատկանիշ ինչպե՞ս կարտահայտեն, եթե ոչ տրոհման միջոցով։ Եվ պատահական չէ, որ տրոհված լրացումներն ավելի շատ հանդիպում են այն դեպքերում, երբ նույն անդամին վերաբերվում են բազմազան հատկանիշներ։ Առավել ևս պատահական չէ, որ ամենից շատ տրոհվում են որոշիչները և պարագաները (նկատի չունենք բացահայտիչը, որը միայն տրոհված է լինում)։ Չէ՞ որ հենց այս լրացումներն են հատկանշի դրսևորման միջոցները (ստորոգելիական վերաբերից հետո)։

Այսպիսով տրոհման նպատակը տվյալ լրացմանը կիսաստորոգումային բնույթ տալն է։ Ինչպե՞ս է արտահայտվում տրոհումը։ Տրոհումն արտահայտվում է որոշակի հընչերանգով (որը նման է ստորոգյալի հնչերանգին) տվյալ լրացման առանձնացմանը։ Լրացումն առանձնանում է իր լրացյալից (և նրա խմբից), ինչպես և նրանց միջև գտնվող այլ բառերից։ Տրոհված անդամը կարող է դրվել լրացյալից հետո կամ առաջ։ Իհարկե առավել շատ հանդիպում են ետադաս գործածության դեպքեր։

Ինչո՞վ է պայմանավորված տրոհված լրացման շարադասությունը։ Առաջին հերթին լրացյալից առաջ կամ հետո դրվելը պայմանավորված է տվյալ լրացյալի՝ ուրիշ լրացում-

ների առկայությամբ և շարադասությամբ։ Եթե որևէ գոյական ունի նախադաս այլ որոշիչներ, ապա հասկանալի պատճառով տրոհված որոշիչը ետադաս պիտի լինի։ Օրինակներ՝

«Լուսամուտների ծիրանեգույն վարագույրները, զարդարված ծաձր, ոսկեթել ծոպերով, ցած էին թողած» (Ր, 7, 26)։ «Ու դեռ մնում է այն հողաշեն ակումբը, եղեգնյա կտուրով, և ծփում է վարագույրը» (Բակ., 244)։ «Դեռ ռուս տղա էր մի՝ ուր տարեկան հագիվ» (Զ, 353)։

Սակայն բանն այն է, որ միշտ այդպես չի լինում։ Զափազանց շատ են նաև այն դեպքերը, երբ այլ որոշիչներ չունեցող գոյականի տրոհված որոշիչը ետադաս է լինում։ Դա բացատրվում է այն հանգամանքով, որ տրոհված որոշչի արտահայտության հիմնական ձևը ետադաս լինելն է։ Օրինակներ՝

«Թույն էր կարծես՝ բորբ արևի սրտից քամած» (Զ, 249)։ «Ու մտածմունքները՝ տխուր ու անմխիթարական, նորից պաշարեցին նրան» (ՆԴ, 1, 76)։ «Տաքանում են Օրանջիայի քարերը, և խլեզները, փորի մաշկը դեղին, պառկում են տաք քարերի վրա» (Բակ., 77)։ «Նրա վրայից քարշ էին ընկած զանազան զենքեր. կապարճ՝ լի նետերով, աղեղ՝ լայնալիճ. տապարներ՝ երկաթյա երկար կոթով, թեթև վահան՝ ուղտի թափանցիկ կաշուց պատրաստված» (Ր, 7, 26)։

Ինչ վերաբերում է պարագաներին, ապա տրոհված վիճակով նրանք հավասարապես կարող են լինել և՛ նախադաս, և՛ ետադաս։ Ընդ որում երկու դեպքում էլ հնարավոր է, որ լրացյալ բայն ունենա կամ չունենա այլ՝ չտրոհված լրացումներ։ Այսպես, հետևյալ նախադասություններում լրացյալն ունի նախադաս այլ լրացումներ։

«Դեսեզերից բավական հեռանալով, այժմ մոտեցավ նա Քարքե լեռան բարձրավանդակներին» (Ր, 7, 19)։ «Երիտասարդը, լսելով ցավալի պատմությունը, թաշկինակը տարավ դեպի լճացած աչքերը» (Ր, 7, 29)։ «Առանց մի խոսք արտասանելու, ձեռքը ծոցը կոխեց, հանեց հուշատետրը» (ՆԴ, 1, 127)։

Նախադաս տրոհված պարագայի լրացյալ բայը կարող է նաև այլ լրացումներ չունենալ։ Օրինակներ՝

«Միմյանց դեմ ունեցած ամեն գժտություն մոռանալով՝ *եկան ժողովվեցան յուր շուրջը, արքայական թագով յուր արժանավոր գլուխը պսակելու» (Մուր., 4, 60)։* «Իր մահաբեր թույնը թափելով՝ *սուլում էր դառնաշունչ քամին» (ՀԹ, 1, 330)։ «Ոչխարը՝* գլուխը իրար շեմի մեջ՝ *որոճում է» (Բակ., 41)։ «Գետը,* մի ահարկու վիշապի նման, *դուռում էր, գոչում էր» (Ր, 7, 18)։*

Ետադաս տրոհված պարագան կարող է դրվել լրացում ունեցող բայի մոտ։ Օրինակներ՝

«Սահակ Սևադան *հսկում էր այդտեղ՝* ինչպես մի հզոր առյուծ» *(Մուր., 4, 97)։ «Մանանն անցողակի տեսավ նրան՝* թեերը բացած և թաց գոգնոցով» *(ՆԴ, 3, 20)։ «Ժողովից տուն եկավ՝* գունատված, ջրատար» *(Բակ., 400)։*

Ետադաս տրոհված պարագան կարող է դրվել նաև այլ՝ չտրոհված լրացում չունեցող բայի մոտ։ Օրինակներ՝

«Գարնան *երկու հատեր մի հասկի համար կռվում էին՝* կտուց կտուցի» *(Բակ., 232)։ «Կալ ու մարագի կողքին տուն կշինի քարափի գլխին և կապրի՝* հարևանի աչքից հեռու, պարիսպների հետևում» *(Բակ., 51)։ «Գիլանց Մուքին և Աքելը առաջ ընկան՝* ամբոխի մեջ գտնելու հարևան գյուղերի մարդկանց» *(Բակ., 209)։*

Ասվածից կարելի է եզրակացնել, որ տրոհման պատճառները միայն նշվածները չեն (այսինքն լրացման ծավալուն լինելը և ետադաս շարադասությունը), այլ նույնիսկ, ընդհակառակը, երբեմն տրոհվում են ոչ-ծավալուն և ոչ-ետադաս լրացումները։ Այս հանգամանքն ստիպում է տրոհման այլ պատճառներ փնտրել։ Բանն այն է, որ լրացումների տրոհումը տեղի է ունենում բաղմապան պատճառների ազդեցությամբ։

Նախ պետք է նշել, որ որոշ լրացումներ հանդես են գալիս միայն տրոհված ձևով։ Ռուս քերականագիտության մեջ երբեմն այդպիսիք ներկայացվում են ճշգրտող տեղամանե-

ը։ Հայ քերականագիտությունը վաղուց ի վեր տրոհված լրացում է ճանաչում բացահայտիչը։ Ընդ որում բացահայտիչն ունի մի քանի տեսակներ, որոնք իրարից տարբերվում են և՛ իմաստով, և՛ դրսևորման նրբերանգներով։ Պետք է նկատի ունենալ, որ ճշտող (կամ ճշգրտող) անդամը ըստ էության հայերենի բացահայտչի մի տարատեսակն է, ուստի հարմար չէ բացահայտչին զուգահեռ ընդունել նաև ճշտող (կամ ճշգրտող) անդամ հասկացությունը։

Տրոհված է հանդես գալիս նաև երկկողմանի շարահյուսական կապ ունեցող անդամը՝ պարագայական որոշիչը։ Բացահայտչի և պարագայական որոշչի տրոհման մասին հանդամանորեն կխոսվի ստորև։

Տրոհված են այսպես կոչված մեկուսացած անդամները (կոչականներ, միջանկյալ և ներդրյալ բառեր ու բառակապակցություններ, ձայնարկություններ), որոնց մասին խոսվել է նախորդ գլխում։

Լրացումների մի մասը սովորաբար հանդես է գալիս չտրոհված ձևով, ինչպես հատկացուցիչը, խնդիրները (մասնավորապես ուղիղ խնդիրը)։ Ինչպես կտեսնենք ստորև, սրանցից հատկացուցիչը և որոշ անուղղակի խնդիրներ խոսքային յուրահատուկ պայմաններում կարող են նաև տրոհվել։ Իսկ որոշ լրացումներ կարող են հանդես գալ և՛ չտրոհված, և՛ տրոհված ձևով։ Դրանք են որոշիչը և պարագան։

Ինչո՞վ է պայմանավորվում որոշչի և պարագայի տրոհումը։ Սա շատ հետաքրքրական և միաժամանակ բարդ հարց է, քանի որ կապված է բազմաթիվ հանգամանքների հետ։

Շարահյուսագիտության մեջ արտահայտվել է այն կարծիքը, թե որոշչի և պարագայի տրոհումը պայմանավորված է նրանց ձևաբանական դրսևորմամբ։ Մասնավորապես դա արտահայտվում է այն մտայնության մեջ, թե դերբայական դարձվածի հետ կետադրություն է կապված։

Նախորդ գլխում ցույց տվեցինք, որ դերբայական դարձվածը նախադասության մեջ կարող է կատարել ամեն

մի պաշտոն՝ բացի պարզ ստորոգյալից։ Հասկանալի է, որ նման հանգամանքում դերբայական դարձվածի հետ կետադրություն կապվել չի կարող։ Եվ իսկապես, ի՞նչ կետադրություն կարող է կապվել ենթակայի, ստորոգելիական վերադրի, հատկացուցչի, ուղիղ խնդրի դեր կատարող դերբայական դարձվածի հետ, քանի որ այդ անդամները սովորաբար տրոհում չեն ենթադրում։ Ինչպես նշեցինք վերևում, տրոհվելու հակում ունեն որոշիչն ու պարագան (իբրև հատկանիշ արտահայտող լրացումներ)։ Հետևապես, ավանդաբար դերբայական դարձվածին վերագրվող կետադրությունը ըստ էության վերաբերում է տրոհված որոշիչներին և պարագաներին։ Եթե այնպես լիներ, որ տրոհված որոշիչները և պարագաներն արտահայտվեին միայն դերբայական դարձվածով, ապա ինչ-որ չափով գուցե արդարացվեր դերբայական դարձվածին կետադրություն վերագրելը (որը դարձյալ սխալ կլիներ)։ Բանն այն է, սակայն, որ տրոհված որոշչի և պարագայի դեր կատարում են ոչ միայն դերբայական դարձվածները, այլև ածականական, գոյականական բառակապակցությունները, առանձին ածականները, գոյականները, մակբայները և այլն։ Եվ առհասարակ նախադասության որևէ անդամի տրոհումը պայմանավորված չէ այդ անդամի ձևաբանական դրսևորմամբ։

Նախադասության անդամների տրոհումը պայմանավորված է մի շարք հանգամանքներով, որոնցից երկուսը՝ ծավալը և ետադաս շարադասությունը, որոնք բացարձակ պատճառներ չեն, նշվեցին վերևում։

Իբրև առաջին պատճառ պետք է նշել տվյալ լրացյալի լրացումների և, մասնավորապես, նույնատիպ լրացումների քանակը։ Բանն այն է, որ եթե որևէ լրացյալի մոտ կան նույն բնույթի մեկից ավելի լրացումներ, ապա դրանց մի մասը (երբեմն և բոլորը) կարող են տրոհվել։ Օրինակներ՝

«Դանիլինից հեռանալով՝ թագուհին մտավ յուր առանձնարանը հոգեպես հուզված» (*Մուր.*, 4, 27)։ «Խիստ հուզված, Մաննն անցուդարձ էր անում սենյակում արագ քայլե-

ռով» (ՆԴ, 3, 120)։ «Աչքերը հանգչող կրակին հառած՝ Ծանր է շնչում հովիվն ահ առած» (ՀԹ, 2, 18)։ «Լեռնե՞ր, ներշընչված դարձյալ ձեզանով, Թնդում է հոգիս աշխուժով լցված» (ՀԹ, 2, 31)։ «Կերակրամանը ձեռքին, մաշված ու ոժգույն, մեծ մեծ ոտնամանները քաշ տալով անց է կենում կամուրջով» (ՀԹ, 1, 321)։ «Ու մազերն անկարգ տված թիկունքով Ու ցրված շիկնած այտերի վրա, Դուրս եկավ թեթև ամպերի տակից Անուշը՝ փախած եղնիկի նման» (ՀԹ, 2, 51)։ «Դոնապանը, նրազը ձեռին, դեռ կանգնած սյամի վրա, ապշությամբ նայում էր նրա ետևից» (Ր, 7, 22)։

Տրոհումը պայմանավորված է նաև շարադասական հանգամանքներով։ Առաջին հերթին նկատի ունենք այն երևույթը, որ նախադասության մեջ լրացումը իր լրացյալից այլ անդամներով անջատվելիս հակում ունի տրոհվելու։ Սա բացատրվում է նրանով, որ լրացումը դրվելով այլ բառի մոտ՝ կարող է դիտվել նրա լրացում, և որպեսզի այդպես չմեկնաբանվի, այն տրոհվում է։ Այսպես, օրինակ, հատկացուցիչը իր հատկացյալից այլ անդամներով անջատվելիս տրոհվում է։ Օրինակներ՝

«Բարակ շալվարի պատառոտուն տուրը մտել էր կիսակոշիկի՝ հնությունից լայնացած ճտի մեջ» (ՆԴ, 3, 9)։ «Որոնք իրանց նեղ շրջանակի մեջ հազիվ կարողանում էին սեղմել նրա՝ գորտի աչքերի նման դուրս ընկած՝ անհանգիստ բիբերը» (Ր, 7, 102)։ «Նա մտադիր էր յուր՝ բերանացի քարոզած նոր գաղափարները քարոզել և գրավոր կերպով» (ՆԴ, 1, 131)։ «Հնադարյան քաղաքի՝ կեղտ ու աղբի, խավարի ու տգիտության մեջ խարխափող արվարձանում տրորվել էր մի շքեղ, բուրավետ վարդ» (Ս. Մանվելյան, Իմ ծանոթները, 1966, էջ 46)։

Նույն ձևով տրոհվում է կողմնակի ենթական, եթե նրա և դերբայի միջև ընկնում են այլ անդամներ։ Օրինակներ՝

«Տիկնոջը վրդովեցրեց ոչ այնքան Սամվելի՝ Մուշեղին հրավիրելը» (Ր, 7, 103)։ «Ինձ զարմացրեց ընկերոջս՝ գյուղից այդքան շուտ վերադառնալը»։

Լրացյալից անջատվելու հետևանքով կարող են տրոհվել համարյա բոլոր լրացումները։ Այսպես, հայտնի է, որ խնդիրները սովորաբար չտրոհված անդամ են լինում։ Սակայն շարադասական յուրահատուկ պայմաններում կարող են տրոհվել նաև խնդիրները։ Օրինակ՝

«Բայց չհայտնեց նրան ոչինչ՝ ապստամբության ներքին շարժառիթների մասին» (Մուր., 4, 175)։ «Այդպիսի հրեշավոր մի բան հրապարակ չհանել, համայնական մի սեփականություն հափշտակողի, մատաղ մի աղջկա լլկողի և ապա զաղանաբար սպանողի՝ հասարակաց դատաստանին չհանձնելը— այդ ես չեմ կարող հասկանալ» (ՆԴ, 3, 108)։

Այսպես նաև լրացյալից այլ անդամներով անջատված լինելով կարող է տրոհվել գոյականի ուղղականով որոշիչը։ Օրինակ՝

«Օրինակ էր բերում Հարևան Օսանի տղա՝ թարախ մանածող Յականին» (ՆԴ, 1, 76)։

Թեև նույն պատճառով, սակայն տարբեր է պարագաների տրոհումը։ Այս դեպքում գործ ունենք ոչ թե հարկադրական տրոհման, այլ սովորական տրոհված անդամի հետ։ Եթե նախորդ դեպքերում լրացումը տրոհվելով լրացուցիչ իմաստ չի արտահայտում, ապա պարագաների դեպքում առկա է լրացուցիչ իմաստը։ Օրինակներ՝

«Իշխանուհին անձամբ եկավ արքային յուր շնորհակալությունը հայտնելու՝ զարհավորված յուր բոլոր գեղով և կանացի գրավչությամբ» (Մուր., 4, 89)։ «Ակնոցի արանքից նրա ուսյալ աչքերը տեսնում էին զրահավորներին, մագաղաթյա մատենագրին՝ եղեգնյա գրչով նրանց գովքը հորինելիս» (Բակ., 190)։ «Ժամանակի սովորության համեմատ, սպասավորը ամեն ծառայության համար պետք է յուր տիրոջ աչքին երևնար միայն» (Ր, 7, 34)։ «Պիտի խառնակվի աշխարհը՝ նախարարից մինչև ռամիկը» (ԴԴվ, 124)։ «Հովը թևերը կախեց հողնած՝ Ավարայրի վրա» (ԴԴվ, 343)։

Պարագաների այսպիսի տրոհման վերաբերյալ կարելի է ասել նաև հակառակը, այսինքն՝ դրանք լրացյալից ան-

ջատվել են տրոհվելու նպատակով։ Այնպես որ այս դեպքում լրացյալից հետու գտնվելը որքան պատճառ, նույնքան էլ նպատակ է։

Պատահում է, որ լրացումը իր լրացյալից անջատվում է նույնիսկ երկրորդական նախադասությամբ կամ այլ կառույցներով։ Սա կարող է լինել նախադասության ամեն մի անդամի դեպքում (ոչ միայն որոշչի և պարագայի)։ Այսպիսի դեպքում, բնականաբար, ավյալ անդամը տրոհվում է։ Օրինակներ՝

«*Դուք չյանցիք այն* երդումը, *որ նա երդվեց՝* թողնել հավիտյան Ասպրամ իշխանուհու հետ ունեցած մտերմական հարաբերությունները և ուղիղ սրտով ու մաքուր սիրով վերադառնալ յուր օրինավոր ամուսնու գիրկը» *(Մուր., 4, 124)։* «*Նրանք բոլորը նույնպես վարժ* գիտեին, *թե ինչ իրեր պիտի դնեն սպարապետի հետ՝* բազում անգամ կրկնած լինելով միևնույն պատերազմությունները» *(ԴԴվ, 56)։* «*Ճակատագրական* սխալը, *որ նրա գործն էին համարում*— վասակին վստահելը մարզպանության պաշտոնը— *նա չէր կարող ներել իրեն» (ԴԴվ, 528)։* «*Ատոմը* որոշեց հանդիպել *նաև իր աշխարհը՝ Դնունյաց՝* վերցնելու իր զորագնդից մի բեռ ջոկատ, շտապով նրան սպառնալի կերպարանք, *նրանով մտնել նաև խորհուրդներ» (ԴԴվ, 348)։* «*Հաց շատ կճարեք, ա՛յ,* ուտելու, *որ տան քրեհ էլ քաշեք» (ՆԴ, 1, 35)։*

Երբեմն նախադասության մեջ այս կամ այն անդամի տրոհումն անհրաժեշտ է լինում լրացական հարաբերությունը երկիմաստ չդարձնելու նպատակով, այսինքն ավյալ լրացումը նրան հաջորդող կամ նախորդող բառին չվերագրելու համար։ Այսպես, երբ ասում ենք «Աներկյուղությունը մահի՝ անպարտելիություն է» (ԴԴվ, 375), ապա աներկյուղությունը մահի ենթակայի խումբը տրոհվել է հարկադրաբար՝ մահի բառաձևը անպարտելիություն ստորոգելիական վերադրի լրացում չդիտվելու նպատակով։ Այսպես են նաև հետևյալ նախադասություններում եղած տրոհման դեպքերը։

«Հովը թևերը կախեց հոգնած՝ Ավարայրի վրա» (ԴԴվ, 343)։ «Եվ կամաց-կամաց՝ շնչող անտառի Շուրթերի վրա շշուկներ դարձան» (ՀՍԲ, 1, 325)։ «Լցված է սիրտը իմ՝ էլեկտրական բոլոր հոսանքներով» (Զ, 270)։ «Եվ ծովի մեջ դեղնափրփուր՝ Արագիլի բույնը՝ թափուր Նավակ լինի կարծես» (ՀՍԲ, 1, 311)։ «Ու չլինեմ օտարի՝ օտար հողի մեջ արքա» (ԳԷԱՏ, 29)։

Նույն պատճառով, սակայն ոչ հարկադրաբար, տեղի է ունենում պարագաների կամ որոշիչների տրոհում։ Այսպես, երբ ասում ենք «Զորեց ձմեռը, մանվան նման սառն ու անողոք» (Բակ., 161), ապա մանվան նման սառն ու անողոք լրացումը տրոհվել է։ Եթե տրոհում չլիներ, ապա մանվան նման կարող էր մեկնաբանվել իբրև շոթեց բայի լրացում։ Այդ երկիմաստությունից խուսափելու համար էլ այն տրոհվել է։ Այսպես են նաև հետևյալ նախադասություններում գործածված տրոհված անդամները։

«Դավիթ սեպուհը իր ընդունած վնռից շնչասպառ՝ դեմքը դարձրեց դեպի զորագունդը» (ԴԴվ, 369)։ «Ահա մի ամպի վերջին քուլաները՝ շղարշի նման թափանցիկ» (Բակ., 177)։ «Թվում է, թե մեկը հսկա թռչուն է՝ բառած քարի գլխին» (Բակ., 249)։ «Քանի նա չէր դավաճանել ինձ, ես մի արծիվ էի՝ հոգով ու մտքով բարձունքներում սավառնող» (ՆԴ, 1, 117)։

Տրոհումը պայմանավորող հանգամանքներից մեկն էլ լրացյալի խոսքի մասային պատկանելությունն է։ Այսպես, նկատելի է, որ դերանունների, մասնավորապես անձնական, լրացումները միշտ տրոհված են հանդես գալիս։ Ընդ որում անձնական դերանվան լրացումը կարող է լինել կամ բացահայտիչ կամ այլ անդամ։ Օրինակներ՝

«Անդպես չէր Մարությանը, տարիքով Շահյանից անհամեմատ մեծ և գրեթե ծերունի, նա այդ նշանավոր դեպքերի մասին խոսելիս, ոգևորված էր պատանու պես» (ՆԴ, 3, 225)։ «Ռուսկանի ձեռքից փախած՝ նա վայր է ընկել բերդուտում» (ՀԲ, 1, 330)։ «Իսկ ես-մտածկոտ, տրտում ու

լոին– *Կանգնել եմ ահա կամուրջի վրա» (Զ, 9)։ «Նրա աչքերը վառվում էին ինչ-որ տարօրինակ փայլով, նման այն հրայայտ հայացքին, որ նա, դեռևս պատանի մի խեղճ երաժիշտ, նետեց իր սարին ծագումն ու հպարտությունն այնքան մեծամտորեն արհամարհող պալացցոյի բարձունքն ի վեր» (ՆԴ, 1, 127)։*

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ տրոհման հակում ունեն որոշ պարագաներ։ Խոսքը վերաբերում է վիճակի և ձևի պարագաներին։ Տրոհված պարագաների մեջ այս երկու տեսակը որոշակիորեն գերակշռում են։ Մասնավորապես վիճակի պարագան շատ է տրոհվում, եթե այն արտահայտվում է բառակապակցությամբ։ Օրինակներ՝

«Ոռնում են դայլերը, դունչը լուսնյակին մեկնած» *(Բակ., 3,)։ «Դրանք՝* իրանց անշարժ դրության մեջ՝ *ծառայում էին ավելի իբրև զարդ, քան թե սեղանի սպաս» (Ր, 7, 88)։* «Կապարենը թիկունքին, աղեղը ուսին, երկար նիզակը ձեռին, նստած յուր սիրուն կարմիրի վրա, *գնում էր Սամվելը այն ճանապարհով» (Ր, 7, 671)։ «Նրա մոտ կանգնած էր գրբաց Գրիգորը՝* մաքրախը ձեռին, *բռնիակոխ և հևալով» (ՆԴ, 1, 22)։* «Խազեինի հին գլխարկը մինչև ականջները կոխած գլուխը, հին ոտնամանները ոտներին, մի մավի բլուզ էլ հագին, էսպես ոտից գլուխ փոխված, *նա նստած էր խոհանոցում» (ՀԹ, 1, 316)։ «Առվի եզերքին միշտ էլ կարելի էր տեսնել Լաո-Մարգարին,* ոտքերը մինչև ծնկները բաց, գլխին մի սպիտակ շոր, բանն ուսին» *(Բակ., 96)։ «Մատիտի արագ շարժումով նկարից կնոջը՝* օջախի մոտ նստած, աչքերը օջախի քարին» *(Բակ., 195)։*

Ձևի պարագան ևս շատ է հանդիպում տրոհված վիճակով, թեև չտրոհված այն պակաս չափով չի գործածվում։ Օրինակներ՝

«Քամին մռնչում էր, և անձրևային տարափը, կարկուտի գնդակների նման, *զարկում էր նրա բորբոքված երեսին» (Ր, 7, 20)։ «Հունաց կայսրը մեկ կողմից, պարսից արքան մյուս կողմից,* երկու անհաղ վիշապների նման, բերաննե-

rը բաց արած, մաքառում էին միմյանց հետ» (Ր, 7, 32)։ «Եվ բազմությունը հրելով, ձին հետևից՝ հասավ հրապարակը» (Բակ., 213)։ «Մրին մառախուղի նման՝ անորոշ մրոտքեր պտտվում էին նրա բորբոքված երևակայության մեջ» (Ր, 7, 33)։ «Վրնջում էին ձիերը՝ մեռաղածայն և երկարածոր» (Բակ., 207)։

Չափածո խոսքում նախադասության անդամների տրոհումը նախ հիմնականում ունի այն օրինաչափությունները, որոնք նշեցինք արձակի կապակցությամբ։ Սակայն դրանցից զատ կան նաև միայն խոսքի այդ տեսակին հատուկ երևույթներ։ Այսպես, տրոհմանը նպաստում են չափածո խոսքի շարադասությունը, հանգավորումը, չափը և այլ հանգամանքներ, որոնք հաճախ այնպես միահյուսված են, որ դժվար է ցույց տալ, թե ովյալ անդամի տրոհումը որ հանգամանքով է պայմանավորված։ Ավելին, չափածո խոսքում նախադասության անդամի տրոհումը երբեմն այնպիսի ձևով է արտահայտվում, որ դժվար է ասել, թե միայն չափածոյի յուրահատկությունից է դա բխում։ Այդ տրոհումն այնպիսին է, որ արձակին հատուկ օրինաչափություններն էլ է ընդգրկում։ Այնուհանդերձ կաշխատենք ցույց տալ չափածո խոսքի մեջ հանդիպող տրոհման մի քանի առանձնահատկություններ։ Պետք է նկատի ունենալ, որ չափածոյում եղած տրոհումը կարող է միաժամանակ մի քանի գործոն ունենալ, ուստի և մեր կողմից առանձնացվող պատճառները որոշ պայմանականություն ունեն։

Առաջին պատճառը չափածոյի շարադասական առանձնահատկություններով է պայմանավորված։ Հայտնի է, որ չափածո խոսքի շարադասությունը կարող է լինել և՛ ուղիղ, և՛ շրջուն՝ ըստ անհրաժեշտության։ Միաժամանակ, չափածոյում լրացական հարաբերության մեջ գտնվող անդամները կարող են և՛ իրար մոտ գտնվել, և՛ անջատվել այլ անդամներով։ Ահա և վերջին հանգամանքը երբեմն պատճառ է դառնում տրոհման համար։ Այսպես, որոշիչը կարող է որոշյալից անջատվել և դրա հետևանքով տրոհվել։ Օրինակներ՝

«Նշանակում է՝ նոր հուն եմ մտել՝ Ավելի խորունկ, ավելի անշեղ» (Զ, 103)։ «Այլ քրտինք է դառնում՝ մաքրուլ ու զով» (Զ, 121)։ «Միակ նեցուկն էր նա տան՝ բոլորին պահող» (Զ, 419)։ «Մի հա՞յր ես հիշում ծեր՝ նամփիր ընպասող» (ԳՍԸ, 149)։ «Զգաց, որ երկու անգամ չի կարող անցնել նույն ջրով նույն գետի՝ անցնող» (ՀՇՔՀ, 457)։

Երբեմն էլ պարագան է տրոհվում լրացյալից անջատված լինելու պատճառով։ Օրինակներ՝

«Ժպտաց նա մի պահ՝ գոհ ու հաղթական» (Զ, 441)։ «Ավերակ բերդին, սև ամպի նման, Ծուխն ու թշնամին շոքել են տհա» (ՀԹ, 2, 143)։ «Կյանքս կանցնի, կմարի, որպես կրակ ճահիճում՝ Անհպատակ ու տարտամ, անմխիթար ու անհույս» (Զ, 14)։ «Մանկությունը հիշելիս՝ սիրտս դառնում է զինով» (Զ, 418)։ «Դող չի անցել, լեգենդ է սուտ, հարդագողի այս հին համփով» (ՀՇՔՀ, 101)։ «Ինչպես փոքրիկ սասպիկ արընթաց, Գյուղից սլացան մի խումբ կրտրիճներ» (ՀԹ, 2, 64)։ «Էսպես, անավոր աղյուսի նման, Սասմա սարերում նստած էր իշխան» (ՀԹ, 2, 97)։

Երբեմն այս հանգամանքին միանում է հանգավորման պահանջը, և լրացումը հանդես է գալիս տրոհված վիճակով։ Այսպես են հետևյալ նախադասություններում գործածված որոշիչները։

«Դաշտը, անծայր ու անսահման, լայնատարած՝ Հրակարմիր տարածվել էր նրանց առաջ» (Զ, 249)։ «Ու կրակը այդ կարմրակեզ — սահանշան ու վիրխարի — Մի արնագույն կետ է կարծես ուղեղի մեջ խելագարի» (Զ, 254)։ «Ընկել եմ հաճախ, բարձրացել էլի — Եվ բաղմապիսի երգեր եմ գրել՝ խոհով, պայքարով ու կրքերով լի» (Զ, 120)։ «Եվ մատներով իր՝ արդեն անուժ՝ Դեռ գուրգուրում էր հեռու մի հուշ» (Զ, 381)։

Հանգավորման պահանջով պարագաները ևս կարող են տրոհվել։ Այսպես են հետևյալ նախադասություններում գործածված տրոհված պարագաները։

«Բարձրանում է նրանց սրտից տարիների մաղձը աղի

Ու վառվում է լուրթ աչքերում՝ արյունալից ու կատաղի» *(Չ, 255)։ «Քաղաքներից ու գյուղերից, ստեպներից հեռու ու մոտ՝ եկել էին նրանք նորից՝* հուսավառված ու կրակոտ» *(Չ, 250)։ «Կարծես նետված մի հաղթ ձեռքով՝* աշխարհային կամքին հլու՝ *Գնում էին կովո՞վ, երգո՞վ կայարանը դրավելու» (Չ, 251)։ «Եվ* սուր սվիններ կոշտ ձեռներին՝ *Դժկամ՝ նայում են պալատներին» (Չ, 437)։ «Մի՞թե լռել է լեզուն այն հարտար, Որով մեր փառքն էր խոսում* վեհորեն, *Եվ խոսում էին հանուր մարդկության Իմաստությունն ու սերը՝* հայերեն» *(ՀՍԲ, 1, 165)։*

Ինչպես արձակում է լինում, չափածոյում էլ երբեմն լրացումը տրոհվում է՝ հաջորդող կամ նախորդող բառերի հետ կապակցություն չկազմելու նպատակով։ Այսպես, «Եվ անկարող էիր հիշել օրերը հին, Ծառուղիներն անցած՝ պարտեզների» *(ԳՍԸ, 156) նախադասության մեջ* պարտեզների *հատկացուցիչը տրոհվել է։ Նրա լրացյալը* ծառուղիներն *բառը է։ Եթե այն չտրոհվեր, ապա կարող էր հասկացվել իբրև* անցած *բառի որոշյալ, մինչդեռ* պարտեզների *բառը կապ չունի* անցած-*ի հետ։ Այսպես են նաև հետևյալ նախադասությունների մեջ եղած տրոհման դեպքերը։*

«Վա՞ր նետեմ ցուպն այս մաշված՝ բափառական պանդուխտի» *(ԳԷԱՏ, 29)։ «Գուցե իմ սրտում, երգերում իմ մութ, խոսքերում՝ ասված իմ հոգու մասին — Հեռավոր մեկի անրջանքն եմ սուտ՝* Նետված աշխարհի անսուտ երազին» *(Չ, 7)։ «Իսկ նա հիվանդ էր հին մի վշտից, Հին մորմոքից՝* իր սիրտը այրող» *(Չ, 381)։ «Լսում էին մետաքսե իրենց բարձերին նստած Սիրունները մարմարե՝* խանի հարեմի» *(ԳՍԸ, 370)։ «Եվ անապատի փոխվեց տխրագին Մարդու* աչքի դեմ՝ *դաշտը ղմրուխտե» (ՀՇՔՀ, 457)։ «Նրան՝ իր տեսքով, հասակով, ասին, Չի հասնի չքնաղ հուրին Իրանի» (ՀԹ, 2, 137)։ «Մի՞թե վեհ չէ այս կերտվածքը, ով աստված,* Բյուզանդիոնի սուրբ Սոֆիայից ավելի» *(ԳՍԸ, 407)։*

III. ՏՐՈՀՎԱԾ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԵԿՈՒՍԱՑԱԾ ԱՆԴԱՄՆԵՐԻՑ

Նախորդ գլխում քննել ենք նախադասության այսպես կոչված մեկուսացած կամ ուղեկցող անդամների դրսևորումը շարահյուսական ամբողջական կառույցներով։ Այստեղ հարկ ենք համարում համառոտակի կանգ առնել մեկուսացած անդամների և տրոհված անդամների տարբերության վրա։ Բանն այն է, որ արտաքուստ դրանց միջև նմանություն կա։ Անշուշտ, մեկուսացած անդամներից կոչականը, ինչպես և ձայնարկությունը չի շփոթվի տրոհված լրացումների հետ։ Մյուս կողմից էլ, տրոհված լրացումների ոչ բոլոր տեսակներն ունեն արտաքին նմանություն մեկուսացած անդամների հետ։ Արտաքուստ նման են լինում միջանկյալ և ներդրյալ բառերը, մի կողմից, և տրոհված որոշ պարագաներ, մյուս կողմից։ Ուստի հարկ է խոսել միջանկյալ և ներդրյալ բառերի ու բառակապակցությունների և տրոհված պարագաների տարբերության մասին։

Ինչպես հայտնի է, տրոհված լրացումների կապը լրացյալի հետ թույլ է, համենայն դեպս ոչ այնպիսին է, ինչպիսին առկա է չտրոհվող լրացումների և նրանց լրացյալների միջև։ Ահա հենց այս հանգամանքն էլ առաջ է բերում շփոթ տրոհված լրացումների և մեկուսացած որոշ անդամների միջև։ Տրոհված անդամների և միջանկյալ ու ներդրյալ բառերի ընդհանրության հիմքը համապատասխան հնչերանգային նմանությունն է. երկուսն էլ հնչերանգով զատվում են նախադասության մյուս մասերից։ Բանն այն է, որ միջանկյալ ու ներդրյալ բառերը չունեն ձևավորման առանձնահատկություններ (ձևաբանական տեսակետից), և արտաքուստ հեշտ չէ դրանք տարբերել տրոհված որոշ անդամներից, մասնավորապես նրանցից, որոնք հատուկ ձևով չեն առանձնանում։ Այսպես, հետևյալ նախադասություններում առկա են տրոհված անդամներ, և միջանկյալ ու ներդրյալ բառեր։

1. Տրոհված անդամներ.— «Պշնամին երեկվա ընթացքում, մեր հետախուզության տվյալներով, այնտեղ կենտրոնացրել է հինգ դիվիզիա»: «Երկու միագույն բարակներ, բանկագին վզկապներով, վազում էին իշխանի առջևից» (Ր, 7, 67): «Եվ հոգուս մեջ, հուսահատ, այնքան ստոր եմ մարել» (Զ, 14): «Ու ամենից առաջ, թաղի անթիվ երեխաները, համարյա բե տկլոր ու ոտաբոբիկ, թռչկոտալով ու ծկլթալով» (ՆԴ, 1, 12):

2. Միջանկյալ և ներդրյալ բառեր ու բառակապակցություններ.— «Այդ պատճառով իրավունքը ձերն է, ուրիշ խոսքով,— այդ ձեր անհատական անբռնաբարելի իրավունքն է» (ՆԴ, 2, 354): «Զգիտեմ, նշմարիա, ինչ անեմ» (ՆԴ, 2, 391): «Սերգեյ Ավետիչը մեկ թե երկու անգամ «կոստր էր ընկել» (սնանկացել), բայց և այնպես (բե՞ հենց այդ պատճառով) բավական լավ էր ապրում» (ՆԴ, 2, 548):

Բերված երկու կարգի օրինակներում արտաքուստ նման են տրոհված անդամը և միջանկյալ ու ներդրյալ բառը կամ բառակապակցությունը: Այսպես, մեր հետախուզության տվյալներով, բանկագին վզկապներով տրոհված անդամները արտահայտված են լրացում ունեցող գործիականի բառակապակցությամբ ճիշտ այնպես, ինչպես ուրիշ խոսքով միջանկյալ կապակցությունն է արտահայտվել: Հնչերանգով էլ դրանք առանձնանում են նույն ձևով: Իսկ ո՞րն է դրանց տարբերության չափանիշը: Տրոհված անդամը շարահյուսական կապի մեջ է նախադասության որևէ անդամի հետ, նրա լրացումն է, մինչդեռ միջանկյալ և ներդրյալ բառերը քերականական կապի մեջ չեն նախադասության անդամների հետ: Բերված նախադասություններում մեր հետախուզության տվյալներով տրոհված պարագան կապված է կենտրոնացրել է ստորոգյալի հետ, բանկագին վզկապներով լրացումը կարող է երկկողմանի շարահյուսական կապի մեջ լինել բարակներ և վազում էին անդամների հետ (որոշիչ կամ պարագա), մինչդեռ ուրիշ խոսքով բառակապակցությունը, որը ձևով չի տարբերվում նախորդներից, շարա-

հյուսական կապ չունի ոչ մի անդամի հետ։ Նույնը պետք է ասել նաև տրոհված անդամներ հուսահատ, համարյա բն տկլոր ու ռաբորիկ և միջանկյալ ու ներդրյալ նշմարիտ, բն՞ հենց այդ պատճառով բառերի և կառույցների մասին։ Հենց այս է պատճառը, որ քերականագիտության մեջ երբեմն նշում են, թե միջանկյալ բառը կարող է հանվել նախադասությունից՝ առանց խաթարելու նրա իմաստը։

Սակայն հենց այստեղ էլ պետք է նշել, որ շարահյուսական կապի բացակայությունը միջանկյալ և ներդրյալ բառերին ու բառակապակցություններին չի զրկում նախադասության անդամների հետ ունեցած կապից առհասարակ։ Ակնհայտ է, որ միջանկյալ և ներդրյալ բառերն ու բառակապակցությունները իմաստային տեսակետից սերտ կապի մեջ են այն նախադասության հետ, որի կազմում հանդես են գալիս։ Այս տեսակետից էլ միջանկյալ և ներդրյալ բառերը նույնքան կարևոր են նախադասության համար, որքան և նախադասության մյուս կազմիչները։ Շարահյուսական կապի առկայությունը կամ բացակայությունը չի կարելի նույնացնել տվյալ կազմիչի կարևորության և ոչ կարևորության հետ։

IV. ՏՐՈՀՎԱԾ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ

Սովետական քերականագիտության մեջ տրոհված անդամների մեկնաբանության երկու սկզբունք կա։ Առաջինը, որը գործադրված է ռուսերենի ակադեմիական քերականության մեջ[50], ելնում է նախադասության տրոհված անդամների իմաստից։ Այդ սկզբունքով տրոհված անդամները դիտվում են որպես չտրոհվածների տարբերակ։ Այս սկզբունքով էլ կատարված է ռուսերենի տրոհված անդամների նկարագրությունը, ընդ որում առանձին-առանձին տրված

[50] «Грамматика русского языка», т. 2, ч. 1, М., 1960, էջ 640—657.

է տրոհված համաձայնվող որոշչի, չհամաձայնվող որոշչի, բացահայտչի (приложение), տրոհված պարագաների դրսևորումը՝ ելնելով լրացման տրոհման հետ կապված իմաստային նրբերանգներից։ Երկրորդ սկզբունքի համաձայն, որը ելակետ է դարձել ժամանակակից ռուս գրական լեզվի քերականության համար, տրոհված լրացումները դասդասված են ըստ նրանց դրսևորման ձևի։ Այս դեպքում լրացումների ավանդական անվանումների հետ միասին համարյա անտեսված են արտահայտվող նրբերանգները։ Այս սկզբունքով ռուսերենի տրոհված լրացումները խմբավորված են 9 տեսակի մեջ՝ ըստ լրացումների ձևի։ Այսպես, նշված են причастие-ի, деепричастие-ի, ինֆինիտիվի, ածականի, գոյականի տարբեր ձևերի և այլ տրոհման հետ կապված դեպքերը, ընդ որում ցույց է տրվում, թե յուրաքանչյուր տեսակի տրոհված անդամը (որոնք իմաստային բնութագրում չեն ստանում) ինչ խոսքի մասի լրացում է դառնում[51]։ Վերջին հաշվով սա տրոհված անդամների ձևական նկարագրություն է, որը բխում է շարահյուսության մեջ նախադասության անդամների ուսումնքի անտեսումից։ Այս տեսակետից պատահական չէ, որ այդ անդամները չեն էլ անվանվում տրոհված անդամ, այլ սոսկ տրոհված բառաձևեր և խմբեր՝ նախադասության ներսում։

Քանի որ մեր աշխատության ելակետը նախադասության մեկ անդամի դերում հանդես եկող շարահյուսական կառույցների քննությունն է, ինքնին հասկանալի է, որ մենք չենք կարող հետևել երկրորդ սկզբունքին և տրոհված կառույցները (ինչպես և բառերը) կկոչենք նախադասության տրոհված անդամ։

Մեր կարծիքով, տրոհումը պայմանավորված է ոչ այնքան այս կամ այն անդամի ձևով, որքան հաղորդվող մտքի նրբերանգների դրսևորման անհրաժեշտությամբ, ինչպես և չափածո խոսքի յուրահատկություններով։ Անշուշտ տրոհ-

---

51 «Грамматика совр. русск. лит. языка», М., 1970, էջ 643—647.

ված անդամների դասդասման ելակետը պիտի լինեն նախադասության անդամները, սակայն նկարագրության մեջ պետք է հաշվի առնել նաև տրոհված անդամների ձևը։ Եթե տրոհված անդամների ուսումնասիրության ելակետը լիներ նրանց ձևը, ապա հայերենում պետք է առանձնացվեին մի քանի տասնյակ խմբեր, որոնք ոչինչ չէին ասի։ Մյուս կողմից էլ, նույն ձևն ունեցող անդամը կարող է հանդես գալ մի դեպքում չտրոհված, այլ դեպքում՝ տրոհված։ Եթե ռուսերենում որոշ կառույցներ կամ բառաձևեր միշտ տրոհված են հանդես գալիս, ապա հայերենում չկա որևէ բառաձև կամ կառույց, որը միայն տրոհված անդամ դառնա։ Հենց ռուսերենում էլ մի երկու ձևից բացի տրոհված անդամների դեր ունեցող ձևերը կարող են հանդես գալ նաև իբրև չտրոհված անդամ։ Այսպիսով, տրոհված անդամների քննությունը տարվելու է ըստ նրանց իմաստի (որի հիման վրա էլ տրված է նրանց բնորոշումը իբրև նախադասության անդամի), իսկ յուրաքանչյուր անդամի ուսումնասիրություն տարվելու է՝ ելնելով նրա դրսևորման ձևերից։ Տրոհված անդամների քննությունը սկսում ենք բացահայտիչից, որը միայն տրոհված է հանդես գալիս։

Ա. ԲԱՑԱՀԱՅՏԻՉ

Բացահայտիչը, ինչպես հայտնի է, իմաստով որոշչին մոտ է։ Այն բնութագրում է լրացյալը խոսողին և խոսակցին ծանոթ, հայտնի հատկանիշով։ Իմաստային ծավալով բացահայտիչը բացահայտյալի հետ հիմնականում համընկնում է։ Այսպես, երբ ասում ենք «Նա դիմեց ընկերոջը՝ Պետրոսին», *ապա* Պետրոսին *բացահայտիչը իմաստով համընկնում է* ընկերոջը *բացահայտյալին։ Ո՞րն է բացահայտչի իմաստային յուրահատկությունը։ Բացահայտիչը, որն ի դեպ իբրև տրոհված լրացում, ունի կիսաստորոգումային բնույթ, միջոց է դառնում լրացյալի տվյալ հատկանշի դրսևորման։ Բացահայտիչը արտահայտում է որևէ*

անդամի հատկանիշը, և այս իմաստով այն որոշչի դիրքային տարբերակն է։ Այսպես, հնարավոր է նույն հատկանիշը մերթ որոշչի, մերթ բացահայտչի միջոցով արտահայտել։ «Պետրոսը՝ իմ ընկերը, վերադարձավ գյուղից» նախադասության մեջ իմ ընկերը բացահայտիչ է, որը կարելի է դարձնել որոշիչ. «Իմ ընկեր Պետրոսը վերադարձավ գյուղից»։

Բացահայտիչը կարող է արտահայտվել ինչպես մեկ բառով, այնպես էլ շարահյուսական տարբեր կառույցներով։ Բերված օրինակներից մեկում բացահայտիչը մեկ բառով է արտահայտվել (Պետրոսին), *իսկ երկրորդում՝ գոյականական բառակապակցությամբ* (իմ ընկերը)։ *Բացահայտիչը կարող է արտահայտվել շարահյուսական ամբողջական կառույցով։ Օրինակներ՝*

«Նշանաուքի ժամանակ Անանիին ցույց էին տվել վրացական հագուստով- թշերի այս ու այն կողմը կախված կավիճներով, գլխին դրած բասակրավով *և այլն» (ՆԴ, 1, 139)։ «Նա ուներ որոշ հենարան՝* վարդանանց զորքերի մասերը» *(ԴԴվ, 543)։*

Առաջին նախադասության մեջ բացահայտիչներից մեկը՝ թշերի այս ու այն կողմը կախված կավիճներով, *արտահայտված է եռաստիճան գոյականական բառակապակցությամբ, երկրորդը՝* գլխին դրած բասակրավով, *երկաստիճան գոյականական բառակապակցությամբ։ Երկրորդ նախադասության մեջ բացահայտիչը՝* վարդանանց զորքերի մասերը, *միակառույց գոյականական բառակապակցություն է։*

Բացահայտիչը լինում է երեք տեսակ, որոնցից մեկը երկու ենթատեսակ ունի՝ սովորական (բուն և մեկնական ենթատեսակներով), մասնական և կոնկրետացնող կամ մասնավորեցնող։ Բացահայտիչը չունի միասնական ձև։ Ընդ որում սովորական բացահայտիչը ձևով ավելի բազմազան է, քան մյուս տեսակները։

ա) Սովորական բացահայտիչ.— *Սա հիմնականում*

ձևով համընկնում է բացահայտյալին։ Եթե բացահայտյալը դոյական անուն է, ապա բացահայտիչը հոլովով, թվով համընկնում է բացահայտյալին։ Օրինակներ՝

Սոնան էր, զառ մանդիլով նուրանարսը, լույս ատամներով այն աղջիկը, *որ այնպես ղընդուն ծիծաղում էր» (Բակ., 229)։ «Հայաստանի* քահանայապետը, հայրենիքի հզոր պաշտպանը, Ներսես մեծը, *նույն կայսրի հրամանով աքսորված էր Պատմոս անբնակ կղզում» (Ր, 7, 31)։ «Նա խոսում էր* ընկերոջ՝ Պետրոսի *մասին»։ «Նրա* հարևանից՝ Դրիգորից, *մշտապես բողոքում էին»։*

Եթե բացահայտյալը դերանուն է, ապա բացահայտիչն ստանում է համապատասխան հոդ։ Օրինակներ՝

«Մենք՝ արյուն-քրտինքով հաց վաստակողներս, *դիտենք աշխատանքի արժեքը»։* «Դուք՝ աշակերտներդ, *շատ բան ունեք սովորելու»։*

Եթե բացահայտիչը պարագայական երանգ է ունենում, ապա անձնական դերանվամբ արտահայտված բացահայտյալի հետ հոդով համաձայնություն չի ունենում։ Օրինակներ՝

«Նրա աչքերը վառվում էին ինչ-որ տարօրինակ փայլով, նման այն հրացայտ հայացքին, որ նա, դեռևս պատանի մի խեղճ երաժիշտ, նետեց իր ստորին ծագումն ու հրապարտությունն այնքան մեծամտորեն արհամարհող պալացցոյի բարձունքն ի վեր» (ՆԴ, 1, 127)։

Եթե բացահայտյալը ցուցական դերանուն է, ապա բացահայտիչը չի կարող համաձայնվել նրա հետ։ Օրինակներ՝

«Որ համբուրի այնտեղ, հովիտներում նրնիմ, Բորբ արևի թողած ոսկիները վերջին» (Զ, 26)։ «Ընդունում եմ ինձ այնպես, ինչպես կամ՝ Իմ հոգու ամբողջ տենդով ու տապով» (Զ, 119)։ «Դա *կյանք է,* այդպես մեռնելը» *(ԴԴվ, 608)։ «Սիրուհիներն են* այդպես *այցի գալիս մեզ հանախ-*Անակնկալ, *ինչպես կայծ, որ թռչելով է խանձում» (Զ, 177)։ «Եվ մենք այդ դիշեր մնացինք* այդտեղ՝ Մեռած Քաղաքի ավեր շենքերում» *(Զ, 229)։ «Բժիշկը սկզբում գործարանի հասարակ բանվորի տեղ ընդունեց նրան և, ըստ երևույթին,*

այդպես էր ուզում վարվել նրա հետ—անվույր, անուշադիր և մի քիչ էլ կոպիտ կերպով» (ՆԴ, 1, 151)։

Ընդհանրապես անորոշ իմաստ ունեցող բացահայտիչները, մանավանդ եթե բուն բացահայտիչն ունենում է անորոշ դերանվամբ արտահայտված լրացում, հոդով չեն համաձայնվում բացահայտյալին։ Օրինակներ՝

«Սերգեյ Ստեփանիչը,— խոշոր արտաքինով, խոշոր բեղերով, մոտ հիսուն տարեկան մի տղամարդ, սև տալասի արխալուղով, որի վրա հուրհրատին էր տալիս ժամացույցի ոսկի հաստ շղթան,— նստած էր մի նոր հսկայական շինության բակում իրար վրա դարսած հաստ տախտակների վրա» (ՆԴ, 1, 35)։ Պսպղում էր քաղաքը հին՝ հազարերանգ մի զանգված» (Զ, 250)։ «Մենք, առույգ ու ժիր գեղջուկ մանուկներ, երեք դասընկեր, Նրանց առաջին գլխաբաց կանգնած, Ձեռքներս խոնարհ սրտներիս դրած, Ցիլ, ուժեղ ձայնով նրանց ըսպասում՝ Տաղ էինք ասում» (ՀԹ, 1, 9)։ «Տանտերերը՝ այր ու կին՝ թախծալի ժպիտով և հատուկ ջերմեռանդությամբ ընդունեցին հյուրերին» (ԴԴվ, 445)։

Անորոշ բացահայտյալի մոտ էլ կարող է դրվել որոշյալ բացահայտիչ։ Օրինակներ՝

«Ասին՝ ամբողջ աշխարհում մի իրավունք միայն կա՝ Մարդու քրտինքը զուլալ ու աշխատանքը արդար» (Զ, 264)։ «Ժողովրդական հոծ բազմություններ՝ հայոց ժողովուրդը՝ վեր կացած երկրի բոլոր կողմերից ալեկոծ հորձանքով գալիս էր ծովանում Արտաշատի շուրջը» (ԴԴվ, 665)։ «Տուփ քարերից շինել ենք Շենքեր՝ մարմինը նրա» (ԳՍԸԵ, 255)։

Սովորական բացահայտիչը բացահայտյալի հետ կարող է կապակցվել այսինքն, այն է, որ է բառերով։ Օրինակներ՝

«Վաղվան մասին մտածում են վախկոտները, այսինքն նրանք, որոնք վստահություն չունեն իրենց ուժերի վրա» (ՆԴ, 2, 468)։ «Բուրժույ— այսինքն զանգին, Այսինքն էֆենդի, աղա» (Զ, 360) «Կարողացավ համոզել նորան, որ յուր մոր ցանկության համեմատ շարունակեր յուր հոր՝ Ղազարի

արհնատը, այն է՝ դարբնություն» *(Մուր., 1, 241, 1961)։ «Ահա այսպիսի մի ծառայության համար էլ նա ծանոթացավ քաղաքի մի շատ հարուստ մարդու,* այն է՝ Աղաբաբ Փուլշատյանի որդու՝ Սամվելի հետ» *(Մուր., 4, 311)։*

Սովորական բացահայտիչը երբեմն կարող է ունենալ իր հերթին այլ բացահայտիչ, և կստացվի բացահայտիչների ենթակարգային շարք։ Այդ շարքը սովորաբար նուազում է լինում։ Օրինակներ՝

«*Այդ կինը Սեղան էր,* բազմոնու զուրվազուր դայակը, դղյակում եղող կանանց մեջ ամենից բարին և ազնվասիրտը» *(Մուր., 4, 11)։ «Եկել— երկաթե երդ եմ ձեզ ասում ես—* կարմիր սրեսս— Եղիշե Չարենց» *(Չ, 266)։*

բ) Մասնական բացահայտիչ.— *Սա սովորական բացահայտիչից տարբերվում է և՛ իմաստով, և՛ ձևով։ Իմաստային տարբերությունն այն է, որ բացահայտյալի էությունը դրսևորում է նրա մի մասով, մի կողմով։ Երբ ասում ենք «Գրիգորը, որպես նախագահ, անփոխարինելի էր», ապա* Գրիգորը *բացահայտյալը այստեղ ներկայանում է իր մասնավոր կողմով։ Նույն բացահայտյալը կարող է ունենալ բազմաթիվ մասնավորումներ։ Ասենք թե նույն* Գրիգորը *կարող է զանազան մասնավորումներ ունենալ.* «Գրիգորը, որպես ուսուցիչ, *իրեն արդարացնում է»,* «Գրիգորը, *որպես* հայր, *շատ է սիրվում իր զավակներից»,* «Գրիգորը, որպես հարևան, *հիանալի մարդ է» և այլն։*

Մասնական բացահայտիչի ձևի յուրահատկությունն այն է, որ բացահայտյալի հետ կապակցվում է որպես, իբրև *և արդեն հնացած* ինչպես *կապերով։ Օրինակներ՝*

«*Պատրիկյանը,* իբրև պարապ մարդ և ձրի աշխատակից, *խմբագրատան ամենօրյա այցելուն էր» (ՆԴ, 1, 180)։* «Իբրև հայ երգիչ, *իմ բարոյական պարտքս համարեցի այցելել ձեր խմբագրատուն» (ՆԴ, 1, 183)։ «Նրանք դիմում էին Շահյանին,* իբրև մի հեղինակավոր մարդու, *որի կարծիքը վճռական նշանակություն պիտի ունենար» (ՆԴ, 3, 229)։ «Ջալալեդդինը,* որպես շեյխ և զորավար, *միակն էր, որ*

հանձն առեց քրդերի գլխավորությունը, առաջնորդելու նրանց դեպի պատերազմի դաշտը» (Ր, 3, 46)։ «Դու էլ, որպես այդ երկրի անբաժան *Մի մասնիկ՝ մղված Լոանդով նրա— Քանդեցիր հնի կապանքը դաժան» (Զ, 195)։*

Ի միջի այլոց, պետք է նշել, որ իրև, որպես, ինչպես *կապերով կարող են ձևավորվել ոչ միայն մասնական բացահայտիչները. այդ կապերը ձևավորում են նաև պարագաներ (չտրոհված և տրոհված) և ստորոգելիական վերադիր։ Հետևյալ նախադասություններում առկա են պարագաներ։*

«Տարիներ հետո իմացա, որ տնից դուրս արած, թափառում է մայրաքաղաքի փողոցներում, իրև պրոֆեսիոնալ ինտելիգենտ մուրացիկ և արբեցող» *(ՆԴ, 2, 543)։ «Այս անգամ արդեն իրար հանդիպեցինք* իրև հին ծանոթներ» *(ՆԴ, 2, 479)։ «Զարշու կերպ մտած,* ինչպես վիշապ օձ, *Անցնում էր ինքը՝ Շահ Աբաս արքան» (ՀԹ, 1, 274)։ «Եվ, գնդերի հետ եկած զրոհի,* Որպես մի կարմիր ամազոնուհի *Դու շեփորեցիր կռիվ ու պայքար» (Զ, 129)։ «Եվ հեռուներում քո երգն էր թնդում,* Ինչպես վիրխարի հաղթանակի երգ» *(Զ, 129)։ «Նա բերել էր թոքախտավոր սիրտը,* որպես կարմիր դրոշ» *(Զ, 250)։*

Որպես կանոն, ստորոգելիական վերադիրը կապերով ձևավորվելիս էլ չի տրոհվում։ Օրինակներ՝

«Նա աշխատում է որպես ուսուցիչ»։ *«Նրան ընդունել են* իրև գլխավոր ինժեներ»։

գ) Մասնավորեցնող (կոնկրետացնող) բացահայտիչ.— *Այս բացահայտիչը լրացում է դառնում գերազանցապես տեղի և ժամանակի պարագաների՝ մասնավորելով (կոնկրետացնելով) այդ լրացումների ցույց տված ընդհանուր տեղը և ժամանակը։ Այս իմաստով էլ հիմնավորված է բացահայտչի այս տեսակի պարագայական անվանումը։ Մասնավորեցնող բացահայտիչը սովորաբար ձևով տարբերվում է բացահայտյալից։ Անշուշտ հնարավոր են նաև համընկնելու դեպքեր։ Օրինակներ՝*

«Բեմի հանդեպ, եկեղեցու աջակողմյան անկյունում, *չորս մարմարյա սյուների վրա բարձրանում էր մի վերնատուն» (Ր, 7, 308)։ «Մատուռի մոտ,* կածանից ոչ հեռու, *հողի մեջ խրված էր ծխից սևացած մի խաչքար» (Բակ., 64)։ «Մի մարդու առջև բացել է սիրտը Գիշերը՝* խելքից ընկած *ժամանակ» (Զ, 454)։ «Հետևյալ առավոտ,* հազիվ արևը հորիզոնից մի ասպարեզ բարձրացած, *իշխանն ու յուր Միկնապահը Աղստևի հովիտը մտան» (Մուր., 4, 152)։ «Եվ նորից՝ կանուխ,* առավոտ ծեգին, *Մենք ճամփա ընկանք անխոնջ ու համառ» (Զ, 223)։ «Էգուց երեկոյան կգաս ամրոցը,* ուղիղ ինձ մոտ» *(Ր, 7, 71)։ «Արևմուտքում,* Գուտենբերգի հայրենիքում հարազատ, *խարույկներ են վառում այսօր, այրում գրքեր բյուրհազար» (Զ, 178)։ «Այդպես մի անգամ էլ,* շատ տարիներ առաջ, *ճանչաց այգու դուռը» (Բակ., 229)։*

Մասնավորեցնող բացահայտիչները ևս կարող են լրացում դառնալ մասնավորեցնող բացահայտչի, և այսպիսով կստացվի բացահայտիչների ենթակարգային շարք։ Սովորաբար այդ շարքը եռանդամ է լինում (ներառյալ բացահայտյալը), սակայն հնարավոր են նաև ավելի երկար շարքեր։ Օրինակներ՝

«*Ներքևը,* ձորում, Բասուտա գետի մյուս ափին, *բարաժայռերի վրա թառել են մի քանի տներ» (Բակ., 190)։ «Որի բրիգադը գտնվում էր իրենից.* ոչ այնքան հեռու, *թփուտների մյուս կողմում, մի բարբարոտ* բմբի տակ» *(ԲՍԱ, 191)։ «Դեպքը տեղի էր ունեցել նախորդ օրը,* գերեկը, հաշից մեկ ժամ առաջ»։

դ) Բացահայտչի արտահայտությունը.— *Ինչպես տեսանք, բացահայտիչը հիմնականում սեփական ձևչունի. այն նմանվում է բացահայտյալին։ Սա վերաբերում է սովորական և մասնական բացահայտիչներին, իսկ մասնավորեցնող բացահայտիչն էլ, ձևով տարբերվելով բացահայտյալից, դարձյալ միատեսակ դրսևորում չունի։ Ուստի և չենք կարող խոսել բացահայտչի միասնական ձևի մասին։ Սակայն այսուհանդերձ պետք է նշենք, որ բացահայտչի դերով*

հանդես են գալիս որոշակի խոսքի մասեր՝ համապատասխան ձևավորմամբ։ Ինչպես վերևում նշվել է, բացահայտիչը կարող է դրսևորվել և՛ մեկ բառով, և՛ շարահյուսական ամբողջական կառույցով։ Ընդ որում բացահայտիչը, իբրև տրոհված անդամ, վկայում է, որ անկախ բաղադրյալ կառուցվածքից, ողջ կառույցը նախադասության մեկ անդամի դեր ունի։ Տրոհված անդամները լավագույնս դրսևորում են նախադասության մեկ անդամի արտահայտությունը շարահյուսական կառույցներով։ Տրոհված կառույցը որքան էլ շատ կազմիչներ ունենա, չի կարող ավելի մեծ լինել, քան նախադասության մեկ անդամն է։

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ սույն հետազոտությունը նվիրված է նախադասության մեկ անդամի դերով հանդես եկող շարահյուսական կառույցների քննությանը, բացահայտիչների ուսումնասիրության մեջ էլ դեբաղանցապես կանգ կառնենք շարահյուսական ամբողջական կառույցների վրա։ Ինչպես ասվել է, այդ կառույցների մեջ կազմիչներից մեկը գլխավորն է, որի անունով էլ որոշվում է տվյալ կառույցը։ Այսպես, կարող են լինել դերբայական դարձված, ածականական բառակապակցություն, գոյականական բառակապակցություն և այլն։

Բացահայտիչը ամենից շատ արտահայտվում է գոյականական բառակապակցություններով։ Ընդ որում կառույցը կարող է լինել և՛ միակազմ, և՛ երկու կամ ավելի աստիճանների։ Այսպես, հետևյալ նախադասություններում առկա են միակառույց բացահայտիչներ՝ արտահայտված գոյականական բառակապակցությամբ։

«Դեմը քաղաքն էր տարածվել՝ հազարամյա մի թշնամի» (Զ, 251)։ «Նայում էր իր առջև խռնված բազմության՝ հարազատ շինականներին, ոտաբոբիկ գեղջկուհիներին» (ԴԴվ, 679)։ «Նրանց հայացքի առջև բացվեց լեռնաշխարհը՝ իր հմայիչ տեսարաններով՝ երկնաձիգ, ժայռակող սարերով, թրատված կիրճերով, մթին, անհատակ ձորերով» (ԲՍՍ, 48)։

Բացահայտչի դերում կարող են հանդես գալ նաև գոյականական երկաստիճան, եռաստիճան և բազմաստիճան կառույցներ։ Օրինակներ՝

«Նշանտուրի ժամանակ Անանիին ցույց էին տվել վրացական հագուստով— (Թշերի այս ու այն կողմը) || կախված կավիքներով, գլխին դրած || թասակրավով| և այլն» (ՆԴ, 1, 139)։ «Մեսրոպը բնիկ տարոնեցի (մշեցի) էր՝ || Հացիկ կոչված || ավանից|, || Վարդան անունով || մի աղնվականի որդի|» (Ր, 7, 78)։ «Շահյանից ոչ հեռու, |մի || բոլորովին առանձնացած || սեղանի մոտ|, լուսամուտի առաջ|, իրար դեմուդեմ նստած էին Բաղենյանն ու լեհացի կինը» (ՆԴ, 3, 216)։ «Դու ծնվեցիր այն գիշեր, այն կռվի գիշեր, Գուցե || հերոս հայրիկիդ մեռնելու || պահին|» (ԳՍԸԵ, 265)։ «Սոնան էր, || զառ մանդիլով || նորահարսը|, || լույս ատամներով || այն աղջիկը|, որ այնպես զրնգուն ծիծաղում էր» (Բակ., 229)։

Բացահայտիչը կարող էր արտահայտվել նաև այլ բնույթի շարահյուսական կառույցներով՝ միակառույց կամ բազմաստիճան։ Օրինակներ՝

«Այդ կինը Սեղան էր, թագուհու գորովագութ դայակը, || գլյակում եղող || կանանց մեջ ամենից բարին և ազնվասիրտը|» (Մուր., 4, 11)։ «Վարդանը հիշեց իր պատրաստությունները՝ մինչև Համազասպ եղբոր ուժասպառվելը հոգնությունից» (ԴԴվ, 407)։ «Զորագունդը՝ զինվոր ու շինական միասին՝ Արտակ Մոկացի, Արթեն քեռու և Վարդի գլխավորությամբ ճանապարհ ընկավ» (ԴԴվ, 609)։ «Այսպես մի անգամ էլ, շատ տարիներ առաջ, ճոնչաց այգու դուռը» (Բակ., 229)։ «Դա կյանք է, այդպես մեռնելը» (ԴԴվ, 608)։ «Շտապում էր թագուհուն տված յուր խոստումը կատարելու, այն է՝ նշանակված ժամանակին Երազգավորս վերադառնալու» (Մուր., 4, 88)։ «Ի՞նչ իմաստություն էր մի այնպիսի փորձված հին զինվորի համար նման գրոհը—խելահեղորեն, || առանց վերջը մտածելու || || իր փոքրաթիվ ուժերով ||

խրվելը (երեք չորս անգամ) || մեծաթիվ || զորաբանակի մեջ |» (ԴԴվ, 700)։

Յուրահատուկ է այն դեպքը, երբ դերբայական դարձվածը դառնում է ամբողջ նախադասության բացահայտիչ։ Օրինակներ՝

«Վարդանը բացատրեց, որ վտանգը շատ լուրջ է՝ խմբովին գնալ պարսից Դուռը, կանգնել արքայական ատյանի առջև» *(ԴԴվ, 253)։ «Վասակի սուրհանդակի խելքը ավելի էր կտրել՝* դիմել հայոց այրուձիին» *(ԴԴվ, 274)։ «Ապա նա սկսեց ըմպել՝* դառնությամբ թմբեցնել իր ներքին խռովքը» *(ԴԴվ, 427)։*

Ի միջի այլոց, անորոշ դերբայի կառույցով արտահայտված բացահայտիչը կարող է նաև նախադաս լինել։ Օրինակ՝

«Միայն չզրկվել իրենց վերադաս տիրոջ շնորհից,— *Ջսպանակի պես Այս միտքն էր նրանց վերուվար հոնում» (ՊՍԵԺ, 4, 249)։* «Այդպիսի հրեշավոր մի բան հրապարակ շնանել, հանձնական մի սեփականություն հափշտակողի, մատաղ մի աղջկա լլկողի և ապա գազանաբար սպանողի՝ հասարակաց դատարանին շնանձնել — *այդ ես չեմ կարող հասկանալ» (ՆԴ, 3, 108)։*

Երբեմն անորոշ դերբայով կառույցը, ձևով բացահայտիչ լինելով, կարող է մեկնաբանվել նաև իբրև որոշիչ (որը իրական հատկացուցիչի փոխարեն է հանդես գալիս)։ Օրինակներ՝

«Եվ սիրով ընդունեցի բարեկամիս առաջարկը՝ ուսուցիչ լինել այդ հեռու գյուղում» *(Բակ., 118)։ «Սա եկել է հոր կոչին՝* գալ և կռվել հայրենիքի փրկության համար» *(ԴԴվ, 381)։ «Դեռ հնագույն ժամանակներից սովորություն է մնացել՝* ճնձել լուսնյակով, *կամ* գիշերել հենց դաշտում, ծեգին վեր կենալ, շոքել արտի կամ խոտհարքի բիլին» *(ԲՍԱ, 4,)։ «Վարդանի խստաբեր պահանջը՝* իր մոտ լինել շարունակ՝ *խելքահան էր անում երիտասարդ իշխանին» (ԴԴվ, 443)։ «Միհրներսեհը կրկնեց իր խորհուրդը՝* դիմել Վարդանին» *(ԴԴվ, 653)։*

Որոշիչը ցույց է տալիս գոյականով արտահայտված անդամների հատկանիշը, որակը, քանակը։ Իր իմաստով որոշիչը շատ չի տարբերվում բացահայտչից, ինչպես և հատկացուցչից։ Սակայն ձևով վերջինները առանձնանում են, և որոշիչը չի շփոթվի նրանց հետ։ Ինչպես հայտնի է, որոշիչը կարող է դրսևորվել և՛ չտրոհված, և՛ տրոհված ձևով։ Իմաստային ի՞նչ յուրահատկություն ունի տրոհված որոշիչը։ Եթե մի կողմ թողնենք չափածո խոսքի մեջ շարադասական և այլ հանգամանքներով պայմանավորված տրոհումը, ապա պետք է նշել, որ տրոհված որոշիչը, իմաստային ինքնուրույնություն ունենալով հանդերձ, հիմնականում արտահայտում է լրացուցիչ նրբերանգ, որը չտրոհված լրացումով հնարավոր չէ արտահայտել։ Բառակապակցություններով արտահայտվող որոշիչն առավել չափով հակված է տրոհվելու։

Տրոհված որոշիչը կարող է արտահայտվել այն բոլոր միջոցներով, որոնցով արտահայտվում է չտրոհվող որոշիչը։ Ընդ որում տրոհված որոշչի դերում կարող են հանդես գալ շարահյուսական տարբեր տիպի կառույցներ։ Նշենք տրոհված որոշչի դրսևորման տարբեր ձևերը։

ա) Ածականն իբրև տրոհված որոշիչ.— Տրոհված որոշչի դերում ածականը կարող է հանդես գալ և՛ միայնակ, և՛ այլ ածականի հետ զուգակցված, ընդ որում վերջինն ավելի շատ է հանդիպում։ Մասնավորապես միայնակ ածականի տրոհումը բնորոշ է չափածոյի լեզվին, թեև բացառված չէ նաև արձակում այդ լրացման գործածությունը։ Օրինակներ՝

«Ու ծուխը, կապույտ, բարձրանում է վեր» (Զ, 231)։ «Արևը, բորբ՝ մայր էր մտնում արևմուտքում» (Զ, 249)։ «Ու կայտառանը՝ ճաղրանդամ, իրիկնային կարմիր մուժում, Հաղթ նստել էր նրա առաջ, որպես նրան հսկող մի շուն» (Զ, 251)։

Երբեմն տրոհված կարող են լինել զույգ ածականներ՝ առանց բաղհյուսական շաղկապի։ Օրինակներ՝

«Դեռ ի՞նչ գանձեր— անհուն, անծիր— պիտի հանես դու աշխարհ» (Զ, 177)։ «Բացվում են վայրի վարդերը՝ դեղին, սպիտակ» (Բակ., 77)։

Տրոհված մեկից ավելի միայնակ ածականները չափածո խոսքում կարող են հանդես գալ սաստկացման հնչերանգով առանձնացվող շաղկապներով։ Օրինակ՝

«Ե՛վ մտքերիդ մեծ, և՛ հույզերիդ Իջել է մի նոր իմաստություն՝ Ե՛վ պայծառ, և՛ ջինջ, և՛ մտերիմ» (Զ, 101)։

Սակայն շատ են այն դեպքերը, երբ զույգ ածականները բաղհյուսված են տրոհվում։ Օրինակներ՝

«Ու մտածմունքները՝ տխուր ու անմխիթարական, նորից պաշարեցին նրան» (ՆԴ, 1, 76)։ «Երաղն էլ, նուրբ ու խուսափուկ, վառաղ եղավ, անցկացավ» (ՀԹ, 1, 154)։ «Ո՞վ գիտի, գուցե հենց էս դիշեր էլ Իգիթ ոսոխներն, անհաշտ ու համառ, Մեկմեկու հոտից ոչխար են քշել» (ՀԹ, 2, 59)։ «Ու կրակը այդ կարմրակիզ—անհանգիստ ու վիթխարի— Մի արնագույն կետ է կարծես ուղեղի մեջ խելագարի» (Զ, 254)։ «Ուներ բարի նա մի մայր՝ ծեր ու չքավոր» (Զ, 419)։ «Մի ճերմակ ամպ, թափանցիկ ու անձև, հանդարտ լողում էր լազուրի մեջ» (Բակ., 98)։ «Նեղլիկ մի փայտե դուռ, մշտապակ ու խուլ՝ պահում էր հետաքրքրվող աչքերից այդ այգու ներքին կյանքը» (ԴԴվ, 76)։

Տրոհված որոշիչները կարող են արտահայտվել ածականական բառակապակցություններով, որոնք կարող են լինել ինչպես միակազմ, այնպես էլ երկաստիճան և ավելի կազմիչներով կառույցներ։ Օրինակներ՝

«Պատի ժամացույցի լեղվակը, հարատև շարժուն, հընչեցնում էր մութ սենյակի լռության մեջ իր չափաբերական զարկերը» (ՆԴ, 3, 200)։ «Սա մի ընդարձակ և բոլորշի սենյակ էր, հնամակ քարաշեն» (Մուր., 4, 17)։ «Եվ մատներով իր՝ արդեն անուժ՝ Դեռ գուրգուրում էր հեռու մի հուշ» (Զ, 381)։ «Այս կյանքը փառք էր թվում նրան, Անհուն դը-

բախտ մի՝ հուշով նախշուն» (Զ, 386)։ «Տաքանում են Օրանջիայի քարերը և խլեզները, փորի մաշկը դեղին, պառկում են տաք քարերի վրա» (Բակ., 77)։ «Արթին պապիս նստելու տեղը կամարակապ դարբասի նիշն էր, որի ներքևի մասը, գետնից մեարաշափ բարձր, կոկիկ տաշած էր» (Բակ., 130)։ «Որոնց առաջնորդում էր մի հասակավոր կին՝ շատ նման զորականին» *(ԴԴվ, 8)։ «Մինչդեռ անվտանգ խուցի դարակին ննջում են տաղեր՝* կարոտ հորինման» *(ՊՍեժ, 4, 33)։ «Ամեն զինվոր,* ինձ պես անհուն, *Սպասում էր առավոտին» (ԳԷԱՏ, 356)։*

Ածականական բառակապակցությունները ևս կարող են տրոհված լրացման դեր կատարել բաղհյուսված։ Օրինակներ՝

«Մինչև լսեցի մի մեծ պարոնի, Մեր մեջ շատ խելոք ու շատ անվանի» *(ՀԹ, 2, 93)։ «Տերրասաձև բարձրանում են ժայռերը՝* մեկը մյուսից խոժոռ և ահռելի» *(Բակ., 141)։ «Նրան ազդում էր խանդության ազնիվ ու բնական հպարտ դեմքը՝* կյանքի հոգսերից ու աշխատանքից թախծալի և մտախոհ» *(ԴԴվ, 388)։*

Ածականների հետ միասին բաղհյուսված կամ առանձին որոշիչ կարող են դառնալ նաև այլ խոսքի մասեր՝ ինչպես դերբայներ, գոյականներ և այլն։ Օրինակներ՝

«Այլ քրտինք է դառնում՝ մաքրող ու զով» *(Զ, 121)։ «Դրանք վանականներ էին՝* երկարահեր, առատամորուք, մոլեռանդ դեմքերով, քրտնամխած» *(ԴԴվ, 99)։ «Եվ իր կյանքը ամբողջ եղել է սին մի հարց՝* Անենպատակ ուղղած և ամպաշեն» *(Զ, 488)։*

Տրոհված որոշիչը կարող է արտահայտվել նաև դերբայական դարձվածով։ Այդ դերով կարող են հանդես գալ դերազանցապես հարակատար, ենթակայական, երբեմն էլ անորոշ դերբայները։ Նման դեր կարող են կատարել նաև առանձին դերբայները։ Օրինակներ՝

«Այդ սենյակները՝ զարդարված գորգերով ու օթոցներով, *ծառայում էին սենեկապան նաժիշտներին» (Մուր., 4,*

18)։ «Լուսամուտի ծիրանեգույն վարագույրները, զարդարված ծանր, ոսկեթել ծոպերով, *ցած էին թողած» (Ր, 7, 26)։ «Եղբայրասպանությունը մի ոճիր է,* ասածուց և մարդկանցից անիծված» *(Մուր., 4, 158)։ «Քանի նա չէր դավաճանել ինձ, ես մի տրծիվ էի՝* ճոգով ու մտքով բարձունքներում սավառնող, *այժմ դարձել էի թևերը կտրած ողորմելի մի ճնճղուկ՝* գետնի վրա ցատկող» *(ՆԴ, 1, 117)։ «Հնչում է թեկուզ շնչին մի էջ Մեր կյանքից՝* անցած այնքան բեկբեկ» *(Զ, 82)։ «Որ չի վերացել դեռ կյանքից ներկա Եղկությունը՝* մեր խոհերին նստող» *(Զ, 111)։ «Հիմա էլ Մթնաձորում մուգ-կանաչ մաշկով խլեղներ կան,* մարդու երես չտեսած, մարդուց երկյուղ չունեցող» *(Բակ., 3)։ «Օջախի մոտ նստած կինը թվում էր քրմուհի՝* եռոտանու առաջ ծխի շարժումները գուշակող» *(Բակ., 194)։*

Տրոհված որոշիչը, ինչպես և տրոհված ու չտրոհված այլ անդամներ, երբեմն արտահայտվում է այնպիսի կառույցներով, որոնց գլխավոր բառը հավասարապես դրսևորում է ածականի և դերբայի իմաստներ՝ վերջինիս գերակշռումով, սակայն ձևով ավելի շատ գոյականի է նման։ Այդպիսի բառերից կարելի է նշել մխիթար, ողող, երեր, նանաչ, ծանրաբեռն, շրջափակ *և այլն։ Այս կարգի բառերն ու կառույցները երբեմն հանդես են գալիս իբրև չտրոհված որոշիչ։ Օրինակներ՝*

«Աթա տպերը մենակ նստած հիշում էր իր նանաչ *թուրքերին» (Բակ., 337)։ «Միհրներսեհը տատանվում էր* նրան վերաբեր *վճռի մեջ» (ԴԴվ, 208)։ «Զննում էր* նրանց վզներից կախ *ուլունքները» (ԴԴվ, 388)։ «Հեռուն,* լեռներով շրջափակ *մի ընդարձակ դաշտավայրում մեծ անտառի պես սևացել էր թշնամու զորաբանակը» (ԴԴվ, 681)։*

Նույն կարգի կառույցները հանդես են գալիս նաև իբրև տրոհված որոշիչ։ Օրինակներ՝

«Բայց ժողովուրդը երկա՞ր իր երդերի մեջ երգեց Քաջի մասին էն խիզախ՝ ժողովրդին մխիթար» *(Զ, 259)։ «Եվ ընկավ Կարմիր հրապարակը՝* բանվորներով ողող» *(Զ, 355)։*

Տրոհված որոշիչը կարող է արտահայտվել նաև այլ խոսքի մասերով ու նրանց բառակապակցություններով։ Այսպես, այդ դերում կարող է հանդես գալ գոյականական բառակապակցությունը։ Օրինակներ՝

«Ես մի ընկեր ունեի՝ Լիպո անունով» (Զ, 418)։ «Եվ այդ պահին էր, որ աշխարհ եկավ Նա՝ Այր մի՝ Մեսրոպ Մաշտոց անունով» (ՊՍԵԺ, 4, 225)։ «Առյուծ՝ Մահերը, զարմով դյուցազուն, Քառասուն տարի իշխում էր Սասուն» (ՀԲ, 2, 97)։ «Սիրում էին այդ երկու երգիչներին հարազատ, Երգիչներին՝ հոգեթով հույզերի աղբյուր» (ԳՍԸԵ, 365)։ «Ու դեռ մնում է այն հողաշեն ակումբը, եղեգնյա կտուրով, և ծփում է վարագույրը» (Բակ., 244)։ «Բազմամիլիոն մարդիկ, ընչազուրկներ, ճորտեր, Պրոլետարներ՝ ամեն ազգության ու ցեղի՝ Իրար հանդեպ կեցած տարիներ է արդեն, Որ լափում են իրար» (Զ, 134)։ «Հետևից գալիս էր մի սպիտակ ուղտ՝ արտասովոր գեղեցկության» (ԴԴվ, 568)։ «Պատի վրա շինված թարեքներին շարվում էին օղու, կոնյակի և գինու շշեր՝ զանազան ձևի ու չափի» (Ա. Մանվելյան, Իմ ծանոթները, 1966, էջ 46)։ «Երիտասարդ զորականը՝ վարպետ իր գործում՝ անկարող եղավ ըմբռնել կատարվածի իմաստը» (ԴԴվ, 330)։

Տրոհված որոշիչը կարող է դրսևորվել նաև կապային կառույցներով։ Ընդ որում մեծ մասամբ լրացյալը բայանուն է լինում, և կապային կառույցը ըստ էության բայանվան խնդիր լինելով՝ միայն տրոհվելու հետևանքով է ձեռք բերում ինքնուրույն անդամի դեր (ինչպես տեսանք շարահյուսական կառույցների աստիճանական վերլուծությանը նվիրված գլխում՝ բայանունը իր լրացումներով հանդերձ է կատարում նախադասության մեկ անդամի դեր)։ Օրինակներ՝

«Ահա կրկին իմ դեմ ծաղիկներ ու կյանքեր՝ Քո գարունին բացված ծաղիկների նման» (Զ, 77)։ «Նրա անիրական աշխարհում միայն այդ կար՝ գյուղեր՝ խաղաղության մեջ, ծառեր՝ երգերի համար, ջրեր՝ որ ոռոգում են արտերը և պարտեզները, շներ՝ որոնք հաչում են լուսնի վրա, մարեներ՝

հաց թխելու համար, և գդրարներ, որոնք ձմեռը նստեին օջաներում, գզեին բուրդ և մինչև լույս հեքիաթներ պատմեին» (Բակ., 225)։ «Մրսած մատներով Պիտի նվագի հինավուրց տաղեր՝ Ի վերա սիրո, վասն խնդության, վասն մարդկային ոգու խենթության» (ՊՍՄԱՄ, 107)։ «Շքեղ երթիդ՝ դեպի բախտի ծառուղիներ վարդակոխ— ես՝ բանաստեղծ երկրի հայոց՝ հղում եմ խոսք սրտաբուխ» (Չ, 200)։ «Այդ չէ՞ր միթե հախուռն իր օրերի ուղին, Իր խոհերի, գործի ու տքնաջան Մաքառումի՝ ընդդեմ իր գոյության չարքաշ» (Չ, 484)։ «Չէր տեսել նման գրոհ՝ խելքից մոռից վեր» (ԴԴվ, 699)։

Տրոհված որոշիչը կարող է արտահայտվել նաև այլ կարգի կառույցներով։ Օրինակներ՝

«Դե ռուս տղա էր մի՝ ուր տարեկան հազիվ» (Չ, 353)։ «Նա դեռևս շատ ջահել կին էր, հազիվ քսան տարեկան, չթի հնամաշ դերիայով և գլխին մաքուր, սպիտակ աղլուխ փաթաթած» (ՆԴ, 1, 64)։

Գ. ՏՐՈՀՎԱԾ ՀԱՏԿԱՑՈՒՑԻՉ

Առհասարակ հատկացուցիչը հանդես է գալիս որպես չտրոհված անդամ։ Սակայն երբեմն հատկացուցիչն էլ կարող է տրոհվել, ընդ որում տրոհված հատկացուցիչը հիմնականում եռապաս է լինում։ Իհարկե չպետք է անտեսել այն հանգամանքը, որ հատկացուցիչը որոշչից իմաստով շատ չի տարբերվում, և որ կան սեռական հոլովով դրվող տրոհված որոշիչներ։

Հատկացուցչի տրոհումը ավելի հաճախ հանդիպում է չափածո խոսքում։ Օրինակներ՝

«Պատրաստել էին նրանից մի անձնվեր որդի՝ նախ հայրենիքի և ապա ծնողաց» (Ր, 7, 33)։ «Նրանք պատմում են մահացած սերը՝ Թիբեռների ու ծաղիկների» (ԳՍԸ, 156)։ «Լսում էին մեռաքսն իրենց բարձերին նստած Սիրունները մարմարե՝ խանի հարեմի» (ԳՍԸ, 370)։

Երբեմն տրոհված անդամը կարող է մեկնաբանվել հա-

վասարապես և՛ իբրև հատկացուցիչ, և՛ իբրև որոշիչ։ Օրինակներ՝

«*Վա՜ր նետեմ ցույն այս մաշված՝* բափառական պանդուխտի» *(ԳԷԱՏ, 29)։* «*Վեհի բոլոր ջանքը,* հաշտեցնելու հակառակորդներին, *անցավ ապարդյուն» (Մուր., 4, 86)։*

Երբեմն տրոհված անդամը հավասարապես կարող է համարվել և՛ հատկացուցիչ, և՛ բացահայտիչ։ Օրինակ՝

«*Ծխում էին ու ծխահոտը խառնում բանակի հատուկ հոտին՝* ձիու, կաշվի, մետաղի և բռնքի» *(ԴԴՎ, 458)։*

Դ. ՏՐՈՀՎԱԾ ՊԱՐԱԳԱՅԱԿԱՆ ՈՐՈՇԻՉ

Ինչպես նշվել է սկզբում, նախադասության մեջ կան շարահյուսական երկկողմանի կապ ունեցող անդամներ։ Դրանց առանձնահատկությունն այն է, որ մի կողմից լրացում են դառնում գոյականի, մյուս կողմից՝ բայի համար։ Իհարկե այդ երկկողմանի կապերից հիմնականը մեկն է։ Տվյալ դեպքում այդպիսի լրացումը առաջին հերթին վերաբերում է գոյականին։ Այսպես, «*Մի սպիտակ ձիավոր,* շրջապատված մի խումբ թիկնապահներով, *անդադար արշավում էր խռովյալ քաղաքի մի փողոցից դեպի մյուսը» (Ր, 7, 298) նախադասության մեջ* շրջապատված մի խումբ թիկնապահներով *տրոհված լրացումը առաջին հերթին* ձիավոր *գոյականի որոշիչն է, սակայն քանի որ այն կապված է նաև բայի հետ* (արշավում էր), *ապա ունի պարագայական երանգ։ Պարագայական որոշիչը սովորաբար արտահայտվում է այնպիսի կառույցներով կամ բառերով, որոնք հավասարապես կարող են կատարել որոշչի և պարագայի պաշտոն։ Պետք է նկատի ունենալ, որ պարագայական որոշիչը սովորաբար ընկնում է գոյականի և բայի միջև, սակայն դա պարտադիր չէ. այն երբեմն նաև ուրիշ շարադասություն է ունենում։ Պարագայական որոշչի դրսևորման սովորական միջոցը հարակատար դերբայով կազմված դարձվածն է։ Օրինակներ՝*

«Խեղդաման արված՝ *ընկած էր մի ծեր» (Զ, 227)։* «*Մի*

մարդ, երկար գերանդին ուսին դրած, դանդաղ քայլերով առջևից գնում էր դեպի ավանը» (Ր, 7, 71)։ «Հյուրերի յուրաքանչյուրի ետևում կանգնած էր մի-մի ծաղկապսակ պատանի, շքեղ կերպով հագնված» (Ր, 7, 110)։ «Նրանց հետևվում էր արքան, շրջապատված յուր գեղահասակ թիկնապահներով, որոնց փայլուն զրահները շողշողում էին արևի առաջ» (Մուր., 4, 82)։ «Վրաններից մի մարդ, մանգաղը գոտու մեջ խրած, գլուխը փաթաթած կեղտոտ թաշկինակով, մահակին հենվելով բարձրացավ բերդի քարափով» (Բակ., 192)։ «Ու ջերմ ըղձերս, բախտից հալածված, Ձեզ մոտ են թռչում հախուռն երամով» (ՀԹ, 1, 17)։ «Իսկ ճամփան, անծայր իրանը փռած, Թավալվում էր մի հսկա օձի պես» (Զ, 220)։ «Արևից չորացած հողը, տեղ-տեղ ճաքճքած, ագահությամբ ծծում էր ջուրը» (Բակ., 96)։

Հարակատար դերբայը երբեմն պարագայական որոշիչ կարող է դառնալ միայնակ։ Օրինակ՝

«Հետո մտավ ակումբը, ուր մի քանի Ուսանողներ՝ հարբած՝ բիլիարդ էին խաղում» (Զ, 432)։

Պարագայական որոշիչը կարող է արտահայտվել նաև ածականներով։ Ընդ որում երբեմն ածականը կարող է միայնակ լինել։ Օրինակներ՝

«Խելակորույս՝ կանչում էր անծայրածիր մի սիրտ» (Զ, 125)։ «Փողոցի անկյունում արդեն վառված լապտերը, հողմածեծ, ծռել էր գլուխը» (ՆԴ, 1, 45)։ «Մի քիչ առաջ, արյունաճաք. երբ դեռ դաշտում կռվում էին— Մոտ էր թվում քաղաքն այնքան երկաթուղու կայարանին» (Զ, 253)։

Կարող են լինել նաև բաղհյուսական կապակցությամբ հանդես եկող զույգ ածականներ՝ պարագայական որոշչի դերում։ Օրինակներ՝

«Նիհար ու գունատ՝ էմման պառկած էր մահճակալի վրա» (ՆԴ, 2, 287)։ «Կանգնել է, ծանր ու անառիկ, Քարե այն տունը» (Զ, 438)։ «Երգը ընդաց բանակի՝ հազարանայն ու զվարթ» (Զ, 258)։

Առավել շատ հանդիպում են ածականական բառակա-

պակցություններով արտահայտված պարագայական որոշիչներ։ Օրինակներ՝

«*Տիկինը,* անտեղյակ յուր դժբախտությանը, *զվարճանում էր արքայական զբոսանքներով» (Մուր., 4, 11)։* «Ավելի դիմացկուն աղեռաների, *վարժ դալիս էին գեղջուկները» (ԴԴվ, 396)։* «Անձնական նրջանկությամբ ապահով՝ *այժմ նա բարեհաճ և տրամադիր էր դեպի ուրիշի, անգամ ռամկի վիշտն ու ուրախությունը» (ԴԴվ, 449)։* «Ոչինչ ասելու անկարող՝ *Արսենը սեղմեց բոլորի ձեռները» (ԴԴվ, 498)։ «Հայոց այրուձին հասավ ճակատ, ուր տեղավորված էին պարսից զորքերը՝* միշտ ենթակա հուշաների անակնկալ հարձակումներին և պատրաստ նույնը դարձնելու նրանց» *(ԴԴվ, 538)։ «Ամպ-եղնիկները փախչում են հեռու՝* ներմակ բաշերը կրակով օծուն» *(ԳԷԱՏ, 72)։ «Իսկ քաղաքից դեպի հարավ՝* անատեսիլ հաղթական՝ *երևում էր երկաթուղու կայարանը հսկայական» (Զ, 251)։ «Ու* միշտ հնազանդ հնոց ադաթին՝ *Ամբոխի առջև իգիթն իր օրում Գետին չի զարկիլ ընկեր իգիթին» (ՀԹ, 2, 56)։*

Երբեմն ածականները պարագայական որոշչի դերում կարող են հանդես գալ այլ կառույցների հետ բաղհյուսված։ Օրինակ՝

«*Կարծես լեռներից մի ամբողջ զորաբանակ էր իջել՝* բոթիկ, մերկ և առանց գլխարկի» *(Բակ., 320)։*

Ինչպես տրոհված որոշչի դեպքում էր, այնպես էլ պարագայական որոշիչը կարող է արտահայտվել այնպիսի կառույցով, որի գլխավոր բառը ածականի և դերբայի իմաստներ համատեղելով՝ ձևով տարբեր է նրանցից։ *Օրինակներ՝*

«*Եվ թվում էր՝* ունկնդիր վշտամորմոք *մի կանչի, Նրա կուրծքը թախիծով պիտի հառաչեր» (ԳՍԸԵ, 377, 1974)։ «Մանկական ձայնը՝* սկզբում կերկեր, *վայրկյաններ հետո ինքն իրեն գտավ» (ՊՍԵԺ, 19)։ «Ու խելառ,* սարսափից երեր, *Հավերժի մուժում անուղի — Տանում էր ժամանակը ծեր դիակը իր նեխած տղի» (Զ, 291)։*

Պարագայական որոշիչը կարող է արտահայտվել նաև

գոյականական և այլ կարգի բառակապակցություններով։ Օրինակներ՝

«Երկու միագույն բարակներ, բանկագին վզկապներով, վազում էին իշխանի առջևից» (Ր, 7, 67)։ «Զկների վտառներ էին շրջում՝ արծաթ մեջքերով և կարմիր խալերով» (ՄՍՍԿ, 36)։

Բնորոշ է, որ պարագայական որոշիչը հանդես է գալիս տրոհված։ Բերված օրինակներում հենց այդպես է։ Սակայն երբեմն չեն տրոհում, և պարագայական որոշիչը իբրև սոսկ որոշիչ մեկնաբանելու հնարավորություն ստեղծում։ Օրինակներ՝

«Նայում են կանգնած հարս ու աղջկերք» (ՀՊ, 2, 56)։ «Թշշում է ձորը արյունով լցված» (ՀՊ, 2, 64)։ «Այնտեղից հանեց հոր պարիկը թղթի մեջ խնամքով փաթաթած և ոսկի հորը» (ՆԴ, 1, 151)։

Ե. ՏՐՈՀՎԱԾ ՊԱՐԱԳԱՆԵՐ

Լրացումների մեջ ամենից շատ տրոհման հակում ունեն պարագաները։ Դա բացատրվում է երկու հանգամանքով։ Առաջինն այն է, որ պարագաներով հատկություն է արտահայտվում (գործողության հանգամանքը գործողության հատկությունն է), իսկ հատկություն ցույց տվող անդամները՝ որոշիչը և պարագան, առաջին հերթին են տրոհվում, քանի որ տրոհումը կիսատորոգումային բնույթ է տալիս լրացմանը։ Երկրորդ հանգամանքը այդ լրացումների թույլ կապն է լրացյալի հետ։ Սովորաբար տրոհման հնարավորություն ունեն այն լրացումները, որոնք ուժեղ կապի մեջ չեն լրացյալի հետ։ Հենց այս հանգամանքն էլ նպաստում է պարագաների տրոհմանը։ Նկատելի է, որ խնդրային լրացումները, որոնց կապը լրացյալի հետ ուժեղ է, սովորաբար չեն տրոհվում (համենայն դեպս նրանց տրոհումը պայմանավորված է շարադասական, խոսքի տեսակի հանգամանքներով. դերազանցապես բանաստեղծական խոսքում

է լինում, և մեծ մասամբ հարկադրական տրոհում է)։ Պարագաների մեջ էլ տրոհման հակում առանձնապես դրսևորում են ձևի և վիճակի իմաստ ունեցողները, որոնք արտահայտվում են բաղմազան միջոցներով։ Տրոհված պարագաների ուսումնասիրությունը երևան է հանում մի հետաքրքրքրական երևույթ։ Այդ այն է, որ եթե չտրոհված պարագաների դեպքում այս կամ այն չափով մի ձևի մեջ մեկ հարաբերություն է արտահայտվում, ապա տրոհված պարագան հաճախ ցուցադրում է մեկից ավելի իմաստներ։ Նույնիսկ այն դեպքում, երբ տրոհված լրացումը մեկնաբանվում է պարագայական մեկ իմաստով, դարձյալ ինչ-որ չափով լրացուցիչ իմաստ կարելի է վերագրել այդ անդամին։

ա. Տրոհված ձևի պարագա

Տրոհված ձևի պարագան կարող է արտահայտվել բոլոր այն միջոցներով, որոնցով դրսևորվում է չտրոհված ձևի պարագան։ Միայն թե այս դեպքում որոշ միջոցներ պակաս չափով են գործածվում, իսկ այլ միջոցներ՝ առավել հաճախ։ Այսպես, չտրոհված վիճակով ձևի պարագա առավել շատ դառնում են մակբայները, մինչդեռ տրոհված ձևի պարագան քիչ դեպքերում է արտահայտվում մակբայներով։ Ածականները ևս հազվադեպ են դառնում տրոհված ձևի պարագա։

Տրոհված ձևի պարագան առավել շատ արտահայտվում է դերբայական կառույցներով և առաջին հերթին անորոշ դերբայի գործիական հոլովով։ Օրինակներ՝

«Գալիս է՝ ճեռվից բարձր գոռալով» (ՀԹ, 2, 118)։ «Ասացին՝ ճանգիստ ճոգոց ճանելով» (ՀԹ, 2, 118)։ «Իր մանաբեր բույնը բափելով՝ սուլում էր դառնաշունչ քամին» (ՀԹ, 1, 330)։ «Ամրոցի առջևից՝ փրփրադեզ ալիքները դարևանդներից գահավիժելով՝ հոսում էր Ազատ գետի սրընթաց մի վտակը (Մուր., 4, 8)։ «Որ թվում էր ինձ, թե ջինջ կապույտում՝ վերջին հրաժեշտ տալով աշխարհին՝ ճախրում էր նրա հեռացող հոգին» (ՀԹ, 2, 81)։

Տրոհված ձևի պարագան կարող է արտահայտվել նաև լրացում չունեցող անորոշ դերբայի գործիականով։ Օրինակներ՝

«Շփում էր ճակատը և, տանջվելով, *աշխատում էր հիշել մի բան» (ՆԴ, 3, 164)։ «Տերևները դողդողում էին, դեղնում ու իրանց իրանց թափվում, և* թափվելով՝ *տխուր շըրշում» (ՀԹ, 1, 330)։ «Մահ, մեռնել, շիրիմ—թեթև հեռացան, Ու* հեռանալով՝ *փոխվեցին դարձան Ամպեր, սավերներ, կետեր երերուն» (ՀԹ, 2, 83)։*

Տրոհված ձևի պարագան երբեմն արտահայտվում է հարակատար դերբայով կազմվող կառույցով։ Այստեղ պետք է նկատի ունենալ, որ հարակատար դերբայը, իբրև վիճակ դարձած գործողություն ցույց տվող բառաձև, ավելի շատ գործածվում է վիճակի պարագայի դերում։ Այնպես որ ձևի իմաստով մեկնաբանվելու դեպքում էլ հարակատար դերբայը և նրանով կազմվող կառույցը ինչ-որ չափով վիճակի իմաստ են արտահայտում։ Օրինակներ՝

«Այժմ, Շապուհի *ձեռքում մի անարգ գործիք դարձած, գալիս է ծածկելու հայրենի երկիրն հրով ու արյունով» (Ր, 7, 54)։ «Հագած, կապած զենք ու զրահ, Ձիանք հեծած ամենի, Ահա եկել հավաքվել են Կորիճները Կովկասի» (ՀԹ, 2, 225)։*

Տրոհված ձևի պարագան ավելի շատ արտահայտվում է կապային կառույցներով։ Ընդ որում կապի խնդրի դերում կարող են հանդես գալ ինչպես դոյականներ, այնպես էլ դերբայական դարձվածներ։ Պետք է նշել, որ այս դերում դերպանցապես հանդես են գալիս իբրև, ինչպես, որպես, նման, պես, առանց *կապերը։ Օրինակներ՝*

«Տարիներ հետո, իմացա, որ տնից դուրս արած, թափառում է մայրաքաղաքի փողոցներում, իբրև *պրոֆեսիոնալ ինտելիգենտ մուրացիկ և արբեցող» (ՆԴ, 2, 543)։ «Այն կատաղի հողմի մրնշաղի միջից* Շառաչելով *կանչող այն* քամու պես— *Քեզ հրկիզեց կյանքում անեղրությամբ վերջին» (Զ, 126)։ «Զարչու կերպ մտած,* ինչպես վիշապ օձ, *Անցնում էր ինքը՝* Շահ Աբաս արքան *» (ՀԹ, 1, 247)։ «Եվ,*

գնդերի հետ եղած գրոհի, Որպես մի կարմիր ամազոնուհի, *Դու շեփորեցիր կռիվ ու պայքար» (Զ, 129)։ «Եվ հեռուներում քո երգն էր թնդում,* Ինչպես վիթխարի հաղթանակի *երգ» (Զ, 129)։* «Առանց մի խոսք արտասանելու՝ *ձեռքը ծոցը կոխեց, հանեց հուշատետրը» (ՆԴ, 1, 127)։ «Քամին մոնչում էր, և անձրևային տարափը,* կարկուտի գնդակների նման, *զարկում էր նրա բորբոքված երեսին» (Ր, 7, 20)։ «Մահակ Սևադան հսկում էր այդտեղ՝* ինչպես մի հզոր առյուծ» *(Մուր., 4, 97)։* «Ինչպես փոքրորիկ սաստիկ սրընթաց. *Գյուղից սլացան մի խումբ կտրիճներ» (ՀԹ, 2, 64)։ «Էսպես* անհավոր առյուծի նման, *Սասմա սարերում նստած էր իշխան» (ՀԹ, 2, 97)։ «Կալ ու մարագի կողքին տուն կշինի քարափի գլխին և կապրի՝* հարևանի աչքից հեռու, *պարիսպների հետևում» (Բակ., 51)։*

Երբեմն տրոհված ձևի պարագան արտահայտվում է մակբայով, ինչպես և ածականով։ Ընդ որում դրանք կարող են դարձածվել նաև բաղհյուսված։ Օրինակներ՝

«*Ես՝* եղբայրորեն ու մտերմաբար՝ *Ողջունում եմ ձեզ անցած խավարի իմաստուն, տխուր ժպիտով բարի» (Զ, 7)։ «Նլանք՝* մեկտեղ ու միասին՝ *մենք պայքարի մի վսեմ» (Զ, 201)։ «Շատ ընկերներ գրկեցին մահ՝* Արիաբար ու հաղթական» *(ԳՍԸՆ, 253)։ «Հոմերի, Գյոթեի հետ մի օր՝* հավասար՝ *նստել է քեֆի» (Զ, 139)։ «Կարող ես դու՝ երգիր նրան՝* Իր հույզերով մեծ ու մաքրիկ» *(Զ, 116)։ «Դղյակներում է ապրում երգը՝* արից առանձին» *(Զ, 182)։ «Եվ անցնում էինք՝* անկումին գիտակ» *(Զ, 235)։ «Զինվեցեք՝* պատրաստ մարտին մեծ պատերազմի» *(ԴԴվ, 337)։ «Քայլում եք դուք աշխարհի, տիեզերքի վրայով,* Ուրախությանն ու վշտին սառնասիրտ ու անտարբեր» *(ԳՍԸՆ, 183)։ «Գնում էինք մենք՝* կայտառ և ուրախ՝ *Կռվելու, կռվով մեռնելու համար» (Զ. 230)։ «Եվ լսեց երկիրը նրան, Եվ հառնեց՝* ըմբոստ ու վեհ» *(Զ, 468)։ «Վրնջում էին ձիերը՝* մետաղաձայն ու երկարաձոր» *(Բակ., 207)։*

Գոյականական որոշ բառակապակցություններ ևս,

մասնավորապես գործիական, երբեմն էլ տրական հոլովով կազմված, կարող են դառնալ տրոհված ձևի պարագա։ Ի միջի այլոց, հենց այդ հոլովաձևերն են հիմնականում շտրոհված ձևի պարագայի պաշտոն կատարում։ Օրինակներ՝

«Գարնան երկու ճուտեր մի հասկի համար կռվում էին՝ կտուց կտուցի» (Բակ., 232)։ «Ուրիշները, սրտի դողով, Ջեկուցման հետ բեմ են հանում նվագախումբ, պարեկ, երգիչ» (ՊՍԵԺ, 4, 167)։ «Երբ փորձեցի՝ մանուկ ըմբոստությամբ վանմ՝ Վրեժխնդիր լինել հարվածներով համառ» (Զ, 459)։ «Մութ անձավներից, հազար ձևերով, Քաջքերն անհանգիստ՝ հրապիտ ձայներով Դևի հառաչքին արձագանք տալի, Ծաղրում են նրա գոռոցն ահռելի» (ՀՊ, 2, 13)։ «Եվ երգում էր մեկը՝ հզոր, հուժկու ձայնով աճեղազոշ» (Զ, 252)։

բ. Տրոհված վիճակի պարագա

Վիճակի պարագան, որն ըստ էության ձևի պարագայի մի տարատեսակն է (քանի որ վիճակը ձևից շատ չի տարբերվում), ավելի հաճախ է հանդես գալիս տրոհված։ Վիճակի պարագայի յուրահատկությունն այն է, որ ցույց է տալիս գործողություն կատարողի կամ գործողության առարկայի վիճակը գործողության ընթացքում։ Եթե համեմատենք «Նա տուն էր գնում վազելով» և «Նա տուն էր գնում պայուսակը ձեռին» նախադասությունների մեջ եղած պարագաները, ապա պարզ կդառնա, որ առաջինում վազելով գործողության ձևն է ցույց տալիս, իսկ երկրորդում՝ պայուսակը ձեռին՝ գործողություն կատարողի վիճակը գործողության ընթացքում։ Սա ավելի ցցուն կարող է երևալ, եթե նույն նախադասության մեջ երկուսն էլ գործածենք։ Այսպես, «Նա փայտը ձեռքին վազելով գնում էր» նախադասության մեջ փայտը ձեռին գործողություն կատարողի վիճակն է ցույց տալիս, իսկ վազելով՝ գործողության կատարման ձևը։

Վիճակի պարագան դրսևորման քիչ միջոցներ ունի։

Առաջին հերթին պետք է նշել տրականով կազմված գո-

յականական բառակապակցությունները, որոնցում տրականը ըստ էության դեղչված դերբայի լրացումն է եղել։ Այսպես, բերված նախադասություններում առկա է այդպիսի կառույց (պայուսակը ձեռքին, փայտը ձեռքին)։

Վիճակի պարագան ավելի հաճախ գործածվում է սահմանափակ թվով բայերի լրացման դերում, ինչպես՝ տեսնել, թողնել, նստել, կանգնել, քայլել, քնել և այլն։ Օրինակներ՝

«Այն ինչ՝ աղջիկն առաջ եկավ՝ Կարմիր խնձորն իր ձեռին» (ՀԹ, 1, 126)։ «Ու ձորի գլխին, ձեռքը նակատին, Կանչում է, կանչում անահ զավակին» (ՀԹ, 2, 48)։ «Անհուն վիշտը ցամաքած դեմքին՝ մայրը նստած է մեռնող որդու կողքին» (ՆԴ, 1, 42)։ «Մոսին՝ փայլկտուն խանչալը ձեռին՝ Ուզում էր մորթել նրան՝ աչքը բաց» (ՀԹ, 2, 58)։ «Ձեռքին կտրած գերանդի՝ անցնում էր մահն անկշտում» (Զ, 260)։ «Մեր տան պատշգամբից ես տեսա աղջկանը՝ ցախը շալակին» (Բակ., 121)։ «Հանգստանում էր հողմը բացատում՝ Ականջն ամպրոպի ազդանշանին» (ՀՍԲ, 1, 222)։ «Մի քիչ հեռու կանգնել էր մի աղջիկ՝ պարանի չափ բարակ նյուղը ձեռքին» (Բակ., 121)։ «Անճանաչ էր համարյա՝ զոռշ շինելն հագին» (Զ, 414)։

Բերված օրինակներում տրականով կառույցը ենթադրվում է որպես դերբայի ղեղչումով դերբայական դարձված։ Այսպես, ականջն ամպրոպի ազդանշանին լրացումը ըմբռնվում է իբրև ականջն ամպրոպի ազդանշանին պահած (բռնած և այլն)։ Այնպես որ տրականով կառույցը վերջին հաշվով դերբայական դարձվածի մի դրսևորումն է։

Նույն ձևով տրոհված վիճակի պարագայի պաշտոն կարող է կատարել գոյականի ներգոյական հոլովով կազմված կառույցը։ Այստեղ ևս առկա է բուն լրացյալ դերբայի ղեղչում։ Այսպես, երբ ասում ենք «Նա գնում էր՝ ցավը սրտում», ապա լրացումը ենթադրյալ պահած, ունենալով և նման դերբայների լրացում է եղել և նրանց ղեղչման հետևանքով է ստանձնել վիճակի պարագայի դեր։ Օրինակներ՝

«Մեծ Տիկինը աչքերը սևեռած, դողահար շրջումներում

ինչ–որ մրմունջներ՝ *գնում էր դեպի ամրոցամերձ բլուրը»* (*ԴԴվ, 373*)։ «Եվ աչքերում արցունք, *Բաղին սկսեց պատմել որդու մասին լսածը»* (*Բակ., 21*)։ «*Հնձան է մտնում ծեր Դիլան դային, Հոգում հեռավոր օրերի ցավը»* (*ՀՍՀԵՄ, 246*)։

Այս կառույցներից չեն տարբերվում կապային նույնարժեք կառույցները՝ տրոհված վիճակի պարագայի դերում։ Այսպես, նույն իմաստը կարելի է արտահայտել մի դեպքում «Մի մարդ էր անցնում գլանակը բերանում» *նախադասությամբ, այլ դեպքում՝ «Մի մարդ էր փախչում՝* գլանակը ատամների մեջ» *նախադասությամբ։ Օրինակներ՝*

«*Ոչխարը՝* գլուխը իրար շեմի մեջ՝ *որոճում է»* (*Բակ., 42*)։ «*Դրանք՝* իրանց անշարժ դրության մեջ՝ *ծառայում էին ավելի իբրև զարդ, քան թե սեղանի սպաս»* (*Ր, 7, 88*)։ «Ականջներիս մեջ ձեր երգը վայրի, *Մտնում եմ նորից անտառը մայրի»* (*ՀՍԲ, 1, 197, 1967*)։

Կապային այս տրոհված լրացումների յուրահատկությունն այն է, որ սրանք չտրոհված վիճակում լրացում չեն դառնում։ Մինչդեռ ինչպես դերբայական դարձվածը, այնպես էլ դերբայի կրճատումով կառույցները կարող են դառնալ նաև չտրոհված պարագա։

Տրոհված վիճակի պարագան արտահայտվում է հարակատար դերբայով կազմված կառույցով։ Օրինակներ՝

«*Այդ դռան մոտ կանգնած էր մի տղամարդ,* երկու ձեռքերը յուր դաշույնի կոթի վրա դրած» (*Ր, 7, 26*)։ «*Նախշքար Դավիթը գնում էր տուն,* մատների ծայրերը կապույտ արխալուղի գրպանները կոխած» (*ՆԴ, 1, 45*)։ «*Ահա նա կանգնած է այնտեղ,* Մեռամսե թելերից հյուսած» (*ԴՍեժ, 360*)։ «Այսպես նստած դարեր՝ *ոսկեղենիկ գրչով ճորտությունն են իրենց ոսկեզօծել* (*Զ, 159*)։ «*Ու* աչքերը արյունաման անթարթ հառած կարմիր կետին՝ *Ամբոխները խելագարված սպասում են առավոտին»* (*Զ, 255*)։ «*Քնած է՝* գլուխը հենած խրամատի հողե պատին» (*ՄՍՍԿ, 126*)։

Տրոհված վիճակի պարագան երբեմն արտահայտվում է նաև այլ դերբայներով կազմված դարձվածներով։ Առանձ-

նապես դա հնարավոր է դառնում վիճակային իմաստ արտահայտող -իս վերջավորվող անկատարի դեպքում։ Օրինակներ՝

«Երբ հիշում էի իմ մանկության օրերը և էն երեկոները, գերանների վրա, լուսնյակի տակ նստած մեր խումբը ու Նեսոյին՝ ճեմիաբ պատմելիս— ամեն անգամ սիրտս լցվում էր ցավով ու ափսոսանքով» (ՀԹ, 1, 413)։ «Ակնոցի արանքից նրա ուսյալ աչքերը տեսնում էին զրահավորներին, մագաղաթյա մատենագրին՝ եղեգնյա գրչով նրանց գովքը հորինելիս» (Բակ., 190)։

Տրոհված վիճակի պարագան կարող է արտահայտվել նաև անորոշ դերբայի գործիականով, որը, ինչպես նշվեց, դերանվանցապես ձևի (նաև ժամանակի) պարագայի դրսևորման միջոցն է։ Ընդ որում պետք է նկատի ունենալ, որ անորոշ դերբայի գործիականի մեկնաբանությունը վիճակի իմաստով որոշ չափով պայմանական է։ Օրինակ՝

« Վարդը կանգ առավ նրա առջև, շարունակելով հայացքը սևեռել իրեն զբաղեցնող նոր մտքի շարժումներին համաձայն» (ԴԴվ, 218)։ «Նրա մոտ կանգնած էր գրքաց Գրիգորը՝ մաթրախը ձեռին, քրտնքակոխ և հևալով» (ՆԴ, 1, 22)։

Վերջին օրինակում հևալով գործիականի վիճակային իմաստն առավել ակնհայտ է դառնում վիճակի երկու պարագաների հետ նրա բաղհյուսված հանդես գալու շնորհիվ։

Տրոհված վիճակի պարագան կարող է հանդես գալ նաև գոյականի գործիական հոլովով։ Այս դեպքում ևս, ինչպես անորոշ դերբայի գործիականն է, վիճակի իմաստը պայմանական է։ Օրինակ՝

«Մաննն անցողակի տեսավ նրան՝ թևերը քշտած և թաց գոգնոցով» (ՆԴ, 3/20)։ «Լիպարիտ էր դարձել նա, իմ ընկեր Լիպոն արշավում էր բանակում՝ ռազմի շապիկով» (Զ, 419)։

Տրոհված վիճակի պարագան կարող է արտահայտվել նաև ածականներով։ Ընդ որում ածականը կարող է լինել և՛ միայնակ, և՛ բաղհյուսված այլ ածականի կամ այլ խոսքի

մասի հետ, ինչպես և ունենալ լրացումներ։ Ածականի գործածությունը տրոհված վիճակի պարագայի դերում համարյա չի տարբերվում չտրոհված վիճակի պարագայի գործածությունից։ Օրինակներ՝

«Ու քայլում էինք, հոգնած ու մռայլ, Այդ ճամփաների հետքերով ավեր» (Զ, 225)։ «Մեծ իշխանը երկու օրից հետո վերադարձավ նույնպես Գարդման, վերին ասիենանի տխուր և հուսահատ» (Մուր., 4, 98)։ «Մային զլուխը կախ՝ մնում էր իր բանին, քարի պես լուռ ու անտարբեր» (ՆԴ, 1, 49)։ «Ու Հավիտյան էլ մնացին քնած, Դավիթն անտեղյակ, ցավին անտարբեր» (ՀԹ, 2, 143)։

Տրոհված վիճակի պարագան կարող է դրսևորվել դարձվածային բնույթի կառույցներով, որոնցում առկա են մակբայ կամ ածական։ Օրինակ՝

«Քուն թե արթուն՝ օրիս շատը երազ եղավ, անցկացավ» (ՀԹ, 1, 154)։ «Կյանքս արի հրապարակ, ոտքի կոխան ամենքի. խափան, խոպան ու անպտուղ, անցավ առանց արդյունքի» (ՀԹ, 1, 157)։

Տրոհված վիճակի պարագաները երբեմն նույն նախադասության մեջ կարող են դրսևորվել տարբեր ձևերով։ Ընդ որում մի դեպքում դրանք բաղհյուսված են հանդես գալիս, այլ դեպքում՝ ոչ։ Այսպես, կարող են միասին հանդես գալ դերբայական, ածականական կառույցները և այլն։ Օրինակներ՝

«Ու մարդասպանը դուրս եկավ ձորից, Դեմքը այլայլված, քայլվածքը մոլոր» (ՀԹ, 2, 64)։ «Լալով, ծածկած իր դեմքը, Թողեց Մարոն հոր շեմքը» (ՀԹ, 2, 11)։ «Ու հալածված իր հորից, Փախած շրջան Կարոյից, Սոված, պատռած շորերով, Կորչում էր նա օրերով» (ՀԹ, 2, 11)։ «Կապարանը թիկունքին, աղեղը ուսին, երկար նիզակը ձեռին, նստած յուր սիրուն կարմիրի վրա, գնում էր Սամվելը այն ճանապարհով» (Ր, 7, 67)։ «Կերակրամանը ձեռքին, մաշված ու դժգույն, մեծ մեծ ոտնամանները քաշ տալով անց է կենում կամուրջով» (ՀԹ, 1, 321)։ «Առվի եզրին միշտ էլ կարելի է

տեսնել Լաո-Մարգարին, ոտքերը մինչև ծնկները բաց, գլխին մի սպիտակ շոր, բանն ուսին» *(Բակ., 96)։ «Մատիտի արագ շարժումով նկարեց կնոջը՝* օջախի մոտ նստած, աչքերը օջախի Լարին» *(Բակ., 195)։*

գ. Տրոհված նպատակի պարագա

Առհասարակ նպատակի պարագան դրսևորման սահմանափակ միջոցներ ունի։ Դրանք են անորոշ դերբայի և գոյականի տրական հոլովաձևը և կապային որոշ կառույցներ։ Տրոհված նպատակի պարագան արտահայտվում է նույն միջոցներով, ինչ որ չտրոհվածը։ Առաջին հերթին պետք է նշել անորոշ դերբայի տրականի գործածությունը այս պաշտոնում։ Օրինակներ՝

«*Եվ ամեն օր շտապում էր դեպի կուլիս՝* անձամբ սեղմելու երիտասարդ հանճարի ձեռքը և իր հիացքն ու շնորհակալությունը հայտնելու նրան» *(ՆԴ, 1, 126)։ «Բարձրացան վանքի կտուրը՝* կտուրին բուսած թփերը կրծելու» *(Բակ., 50)։ «Ինքը գնաց Սևորդյաց կողմերը, իբրև թե* Ուտիքի մեջ կարևոր կարգադրություններ անելու» *(Մուր., 4, 91)։ «Դիլանց Մուքին և Աքելը առաջ ընկան՝* ամբոխի մեջ գտնելու հարևան գյուղերի մարդկանց» *(Բակ., 209)։ «Կարծես ուղղերս հանել էին դանդիցս և ինձ նետել մի անապատ՝* թափառելու սոսկալի ամայության մեջ» *(ՆԴ, 1, 116)։ «Ստիպված չլինես հեռավոր ճանապարհ գալ՝* Սահակ Սևադայից խորհուրդ հարցնելու» *(Մուր., 4, 129)։ «Օգնիր ինձ, ուժ տուր, Օ՜, Ղևկավա՜ր, Հյուսելու զոլ֊ֆս արևավառ» (Զ, 475)։*

Երբեմն տրոհված նպատակի պարագան տրականի փոխարեն գրվում է ուղիղ ձևով, և այս դեպքում այն կարող է մեկնաբանվել նաև ոչ իբրև նպատակի պարագա։ Օրինակ՝

«*Նա ենթարկվեց նախարարության, հոգևորականության և ժողովրդին՝* պաշտպանել հայրենիքը» *(ԴԴվ, 135)։*

Անորոշ դերբայի գործիականը տրոհված լրացման դերում երբեմն կարող է մեկնաբանվել և՛ նպատակի, և՛ ձևի իմաստներով։ Օրինակ՝

«Լարում էին իրենց ուշադրությունը և հետևում դեպքերին՝ սպասելով հարմար առիթի պոռթկալու» (ԴԴվ, 542)։

Երբեմն տրոհված նպատակի պարագան արտահայտվում է գոյականի տրական հոլովով կազմված կառույցով։ Օրինակ՝

«Ելեք տերերի կամքի դեմ դեղին՝ Մի վերջին մարտի դասակարգային» (Զ, 133)։

Տրոհված նպատակի պարագան արտահայտվում է նաև կապային կառույցներով (ինչպես չտրոհված պարագայի դեպքում)։ Ընդ որում կապի խնդրի դերում կարող են հանդես գալ ինչպես դերբայական դարձվածներ, այնպես էլ գոյականներ։ Այս դերով առաջին հերթին հանդես են գալիս համար, նպատակով կապերը։ Օրինակներ՝

«Կար ժամանակ, երբ թագուհին ինքը հեռանում էր մարդկանցից, ոչ ոքին չտեսնելու, երբեք չխոսելու և միայն յուր հոգետանջ մտածմունքներին անձնատուր լինելու համար» (Մուր., 4, 10)։ «Կինը, աչքերը մուխից պահելու համար, ձեռքը բռնում էր ճակատին» (Բակ., 194)։ «Նա միանում էր ժողովրդին՝ կործանումից պահելու համար աշխարհը» (ԴԴվ, 339)։ «Եվ ահա մի օր տաժանքում ճամփից Հոգնած ու դաղրած, հանգիստի համար — Մենք մտանք Մեռած քաղաքի շեմքից» (Զ, 228)։

Տրոհված նպատակի պարագան կարող է արտահայտվել նաև որպես, իբրև, ինչպես կապերի միջոցով։ Օրինակներ՝

«Վասակը կանչել տվեց իր մոտ Կողակին և պատվիրեց ուղեկցել Խոսրովին՝ որպես Միհրներսեհին ուղարկելիք պատասխան թղթի հանդիպական սուրհանդակ և պատիվ» (ԴԴվ, 130)։

դ. Տրոհված այլ պարագաներ

Առհասարակ մյուս պարագաները քիչ դեպքերում են հանդես գալիս տրոհված։ Հավանաբար դա բացատրվում է

այդ անդամների դրսևորման ձևով։ Բանն այն է, որ տրոհման հակում դրսևորում են առավել ընդհանրական իմաստ ունեցող պարագաները, ինչպես վիճակի, ձևի, մասամբ և նպատակի։ Այնուհանդերձ, ժամանակի, պատճառի, հիմունքի (և դիջման), ընդհանրական պարագաները ևս կարող են տրոհված գործածվել։ Այդպիսի տրոհված պարագաների դրսևորման միջոցները նույնն են, ինչ որ չտրոհվածներինը։ Հիմնականում այդ պարագաները հանդես են գալիս դերբայական կառույցներով, գոյականական բառակապակցություններով և այլն։ Ստորև կնշենք տրոհված տարբեր գոյականների օրինակներ առանձին-առանձին։

Տրոհված ժամանակի պարագա.— Հիմնականում հանդես է գալիս անորոշ դերբայի գործիական հոլովաձևով կազմված կառույցով, կապային կառույցներով (կապի խընդրի դերում դերբայական կառույց կամ գոյական) և այլն։ Օրինակներ՝

«Ավետիք բերդապետին հրամայելով խստացնել հրկոդությունը՝ Ատոմը իջավ աշտարակից» (ԴԴվ, 545)։ «Այդպես հանգստանում է ճանճը, սեղանի վրա մոռացված շաքարի կտորը լիզելուց հետո» (Բակ., 55)։ «Նա ձիու սանձը հանեց բերանից, որ լողալու միջոցին ազատ շունչ առնե, նստեց, և, երեսը խաչակնքելով, քշեց դեպի դետը» (Ր, 7, 18)։ «Հասնելով դղյակի դռանը, թագուհին իջավ գահավորակից» (Մուր., 4, 17)։ «Նրան սենեկապետը հրավիրեց հարևան օթևանը՝ նախապես հրաց վառել տալով այնտեղ» (ԴԴվ, 365)։ «Եվ հանձնելով իմ կյանքը հերոսական կամքիդ՝ Ես այրեցի երգերս մի երեկո գրած» (Զ, 124)։

Տրոհված ժամանակի պարագան երբեմն կարող է արտահայտվել նաև անկատար դերբայի -իս վերջավորվող ձևով կազմված կառույցներով, թեև դա հազվադեպ է լինում և այն էլ գերպանցապես չափածո խոսքում։ Օրինակներ՝

«Մենք էլ՝ օրհնելիս մեր զավակներին՝ Ձեր խոսքն ենք ասում» (ՀՊ, 1, 9)։ «Եվ Թաս է բռնել նրանց հետ, մեծարանք տվել ու առել, Ինչպես իր պապերն են արել՝ իրար հետ

խնջույքի նստելիս» (Զ, 139)։ «Այս մասին մտածելիս՝ նրա պոռթկումներն իջնում էին» (ԴԴվ, 375)։ «Մանկությունը հիշելիս՝ սիրտս դառնում է դինով» (Զ, 418)։

Բանաստեղծական խոսքում առանձին դերբայն էլ կարող է տրոհվել։ Օրինակ՝

«Ասում են մի հայ աղջիկ, զաղթելիս, Հայաստանից մի ծաղիկ է տարել» (ԳԷԱՏ, 35)։

Բանաստեղծական խոսքում տրոհված ժամանակի պարագան կարող է արտահայտվել նաև մակբայով կամ մակբայական կառույցով։ Օրինակ՝

«Քանի՞ երկրակալ, քանի՞ պետություն Բարձրացել, տիրել, անցել են հերթով եվ մահ տարածել քո ճանապարհին — Դեռ դարեր առաջ լենինյան դարից» (Զ, 192)։

Երբեմն տրոհված ժամանակի պարագան կարող է արտահայտվել նաև հարակատար դերբայի ժխտական ձևով. Օրինակներ՝

«Փողոցին չհասած՝ մայրը լսեց Երեմի ձայնը» (Բակ., 202)։ «Ժայռերին չհասած՝ դիմացից լսվեց հրացանի պայթյուն» (Բակ., 233)։ «Դեռ չտեսած յարիս,— սիրտս չի բացվի» (Իս., 1, 360)։

Տրոհված պատճառի պարագա.— Այս պարագան ևս կարող է արտահայտվել նույն միջոցներով, այն է՝ դերբայական կառույցներով, կապային կառույցներով, գոյականական բառակապակցություններով և այլն։ Այսպես, հետևյալ նախադասություններում տրոհված պատճառի պարագան արտահայտված է անորոշ դերբայի գործիական հոլովով կազմված կառույցներով։

«Մնալով լեռների գրկում, սնվելով ռազմական դաստիարակի հոգեկան կյանքով, հեռու մայրաքաղաքի, մարզպանական ու այլ պաշտոնական միջնորդից՝ նա չէր մտածել այս մասին» (ԴԴվ, 89)։ «Միմյանց դեմ ունեցան ամեն մի գժտություն մոռանալով՝ եկան ժողովվեցան յուր շուրջը՝ արքայական թագով յուր արժանավոր գլուխը պսակելու» (Մուր., 4, 60)։ «Իրենց կորցրածն էլ հիշելով նորից՝

Դիակի շուրջը կարգով շարվեցին» (ՀԲ, 265)։ «Սակայն կամենալով փարատել դիմացինի անձկությունը, *ինքն էլ էր հիվանդացել» (ԴԴվ, 153)։*

Նույն դերը երբեմն կարող է կատարել նաև հարակատար դերբայով կազմված կառույցը։ Օրինակներ՝

«*Դու,* Մուսայի խելքով բռնված, *վեր ես կենում, մեղ հայհոյում» (ՀԲ, 2, 89)։ «Մանեն զղջաց, թե ինչու ինքն այդքան փոքրոգի եղավ ընկերուհու հեղնական նկատողությունների դեմ և,* նրանից վրեժ լուծելու պախարակելի զգացումից դրդված, *այդպես հանկարծ ու խստորեն ասաց այն» (ՆԴ, 3, 34)։*

Երբեմն կարող է տրոհվել նաև առանձին դերբայը։ Օրինակ՝

«Բորբոքված՝ *նա հազիվ էր զսպում զայրույթը» (ԴԴվ, 432)։*

Տրոհված պատճառի պարագան կարող է արտահայտվել նաև ածականական կառույցներով։ Օրինակներ՝

«*Իսկ* Այգեստանի բույրերից արբշիռ *Եվ* Աբտամեղի հոտերից գինով՝ *խոր քուն է մտնում քամին Ոստանում» (ՊՍԵժ, 4, 207)։* «Հավիտյան զոց ու անխոս՝ *թափառել եմ ու լռել» (Զ, 14)։* «Վատահ երիտասարդական բարմ ուժերի և մանավանդ հասարակական լայն գործունեության բուռն տենչանքիս վրա՝ *լցված էի փառավոր ապագայի վառ հույսերով» (ՆԴ, 1, 115)։*

Տրոհված պատճառի պարագան կարող է արտահայտվել նաև այսպես կոչված զեղչված դերբայով կառույցներով։ Այսպես, երբ ասում ենք «Ներքուստ նրան բարեկամ՝ չէր կարող նրան վնաս պատճառել», ապա ներքուստ նրան բարեկամ *կառույցը ենթադրում է որևէ դերբայ, տվյալ դեպքում* լինելով (ներքուստ նրան բարեկամ լինելով), *որի զեղչումով էլ դերբայի լրացումն էլ ստանձնել է նրա պաշտոնը։ Այսպես են նաև հետևյալ նախադասությունների տրոհված պատճառի պարագաները։*

«Ի բնե խելացի և զարգացած կին՝ *իր վիշտը թաղում էր*

ընթերցանության և զավակների կրթության հոգսերի մեջ» (ԴԴվ, 255)։ «*Եվ թող հավիտյան ախոյան՝ բախվեն վիշտն ու խինդը քո՝ քո մահն ու սերը*» (ՀՇՔՀ, 459)։ «*Իղուր ստին այդ, մթին գերի՝ դու անիծում ես ուժը մեր նոր*» (Զ, 392)։

Բանաստեղծական խոսքում տրոհվել կարող է նաև բացառական հոլովով կազմված կառույցով կամ առանձին բառով արտահայտված պատճառի պարագան։

«*Հոսում են ոչ թե խշշոցով ջրի, Այլ կարծես անվերջ տժտժում-թշշում՝* Իրենց մեջ ընկած բոց տերևների Զմայող հրից» (ՊՍեժ, 4, 52)։ «*Օդի մեջ լողացող ջրային շիթերը,* արեգակի առաջին նառագայթներից, *վառվում էին միլիոնավոր ոսկյա հուլունքների նման*» (Ր, 7, 22)։ «*Մինչ տներում* ներսի տաքից՝ *Ապակիներն ուրախությամբ լաց են լինում աննպատակ*» (ՊՍեժ, 4, 94)։ «*Դուրս թափվեցինք մենք դյուղից, Հեռու կանգնած,* երկյուղից, *Տեսանք ահեղ էն ձորում, Ոնց էր լալիս ու գոռում*» (ՀԹ, 2, 11)։

Տրոհված պատճառի պարագան կարող է արտահայտվել կապային կառույցներով։ Ընդ որում այդ դեպքում հանդես են գալիս նույն կապերը, ինչ որ չտրոհված պարագայի դեպքում է լինում։ Օրինակներ՝

«*Ս. Նշանի տաճարի միակ թերությունն է եղել լույսի պակասությունը,* լուսամուտների սակավության պատճառով» (Շիրվ., 9, 19)։ «*Վարպետի բերանը բաց է մնացել՝* ի տես իր առջև կանգնած *մեծափարթամ տիկնոջ*» (*Մ. Խերանյան, Շխոնց Միհրան, 11, 1963*)։

Տրոհված հիմունքի և հակառակ հիմունքի պարագա — *Հիմունքի պարագան նույնպես կարող է տրոհված լինել։ Ընդ որում առավել շատ հակված է այդ վիճակով հանդես գալու հակառակ հիմունքի կամ դիշման պարագան։ Այս պարագաները կարող են արտահայտվել գոյականական, դերբայական, ինչպես և կապային կառույցներով։ Հետևյալ նախադասություններում առկա է տրոհված հիմունքի պարագա։*

«*Նա գտնվում էր Այրարատ նահանգի Մազաղ ու Ոստան գավառները միմյանցից բաժանող Գեղա լեռան մի*

ոստի վրա, որը վերջին դարերում, յուր ծոցում գտնվող Ս. Դեղարդի անունով, *Դեղարդասար կոչվեցավ» (Մուր., 4, 7)։ «Խուզարկուները մինչև անգամ չէին գտել վանքի մեջ գործածվող պղնձեղենը, որ,* յուր իմանալով, *ահագին քանակության էր հասնում» (Մուր., 4, 218)։*

Հակառակ հիմունքի կամ զիջման պարագան արտահայտվում է ավելի շատ կապային կառույցներով։ Օրինակներ՝

«Զնայելով եղանակի ցրտության և օրվա տարաժամությունն՝ *այսուամենայնիվ Թադուհին դեռ չէր հեռացել Տրդատա հովանոցից» (Մուր., 4, 10)։* «Զնայած անտանելի շոգին ու բեռ արևին, *Բաղդադի փողոցները լիքն էին ժողովրդով» (ՀԹ, 3, 280, 1949)։ «Մամիկոնեից տիկինը առաջինը ներքև վազեց և չնայած անձրևին՝ Թափով գրկեց մի ջլուտ ու նիհար, բարձրահասակ երիտասարդի» (ԴԴվ, 321)։*

Երբեմն անորոշ դերբայի գործիականը ևս կարող է ունենալ զիջման իմաստ։ Օրինակներ՝

«*Չշարժվեց, չնայեց վեր՝* լսելով անգամ կնոջ սպանվելու, տան վառվելու, շենի կողոպտվելու մասին» *(ԴԴվ, 451)։ «Իսկ դհոլը՝* սպառնալով՝ *Այսուհանդերձ չի տրաքվում» (ՊՍեԺ, 4, 98)։*

Տրոհված ընդհանրական պարագա.— *Ընդհանրական պարագաները հիմնականում արտահայտվում են նույնիմաստ մակբայներով։ Սակայն քանի որ խիստ հաղվադեպ են մակբայները տրոհված հանդես գալիս, ընդհանրական պարագայական իմաստով կարող են գործածվել անորոշ դերբայի գործիական և հարակատար դերբայով կազմվող որոշ կառույցներ։ Օրինակներ՝*

«Վերցրեց երեխային և, շարունակելով անեծքներ թափել, *հոգնած նստեց թախտի վրա» (ՆԴ, 1, 68)։ «Արտակը դեռ կանգնած նայում էր իր սիրելի երիտասարդ ընկերին,* սկսելով կարոտել արդեն» *(ԴԴվ, 144)։ «Հովիտներին բոլոր ամեն տագնապ ու հուշ՝ Տար լեռների հովին կարոտներդ անուշ» (Զ, 24)։ «Եվ* ելած անա այդ նոր պայքարին՝

Դու ողջունեցիր փրկության տարին» (Զ, 193)։ «Ով եկել էր։ թողած ետուն անծայրածիր մութը գյուղի՝ *Բերել էր իր մկաններում բեղմնավորված ուժը հողի» (Զ, 250)։ «Ով առուփախով, գաղթով էր փրկվել,* Անզորությունից կրկին մոռացած Հայի անարդար աստծո հանդեպ իր ինքը արդար՝ *երկնքին նայեց լուռ պաղատանքով» (ՊՍԵԺ, 360)։ «Այն էլ չէր հիշում, թե երբ էր մեռել կինը,* թողնելով իր մի քանի զավակներից միայն մի աղջիկ» *(ՆԴ, 1, 4,)։ «Երեխաները թաղիքի մեջ թաղված քնել էին՝* թողնելով ուղտերին արածելով շրջել գնալ *ուր որ կուզենային սրանք» (ԴԴվ, 566)։*

Տրոհված տեղի պարագա.— *Ընդհանրապես տեղի պարագան հաղվադեպ է տրոհվում։ Տրոհման դեպքերն էլ գերազանցապես կապվում են չափածո խոսքի առանձնահատկությունների հետ՝ բացատրվելով իբրև հարկադրական տրոհում։ Սակայն երբեմն արձակ խոսքում էլ հանդիպում ենք տրոհված տեղի պարագայի։ Օրինակներ՝*

«Սահպնեերից, անտառներից, քաղաքներից հեռու ու մոտ— *Մենք մեր սիրան ենք բերել նորից՝ հուսավառված ու կրակոտ» (Զ, 252)։* «Կտուրներից բարձր, կտուրներից ավեր, *Ծուխն իմ վառարանի բարձրանում է վեր» (ԳՍՀԵ, 24)։ «Վարդ ես բացված՝* առավոտվա դրախտային շաղի մեջը» *(Զ, 46)։ «Միևնույն թվին,* Լոռուց շատ հեռու՝ *Անատոլուի խավար խորքերում մեկ ուրիշ մանուկ լույս աշխարհ եկավ» (ՊՍԵԺ, 4, 7)։ «Զանազան դաղտնի անցքեր,* սառերեկրյա հանապարհներով, *իջնում էին ամրոցի բարձրությունից» (Ր, 7, 24)։ «Նստած էր շիտակ՝* ենթ նստարանի ծայրին» *(ՆԴ, 3, 8)։ «Ողջը հանած համարիր —* ֆո օրերի մատյանից» *(Զ, 181)։ «Եվ մեզ՝* հրկեզ իր ափերից՝ *փրկության լուր առաքեց» (Զ, 200)։ «Երևում էր, որ այդ սենյակի բնակիչը,* յուր իշխանական տան մեջ անգամ, *սիրում էր պահպանել զինվորական կյանքի խստակեցությունը» (Ր, 7, 51)։*

Ե. Տրոհված խնդիրներ

Խնդիրները սովորաբար չտրոհված են հանդես գալիս։ Դա բացատրվում է նրանց և լրացյալի կապի սերտությամբ։

Տրոհվում են թույլ կապակցությամբ կապված անդամները։ Սակայն պատահում են նաև խնդիրների տրոհման դեպքեր։ Ընդ որում սրանց մեջ առաջին հերթին կարող են տրոհվել սահմանափակման խնդիրները՝ որոշակի կառույցներով արտահայտվելու դեպքում։ Օրինակներ՝

«Դաշնակից ապստամբների վրանները բռնած էին հովի բոլոր տարածությունը՝ սկսած Աղստևի գետաբերանից մինչև մռտակա լեռան ստորոտը» *(Մուր., 4, 152)։ «Ամբողջ հագուստը,* սկսած գոտկից մինչև ոտնամանները, *ծածկված էր ամեն գույնի ներկերի բծերով» (ՆԴ, 1, 45)։ «Գեղեցիկ, քաղցրաբարո կինը,* մանկահասակ հյուրերի շրջանում, *կարող էր սավեր ձգել նրա վրա» (Ր, 7, 104)։ «Ու քեզ համար՝* իմ սիրով՝ *Հորդ են գետերն այս գարնան» (ՀՇՔՀ, 101)։ «Մեջքի վրա,* վերևից ներքև, *տաշտանման մի փոս էին գոյացրել» (ՆԴ, 1, 64)։ «Մինչ իրանը՝* գոտկատեղից՝ *Չի էլ շարժվում անդամ տեղից» (ՊՍԵԺ, 4, 94)։*

Բանաստեղծական խոսքում, շարադասական հանգամանքներով պայմանավորված, հնարավոր է նաև միջոցի խնդրի տրոհում։ Օրինակներ՝

«Լցված է սիրտը իմ՝ էլեկտրական Բոբ հոսանքներով» *(Զ, 270)։ «Նա,* շնչով կարծես մի հրե— *Ուղեղիս կտավի վրա Փորփրից հնամյա գրեր» (Զ, 306)։*

Նույն հանգամանքներում կարող է տրոհվել նաև մատուցման անուղղակի խնդիրը։ Օրինակ՝

«Մի բուռ հո՞ղ տար՝ մահից փրկող սուրբ մանանա՝ Պանդուխտներին» *(ԴԷԱՏ, 33)։*

Միտանության խնդիրը ևս կարող է տրոհված հանդես գալ։ Օրինակներ՝

«Այստեղ էին հավաքվել Հայոց աշխարհին հավատարիմ նախարարները՝ իրենց սեպուհներով, տան մերձավորներով» *(ԴԴՎ, 665)։ «Արքային հետևում էր հայրս՝* յուր զարդմանացի ասպետներով» *(Մուր., 4, 82)։ «Երկու ամիս առաջ,* Մեարոպի հետ, *նա դուրս էր եկել այցելություններ անելու յուր հայրենական կալվածներին» (Ր, 7, 78)։*

Բացառման անուղղակի խնդիրը մեծ մասամբ արտահայտվում է տրոհված ձևով։ Այն սովորաբար դրսևորվում է կապային կառույցներով՝ բացի, զատ, դուրս, անկախ *և նման կապերի միջոցով։ Օրինակներ՝*

«Բացի պառավ Դեղին՝ *ամենքը նեղացնում էին նրան» (ՀԹ, 1, 317)։* «Բացի ֆո փորի մասին հոգալուց՝ *ուրիշ ոչ մի բանի մասին չես հոգում» (ՆԴ, 3, 65)։* «Աշխատանքի հետ կապված հարցերից դուրս՝ *նա նրա հետ ուրիշ որևէ մտերմական գրույց չի ունեցել» (ՆՁՀ, 145, 1945)։ «Բայց ոչինչ չտեսավ դռան մոտ,* բացի մի մոխրագույն փափախի ծայրից» *(ՆԴ, 1, 206)։* «Առանց քեզ էլ, *ինչպես ասացի, խոսքով ազգասերները շատ են, դու նրանց թվին մի՛ ավելանալ» (Մուր., 3, 79)։ «Մորիկյանի նման երիտասարդին ոչ մի խելոք ծնող չէր մերժիլ այդ շնորհը, որովհետև* ուսում, դիրք և հասարակություն ունենալուց զատ, *ինքն էլ դեղեցիկ երիտասարդ էր» (Մուր., 3, 24)։*

Բանաստեղծական խոսքում, շարադասությամբ պայմանավորված, հնարավոր է նաև ուղիղ խնդրի տրոհում։ Օրինակներ՝

«Չի ունեցել քեզ պես *շռայլ խալիքը՝* նոքար, *Սայաթ-Նովա» (Զ, 186)։ «Որ հզոր շառաչով երգի Աշխարհում՝* իր նոր խնդությունը» *(Զ, 470)։ «Ես ճանապարհ եմ տեսնում լայն ու բաց—* Սարից-սար թռչող այս ծիածանը»։ *«Իսկ դու տեսնում ես՝* ժայռից կախ ընկած Պորտը քարերին մաշած կածանը» *(ՀՍԲ, 1, 350)։*

Երբեմն տրոհված ուղիղ խնդիրը կարող է արտահայտվել երանգավորիչ բայի և այլ բայի անորոշ դերբայների կապակցությամբ։ Օրինակներ՝

«*Խնդրեց քեզ և դղյակի մյուս կանանց՝* աշխատել ուրախ պահել թագուհուն» *(Մուր., 4, 26)։*

գ. Տրոհված այլ անդամներ

Երբեմն կարող են տրոհվել նաև նախադասության այնպիսի անդամներ, որոնց համար տրոհված լինելը սովորա-

կան չէ։ Առաջին հերթին պետք է նշել ենթակայի տրոհման երևույթը։ Երբ ենթական արտահայտվում է դերբայական դարձվածով, ապա դերբայի վերջադաս շարադասության դեպքում այն չի տրոհվում։ Օրինակ՝ «Գյուղ վերադառնալը դժվար չէր»։ Սակայն, երբ դերբայը նախադաս է, կամ լրացումների մի մասը ընկնում է նրանից հետո, ապա բնականաբար հարկ է լինում դերբայական դարձվածը նախադասության մյուս մասերից տրոհելու՝ լրացական հարաբերությունը չխաթարելու համար։ Այս դեպքում լինում է դերբայական դարձվածով արտահայտված ենթակայի տրոհում, որն անշուշտ հարկադրական է։ Օրինակներ՝

«Մտածել հարազատ հորը պատահած դժբախտության մասին՝ *դեռ չի նշանակում նստել ու լաց լինել» (ԲՍԱ, 161)։* «Երկար ժամանակ լուրերի ընդհատվելը նախարարների վիճակի մասին՝ *սկսեց խիստ անհանգստացնել Հայոց աշխարհը» (ԴԴվ, 323)։*

Դերբայի կրճատումով դերբայական դարձվածով արտահայտված ենթական նույնպես տրոհվում է։ Օրինակ՝

«Կենոռտ մաշկը բոլորովին երիտասարդ զինվորների հագատին ու դեմքերին՝ *ցույց էր տալիս ընտանեկան բարքերի անկում և տաժանակիր արշավանքների դրոշմ» (ԴԴվ, 166)։*

Նույն կարգով բայանունների լրացական խմբով արտահայտված ենթական կարող է տրոհվել։ Օրինակներ՝

«*Եվ նրա վարմունքը ծերունի դոնապանի մորուքի հետ՝ այդ սիրահարության հետևանքներից մեկն էր» (Ր, 7, 35)։* «Նրա մասնավոր խոսակցությունը տիկնոջ հետ՝ *շատ բան կարող էր պարզել իշխանի համար» (Ր, 7, 371)։* «Նահատակությունը ժողովրդի հետ՝ *մեծ ուժ էր ներշնչում նրան» (ԴԴվ, 339)։* «Այս թեթև հպումը հարազատ ձեռքի, *որ սթափեցնում էր մի տեսակ և շոյում, խաղաղեցնում նրան՝ ցընդեցրեց Արտակի պատկերից դաժան, օտարոտի գունավորումը» (ԴԴվ, 381)*

Անհասարակ բայանունների կառույցներով արտա-

հայտված այլ անդամները ևս բայանվան ոչ վերջադաս գործածության դեպքում (իսկ նման կառույցներով սովորաբար բայանունը նախադաս է լինում), տրոհվում են։ Այսպես, ուղիղ խնդիրը ևս տրոհված է հետևյալ նախադասության մեջ։

«Մեծերի այդ սերն ու համակրանքը նրա նկատմամբ՝ բաժանում էինք և մենք՝ երեխաներս» (Մ. Խերանյան, Շիտանց Միհրան, 216, 1963)։

Բանաստեղծական խոսքում, շարադասական հանգամանքներով պայմանավորված, պատահում է, որ որակական ածականի համեմատության աստիճան կազմող կառույցը նույնպես տրոհված է հանդես գալիս։ Օրինակներ՝

«—Մի՞թե վեհ չէ այս կերտվածքը, ով աստված, Բյուզանդիոնի սուրբ Սոֆիայից ավելի» (ԳՍԸ, 407)։ «Զորե՞ր ա՞յ ձորեր, սև, լայնաբերան, Սրտիս էս խորունկ վերքերի նման» (ՀՊ, 2, 32)։

Առհասարակ որակական ածականի հավասարական համեմատական աստիճանը կարող է կազմվել տրոհված կապային կառույցներով։ Այս գործածությունը հատուկ է ոչ միայն չափածո, այլև արձակ խոսքին։ Օրինակներ՝

«Ի՞նչ գրավիչ դեմք, բայց գունատ ու տխուր, ինչպես մարմարի մի անդրի» (ՆԴ, 1, 121)։ «Գեղեցիկ՝ ինչպես Ռաֆայելի մադոննան, հագնված ինչպես մի թագուհի, շատ պով մատավ մի նորատի կին» (ՆԴ, 1, 126)։

Բանաստեղծական խոսքում կարող են տրոհվել նույնիսկ բայական բաղադրյալ ստորոգյալի դերբայական բաղադրիչի լրացումը։ Օրինակ՝

«Եվ հորդորում էին քայլով զգաստ ընթանալ կամոքն աստծո՝ խոնարհության շավղով, առաքինության, դարերով սրբագործյալ հեղության» (Զ, 485)։

Բաղադրյալ կառույցի երանգավորիչ իմաստ ունեցող բայի դերբայ լրացումը նույնպես կարող է տրոհված հանդես գալ։ Օրինակ՝

«Պատմությունն առաջ ենք հրել, Եվ ծնված օրվանից ի

վեր՝ երաղել, խորհել շարունակ՝ Աշխարհում ապրել նրա պես, նրա պես լինել հասարակ» (ՀՍԲ, 1, 98)։

Գեղարվեստական գրականության մեջ սովորական է նախադասության որևէ անդամի ոճական կրկնությունը, ընդ որում այդ կրկնությունը դրսևորվում է տրոհման միջոցով։ Օրինակ՝

«Իրենց վայրենի վախն են մոնչում Աշխարհովը մեկ— Վախը վայրենի, որ հնչում է մեր Բոսոր սրտերում» (Զ, 273)։

է. Մեկուսացած անդամների տրոհված լրացումներ

Մեկուսացած անդամներից սովորաբար տրոհված լրացումներ ունենում է կոչականը։ Քանի որ կոչական բառը կամ կոչական կառույցի գլխավոր բառը գոյական է կամ գոյականաբար գործածված բառ, ապա այս դեպքում տրոհված լրացումները հիմնականում երկու տեսակ են՝ որոշիչ և բացահայտիչ։ Անշուշտ ավելի շատ հանդիպում են տրոհված որոշչի դեպքեր։ Օրինակներ՝

«Է՜յ հորեղբայր, իմ հերաճոռ, Տուր ինձ իմ հոր հրեղեն ձին» (ՀԲ, 2, 116)։ «Եվ դու, ոսկի իմ աշուն, աշնան մրգի պես հասած, Անուշացած մրգի հոտ—ինչպե՞ս կանչեմ քեզ հիմա» (Զ, 31)։ «Օ, հին բարեկամ դու Հեգելի, Մարքսի վրայով հապճեպ անցած,— Ես ներում եմ քեզ, ներում էլի» (Զ, 211)։ «Ողջույն քեզ, կովի առաջին հնչյուն՝ Լույսի պես կարող, խոսքի պես խոցող» (ՎՏ, 1, 247)։ «Դո՛ւ կախարդ ուղի, հավիտյան անհայտ, հավիտյան դյութեզ իմ նոր հայրենիք, Տար ինձ, իմ սիրտը՝ հավիտյան լացող» (Իս., 2, 6)։ «Աղջիկնե՞ր եք անտերունչ, ընկած փողոցում, Մանուշակներ համբ ու մունջ, Թախիծով լեցուն» (ԳՍԵԺ, 1, 45)։

Կոչականը կարող է ունենալ նաև բացահայտիչ լրացում։ Օրինակներ՝

«Նվագում ես, աղջի՛կս, դաշնակահար երեխա, դաշնակահար երեխա, հնչյունների սիրահար» (ԳՍԵԺ, 1, 68)։ «Օ՜, երկինք՝ պսակ հավիտենության, Աստղեր՝ դուք զանգեր երկնի գմբեթի, Արևդակ՝ օվկիան դու մայր զորության, Դու լուսե ստինքն այս տիեզերքի, Ծովեր՝ տարերքը մշտամրոս-

տության, *լեռներ՝* եղջյուրներ դուք հողագնդի, *ով դուք անտառներ՝* վահաններ գարնան, *ով դուք ջրվեժներ՝* բաշեր բնության, *Մի՞թե չարի դեմ դեռ նիրհեք պիտի» (ՀՇՔՀ, 121)։*

V. ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐՈՀՎԱԾ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Սովորաբար նույն նախադասության մեջ կարող են տրոհվել նույն տեսակի անդամներ (եթե տվյալ նախադասության մեջ կան մեկից ավելի տրոհված անդամներ)։ Մեկից ավելի նույնատիպ տրոհված անդամները կարող են հանդես գալ բաղդիսված կամ ոչ։ Այսպես, հետևյալ նախադասություններում տրոհված են նույնատիպ անդամներ։

«Բացվում էին լուսաթաթախ առավոտներ՝ Մեկը մեկից պայծառ ու տաք, Մեկը մեկից վառ ու հստակ» *(ՊՍԵԺ, 169)։* «Մանուշակներ ոտքերիս ու շուշաններ ձեռքերիս, Ու վարդերը այտերիս ու գարունը կրծքիս տակ, Ու երկինքը հոգուս մեջ, ու արևը աչքերիս, Ու աղբյուրները լեզվիս՝ *սարից իջա ես քաղաք» (ՀՇՔՀ, 2, 98)։ «Իսկ Անահիտը* ականջը քամուն՝ մտքով հեռատանները՝ *երևակայության ուժով ջանում էր պատկերացնել Արտակին» (ԴԴՎ, 400)։* «Սոված, պատռած շորերով, *Կորչում էր նա օրերով» (ՀԹ, 2, 11)։ «Նա դեռևս շատ ջահել կին էր,* հազիվ քսան տարեկան, *չքի հնամաշ դերիայով և գլխին մաքուր, սպիտակ աղլուխ փաթաթած» (ՆԴ, 1, 64)։*

Սակայն քիչ չեն այն դեպքերը, երբ նույն նախադասության մեջ նույն անդամն ունենում է մեկից ավելի տարաբնույթ տրոհված լրացումներ, որոնք կարող են արտահայտվել և՛ նույն, և՛ տարբեր ձևերով։ Օրինակ՝

«Յուր խոսվության մեջ, դուրս գալով քաղաքից, *ամենին նկատել չկարողացավ նա, որ ինքը միայնակ է» (Ր, 7, 324)։* «Այդ ատելի սիգարը բերանիդ, զզվելի սովորությանդ համաձայն, *միայն ծաղրեցիր, հեգնեցիր» (ՆԴ, 3, 122)։* «Առանց նայելու մարդկանց երեսին, Առանց խոսելու, սևակնած, դաժան, *Մոտեցավ սրահին, կախ տվավ սնին Սև*

հրացանը— սև օձի նման» (ՀԹ, 2, 64—65)։ «Տարօրինակ, մենակ, սառում կարուտ ու հուր՝ *նա գնում էր արագ ու երգում էր տխուր» (Զ, 23)։* «Եվ բազմությունը հրելով, ձին հետևից՝ *հասավ հրապարակը» (Բակ., 223)։* «Նստած դաշտում Արարատյան, Մեջքը հենած Արագածին, Ականատես և ունկնդիր Աշխարհների անցուդարձին, Կռելով բախտն ու ապագան Թեժ բոլերում գործարանի, *Բորբոքում է օջախն իր հին» (ՀՍԲ, 1, 58)։ «Թե ինչպես ուրախ խմբով,* միասին, Մուր ոտներով, գիշերվան կիսին, Թուրքերի կանանց կերպարանք առած, *Երևում են միշտ միայնակ մարդկանց» (ՀԹ, 2, 15)։ «Եվ ահա մի օր,* Քաղվոր կանանց մեջ. մթան հետ, բաֆուն, Շորերը պատռած, տխուր, *գլխակոր Անուշը ձորից եկավ հորանց տուն» (ՀԹ, 2, 61)։ «Ներս մտավ մի կին միջին տարիքով,* սև հագուստով, կարմիր, բռնված դեմքով, մի սև շալ ձեռքին» *(ՆԴ, 1, 65)։*

2. Բանաստեղծական խոսքում տրոհման յուրահատուկ պայմաններում երբեմն դժվար է որոշել այս կամ այն անդամի շարահյուսական դերը։ Այսպես, հետևյալ նախադասություններում պարագայական և խնդրային իմաստները համատեղված են տրոհված լրացումների մեջ։

«Ազատվեց հին կապանքից Հոգիս՝ Վիթխարի ցավով» *(Զ, 315)։ «Անունն էլ քեզ բերդ ու վահան՝* ընդդեմ չարի ու շար անվան» *(ՀՇՔՀ, 445)։*

Երբեմն էլ դժվար է որոշել, թե տրոհված լրացումը նախադասության որ անդամին է վերաբերում։ Այսպես, հետևյալ նախադասություններում տրոհված լրացումը կարող է մեկնաբանվել և՛ իբրև գոյականի, և՛ բայի լրացում։

«Զորականը, որ բավականին հասակավոր, ջլուտ բարձրահասակ մի անձնավորություն էր՝ մտահոգ հայացքը գետնին՝ *անցավ իրեն հետևող մի խումբ վանականների միջով» (ԴԴվ, 5)։ «Հեռվում երևում էր Մասիսը՝* կապույտ շղարշ հագած» *(Զ, 484)։ «Կյանքս կանցնի, կմարի, որպես կրակ ճահիճում՝* Աննպատակ ու տարտամ, անմխիթար ու անհույս» *(Զ, 14)։ «Բավական է սոսկ մի հայացք լռություն*

սաստող, որ կախել տա իսկույն գլուխն՝ իր անվայել վարմունքի համար տեղնուտեղը զղջացող աշակերտի» *(Մ. Խերանյան, Երկա՜ր, երկար մի ճանապարհ», 391, 1965)։ «Ու թռչում է երգս՝ նետ՝ դեպի վառվող Ապագան» (Չ, 37)։ «Ու թռչում է քամին,— երկարաթև թռչուն,— Զարհուրելի, զաղիր փողոցների միջով» (Չ, 39)։ «Էշխոդ՝ կրակ՝ սիրաս էրեց անհասնելի մուրազի պես» (Չ, 46)։*

Երբեմն էլ կարող են շփոթվել տրոհված որոշիչն ու բացահայտիչը։ Օրինակներ՝

«Էն վանքում, հայոց ազգին պահապան, *Աղոթք էր անում ծերուկ հայր Օհան» (ՀԹ, 1, 264)։ «Պարզել էր— Երևվան քաղաքում, Հնամյա Մասիսին մոտիկ» (Չ, 319)։ «Ատոմը որոշեց հանդիպել նաև իր աշխարհը՝* Գնունյաց» *(ԴԴվ, 348)։ «Լոկ Տիեզերքն ու Հավերժն են լռում, Եվ սեգ լեռները՝* հավերժի վկա» *(ԳԷԱՏ, 394)։*

Երբեմն տրոհված անդամը կարող է մեկնաբանվել և՛ իբրև պարագա, և՛ իբրև կոչական։ Օրինակ՝

«Դու հիմա, երկիր Նաիրի, Աշխարհի ճամփեքի միջում Կանգնել ես՝ խնդավառ էլի, Հառնել ես՝ երկաթե թռչուն» *(Չ, 300)։*

3. Նախադասության մեջ քիչ չեն այն դեպքերը, երբ որևէ տրոհված անդամ իր հերթին ունենում է տրոհված լրացում։ Օրինակներ՝

«Քամին է միայն ոռնում ու կոծում, Տոնելով վայրագ հարսանիքը Մահի՝ Նենգավոր ու խոր ձյուների ծոցում» *(Չ, 236)։ «Նրա աչքի առաջ կանգնում էր հայրը՝ վիզը ձգած, ջղերն ուռած՝* պինդ լարերի պես» *(Բակ., 61)։ «Վերջին ձիավորը քթի տակ մռմռում էր մի երգ, մելամաղձոտ ու հուսահատ,* ինչպես ամայի ձորը, տխուր քարափը և հեռավոր գյուղը» *(Բակ., 190)։ «Մեջտեղ բացած սեղանները բռնել էին մատյան ոնդի փղերն ու զորքը՝ պատրաստ ի կատար ածել Հազկերտի հրամանը՝* կոխկրտել նախարարներին» *(ԴԴվ, 290)։ «Դեղեռնը՝* բոլորովին անսպասելի շրջապատողների համար՝ *զորական կնճռվածքով, հնազանդ ձայնով ասաց»*

(ԴԴվ, 392)։ «Ասաց, մոայլ հեռացավ Աբդուլ խանը դառնացած, Հոգին հուզված՝ պլեծուի ջրերի նման» (ԳՍԸԵ, 376)։ «Այստեղ էին հավաքվել Հայոց աշխարհին հավատարիմ նախարարները՝ իրենց սեպուհներով, տան մերձավորներով, զորադնդերով՝ պատրաստ մեկնելու նպատակ» (ԴԴվ, 665)։

Բերված բոլոր օրինակներում պարզ է, թե երկրորդ տրոհված լրացումը առաջին տրոհված լրացման համար ինչ անդամ է։ Սակայն պատահում են դեպքեր, երբ երկրորդ տրոհված լրացումը ունենում է երկու տեսակ մեկնաբանություն, այն է՝ կամ առաջին տրոհված լրացման լրացում, կամ նրա լրացյալի և կամ թե այլ անդամի լրացում։ Սա լինում է մասնավորապես բացահայտչից հետո դրված տրոհված լրացման դեպքում։ Օրինակներ՝

«Վերջապես, եկավ քահանան— նոր-նոր աղվամազը դուրս եկած մի նորընծա, մեջքին խիստ հուպ տված փայլուն փարաջայով և փափուկ կաստորի նոր գլխարկով» (ՆԴ, 3, 19)։ «Հետո եկավ տիրացուն—տերտերից շատ ավելի հասակով մի մարդ՝ խիստ մազակալած տգեղ դեմքով, արբեցողի պղտոր ու կարմիր աչքերով, ամառվա հնամաշ վերարկուով և տիրացուներից անրաժան հովանոցը ձեռքին» (ՆԴ, 3, 19)։ «Նախասենյակում նրա դեմն ելավ Վահանը—հսկայամարմին և թիկնավետ մի երիտասարդ՝ կես-այրված մի հասա սիզար բերանին» (ՆԴ, 3, 42)։

4. Բանաստեղծական խոսքում հանդիպում են այնպիսի տրոհված լրացումներ, որոնց լրացյալը որոշակի չէ։ Այլ կերպ ասած, տրոհված լրացումը նախադասության մեջ անկապակցությամբ է հանդես գալիս։ Օրինակներ՝

«Մշտական, երբ որ կռիվ էր գնում, ինքնեղ էր քու հերն իր աղոթքն անում» (ՀԹ, 2, 106)։ «Ես—Հայաստանցի պոետ— Երկիր, ուր մշուշ է ու մահ— Բոլորի, բոլորի համար Երգում եմ Նորից Հիմա» (Զ, 281)։

5. Անորոշ դերբայի դործիական հոլովով կազմված կառույցի և բուն նախադասության ենթական սովորաբար նույնն է լինում։ Սա վերաբերում է և՛ չտրոհված, և՛ տրոհված կառույցներին։ Օրինակներ՝

«Պետեզերֆից բավական հեռանալով, *այժմ մոտեցավ նա Քարքի լեռան բարձրավանդակին» (Բ, 7, 19)։* «Սովոր լինելով դրանց լուծումը չգտնելուն՝ *նա կարծես ժայռին դեմ առնելով հուսահատվեց» (ԴԴվ, 26)։* «Իր մահաբեր թույնը թափելով՝ *սուլում էր դառնաշունչ քամին» (ՀԲ, 1, 330)։*

Սակայն երբեմն դերբայական դարձվածի և նախադասության բուն ենթական չեն համընկնում, և ստեղծվում է անկապակցություն։ Օրինակներ՝

«*Նրա մայրական սիրտը մղկտաց՝ նայելով Բաբիկի կապտած երեսին» (ԴԴվ, 48)։ Մտնելով Արտաղ և Մաղկոտն՝ արդեն նրա ականջին հասան ժողովրդական ուժեղ շարժման լուրերը» (ԴԴվ, 404)։*

Առաջին նախադասության ենթական է սիրտը, *մինչդեռ* նայելով Բաբիկի կապտած երեսին *դերբայական դարձվածի ենթադրյալ ենթական է* նա, *որը կապ չունի* սիրտ *բառի հետ։ Երկրորդ նախադասության ենթադրյալ ենթական է* նա, *որը չի համընկնում դերբայական դարձվածի* լուրերը *ենթակայի հետ։*

6. Տրոհված անդամների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ արձակ խոսքում այս կամ այն անդամի տրոհումն անհրաժեշտություն է, մանավանդ այն դեպքերում, երբ տրոհման բացակայությունն առաջ է բերում երկիմաստություն։ Այսպես, «Միհրներսեհի նշանի վրա եկողները առաջացան և կիսաբոլոր շարվեցին ընդարձակ սրահի պատերի տակ» (ԴԴվ, 192) նախադասության մեջ Միհրներսեհի նշանի վրա *լրացումը տրոհված պիտի լիներ, քանի որ հեղինակն ուզում է ասել, որ* եկողները առաջացան Միհրներսեհի նշանի վրա *(նրա տված նշանով)։ Այդ լրացման չտրոհելը ստեղծում է երկիմաստություն, առանց տրոհման այդ նախադասությունը կարող է մեկնաբանվել նաև այսպես՝* եկողները գալիս էին Միհրներսեհի նշանով *(Միհրներսեհի նշանի վրա եկողները=որոնք գալիս էին Միհրներսեհի նշանով), մի բան, որը սխալ է։ Այսպես նաև երկիմաստություն է առաջանում հետևյալ նախադասություններում ընդգծված լրացումները չտրոհելու հետևանքով։*

«Ե՛վ ուխտը, և՛ դաշինքը, և՛ այլ որևէ պայմանը նրանց համար մի խոսք էր ասված միայն մի ժամի համար» (ԴԴվ, 616)։ «Առայժմ ավելորդ կլինի վրացիների Հայաստան գորք բերելը և օգնելը» (ԴԴվ, 653)։ «Հենց ճամբարում թամբերի ու վահանների վրա նստած նախարարները հսկում էին գորքերի կազմակերպման» (ԴԴվ, 665)։ «Չհաջողվեց գտնել նաև որևէ իրեղեն ապացույց, որով հաստատվեր թշնամիների անտառում վայրէջք կատարելը» (ՄՍՍԿ, 51, 1970)։ «Հիշեց ուսուցչի կատակով տրված խորհուրդներից մեկը նման դեպքերի համար» (ԱՍԵՈՒ, 178, 1970)։ «Եվ նա շտապեց հեռանալ ամոթահար այն բանից, որ այդ միջոցին խաղաղ փողոցով անցնող մի երկու մարդ կանգ առան» (ՆԴ, 3, 42)։ «Քաղաքից հողաշափ եկավ երկու գյուղերի սահմանները որոշելու» (Բակ., 47)։ «Ցերեկը իջևանատան կամարի տակ նստած պայտ էր ծեծում» (Բակ., 162)։ «Կանայք մնացին տանը ողբ ասելու նոր ու հին մեռելների համար» (Բակ., 370)։

Տրոհում չլինելը կարող է հանդեցնել նախադասության մեջ այս կամ այն անդամի երկակի մեկնաբանության։ Այսպես, «Մարդ մարդու դատում է շատ անգամ մանր հաշիվներից դրդված» (ՆԴ, 3, 116) նախադասության մեջ պարզ չէ, թե շատ անգամ-ը դատում է սոորոդյալի լրացում է թե՞ մանր հաշիվներից դրդված դերբայական դարձվածի բաղադրիչը։ Հատակություն կլիներ, եթե նախադասության մեջ լիներ տրոհում։ «Մարդ մարդու դատում է շատ անգամ՝ մանրը հաշիվներից դրդված» կամ «Մարդ մարդու դատում է՝ շատ անգամ մանր հաշիվներից դրդված»։ Անշուշտ ավելի ճիշտ կլիներ փոխել շատ անգամ-ի շարադասությունը («Մարդ մարդու շատ անգամ դատում է մանր հաշիվներից դրդված»)։

Այսպես նաև պարզ չէ հետևյալ նախադասություններում բնդգծված բառի լրացյալը։

«Կոտորելով բշնին նրանց այնտեղ վերջացնելու եղեռնը» (ԴԴվ, 363)։ «Փայլուն սամովարը կարծես ավելի դարդ

249 — 13

էր և նորափեսայի նման ուռած-փքված նայում էր» (Բակ., 291)։ «Խորն աշունքին Լոռու սարերով անցկենալիս մի դյուղում մութը վրա հասավ» (ՀԲ, 1, 386)։ «Չէ՞ որ ավելի ձեռնտու է նրանց, որ հայերը միմյանց ջարդելով ոչնչանան, քան թե իրանք սեփական զորքեր բերեն այստեղ հայերի հետ կռվելու» (Մուր., 4, 78)։ «Տեսավ՝ Կողբադին իրենց տան միջին, Զափում է ոսկին թեղած առաջին» (ՀԲ, 2, 110)։

7. Երբեմն էլ նախադասության մեջ ավյալ կառույցի դրսևորման ձևը միայն տրոհված է, սակայն հեղինակը չի տրոհել։ Այսպես, հետևյալ նախադասության մեջ ընդգրծվածը մասնավորեցնող բացահայտիչ է, սակայն չի տրոհվել (որ սխալ է)։

«Փառանձեմ տիկնոջ օթևանում նեղ պատուհանի զոգին կիսաթեք նստած էր Զվիկը» (ԴԴվ, 225)։

8. Երբեմն ավյալ լրացման շարադասությունը և ձևը ստիպում են ենթադրելու, որ այն տրոհված պիտի լինի, սակայն հեղինակը կետադրական նշանով չի տրոհել։ Այսպես, հետևյալ նախադասություններում ընդգծված պարագաները տրոհված պիտի լիներին։

«Մեր գործը պիտի առաջ տաննենք պարսիկներին ծառայեցնելով մեզ» (ԴԴվ, 145)։ «Վարդանը որոշեց ուրիշ սուրհանդակ ուղարկել Այրարատ իմանալու այս տարօրինակ դեպքի պատճառը» (ԴԴվ, 404)։ «Եվ ճանապարհ ընկանք սրտումս մի ծանր վիշտ» (ՀԲ, 1, 412)։ «Վերադառնան պիտի դեռ Հաղբատ սրտեր տարագիր Թողած օտար հեռուներ» (Զ, 517)։ «Բլրակի գլխին շնասած տեսնում էի դպրոցի առաջ խմբված երեխաներին» (Բակ., 120)։ «Ցերեկը իշևանատան կամարի տակ նստած պայտ էր ծեծում» (Բակ., 162)։ «Որ այս դառը ժամերին չկորցրեց իր այրմարդությունը և համակերպ ու հնազանդ իր տրտի վշտին սպասում էր զինվորյալների պատերազմին» (ԴԴվ, 381)։ «Հնձան է մտնում ծեր Դիլան դային Հոգում հեռավոր օրերի ցավը» (ՀՍԲ, 169)։

Իսկ հետևյալ նախադասություններում եռադաս որոշիչը տրոհված պիտի լիներ (որ չի տրված)։

«Նա զգում էր, որ իր հայրենիքը մեծ է, մի անհուն աշխարհ կյանքով լի» (ԴԴվ, 518)։ «Որի տակ հագած էր երկարավիզ մի սյուրտուկ խիստ կեղտոտ ու ճմռված» (ՆԴ, 3, 52)։ «Հորդում ես ահա, որպես վարար գետ մաքրամաքուր ու կենարար» (Զ, 481)։

9. Տրոհված անդամը, ըստ անհրաժեշտության, պետք է երկու կողմից անջատվի նախադասության մյուս անդամներից։ Որքան սխալ է չտրոհել, նույնքան էլ ճիշտ չէ միակողմանի տրոհումը, որն առաջ է բերում անիմաստություն։ Այսպես, «Կոդակը ստորադաս պաշտոնյա՝ իրավունք չուներ իշխանի հետ նստել» (ԴԴվ, 189) նախադասության մեջ ստորադաս պաշտոնյա տրոհված լրացումը միայն մի կողմից է տրոհվել, մինչդեռ անհրաժեշտ էր երկու կողմից անջատել. պետք էր Կոդակը և պաշտոնյա բառերից հետո ստորակետ դնել։ Միակողմանի տրոհում առկա է նաև հետևյալ նախադասություններում։

«Նախարարները՝ մոայլված և սաստված չխոսեցին» (ԴԴվ, 125)։ «Արտաշատի փողոցներում երեխաների կանչերը խառնված շների հաչոցին և դարբնոցի չխկոցներին՝ խաղաղ տրամադրություն էր բերում մարդու» (ԴԴվ, 144)։ «Վարդանը՝ շրջապատված նախարարների ու սեպուհների համհարզով բարձրացավ մի բլրակ» (ԴԴվ, 681)։

10. Անշուշտ պետք է նշել նաև այն դեպքերը, երբ տրոհումը ոչ մի անհրաժեշտությամբ չի պայմանավորված և քմահաճ է։ Այդպիսի դեպքերը առավել շատ են չափածո խոսքում, սակայն հանդիպում են նաև արձակ ստեղծագործություններում։ Օրինակներ՝

«Իսկ երբ արևը զարթնում է, լռում են՝ լեռան սառույցներից իջնող այդ առուները» (Բակ., 109)։ «Ցրտից ու անուրոշությունից փրկվելու միակ միջոցը՝ հարձակվելն է» (ՄՍՍԿ, 216)։ «Դու տեսար՝ անմոռանալին՝ հավերժ կոտրածը հայոց» (ՀՇԲՀ, 198)։ «Թանաք կդարձնեմ՝ ես լճերն ամեն» (ՀՍԲ, 384)։ «Մարտի դաշտը՝ դիակների Ծո՜վ էր թվում արյունահեղ» (ԳԷԱՏ, 357)։

VI. ՏՐՈՀՎԱԾ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԿԵՏԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպես տեսանք տրոհված լրացումների քննությունից, դրանք հիմնականում երկու կարգի են։ Մի դեպքում գործ ունենք կիսաստորոգումային բնույթ ունեցող տրոհված լրացումների հետ, ինչպես տրոհված որոշիչը, պարագայական որոշիչը, պարագաները, իսկ մյուս դեպքում՝ հարկադրաբար տրոհված լրացումների հետ։ Ընդ որում հարկադրական տրոհման կարող են ենթարկվել նախադասության համարյա բոլոր անդամները։

Գրության մեջ նախադասության անդամների տրոհումն արտահայտվում է համապատասխան կետադրական նշաններով։ Ընդ որում գեղարվեստական գրականության մեջ, որտեղ առկա են տրոհման բազմազան երևույթներ, գործադրվում են ոչ միօրինակ նշաններ՝ սկսած ստորակետից մինչև անջատման գիծը և ստորակետ գիծը։

Տրոհված լրացումների կետադրության հարցում չկա միօրինակություն։ Ընդ որում իրարից տարբեր ձևով են տրոհված լրացումներն անջատում նախադասության մյուս անդամներից ոչ միայն տարբեր գրողներ, այլև նույնիսկ նույն գրողը հետևողական չէ նույն երևույթի հարցում։

Անշուշտ այստեղ հարկ է նշել տրոհման երկու տարբեր երևույթները՝ հարկադրական տրոհումը և սովորական (անհրաժեշտ) տրոհումը։ Առաջինը բխում է հիմնականում չափածո խոսքի շարադասությունից (որը պայմանավորված է բազմազան պատճառներով), իսկ երկրորդը օրինաչափական է և չի բխում այլ պատճառներից. նախադասության այս կամ այն անդամի լրացումը (բացահայտիչը, որոշիչը կամ պարագան) անջատվում են լրացյալից որոշակի հնչերանգով՝ ձեռք բերելով կիսաստորոգումային դեր։

Սակայն տրոհման երկու դեպքերի համար էլ գործադրվում են կետադրական նույն նշանները։ Տրոհված անդամների կետադրության հարցում եղած անմիօրինակությունը ցուցադրելու համար բերենք համապատասխան օրինակներ։

Բացահայտչի կետադրությունը.— *Սովորական բացահայտիչը բացահայտյալից անջատվում է բութով, իսկ նախադասության մյուս մասերից՝ ստորակետով։ Օրինակ՝*

«Տուֆ քարերից շինել ենք Շենքեր՝ մարմինը նրա» (ԳՍԲԵ, 255)։ Այս կանոնից շեղվում է հոդով չհամաձայնվող բացահայտիչը, որն անջատվում է ստորակետով։ Օրինակ՝ «Մենք, առույգ ու ժիր գեղջուկ մանուկներ, *Երեք դասընկեր, Նրանց առաջին գլխաբաց կանգնած, Ձեռքներս խոնարհ սրտներիս դրած, Ձիլ, ուժեղ ձայնով նրանց ասացում՝ Տաղ էինք ասում» (ՀԲ, 1, 9)։*

Սակայն գեղարվեստական գրականության մեջ հաճախ են խախտում սովորական բացահայտչի կետադրության այս կանոնը։ Այսպես, սովորական բացահայտիչը երբեմն բացահայտյալից անջատում են ստորակետով։ Օրինակներ՝

«Հայաստանի քահանայապետը, հայրենիքի հզոր պաշտպանը. Ներսես մեծը, *նույն կայսրի հրամանով աքսորված էր Պատմոս անբնակ կղզում» (Ր, 7, 31)։ «Այդ կինը Սեղան էր,* բազուկու գորովագութ դայակը, դղյակում եղող կանանց մեջ ամենից բարին և ազնվասիրտը» *(Մուր., 4, 11)։*

Սովորական բացահայտիչը երբեմն տրոհում են նաև անջատման գծով։ Օրինակներ՝

«Եկել — երկաթե երդ եմ ձեզ ասում ես — կարմիր պոետ — եղիշե Չարենց» *(Զ, 266)։ «Սիրում եմ քո զվարթ Զանգուն —* Զորերն ի վար հոսող երկինք *եվ Սևանը լեռների մեջ —* Երկինքն ի վեր խոսող երկինք» *(ՀՍԲ, 1, 347)։ «Նա մտադիր էր յուր՝ բերանացի քարոզած նոր գաղափարները քարոզել և գրավոր կերպով —* վիպական կամ պուբլիցիստական գրվածքի *ձևով» (ՆԴ, 1, 131)։ «Նշանաւոր ժամանակ Անանիին ցույց էին տվել վրացական հագուստով —* բշերի այս ու այն կողմը կախված կավիճներով, գլխին դրած բասակրավով *և այլն» (ՆԴ, 1, 139)։ «Դուք ձեր բարձունքից արհամարհանքով մերժեցիք ինձ—* ճերմկ գոնվոդիս» *(ՆԴ, 1, 127)։ «Թոռները —* ֆույր — եղբայր — *որբ էին» (ՆԴ, 1,*

69)։ «Ամեն բանի մեջ — ուտելում, խմելում, հագնելում — սաստիկ խնայողություն ենք անում» (ՆԴ, 2, 197)։

Սովորական բացահայտիչը նույնիսկ տրոհում են ստորակետ-գծով։ Օրինակ՝

«Դատական պրիստավը,— խունացած համազգեստով և գեհենական դեմքով մի շեկ մարդ,— շարունակում էր իր որոնումը» (ՆԴ, 1, 196)։ «Ներս մտավ խմբագիրը,— մի կարճլիկ և հաստլիկ մարդ,— ժիլետը կոճկելով ուռուցիկ փորի վրա» (ՆԴ, 1, 197)։

Սովորական բացահայտչի տրոհումը բացահայտյալից և նախադասության մյուս անդամներից անջատման գծով, առավել ևս ստորակետ-գծով ստեղծում է տվյալ անդամի երկակի մեկնաբանության հնարավորություն։ Բերված օրինակներում ընդգծված կառույցներն ու բառերը կարող են միաժամանակ դիտվել նաև իբրև միջանկյալ։

Սովորական բացահայտիչը, ըստ անհրաժեշտության. նախադասության մյուս անդամներից պետք է անջատվի ստորակետով։ Սակայն երբեմն այն անջատում են բութով։ Օրինակներ՝

«Արևը՝ կարմրակեզ բանվոր՝ Գլորեց թափով վիթխարի» (Զ, 313)։ «Տանտերերը՝ այր ու կին՝ թախծալի ժպիտով և հատուկ ջերմեռանդությամբ ընդունեցին հյուրերին» (ԴԴվ, 445)։ «Ժողովրդական հոծ բազմություններ՝ հայոց ժողովուրդը՝ վեր կացած երկրի բոլոր կողմերից ալեկոծ հորձանքով գալիս էր ծովանում Արտաշատի շուրջը» (ԴԴվ, 665)։

Այսպիսով, սովորական բացահայտիչը, որը քերականորեն համաձայնվում է բացահայտյալին, վերջինից պետք է անջատվի բութով, նախադասության մյուս անդամներից՝ ստորակետով։ Նախադասության մյուս անդամներից ստորակետով չի բաժանվում բացահայտիչն այն դեպքում, երբ թեք հոլովով է դրվում և առավել ևս՝ կապի խնդիր բացահայտյալին է վերաբերում։ Այսպես, «Նա Վարդանի՝ իր մանկության ընկերոջ մասին տեղեկություն չուներ»։

Ինչպես մասնական, այնպես մասնավորեցնող (կոնկրետացնող) բացահայտիչները բացահայտյալից, ինչպես և նախադասության մյուս անդամներից պետք է անջատվեն ստորակետով։ Օրինակներ՝

«*Բեմի հանդեպ,* եկեղեցու աջակողմյան անկյունում, *չորս մարմարյա սյուների վրա բարձրանում էր մի վերնատուն» (Ր, 7, 308)։ «Ներքևը,* ձորում, Բասուտա գետի մյուս ափին, *քարաժայռերի վրա թառել են մի քանի տներ» (Բակ., 190)։ «Շահյանից ոչ շատ հեռու,* մի բոլորովին առանձնացած սեղանի մոտ, լուսամուտի առաջ, *իրար դեմուդեմ նստած էին Բաղենյանն ու լեհացի կինը» (ՆԴ, 3, 216)։ «Նրանք դիմում էին Շահյանին,* իբրև *մի հեղինակավոր մարդու, որի կարծիքը վճռական նշանակություն պիտի ունենար» (ՆԴ, 3, 229)։*

Մասնական բացահայտիչը բացահայտյալից և նախադասության մյուս անդամներից չանջատելու դեպքում կարող է մեկնաբանվել իբրև պարագա։ Այսպես, «Գրիգորը, որպես խելոք մարդ, ներկայացավ նիստին» նախադասության մեջ եթե որպես խելոք մարդ *անդամը ստորակետով չտրոհվեր, ապա չէր ըմբռնվի որպես մասնական բացահայտիչ, այլ կդիտվեր ձևի պարագա։*

Տրոհված որոշչի կետադրությունը.— *Տրոհված որոշիչը սովորաբար լինում է հատագա, ընդ որում մի դեպքում այն կարող է դրվել որոշյալից անմիջապես հետո, այլ դեպքում նրա և որոշյալի միջև կարող են լինել այլ բառեր։ Որոշյալից անմիջապես հետո դրվող տրոհված որոշիչը անջատելու համար գործադրում են կետադրական հետևյալ նշանները.*

ա) Բութ։ Օրինակներ՝

«*Նրա վրայից բարշ էին ընկած զանազան զենքեր. կապարճ՝* լի նետերով, *աղեղ՝* լայնալին, *տապարներ՝* երկաթյա երկար կոթով, *թերթև վահան՝* ուղտի թափանցիկ կաշուց պատրաստված, *ծանր սուր՝* պողովատից շինված և խոշոր կոնակների նման բևեռներից գամված» *(Ր, 7, 26)։ «Եվ*

մատներով իր՝ արդեն անուժ՝ *Դեռ գուրգուրում էր հեռու մի հուշ» (Զ, 381)։ «Նրանց մեջքին ճոճվում էին ատամնավոր աշտարակները՝* մարտիկներով լի» *(ԴԴվ, 308)։*

բ) Ստորակետ։ *Օրինակներ՝*

«Ու դեռ մնում է այն հողաշեն ակումբը, եղեգնյա կտուրով, *և ծփում է վարագույրը» (Բակ., 244)։ «Նրան դիմավորեցին խոպոտ բացականչություններով և հեթանոսական երգերով,* տակավին գործածական» *(ԴԴվ, 561)։ «Մի ճերմակ ամպ,* բափանցիկ ու անձև, *հանդարտ լողում էր լազուրի մեջ» (Բակ., 98)։*

դ) Անջատման գիծ։ *Օրինակներ՝*

«Դեռ ինչ գանձեր — անհուն, անծիր — *պետք է հանեն դու աշխարհ» (Զ, 177)։ «Խմեց. ու հոսեցին կրկին մտքերը —* Իրարից ավելի պղտոր ու ծանր» *(Զ, 411)։ «Ու կրակը այդ կարմրակեզ —* անանցան ու վիթխարի — Մի *արնագույն կետ է կարծես ուղեղի մեջ խելագարի» (Զ, 254)։ «Ախ, արթնանում է հաճախ ձևը —* մեռած համարվող» *(Զ, 183)։*

Տրոհված որոշիչը նախադասության մյուս անդամներից անջատվում է ստորակետով։ Այդպես են վերը նշված օրինակներից մի քանիսը։ Սակայն պատահում է, որ ստորակետի փոխարեն դրվում է նաև բութ։ Օրինակ՝

«Նեղլիկ մի փայտե դուռ, մշտափակ ու խուլ՝ պահում էր հետաքրքրվող աչքերից այդ այգու ներքին կյանքը» (ԴԴվ, 76)։

Իսկ անջատման գծով լրացյալից անջատվող որոշչից հետո էլ դրվում է անջատման գիծ, ինչպես առկա է վերևի երկու օրինակներում։ Հազվադեպ լինում են տրոհված նախադաս որոշիչներ, որոնք անջատվում են երկու կողմից բութով։ Օրինակ՝

«Որի վրա ծածանում էր՝ արծվաձև զարդմանակը հովանավորող՝ *ձյունաթույր ցցունքը» (Մուր., 4, 82)։*

Երբեմն նույն դիրքում նախադաս տրոհված որոշիչը երկու կողմից անջատվում է ստորակետով։ Օրինակ՝

«Ու մտի տակին, նամփիցը ծռված, երկու մարդու թարմ ոտնատեղ դտան» (ՀԹ, 2, 61)։

Ճիշտ պետք է համարել տրոհված ետադաս որոշչի՝ որոշյալից բութով, իսկ նախադասության մյուս անդամներից ստորակետով անջատումը։ Եթե կարելի է ինչ-որ չափով հաշտվել ածականներով արտահայտված որոշչի՝ որոշյալից ստորակետով անջատվելու հետ, ապա ոչ մի կերպ չի կարելի համաձայնվել դերբայական դարձվածով կամ այլ կառույցով ու բառաձևերով արտահայտված տրոհված որոշչի՝ որոշյալից ստորակետով անջատվելու հետ։

Այսպիսով, տրոհված որոշիչը պետք է որոշյալից անջատվի բութով, իսկ այլ անդամներից՝ ստորակետով։

Պարագայական որոշչի կետադրությունը.— Պարագայական որոշչի կետադրության հարցում ևս տիրում է նույն անհետևողականությունը։ Այսպես, հետևյալ նախադասություններում պարագայական որոշիչն անջատվել է ստորակետով։

«Մի սպիտակ ձիավոր, շրջապատված մի խումբ թիկնապահներով, անդադար արշավում էր խռովյալ քաղաքի մի փողոցից դեպի մյուսը» (Ր, 7, 298)։ «Փողոցի անկյունում արդեն վառված լապտերը, հողմածեծ, ծռել էր գլուխը» (ՆԴ, 1, 45)։

Պարագայական որոշիչն անջատված է բութով հետևյալ նախադասություններում։

«Երգը զնգաց բանակի՝ հազարաձայն ու զվարթ» (Զ, 258)։ «Իսկ քաղաքից դեպի հարավ՝ անատեսիլ ու հաղթական՝ Երևում էր երկաթուղու կայարանը հսկայական» (Զ, 251)։

Ճիշտ կլինի պարագայական որոշիչը, ի տարբերություն սովորական որոշչի, անջատել ստորակետով։

Տրոհված պարագաների կետադրությունը.— Տրոհված պարագաների կետադրությունը նույն պատկերն է ներկայացնում։ Նույն պարագան նույն դիրքում տարբեր նշաններով են տրոհում ոչ միայն տարբեր հեղինակներ, այլև

նույն հեղինակը։ Այսպես, նախադաս պարագան անջատվել է բութով հետևյալ նախադասություններում։

«Իր մահաբեր թույնը թափելով՝ *սուլում էր դառնաշունչ քամին» (ՀԹ, 1, 330)։* «Հովիտներին թողած ամեն տագնապ ու հուշ՝ *Տա՜ր լեռների հովին կարոտներդ անուշ» (Զ, 24)։*

Նույն դիրքում տրոհված պարագան անջատվել է ստորակետով հետևյալ նախադասություններում։

«Հասնելով դղյակի դռանը, *թագուհին իջավ զահավորակից» (Մուր., 4, 17)։* «Ականջներիս մեջ ձեր երգը վայրի, *Մտնում եմ նորից անտառը մայրի» (ՀՍԲ, 1, 297)։*

Նախադաս տրոհված պարագան տրոհում են նաև անջատման գծով։ Օրինակներ՝ «Այն կատաղի հողմի մրնշաղի միջից Շառաչելով կանչող այն ֆամու պես — *Քեզ հրկիզեց կյանքում անեղբությամբ վերջին» (Զ, 126)։* «Եվ հայացքը հառած արեգակի շողին — *Նա ժպտալով բռնեց վերադարձի ուղին» (Զ, 25)։*

Տրոհված նախադաս պարագան նույնիսկ անջատում են ստորակետ-գծով։ Օրինակներ՝

«Ու ձուլած իրար սեր, ցնորք ու մահ, Լուսնահար ծովի երգով շրջուն,— *Ուղեղիս բորբոք կտավի վրա Թանձրացան նրանք ու անցան հեռուն» (Զ, 230)։* «Դեռ չտեսած յարիս,— *սիրուս չի բացվի» (Իս., 1, 360)։*

Տրոհված վերջադաս պարագան ևս անջատում են կետադրական տարբեր նշաններով։ Այսպես, հետևյալ նախադասություններում տրոհված վերջադաս պարագայից առաջ բութ է դրված։

«Ասացին՝ հանգիստ հոգոց հանելով» *(ՀԹ, 2, 83)։* «Այնինչ աղջիկն առաջ եկավ՝ Կարմիր խնձորն իր ձեռին» *(ՀԹ, 1, 226)։* «Դառնում է լար մի յուրովի, դառնում ստեղ՝ Երգուն ֆամու մատների տակ» *(ՊՍԵԺ, 4, 171)։*

Տրոհված վերջադաս պարագան ավելի հաճախ անջատում են ստորակետով։ Օրինակներ՝

«Նախշքար Դավիթը գնում էր տուն, մատների ծայրե-

ը կապույտ արխալուղի գրպանները կոխած» (ՆԴ, 1, 45)։ «Ու մարդասպանը դուրս եկավ ձորից, Դեմքը այլայլված, քայլվածքը մոլոր» (ՀԹ, 2, 64)։

Վերջադաս տրոհված պարագան լրացյալից զատում են նաև անջատման գծով։ Օրինակ՝

«Մնանում էինք — ապրելու համար» (Զ, 234)։

Հանդիպում են նաև նատադաս տրոհված պարագայի ստորակետ-գծով տրոհելու դեպքեր։ Օրինակ՝

«Ականջներիս մեջ ձեր երգը վայրի, Մտնում եմ նորից անտառը մայրի,— Անտառի առաջ սիրուս բանալու» (ՀՍԲ, 1, 297)։

Միջադաս տրոհված պարագան հաճախ երկու կողմից անջատում են ստորակետով։ Օրինակներ՝

«Ջին, ամբողջ մարմնով խորասուզված ջրի մեջ, միայն գլուխը վեր բարձրացրած, մռնչալով և փռնգալով, պատերազմում էր ալիքների հետ» (Ր, 7, 18)։ «Դու, Մուսայի խելքով ընկած, Վեր ես կենում մեր դեմ խոսում» (ՀԹ, 2, 89)։ «Իսկ բարի գլխից, լուռ, մարդու նման, Նայում է ձորին մի հին խաչաբաձան» (ՀԹ, 2, 14)։

Միջադաս տրոհված պարագան երկու կողմից անջատում են նաև բութով։ Օրինակներ՝

«Գուցե գիշերս էլ՝ իր հերսից անքուն՝ Ուզում է ջահել քրոջն սպանի» (ՀԹ, 2, 59)։ «Մենք էլ՝ օրհնելիս մեր զավակներին՝ Ձեր խոսքն ենք ասում» (ՀԹ, 1, 9)։ «Նլանք՝ մեկտեղ ու միասին՝ մենք պայքարի մի վսեմ» (Զ, 7)։ «Ամբոցի առջևից՝ փրփրադեզ ալիքները դարևանդներից գահավիժելով՝ հոսում էր Ագատ գետի սրընթաց մի վտակը» (Մուր., 4, 8)։ «Մեր քերթությունը՝ մեր դարի ընթացքի հետ միասին՝ Առնչվելով մեր տենչերին՝ երգ է ասում մեր մասին» (Զ, 176)։

Պատահում է միջադաս տրոհված պարագայի անջատումը մի կողմից ստորակետով, մյուս կողմից՝ բութով։ Օրինակներ՝

«Իսկ նրանք ահա, չարախնդում, Տաք ճահիճների տիղ-

մին հլու՝ *Հանդուցելոց են արդեն կարդում» (Զ, 100)։ «Եվ մենք՝* նրանով միշտ զինավառված, *Միասին եղանք՝ ցիր ու ցան արված» (ՊՍԵԺ, 4, 263)։*

Պատահում են նույնիսկ միջադաս տրոհված պարագայի՝ մի կողմից ստորակետով, մյուս կողմից անջատման գծով զատելու դեպքեր։ Օրինակ՝

«Բնությունը, գիրգ ստինֆները բաց, Ցուի կնոջ նման հեքանոս, հլու — *Պատրաստ էր ամեն անցորդի առաջ իր աշնանային բերքը փռելու» (Զ, 226)։*

Տրոհված պարագաների կետադրության այս անմիօրինակությունը մերժելով՝ պետք է ընդունել, որ անհրաժեշտ է նախադաս և վերջադաս տրոհված պարագաներն անջատել բութով, իսկ միջադասը՝ ստորակետով։ Սա պարզություն մտցնելուց բացի որոշակիորեն կտարբերի տրոհված պարագաները տրոհված որոշչից և կբացառի այդ երկու կարգի տրոհված անդամների շփոթը։ Ընդհանրապես տրոհված լրացումների համար ընդունելի պետք է համարել միայն բութի և ստորակետի գործածությունը, իսկ անջատման գիծը, ստորակետ-գիծը կապ չպիտի ունենան այդ լրացումների հետ։

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՍԱ—Ա. Ստեփանյան, *Ամառնամուտ, Երևան, 1959։*
ԱՍԵՈՒ—Ա. Սեկոյան, *Եթե Որոտանը խոսեր, Երևան, 1970։*
ԱՍՍ—Ա. Սահինյան, *Ծարավ, 1, Երևան, 1959։*
Բակ.—Ա. Բակունց, *Երկեր, Երևան, 1955։*
ԲՍԱ—Բ. Սեյրանյան, *Աստղաձոր, Երևան, 1963։*
ԳԷԱՏ—Գ. Էմին, *Այս տարիքում, Երևան, 1968։*
ԳՍԲ—Գ. Սարյան, *Բանաստեղծություններ, Երևան, 1958։*
ԳՍԵԺ—Գ. Սարյան, *Երկերի ժողովածու, 1—2, Երևան, 1961։*
ԳՍԸԵ—Գ. Սարյան, *Ընտիր երկեր, Երևան, 1974։*
ԳՍՓ.—Գ. Սևունց, *Ռեհրան, Երևան, 1953։*
ԴԴՎ— Դ. Դեմիրճյան, *Վարդանանք, Երևան, 1954։*
ՋԴԱՎ—Ջ. Դարյան *Արծիվ Վասպուրականի, Երևան, 1965։*
Իս.—Ա. Իսահակյան, *Երկեր, 1—4, Երևան, 1958—1959։*
ՀԱՆՀ—Հ. Աբամյան, *Նեղոսի հովտում, Երևան, 1958։*
ՀՐ—Հ. Թումանյան, *Երկհատորյակ, Երևան, 1958։*
ՀՄԴՍԱՔՓ—*Հայաստանը միջազգային դիվանագիտական և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, Երևան, 1972։*
ՀՇՔՀ—Հ. Շիրազ, *Քնար Հայաստանի, Երևան, 1958։*
ՀՍԲ—Հ. Սանյան, *Բանաստեղծությունների ժողովածու, 1, 1967։*
ՀՍՀՆԵ—Հ. Սանյան, *Հայաստանը երգերի մեջ, Երևան, 1962։*
ՄՍՍԿ—Մ. Սարգսյան, *Սերժանտ Կարոն, Երևան, 1970։*
Մուր.—Մուրացան, *Երկերի ժողովածու, 1—7, Երևան, 1961—1965։*
ՆՋՀ—Ն. Ջարյան, *Հացավան, 1945։*
ՆԴ—Նար-Դոս, *Երկերի ժողովածու, 1—3, Երևան, 1955։*
Շիրվ.—Շիրվանզադե, *Երկերի ժողովածու, 1—10, Երևան, 1958—1962։*
Չ—Ե. Չարենց, *Երկեր, Երևան, 1954։*
ՊՍԵԺ—Պ. Սևակ, *Երկերի ժողովածու, 1—4, 1972—1973։*
ՊՍՄԱՄ—Պ. Սևակ, *Մարդը ափի մեջ, Երևան, 1963։*
ՍՋ—Ս. Զորյան, *Երկերի ժողովածու, 1—10, Երևան, 1960—1964։*
ՍԽՀ—Ս. Խանզադյան, *Հողը, Երևան, 1957։*
ՍԽՄՍ—Ս. Խանզադյան *Մխիթար Սպարապետ, Երևան, 1961։*
ՎԱՍԱ—Վ. Անանյան, *Սևանի ափին, Երևան, 1961։*
ՎՏ—Վ. Տերյան, *Երկեր, 1—3, Երևան, 1960—1963։*
Ր—Ռաֆֆի, *Երկերի ժողովածու, 1—10, Երևան, 1955—1959։*
ՔԹՊ—Ք. Թափալչյան, *Պատերազմ, 1—3, Երևան, 1946—1959։*

ВЯ—Журнал «Вопросы языкознания».

ПЛК—Сборник статей «Пражский лингвистический кружок». М., 1967.

ПТЧП—Сборник «Проблемы теории членов предложения». Кишинев, 1973.

ПСЛ—Периодический сборник «Проблемы структурной лингвистики».

СЯЮРСК—Совещание языковедов юга России и Северного Кавказа (тезисы докладов, Изд. Ростовского н/д университета, 1959).

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հայերեն

Մ. Արեղյան, *Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965։*

Ա. Աբրահամյան, *Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Երևան, 1953։*

Ս. Աբրահամյան, *Չթերվող խոսքի մասերը և նրանց բառական ու քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում, Երևան, 1965։*

Ս. Աբրահամյան, *Ժամանակակից հայերենի քերականություն, Երևան, 1969։*

Է. Աղայան, *Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան, 1967։*

Ա. Այտրենան, *Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, Վիեննա, 1866։*

Վ. Առաքելյան, *Հայերենի շարահյուսություն, 1—2, Երևան, 1958—1961։*

Ա. Բուզրատունի, *Հայերէն քերականություն ի պէտս դարդացեալոց, Վենետիկ, 1852։*

Ա. Դարիրյան, *Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Երևան, 1947։*

Ա. Ճշմարիտյան, *Դերբայական դարձվածը արդի հայերենում, Երևան, 1961։*

Ա. Մարգարյան, *Արդի հայերենի կապերը, Երևան, 1955։*

Ա. Մարուքյան, *Դերբայական դարձված և նախադասության կողմնակի անդամներ (դասախոսություն ժամանակակից հայերենի դասընթացից), Երևան, 1971։*

Վ. Զալբխեան, *Քերականություն հայկազնեան լեզուի, հանդերձ փոփոխմամբ և յաւելուածուովք աշխատասիրեալ ի Հ. Արսենէ վ. Այտրենան, Վիեննա, 1885։*

Ստ. Պալասանեան, *Քերականություն մայրենի լեզուի, Թիֆլիս, 1874։*

Դ. Ջանուկյան, *Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974։*

Դ. Սևակ, *Հայոց լեզվի շարահյուսություն, Երևան, 1936 և հետագա հրատարակությունները։*
Ջ. Քոչինյան, *Տրոհվող պարագաները հայերենում (ՀՍՍՀ ԳԱ տեղեկագիր, հաս. գիտություններ, 1958, № 12)։*
Վ. Քոսյան, *Ժամանակակից հայերենի բառակապակցությունները, Երևան, 1975։*

2. Ռուսերեն

Н. И. Арват, Об изучении семантической функции членов предложения (ПТЧП).
О. С. Ахманова, Словосочетание (сборник «Вопросы грамматического строя», М., 1955).
О. С. Ахманова, Г. Б. Микаэлян, Современные синтаксические теории, М., 1963.
Л. В. Борте, Влияние синтаксической функции на процесс взаимодействия частей речи (ПТЧП).
В. В. Виноградов, Из истории изучения русского синтаксиса, М., 1958.
В. В. Виноградов, Основные вопросы синтаксиса предложения (на материале русского языка), сб. «Вопросы грамматического строя», М., 1955.
В. И. Дегтерев, Структура мысли и членение предложения (ПТЧП).
Фр. Денеш, И. Вахек, Пражские исследования в области структурной грамматики на совр. этапе (ПЛК).
Грамматика русского языка, т. 2, ч. I, М., 1960.
Грамматика современного русского языка, М., 1970.
Г. Глисон, Введение в дескриптивную лингвистику, М., 1959.
А. Н. Гвоздев, Современный русский литературный язык, ч. 2, М., 1958.
Д. С. Гершкович, Синтаксическая функция фразовых наименований (ПТЧП).
Л. Ельмслев, Пролегемоны к теории языка (сб. «Новое в лингвистике», 1960, № 1).
М. Н. Захарова, Понятие о контекстно неразложимых словосочетаниях («Уч. записки Кишиневского госунта», т. 61, 1962).
Г. И. Золотова, О структуре простого предложения в русском языке (ВЯ, 1967, № 6).
Л. Н. Йорданская, О некоторых свойствах правильной синтаксической структуры (ВЯ, 1963, № 4).

Р. К. Ковацкая, Обстоятельственное определение в русском языке (СЯЮРСК).
Е. Б. Колыханова, О соотношении частей речи и членов предложения (ПТЧП).
Е. В. Кротевич, Словосочетание как строительный материал предложения, Львов, 1956.
Е. В. Кротевич, Члены предложения в современном русском языке, Львов, 1954.
Е. В. Кротевич, Соотношение между членами предложения и частями речи (СЯЮРСК).
В. А. Кочергина, Синтаксис, уч. пособие по курсу «Введение в языкознание», М., 1974.
Н. С. Лозебной, В защиту смысловых вопросов при распознавании второстепенных членов предложения (ПТЧП).
В. Матезиус, О так называемом актуальном членении предложения (ПЛК).
В. П. Малащенко, Предложные конструкции в роли второстепенных членов, относящихся ко всему предложению в целом (СЯЮРСК).
Н. Н. Мещанинов, Структура предложения, М.—Л., 1963.
Н. Н. Мещанинов, Члены предложения и части речи, М.—Л., 1945.
В. Н. Мигирин, Отношение между частями речи и членами предложения (СЯЮРСК).
Н. Н. Мигирина, Принципы описания членов предложения и их смешение в учебных пособиях по современному русскому языку (ПТЧП).
М. К. Малых, Развернутые члены предложения (СЯЮРСК).
В. М. Никитин, К вопросу о принципах изучения членов предложения (СЯЮРСК).
А. Я. Обертынский, Второстепенные члены предложения с двойной функцией (СЯЮРСК).
Е. В. Падучева, О способах представления синтаксической структуры предложения (ВЯ, 1964, № 2).
Л. С. Пастухова, Расположение в предложении членов с двойственной синтаксической связью (ПТЧП).
А. М. Пешковский, Русский синтаксис в научном освещении, М., 1933.
А. С. Попов, Неразложимые словосочетания в современном русском языке (СЯЮРСК).
П. В .Попов, Предложение и принципы его членения (ПТЧП).
И. И. Ревзин, Основные единицы синт. анализа и установление от-

ношений между ними (сб. статей «Структурно-типологические исследования», 1962).
А. Н. Савченко, Принцип классификации членов предложений (СЯЮРСК).
Н. А. Слюсарева, Лингвистический анализ по непосредственно составляющим (ВЯ, 1960, № 6).
А. И. Смирницкий, Синтаксис английского языка, М., 1957.
Н. А. Федотова, О выражении членов предложения неделимыми словосочетаниями (уч. записки, т. 109, «Труды фил. фак-та Харьковского госунта, т. 8, 1960).
С. Я. Фитиалов, Об эквивалентности грамматик НС (ПСЛ, 1967).
С. Я. Фитиалов, О моделировании синтаксиса в структурной лингвистике (ПСЛ, 1962).
Н. А. Федосов, О классификации второстепенных членов предложения (СЯЮРСК).
Г. Н. Фирсов, Обособленные второстепенные члены предложения, Учпедгиз, М, 1955.
Н. Хомский, Аспекты теории синтаксиса, М., 1972.
А. В. Шапиро, К учению о второстепенных членах предложения (ВЯ, 1957, № 2).
А. А. Холодович, К вопросу о группировках слов в предложении (сб. «Проблемы языкознания», Л., 1961).
М. Г. Шатух, Второстепенные члены предложения и их разграничение (ПТЧП).
М. Г. Шатух, Разграничение приложений и уточняющих членов предложения (СЯЮРСК).
Н. Ю. Шведова, Об активных процессах в современном русском синтаксисе (ВЯ, 1964, № 2).
А. А. Шахметов, Синтаксис русского языка, М., 1941.
В. Н. Ярцева, Предложение и словосочетание (сб. «Вопросы грамматического строя», М., 1955).

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք 5

Գլուխ առաջին

Աստիճանական վերլուծությունը շարահյուսական մակարդակում . 7

I. Հարցի պատմությունից 7

II. Անմիջական կազմիչների ուսումնքը 11

III. Կախվածությունների բացահայտման մասին 16

IV. Նախադասության կառուցվածքը 18

V. Նախադասության վերլուծությունը 28

Ա. Ի՞նչպես են բացահայտվում նախադասության անդամները 30

Բ. Նախադասության անդամների դրսևորման միջոցները և ծավալը 32

IV. Շարահյուսական կառույցն իբրև նախադասության անդամ . 33

Ա. Միակազմ կառույցներ 33

1. Դերբայական դարձված 38

2. Ածականական բառակապակցություններ . . . 52

3. Մակբայական բառակապակցություններ . . . 54

4. Գոյականական բառակապակցություններ . . . 55

5. Այլ կառույցներ 61

Բ. Շարահյուսական երկաստիճան կառույցներ . . . 65

1. Երկաստիճան դերբայական դարձվածներ . . . 69

2. Երկաստիճան ածականական բառակապակցություններ . 86

3. Երկաստիճան մակբայական բառակապակցություններ . 92

4. Երկաստիճան գոյականական բառակապակցություններ . 93

5. Այլ կարգի երկաստիճան կառույցներ 97

Գ. Շարահյուսական եռաստիճան կառույցներ . . . 97

1. Եռաստիճան դերբայական դարձվածներ . . . 98

2. Եռաստիճան ածականական բառակապակցություններ . 106

3. Եռաստիճան մակբայական բառակապակցություններ . 108

4. Եռաստիճան գոյականական բառակապակցություններ . 108

Դ. Շարահյուսական քառաստիճան կառույցներ . . . 110

1. Քառաստիճան դերբայական դարձվածներ . . . 110

2. Քառաստիճան ածականական բառակապակցություններ . 114
3. Քառաստիճան այլ կառույցներ 115
Ե. Շարահյուսական հինգ և ավելի աստիճանի կառույցներ . 115
VII. Այլ կիրառություն ունեցող շարահյուսական կառույցներ . 116
Ա. Միակառույց մեկուսացած անդամներ 117
Բ. Երկաստիճան կառույցներով մեկուսացած անդամներ . 122

Գլուխ երկրորդ

Նախադասության տրոհված անդամներ

I. Հարցի պատմությունից 124
II. Տրոհումը պայմանավորող հանգամանքները . . . 127
III. Տրոհված անդամների տարբերություններ մեկուսացած անդամներից 143
IV. Տրոհված լրացումները և նրանց արտահայտությունը . . 145
Ա. Բացահայտիչ 147
Բ. Որոշիչ 157
Գ. Տրոհված հատկացուցիչ 162
Դ. Տրոհված պարագայական որոշիչ 163
Ե. Տրոհված պարագաներ 166
ա. Տրոհված ձևի պարագա 167
բ. Տրոհված վիճակի պարագա 170
գ. Տրոհված նպատակի պարագա 175
դ. Տրոհված այլ պարագաներ 176
Ե. Տրոհված խնդիրներ 182
զ. Տրոհված այլ անդամներ 184
Է. Մեկուսացած անդամների տրոհված լրացումներ . . 187
V. Դիտողություններ տրոհված լրացումների վերաբերյալ . . 188
VI. Տրոհված անդամների կետադրություն 196
Համառոտագրություններ 205
Օգտագործված գրականություն 206



ՔՈՍՅԱՆ ՎԱՂԱՐՇԱԿ ԱՐԶՈՒՄԱՆԻ

КОСЯН ВАГАРШАК АРЗУМАНОВИЧ

ԹԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

Տպագրվում է Հայկական ՍՍՀ ԳԱ
Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝
Ս. Գ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
Հրատարակչական խմբագիր՝
Ս. Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Նկարիչ՝
Հ. Ն. ԳՈՐԾԱԿԱՆՅԱՆ
Տեխնիկական խմբագիր՝
Ս. Կ. ՉԱՔԱՐՅԱՆ
Սրբագրիչ՝
Ա. Ա. ՂԱՓԼԱՆՅԱՆ

ՎՁ 05543 Պատվեր 249 Հրատ. 4370 Տպաքանակ 3000
Հանձնված է արտադրության 27/III 1976 թ.։ Ստորագրված է տպագրության 10/VI 1976 թ.։ Տպագրական 13,25 մամուլ, հրատ. 9,1 մամուլ, պայման 11,13 մամուլ։ Թուղթ № 1, 84×108 1/32, գինը՝ 64 կոպ.։
Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն. Երևան 19, Բարեկամության 24.
Издательство АН АрмССР, Ереван, 19, Барекамутян, 24.
Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչության Երևանի տպարան.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0075106

ԳԻՆԸ 64 կ.

A II 56583